



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8149

9(4)
9-23



392



13 MAR 2013

30 MAY 2

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ե Ն Ք

Հ Ի Ն Ե Ի Ն ՈՐ ԱԶԳԱՑ



13 MAR. 2013

1709

2013 MAR 13

13 MAR 2013

13 MAR 2013

19 AUG 2006
30 MAY 2011

9(4)
4-23
պր.

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԵԿԵԿԻՑ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՇԱՐԿՐԵԱՅ

ՀԱՄԱՐՈՍԻՈՍ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Ի ՄԻԹԵԱՐԵԱՆ ՈՒԹԵՆ

1904
1969
1981



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1851

30 MAY 2011

Handwritten notes and numbers in the top right corner.

Handwritten text, possibly a name or title, in the upper middle section.

Handwritten text, possibly a date or location, in the middle section.

Handwritten text, possibly a name, in the lower middle section.

Handwritten text, possibly a name or title, in the lower middle section.

Handwritten text, possibly a name, in the lower middle section.

Vertical handwritten notes on the right edge of the page.



Handwritten text, possibly a name, located below the emblem.

Handwritten text, possibly a name or title, located below the emblem.



Ի Խ Ր Ա Խ Ո Յ Ս

ՀԱՅԱՁԳԻ ՄԱՆԿՏԻՈՅՆ

ՆԱԽԱՆՁԱԻՈՐՆ

ԲԱՐԵԱՅ ԱՁԳԻՆ

Յ Ո Վ Հ Ա Ն Ն Լ Ս

ԱՄԻՐԱՅ ՏԱՏԵԱՆ

Ռ Յ Ա

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ ՈՒ Թ Ի Ւ Ն

Ժ Ա Մ ԱՆ Ա Կ Ա Կ Ի Յ

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ե Ա Ն

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ւ Ն Մ Ա Տ Ե Ն Ա Գ Բ ՈՒ Թ Ե Ա Ն Ն Գ Ա Ղ Ղ Ի Ո Յ՝
Ժ Ա Դ Ե Բ Է Ն Ի Ն Ա Ն ՈՒ Ն Ժ Թ Դ Ե Բ ՈՒ Ն Ս Կ Ի Ջ Բ Ը

Գալստաւիւնք . — Վաւիւէո . — Հանգափիքա՛ ի Բա-
սաբան . — Յովհաննէս-Յովնթոս Որոսասոյ . — Բա-
նասաքէղծոս-իւն . — Կասաա՛իւրֆոս-իւն . — Բնաբ-
իւրֆա՛, Վարդասպիւնիւն և հովն-ասիւն Բանասաքէղծոս-
իւն . — Պիւրճախօսոս-իւն : — Պասաճոս-իւն . —
Բարոյասիւն . — Վաղասափիքոս-իւն . — Վիպասա-
նոս-իւն . — Գիպոս-իւնք . — Բնասիւն պասաճոս-իւն .
— Աւիսարհափիւրք և սաղեարք . — Գեղարոն-էսաք . —
Արժանափործոս-իւն և յեփէնափործոս-իւն . — Եբա-
թլաոս-իւն :

Պատգամայ մէջ ութնասաներորդ դարը եօթնև-
ասաներորդին փառաւորութիւնը չունեցաւ, բայց
անկէջ շատ վար չմնաց . դարութիւնը, դեղա-
րուեստը և գիտութիւնը շատ առաջ գնացին :

Դարերութիւնի . — Ժ Ա դարուն մէջ դարու

Ժ Ա դարուն դարութիւնը ի՞նչ վիճակի մէջ էին
Գաղղիա :

Թեանց ոճը բողոքովին փոխուեցաւ Գաղղիա , եօթնևտասներորդին ծանրութիւնը գնաց , և աս դարը քննարանութեան ու վերլուծութեան դար եղաւ : Ալլընը իր սուր ծաղրաբանութեամբը , Հանրագիտի Բաստրանը յանդուգն իմաստասիրութեամբը , և Ժան-Ժաք-Ռուսայ կըքոտ ու խաբող ճարտասանութեամբը ան դարուն վրայ մեծ ազդեցութիւն ունեցան :

1. ԱՈՒԹԵՌ. — ԺԸ դարուն մատենագրաց սլաքագլուխն է Ալլըթէն (1778) , որ իր ընդարձակ հանձարովը դարութեանց ամէն աեսակին մէջ երևելի եղաւ . իբրև բանաստեղծ՝ աւելի անուանի է ողբերգութեան մէջ , և իր Զայիբէ , Մեհաբէ , Որէսփէս , Մահաճէփ ողբերգութիւններովը Վոնէյլի ու Ռասիլի հաւասարեցաւ . դիւցազներգութեան մէջ իր Հանրագիտի գաղղիացի բանաստեղծութեան մէջ՝ Փոփին կը հաւասարի . իսկ մանր քերթուածոց մէջ իրեն հասնող չկայ : Իբրև արձակ մատենագիր՝ նոյնպիսի յաջողութեամբ գրեց իմաստասիրութիւն , պատմութիւն , վիպասանութիւն , նամակներ : Ծանր գրուածոցը մէջ ոճը անստգամանելի է , միշտ սլարդ , վայելչահիւսու նիւթին քաջսցարմար : Պարսկերէն կարողութիւնը և Գալիսիական Մեծին Պեդրոսի և Դոն Լոպէսի լոբեգրասաններու ըստած գրութեանքներուն մէջ մեծանուն սլատմաբանից կարգը կ'անցներ , թէ որ շատ աեղ կողմնասիրութիւնը

1. Ո՛Վ է Ալլըթէն , և ի՞նչ անուանի գրութեանքներունի :

յայանի չցուցրնէր : Բարուց կողմանէ վըլթէռ վերջի աստիճանի փոփոխամիտ , բարկասիրտ , երդիծարան և քինականգիր էր . ինչուան վերջը անհաշա թշնամի մնաց Ռուսսոյին : Վըլթէռին բոլոր գրուածքը ութածալ 70 հատոր է . բայց ամենս որ ան ստուարակարկատ հաւաքման մէջ ամէն բան ալ անստգտանելի չէ . շատ տեղ կրօնն ու բարոյականը անարժան կերպերով նախատուած են . այնպէս որ անոնց մէջ շատ անգամ և ոչ կ'երևան մատենագրին բնական խելքն ու արժանիքը :

1 ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ԲԱՌԱՐԱՆ . — Հանրագիտակ Բառարանը (Անիբլբլոգիտի) որ վըլթէռ կրխրախուսէր ու իր յօդուածներովը կը զարգարէր , ժՆ գարուն գլխաւոր երկասիրութիւնն է : Աս Բառարանը որուն յայտարարութիւնը Տիտոյ և յառաջարանը տ'Ալամպէր շինեցին , կէս մը անհիմն տարակոյսներով , կէս մըն ալ ծաղրաբանութեամբ ու անաստուածական սկզբունքներով կրօնք , բարոյական , քաղաքական կարգեր , ամէն բան կ'ուզէր ջնջել : Գլխաւոր հրատարակողներն էին վըլթէռ , Քոնտիլեաք , Հելուեաիոս , տ'Օլպաք , տ'Արժանս , Տամիլլալիլ , Լամէթրի , Պուլանժէ , Քոնտորսէ , Քապանիս , և այլն :

2 ՅՈՒԷՆՆԻՍ-ՅԱԿՈՐՈՍ ՌՈՒՍՍՈՑ . — Վըլ

1 Հանրագիտակ Բառարանն ինչ էր : — Գլխաւոր հրատարակողներն որոնք էին :

2 Ո՞վ էր Յ . - Յ . Ռուսսոյ , և ինչ անուանի գլուուածներ ունի :

Թէոփն հաւասար պէտք է դնել Յ. - Յ. (Ճան-
ժաք) Ռուստոն (1778), որ պերճաբան ու վառ-
վըռուն ոճովը և կարգէ դուրս մտած մունքներովը
իր դարուն ամենէն ճարտասան ու նշանաւոր մար-
դըն եղաւ : Բոլոր գրուածոցը մէջ ինքզինքը հա-
կառակ կը ցուցնէ քաղաքականութեան ու իր
ժամանակի մարդկային բնկերութեան . Դասն ըն-
կերակն (Քոնթրա սոսիալ) ըսուած գրքին մէջ
բացարձակ հաւասարութիւն կը քարոզէ , Էթիկն
մէջ անդործագրելի դատախարակութեան ոճ մը
կը վարդապետէ , որ աշակերտը բնութենէ զառ-
ուրիշ վարպետ պիտի չունենայ . Էյթիկն մէջ
բարոյականին ինչո՞ւն ամենաբարձր խնդիրնե-
րուն վրայ զարմանալի ճարտասանութեամբ կը խօ-
սի . բայց ամսոս որ տեղ տեղ հակասութիւններ
ալ խառն են : Սակայն աս ճշմարիտ է որ Թէ դա-
տախարակութեան և Թէ քաղաքականութեան վրայ
չատ ալ ողջամիտ դադափարներ տուած է Ռուս-
տոյ , որոնք իր դարուն վրայ մեծ ազդեցութիւն
ըրին :

1 ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՒՒՆ . — Ողբերգակ բանա-
ստեղծից մէջ Վոլթէռէն ետքը անուանի եղան
Քրէսկյեոն (1762), որ Աբրէս , Եւէլբրէս և Հաս-
րաֆս ողբերգութիւններովը հին ատենի ողբեր-
գութեանց տխուր արհաւիրքը Թէատրոններու
մէջ մտուց : — Լակրանժ-Շանսէլ (1758), Ռա-
պինին աշակերտը , որուն անուանի ողբերգու-

1 Բանաստեղծութեան մէջ որոնք եղան հաշա-
կաւոր :

Թիւններն են Յոգորթ, Որէսփէս ու Պիշափէս և Ամասիս : — Սորէն (1781), որուն Սպարափոսը սուած ողբերգութիւնը Քոստէյլին ողբերգութեանցը կը հաւասարի : — Կիսին տը լա Թուշ (1760), որուն անուանի ողբերգութիւնն է Իփիգէնէ ՚ի Տաւրիս : — Տը Պէլլուա (1773), որուն ողբերգութեանցը մէջ հռչակաւորն է Պաշարաֆն Քաւէի ըսուածը : Իր մեծ արդիւնքն ան է որ ինքը սկսաւ նոյն աղգային սրամութեանէ նիւթ սոււ ողբերգութեանց : — Լըմիէր (1793), որուն գլխաւոր ողբերգութիւններն են Իպէրֆնէսփա, Գուլիէլմոս Թեւ, Արիս Մալապարայ : — Լա-Հարմ (1803) որ քանի մը սաղ ողբերգութիւնները բաւ ինչպէս Վարսի, Փիլիփէս, և այլն. աւելի անուանի է Իրիս քննաբան, և ընտիր գործքն է Գաստ Եաշաֆս Տափէնափրոսէան ըսածը : — Լըկուվէ (1813) իր հանճարը ցուցուց Եպիփարիս, Կերոն ու Մահ Աֆելի ողբերգութեանցը մէջ : — Տիւսի (1816) Շէքսպիրին հեռեւորով անոր քանի մը ողբերգութիւնները դասընթացին վերածեց. քովէն շինած ողբերգութիւնն է Ապի֊Քար ըսուածը :

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ . — Կատակերգութեան մէջ անուանի ևզան Տէթուշ (1754), որուն հռչակաւոր կատակերգութիւններն են Փառասեբ և ԻՏասափաեբ ամասնադեալ (Փիլոզոֆ մարիէ) ըսուածները : — Լը Սափ (1747) որ Թիւրփարէ ըսուած կատակերգութեան մէջ աւերութեան համարակալ ներուն ախարը ծաղկընէ, և վիպասանութեանցը

Կատակերգութեան մէջ որոնք ևզան անուանի :

մէջ ինչպիսի էն Պետէ Էազ (Տեապղ պուլաթէօ) և յիւր Պուաւ, իր ժամանակացը պակասուած իւնները դուրս կը հանէ : Անուանի գործն է յիւր Պլապը զուարճալի ու աննման ոճոյն համար, որով բերաւ որ վարդապետութեանց մէջ առաջինը կը սեպուի : — Մարիովոյ (1763), որուն երեւելի կատակերգութիւններն են Խաչ և Սիւր, և Բախարի, Պապիւր և Գապիւր : — Սեփի նաև վարդապետութիւններ, որոնց ոճը կատակերգութեանցը պէս գեղեցիկ է, նուրբ ու յարգարուն : — Փիրսն (1773) մեծ հանճար ունէր վարպետ վերասուած իւններ շինելու իր ամենէն անուանի գործն է Երգածուութիւն (Մէթրոմանի) ըսուած կատակերգութիւնը : — Կրեստէ (1779), որուն անուանի էն Վէր-Վէր և Շարբէրէօզ ըսուած քերթուածներն ու Չարափոք (Մէշան) կոչուած հանճարեղ կատակերգութիւնը ասոր մէջն առերէն շատը առակ դարձած են : — Պոմարէ (1799), որուն Ս-իւր-Սե-իւր և Ան-ս-նութիւն Պի-ի-րոյի ըսուած ծաղրաշարք կատակերգութիւնները վարպետ կերպով յորինուած են : — Լա Շոստէ (1784), որուն երեւելի կատակերգութիւններն են Նոր-իւր-ի Նախապաշարոն (Փրէ-ժիւժէ ա լա մօս), Գ-պի-րոյ ճարտ և Մեւանիփ : — Տեապղ (1784) որուն անուանի թատերգութիւններն (Տրամ) են Անգաբաղապ որդի և Տանապեր :

1 Քնարերգակ, վարդապետական և Հովուական բանաստեղծութեան մէջ հռչակաւորներն են

1 Քնարերգակ, վարդապետական ու Հովուական բանաստեղծութեան մէջ որոնք հռչակաւոր եղան :

1 ընթացին ալ Փոմիֆիեան (1784), որուն Սբազան Բա-
 նաստեղծութիւնն ու Տաշեբլ (Օս) և Դիտէ սղբեր-
 գութիւնը անուանի են : — Յովհաննէս-Մկրտիչ
 Ռուսայ (1741) որ իր Տաշեբլն ու Երաժշտական
 էրգէրուն (Վասնթաթ) մեջ աննման է . ոճն է վսեմ
 ու ներդաշնակ : — Լուդովիկոս Ռասին (1763) ,
 որուն երևելի գործն է Կրօն քսեալ թանաստեղ-
 ծութիւնը , որ թէպէտ քիչ մը սաղ է , սակայն
 տեղ տեղ ալ գեղեցկութիւններ ստեղծուած չեն . առ-
 քերթուածը հայերէն ալ թարգմանուած ու ալ-
 պուած է : — Էբուշար-Լըսրէօն (1807) , որ իր
 Տաշեբլն համար Գաղաթօյ Պիտարոս քսեցաւ ,
 սաստիկ փոփոխամտութեամբ թէ Լուդովիկոս
 վեշտասաներորդը , թէ Հասարակագիտութիւնը
 և թէ Կայսերութիւնը հաւասար եռանդով եր-
 գեց և իրեքէն ալ վարձաարուեցաւ : Հինգհարիւ-
 րէն աւելի վերաստութիւններ շինած է : — Ժիւ-
 պէր (1780) որուն Տաշ վե՛րջին Կաթսաստեղ , և Եր-
 գիծան , և Երգ քսեց թանաստեղծութեան շատ
 անուանի են . ամեն առիթն մեջ կարգէ գործ կորով
 մը կ'երեւայ : — Մալֆիլաթը (1767) , որ կորովա-
 լից Տաշեբլն , և ամենէն անուանի թանաստեղ-
 ծութիւնն է Կարգիս Ի իշարջ Կաթսաստեղ : —
 Անգրէաս-Շէնիէ (1794) որ Կոստանդնուպոլս
 ծնաւ ու թանաստեղծութեան ոգին սղբիկուց
 յայտնեց , նախնեաց մատենագրութեան քաջա-
 հմտաբլլալով նոր լմասաներով հին ոտանաւորներ
 կը շինէր , ինչպէս որ ինքն ալ կ'ըսէ . մեծ Խոնովու-
 թեան ասէն երբոր զինքն ալ բռնեցին , մեռնելէն
 քանի մը օր առաջ իր մահուանը վրայ սրտաշարժ
 ոտանաւոր մը շինեց : — Յովսէփ-Շէնիէ (1811)

իր սղտիկ եղբայրն ալ նոյնպէս ՚ի Կոստանդնուս սլտիս ծնած, իրեն սէս բանաստեղծ էր, որ շինած ողբերգութեանցը մէջ յստակ ու աղնուական ոճին հետ կը փայլին տիրապետութեան դէմ ունեցած ստեղծութիւնն ու ազատութեան սէրը: Շատ մը հայրենասիրական երգեր շինած է Հասարակապետութեան տօներուն համար, որոնց մէջ անուանի է Երգ շո-ոյ (Շան տիւ աէփար) ըսուած ծը. յարդի է նաև իր Կիարփի գաղղիական ճարտարագրութեան յժԸ արտա ըսուած գործքը: — Սէն-Լամպեր (1803) իր Եղանակ (Սէզոն) ըսուած բանաստեղծութեամբն, ու Տրիլ (1813) Վիգիլիանի Մշակիանին Լարգանս-Լեմբը, իր Երեւոյտութեան, Այրն արարաց (Օրտէ շան) ու Պարպէզ ըսուած գերթուածներովը նկարագրական բանաստեղծութիւնը շատ ծաղիկեցուցին:

ՊԵՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — Հոգևոր պերճախօսութեան մէջ Մասլյլիննէն ետքը շատ անուանի եղաւ հայրն Պրիտէն (1767) յանստարաստից ստեղծ քարոզներովը. որոնց մէջ իր հոգւոյն եռանդը, ու կորովի պերճախօսութիւնը կը փայլին զսեմ խնաստեղծով ունկնդրաց մտքը կը գրաւէր, և կամ յանկարծական դարձուածքներով զանոնք կ'արթնցնէր: Հայրն Կեովիլ (1774) հասարակ ըսով Բարոզ ու քանի մը Գամբանական ճառեր ունի, բայց ընդհանրապէս պաղ էն: Փուլ քահանան (1781), որ քարոզ սալու մեծ յարմարութիւն ու

Հոգևոր պերճախօսութեան մէջ որոնք եղան անուանի:

ներ, ու քարոզները ոչ երբէք կը գրէր. ուստի և ան տասնըմեկ քարոզն ալ որ հիմայ կան, քառասուն տարի ետքը թելագրելով մեկուսն գրել տուած է. ամենէն անուանի քարոզն է Ուրբան-Էտան Գարուշը: Ո՞՞ն է զարգարուն:

1 Դասաստանական պերճախօսութիւնը համազօն ու ծանր սճ մը առաւ ա' Ակիւսոյին (1750) ձեռքովը. կորովի ու եռանդուն՝ 1, ա Շալութէին (1785) ձեռքովը. հնարագիււտ, սուր և սաստիկ՝ Պանօրշէին (1799) ձեռքովը: — Ճեմարանական պերճախօսութիւնը ծաղկեցուց հանձարեղ իմաստներով Շամֆոր (1794) 1, Գօն-Էն-Էն ու Մուլիէ-Էն վրայ բրած 'Նէրբ-Ղնէր-ն' մէջ. յստակ և վայելչախօս երեցաւ 1, ա Հարի՝ Ռոս-Էն ու Ֆեն-Էն Էրբ-Ղնէր-ն' մէջ. բազմազարդ և բիշ մը պոռոտախօս եղաւ Թոլմաս (1785) Մարկոս Աբրեղիասի 'Նէրբ-Ղն' մէջ, որ իր գրուած ոչը գերազանցն է: Բայց բոլոր սա պերճախօսութիւններն աներեւոյթ կը լինին նոր պերճախօսութեան առջև որ ազգային Ընդհանուր Ժողովոյն գումարմանց ատենը սկսաւ երևնալ, և որուն մէջ աւելի քաջ հանդիսացողներն եղան կորովաբանն Միրազոյ (1791), վայելչաբանն Մորի (1817), յստակախօսն Վեռնիոյ (1793), և այլն:

2 ՊԵՏՄՈՒԹԻՒՆ. — Պատմութեան մէջ ամենէն յիշատակուած պատմագրողն է Մարկոս Աբրեղիաս (1781)

1 Արտաքին պերճախօսութեան մէջ որո՞հր անունն հանեցին: — Երբ աւելի ծաղկեցաւ պերճախօսութիւնը:

2 Անուանի պատմաբաններն որո՞հր են, և ի՞նչ գրուածքներ ունին:

առաջ կ'անցնի Ռուզէն (1741) իր Հնախօսութեամբն
 ու Հոռովմայեցոց պատմութեամբը, որ հայերէն թարգ-
 մանուած էն . Ռուզէն իր քաղցր ոճովը Ֆէնէլան
 պատմութեան ու Մէշը Գաղղիոյ ըսուելու արժանի
 էրաւ . Ճառ յաղափս Ուսման անուենով գիրք մըն ալ
 ունի որ գերազանց է իր կարգին մէջ : — Քրէվիէ
 (1765) Ռուզէնի աշակերտը , իր վարժասպետին ան-
 կատար ձգած Հոռովմայեցոց պատմութիւնը ա-
 ռաջ տանելով կայսերաց պատմութիւնը՝ շարա-
 գրեց . ոճը վայելուչ է , բայց կորով չունի : — Լըպոյ
 (1778) գրեց Յոսեան իսյսէրաց պատմութեանը 22 հա-
 տոր , Ռուզէնին չհամիր : — Ռէնալ (1796) Իմաստ-
 սիրտի ան պատմութեան Հնդկաց անուենով գիրք մը գրեց .
 որուն մէջ չափազանց ձևեր կը գործածէ : — Պար-
 թէլլովի (1795) իր Ուղեորութեան կրթութեան Ան-
 աստիք ըսուած վարմանալի գործքին մէջ հին Յու-
 նաստանը ճանչցրնելու համար երեսուն տարի աշ-
 խտեցաւ : Աս ուղեորութեան հայերէն թարգ-
 մանութիւնն ալ տպուած է : — Վէլլի (1759) քա-
 հանան , Վիլլարէ (1766) ու Կառնիէ քահանան
 Գաղղիոյ պատմութեան մը շինեցին ինչուան Կարողութի
 իններորդի ժամանակը : Ոճերնին է ճապաղ : —
 Անքըթիլ (1806) գրած այլ և այլ պատմութեանցը
 մէջ չկրցաւ վերիններն անցնիլ : — Ռիւլիէր (1791)
 Պատմութեան անխառնութեան Լեհաց ըսուած գործքին
 մէջ ճարտասանութիւնը կը ջուլընէ : — Սէկիւր
 (1833) զօրավար ու միանգամայն մատենագիր ,
 ուրիշ շատ գրուածներէն զատ , ունի նաև Բնդա-
 նաւր Պատմութեան մը ինչուան միջին դար , որ զար-
 դարուն ոճով գրուած է :

1 ԲԱՐՈՑԱԿԱՆ . — Բարոյախօսից մէջ անուա-
նիներն են Վոյնարկ (1747), որ իր զգոյնութիւն
ճարտիպչին ճիշտ, Նիւրագիւրդ (Քարաբլթէր) և Աստուծոյ
(Մաքսիմ) ըսուած գործքերուն մէջ՝ Փասքալի,
Լա Պրիւլէրի ու Ֆեննէլնի կը մտնենայ : — Տիւր-
լոյ (1772), որուն խորհրդածութիւնն զբարոյն ու
Երասնէրդի գործուն ըսուած գործքը անուանի է :

2 ՔԱՂԱԲԱԳԻՏՈՒԹԻՒՆ . — Մոնթէպլեօ : —
ԺՂ գարուն առաջին քաղաքագէտ մատենագիրն
է Մոնթէպլեօ (1755) . իր Նախնիստ պարսկական ը-
սուած երգիծաբան վիպասանութիւնը հրատարա-
կելէն ետքը ՚ի լոյս ընծայեց Միջոութիւն և իւրծա-
նանի հոգիայեցող ըսուած գիրքը, որով յայտնի
ըրաւ ինչ մեծ խեղճի տէր ըլլալը . խի երբոր ետքը
Ոգիւնաց գիրքը հանեց, որուն վրայ քսան տարի
աշխատեք էր, իր համբաւը անջնջելի կըքով մը
հաստատեց : Աս գրուածքին մէջ Մոնթէպլեօ ա-
ռաջին կարգի մատենագիր կը սեպուի, և իր ոճոյն
համառօտութեամբն ու կորովովը Տակիտոսին կը
հաւասարի : — Մոնթէպլեօյէն ետքը կրնանք յի-
շէլ Մապլի (1785) Քոնտիլէաք իմաստասիրին եզ-
բայրը, որ շատ գրուածքներ ունի պատմութեան,
բարոյականի ու քաղաքագիտութեան վրայ :

3 ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ . — ԺՂ գարուն մատենա-

- 1 Հռչակաւոր բարոյախօսներն որոնք են :
- 2 Քաղաքագիտութեան մէջ ո՞վ եղաւ անուանի,
և իր գրուածքներն որոնք են :
- 3 Վիպասանութեան մէջ որոնք եղան անուանի :

գրութեանը մէջ վիպասանութիւնը մեծ մաս մը բռնած է: Անուանի վիպասաններն են 1, Ե Սաժճ հռչակաւոր ԺԻԼ ՊԼԱՂԻՆ՝ հեղինակը: — Փրէվչ (1763) որ շատ մը երկայն վիպասանութիւններ ունի, որոնց մէջ աւելի անուանին է Ս՝ան 1, Է՝ սոյ: — Մարմնութեւ (1799) որուն երկելի վիպասանութիւններն են Բէղիսարիոս և Ի՝ սոյ: Ըսուածները. ունի նաև Տարէր և Ժամանակագրութեան անունով գրուածք մը, որ խմատուն վարդապետութեանցը համար անուանի է: — Պեռնարէն ալ Սէն-Փիէր (1814) Պօլսէն վիճակի անունով գեղեցիկ վիպասանութեան հեղինակը, որ և հայերէն աշխարհաբանութեան վարդապետութեամբ ապուած է. բնութիւնը երկն պէս աղէկ նկարագրող մտանկագիր չէ եղած:

ԳՐՈՒԹԻՒՆՔ. — ԺԸ դարուն մէջ գիտութիւնները շատ առաջ գնացին ու մեծամեծ մարդիկ ունեցան: Ռեովուր բնասօսը (1737) ան ջերմաչափը հնարեց, որ իր անունովը կը կոչուի և 80 աստիճան բաժնուած է: — 1, ա Վայլ (1762) չափարան և աստեղագէտը, միջօրեականը ճշգրտուշտ աշխատեցաւ և ցուցուց որ աստիճանները հասարակածէն ինչուան բևեռները քանի կ'երթան կ'աճին: — Տ'Ալամուէ (1783) ԺԸ դարուն հրաչակաւոր մարդկանց մէկը, անուանի չափարան ու մեքենագէտ ալ էր և շարժարանութիւնը շատ ծաղկեցուց: — Պրզու (1783) իր դասերովը շա-

1. Գիտութեանց մէջ ինչ մեծ անուն մարդիկ ունեցան Գաղղիացիք: Գրեմարտի

փառանահանն ուսմունքները շատ սղարգեց : — Պորտա (1799) ներհուն չափաբանն ու աստեղաբաշխ և ճարտար նաւուղիդ, շատ գիւտեր ըրաւ որոնց մէջ աւելի անուանիներն են Շահանա՛ն ցաւայճան (Սէրբէլա րէֆլէքտիոն) ու Կրի՛սա՛նշուշ (Տուսլ փէզէ) : — Լալուազիէ (1794) որ հիմնական բնալուծութիւնը հնարեց : — Մոնկոլֆիէ Երկու եղբարք (Սաւփանոս 1799, և Յովսէփ 1810) անունին անմահացուցին օդապարէ՛ն գունաբ հնարելով : — Պէւթուէ (1822), որ նորանոր գիւտերով բնալուծութիւնը շատ ծաղկեցուց : — Լաիրանժ (1813) անուանի չափաբան, որ տասնըութը տարեկան եղած ատենը հաշակաւոր Այլէր երկրաչափին տասը սարուրնէ՛ն ի վեր լուծելու համար աշխատած ինչգիրներուն մեկնութիւնը տալով առաջին կարգի գիտնոց թիւը մտաւ : Հինգ անգամ Փարիզու Գիտութեանց Ճերմարանէն չափաբանութեան մըրցանակ առաւ, ու շատ մը ուսումնական գրուածքներ թողուց, որ ամենն ալ սղարգ ու վայելուչ ոճով գրած են : — Լափլաս (1827) մեծանուն երկրաչափն ու չափաբանը՝ երկրագործի որդի էր, տասնըինը տարեկան եղած ատենը Փարիզու զինուորական գայրոցին դասատու գրուեցաւ և ըրած նորանոր գիւտերովը փառաւորեցաւ : Գրուածոցը մէջ ամենէն անուանին է Երի՛սայի՛ն շահ-բան-Էիւն (Մէքանիք սէլէսթ) ըսուածը, որուն մէջ իր հանճարը կրփայլի, հանգերձ յստակ ու վայելուչ ոճով :

1 ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ . — Բնական պատմու-

1 Բնական պատմութիւն մէջ որո՞նք եղան անուանի :

Թիւնը ծաղկեցընողներուն առաջինն եղաւ Պիւ-
Ֆոնն (1788) մեծահասակ բնապատումը, որուն
բնական պարտաւթիւնը յաջորդեալներէն գարուն գրաւոր մեծագոր-
ծու թեանցը մէկն է, որով և հեղինակը առաջին
կարգի մատենագրաց շարքը անցաւ. սա դժուար-
րին գործոյն մէջ իրեն մեծ օգնական եղաւ Տա-
պանթոնն (1800) : Պիւֆոնին ոճն է զարգարուն,
ազնուական ու ներդաշնակ : Իրեն յաջորդեց Գե-
որգ Վիլլիէ (1832) հռչակաւոր բնապատումը,
որ կենդանաբանութեան, անգամահատութեան
ու երկրաբանութեան մէջ ըրած անհամար զննու-
թիւններովը իրաւամբ Արիստոտէլ յիշատակեալ
սուեցաւ : — Իրմէ վար չմնար Կառլ Երստրոմ-
(1836) քաջ բնապատումը :

1 ԱՆԻՍՏՐԱՅՆՆԵՐԻ ԵՒ ՈՒՂԵՒՈՐԻ. — Աշխարհա-
գիրներու և աշխարհատես ուղևորաց մէջ անուա-
նիններն են Վոկոնաի (1766), որուն գծած Ասլաար
գեա յարգի է : — Տ'Անիլ (1782) որ հին աշխար-
հագրութիւնը շատ ծաղկեցուց : — Լա Փերուզ որ
1786ին աշխարհիս չորս կողմը պտրտելու ճամբայ
երաւ ու ճամբորդութեանը մէջ մեռաւ : Պուկէն-
իլ (1811) որ Լա Փերուզին ձեռք զարկած ճամ-
բորդութիւնը յաջողութեամբ կատարեց ու շատ
մը աշխարհագրական գիտեր ըրաւ : — Վոլնէ
(1820) որ չորս տարի Եգիպտոս ու Ասորոց եր-
կիրը պտրտելէն ետքը, ճամբորդութեանը պատ-
մութիւնը հրատարակեց Ուլտրա-Միտն յԵգիպտոս

1 Հռչակաւոր աշխարհագիրներն և ուղևորները
որոնք են :

Ե յԱսորիս անուանով, և մեծ անուն հանեց : Ունի նաև ուրիշ շատ գրուածքներ, որոնց անուանին է Աւերակս ըսուածները, որ անկրօն հոգևով գրուած են :

ԳԵՂԱՐՈՒԵՍՏՔ . — Պատկերահանից մէջ Երևելի եղան Պուշէ (1770), որուն վրձինը շատ արագ էր : — Վրդիոս-Յովսէփ-Վէռնէ (1789), որուն ծովային տեսարանները շատ անուանի են, և նկարներուն մեծ մասը Փարիզու մէջ լուսւրի թանգարանն է : — Վարդոս-Օրաս-Վէռնէ (1836) հօրմէն վար չմտար . ասիկայ իրեն ընտրեց պատերազմական նկարչութիւնը և յաջողեցաւ . իրեն յանձնեցին որ Նապոլէոնի մեծամեծ յողթութիւնները ձեացընէ : Գերազանց կերպով կը նկարէ նաև ձիեր ու շներ : Հիմնադրան համբաւաւոր Օրոս-Վէռնէ պատկերահանը իր որդին ու աշակերտն է, որ հօրը ոճոյն հետևեցաւ : — Վանդոյ (1737) գերազանցեց աւելի կենդանագրին մէջ : — Վիէն (1809) որ պատմական նկարչութիւնը ծաղկեցուց, ու իր աշակերտն եղաւ հռչակաւորն Տաւիս կամ Դաւիթ : — Դաւիթ (1825) նկարչութեան արուեստը շատ ծաղկեցուց Գաղղիոյ մէջ Երևելի հին օրինակաց հետևելով : — Երար (1837) աշակերտ Դաւիթ և անուանի պատկերահան պատմութեան, բոլոր Ժամանակակից իշխաններն իրմէ կ'ուզէին նկարուիլ . ուստի Երեսուն տարուան մէջ հարիւր հատէն աւելի ոտքի վրայ կեցած կենդանագիրները քաշեց, անհամար ալ կէս մէջքէն : — Ժիրտէ (1824) քաջ նկարիչ ու բանաստեղծ,

հռչակաւոր պատկերահաններն որոնք են :

իր հրաշակերանն է Տեաւոսն ջրհեղեղի ըսուածը, և ըսուն համար առաջին մրցանակ առաւ : — Կրոյ (1835) հռչակաւոր պատմական նկարիչներէն մէկը, շատ անուանի նկարներ ունի ինչպէս Նալարէլի ու Արտափրի զարկերակները . Էյլա-ի ճակատամարտը . և այլն : Փարիզու Փանթէոնին գմբէթի պատկերներն ալ ինքը նկարեց, որոնց համար տաքը տարն անցոյց :

Պ Ե Բ Ե Ն Ա Յ Ո Ր Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ի Մ Ե Բ Ե Ն Ա Յ Ո Ր Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ի . — Արձանագործութեան մէջ երևելի եղաւ Քութուլի նշակերտը Պուշարտան (1762) : Մեքենագործութեան մէջ ալ մեծ անուն հանեց Ա զբանտն (1782), և իր մեքենական սքանչելի գիւտերովը բոլոր Եւրոպայի մեծ ծառայութիւն մատուցց : Շատ հռչակաւոր էն իր ինքնաշարժ մեքենաները, որոնց մէջ կը յիշուին Սըֆահար ճարտ մը, որ իրօք սրնդ կը փշէր, Բարտ մը որ կոցովը հաս կ'առնէր կ'ուտէր ու կը մտնէր : զարմ մտածմանքս զյ (1808) մեծ ի շահ մղաւայնաց : շարժ մտածմանս զյ թնդըտըմ

2 Ե Ր Ա Ժ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ի . — Երաժշտութեան մէջ անուանի եղան երգահանքն Ռամոյ (1764), Կրեթթրի (1813) որ երաժշտութեան մէջ կատակերգութեան ոգին մտցնելով Մուլիէ-Երաժշտութեան ըսուեցաւ . Մէհլիւ (1814) որ Երգ Եւոյ ու Երգ յաղթանակն ըսուած պատերազմական ազգային տաղերն երգի զրայ առաւ :

1 Արձանագործութեան ու Մեքենագործութեան մէջ որո՞նք եղան անուանի :

2 Երաժշտութեան մէջ որո՞նք անուն հանեցին :

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՎԱՃԱՌՆԵՆ
ԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒՐՈՊԻՈՑ ԺԸ ԴԱՐԷՆ ԻՆՉՈՒՄԵՆ
ՃԹ ԴԱՐՈՒՆ ՍԿԻՋԲԸ

ԱՆԳՂԻԱ . — Բանաստեղծութիւն . — Աբխազի ճապէ-
նագիրք . — Իմաստասիրութիւն . — Գիտութիւնք . —
Աշխարհագիրք և ուղևորք . — Եկեղեցւոց-իւն : — Սոցի-
նիստ . — Գիտութիւնք և Գեղարուեստք : — Փորձա-
պարտ . — ԻՏԱԼԻԱ . — Գիտութիւնք . — Գեղարուեստք .
— Երաժշտութիւն . — Գեոքրագրութիւն . — Պատմութիւն .
— Իմաստասիրութիւն . — Գիտութիւնք . — Երաժշտ-
պարտ-իւն . — ՌՈՒՍՅԱՍՏԱՆ . — ՏԱՆԻՄԱՐԲԱՆ և
ՇՈՒԷՏ . — Գիտութիւնք : — ՀՈՒԱՆՏԱՆ . — Գիտութ-
իւնք և Գեղարուեստք : — ԵՐԵՎԱՆԻ ՄԵՋ ԵՐՈՍՏԱՅԻ
ՎՈՃԱՌՈՒԹԵԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ . Գաղղիա : — Անգղիա :
— Հոլանդիա : — Իսպանիա : — Գերմանիա և հիւսիսային
գերութիւնք : — Սպանիա : — Փորթուգալ :

Եւրոպայի ուրիշ կողմերն ալ գիտութեանց մէջ
Գաղղիայէն վար չմնացին . և մատենագրութիւնն
ու գեղարուեստները շատ ծաղկեցան Անգղիոյ ,
Իտալիոյ և Գերմանիոյ մէջ :

ԱՆԳՂԻԱ . — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ . — ԵՐ
գարը Անգղիոյ մէջ Փոյն (1744) ու Եունկ (1765)
բանաստեղծներուն գարը եղաւ . Եունկին անուա-

ՀԱՆԿԱԼՈՐ Անգղիացի բանաստեղծներն ու
ընդ կեն :

նի գործն է Գ. Իշխերստուած տխուր խորհրդածութեանց բանաստեղծութիւնը, որ տաճկերէն ալթարդմանուած ու տպուած է: — Ուրիշ անուանի բանաստեղծներն են Ունչըր (1687) որ Անգղիացւոց տաղաչափութիւնը շատ ծաղկեցուց: — Տէնչըմ (1668) որ Անգղիացւոց բանաստեղծական լեզուին կատարելագործութեանը շատ աշխատեցաւ: — Թոմարն Սկովախացի (1748), որուն Եղանակքը սուած բանաստեղծութիւնը շատ անուանի է նկարագրութեանցը ճշգրութեանը, զանազանութեանն ու փափկութեանը համար: — Կրէ (1771) որուն Տաշէրն ու Եշէրէրգուսի-նէրը անուանի են գեղեցկութեամբ ու վսեմութեամբ: — Փայրըր (1721) բանաստեղծ ու միանգամայն քաղաքագէտ, շատ մը աղբային նիւթերու վրայ երգեր շինած է: — Պրոնս Սկովախացի (1796) սարափզտանի մը սրգի, Քատուրըր (1800) և Պէթի (1803) իրեքն ալ ռամկական բանաստեղծութիւններ ունին: — Լորտ Պայրըն (1824) Ժ. Թ. գարուն մեծանուն բանաստեղծներէն մէկը, այլ և այլ երկիրներ, ու նաև Յունաստան ու Տաճկաստան պարտեցաւ, և ի գարծին Չայր-Շարսը ըսուած քերթուածը հրատարակեց, որով հռչակաւոր բանաստեղծից կարգն անցաւ: Խապիա քաղած Ժամանակը վէնեափկ երկար տակն կեցաւ ու հայերէն ալ սորվեցաւ, ետքը Յունաստանի ազատութեան օգնելու համար հոն գնաց ու մկուաւ: Շատ անուանի քերթուածներ ու թատրերգութիւններ ունի. ասանց ամենէն ընտիրը կը սեպուի Տոն Ժոան ըսուած քերթուածը, որուն մէջ իր վսեմ ու զօրաւոր հանճարը աւելի կ'երևայ: — Ունթըր Սքոթ (1832) անուանի բանաստեղծ ու

վկայասան , շատ հռչակաւոր քերթուածներ ու վկայասանութիւններ ունի , որոնց մէջ շատ լաւ կը նկարէ մարդկանց բնաւորութիւնն ու սովորութիւնները , և տեղերուն գիրքը կը ստորագրէ :

1 ԱՐՁԱԿ ՄԱՏԵՆԱԳԻՐԻՔ . — Արձակ մատենագրոց մէջ երևելիներն են Պոլինարըք (1751) քաղաքագէտ և իմաստասէր , որ շատ մը քաղաքագիտական ու փիլիսոփայական գրուածներ ունի : — Սուրժըթ (1745) որ երգիծաբան ու զուարթամիտ ոճոյն հասօր Ռապէէ Ափշի , ըսուեցաւ . անուանի վկայասանութիւններ ունի : — Ֆիլաֆին (1754) որուն ամենէն անուանի վկայասանութիւնն է թո՛՛մ ճանաչուածը : Ռիչըրտսըն (1761) հռչակաւոր վկայասան , որ հիւսան մը որդի էր . իր անուանի վկայասանութիւններն են Քլարիսսա Հարլայ , շէր Չարլս Կրէնֆըլդն և Փամէլա : — Մոնթըլիու տիկինը (1762) խելքովն ու գիտութեամբն անուանի , երկանը հեռ որ գեսպան էր , Կոստանդնուպոլիս գնացած ատենը տաճկերէն սորվելով , երկրին սովորութեանցը վարժեցաւ , ու իր Կամպիլեբոն մէջ Տաճկաստանի վրայ բաւական ճիշդ տեղեկութիւններ կուտայ : Անգղիացիք զինքը Մատամ Սէվինիէին հաւասար կը զնեն : — Սթէռն (1768) , որուն հռչակաւոր գործն է Բարոյական Ուղեբերութիւն ըսուածը : — Կոլտամիթ (1774) որ շատ գրուածներ ունի , որոնց ամենէն անուանիներն են Պարսմանթիւն Ափշի , Պարսմանթիւն Համլայեթոյ որ

! Անգղիական անուանի արձակ մատենագիրն էր ունեցաւ , և անոնց գլխաւոր գործքերն որոնք են :

տաճկերէն ալ թարգմանուած ու ապուած է, ժողովրդասպ Ռեֆէրէի կոչուած գեղեցիկ վիպա-
տանութիւնն ու Գիշ Էթալ ըսուած բանասանդ-
ծութիւնը: — Տիւուժ (1776) Սկովտիացի խնայ-
տասէր և պատմաբան, որուն բազմահասոր գրուած
ծոցը մեջ ամենէն անուանի է Անգլիոյ պարսո-
թիւնը: — Ռոսկերթոյն Սկովտիացի (1793), որուն ա-
նուանի գործքերն են Պարսո-
թիւն Սիւլթոյ, Պար-
սո-
թիւն Արիֆոյ, Պարսո-
թիւն Կարլուսի Տիւֆեր-
տի-
տա վերջինը շատ հաջակաւոր է Ճշգու-
թեանը, ի-
մաստասիրական սգոյն ու ոճին համար: — Կիւ-
պրն (1794) պատմաբան, որուն անուանի գործն
է Պարսո-
թիւն Իրթանման հո-
ւանքի պարսո-
թիւնը, ասոր մեջ կը փայլին ընդարձակ ու հաս-
տատուն հմտութիւն, Ճշգրիտ ու հանձարեղ-
քննա-
բանութիւն և պատմելու կերպ: Պըրը (1797) Իս-
լանացի ատենաբան, որուն գրուած ոցը անուա-
նին է Խորհրդո-
թիւն և Կար-
թիւնը: — Չեսթըրֆիլա (1779) որուն ա-
որտի-
ն գրած Կամա-
թիւն անուանի են մեջի կզած մանր
տեղեկութիւններովը: — Փոքս (1806) Անգլիոյ
մեծ անուն ատենաբաններէն մէկը, որ և Ղե-
թիւնը ըսուած է. իր ճառերուն մեջ կորով, սրա-
մաբանութիւն ու լուսաբանութիւն կը փայլին.
գերազանց գործը կը սեպուի հնդկաստանի
խորհրդի վրայ ըրած ատենաբանութիւնը:

1. ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ. — Խմաստասիրութեան

1. Որո՞նք են Անգլիոյ հաջակաւոր խմաստասեր-
ները:

մէջ անուանիներն են Ֆէրկիւնւարն (1816) Էտիփէ
պուրկի համալսարանին փիլիսոփայութեան դաս-
սատուն, գրուածոցը մէջ հռչակաւորն է Պարսա-
նիան զարգացման և ինքնաման հասնելէական Հասարակու-
պէտան-նէան ըսուածը: — Ռիա Սկովտիացի (1796),
որուն երևելի գործն է Հեփալոփան-նիան, զմարդիային
իմացական-նէն է: — Տըկրլա Սթիւնուրթ (1828) ա-
շակերտ և հայրենակից Ռիաի, որուն ամենէն ա-
նուանի գործն է Ճանաչի իմաստաբանիան, ըսուածը:
— Ադամ Սթիթ (1790) հռչակաւոր Սկովտիացի
անտեալարան և իմաստասէր, իբրև անտեալարան
անուանի է իր Հեփալոփան-նիան, զհասնելէ և զպար-
ճառաց ընկալի-նէան ազգաց ըսուած գործքը. իբրև
իմաստասէր՝ Տիստ-նիան Բարդիան զգացմանը ըսուած
գիրքը:

Վիտայն ընկալի-նէան — 1799-1829 թթ. ըս-
տի Գ. ՆՏՈՒԹ. Ի. Ն. Բ. — Գիտնոց ու չափաբանից մէջ
անուանի են Յակոբ Ֆէրկիւնւարն (1776) Սկով-
տիացի աստեղագիտ ու մեքենագէտ, որ աս-
տեղագիտութեան ու մեքենականութեան վրայ
գրուածքներ ունի: — Քեանիէնի (1810) բնախօս
ու բնաբնի, արդի բնաբնութիւնը հնարողներէն
մէկը, շատ գիւտեր ըրաւ, որոնց մէջ անուանին
է Ջրածին իւրին գիւտը: — Պրանքլին (1788) ոչ
միայն բնաբն քաղաքացի ու անուանի բնախօս է
զու, այլ և մեծ բարոյախօս և օրինակ առաքինու-
թեան. իր քաղաքակցացը պիտոյիցն համար շատ
վր ռամկական գրքեր հանեց, որոնց մէջ անուանին
է Գիտան-նիան Բարդիան Հոլտարտի ըսուածը. կայ-

1 Գիտութեանց մէջ որոնք եղան անուանի:

ծախին զէմ՝ ալ շանլարգէն՝ հնարելով մարդկու թեան սարսափելի հարուածներէն մէկուն դժբերութեան և իր անունը անմահացուց։ — Տէվլ (1829) անուանի ընալցած, որ շատ գիւտեր ըրաւ, և անուանին է Անգլի լաստեր ըսուածը։

1 ԱՇԽԱՐՀԱԳԻՐՔ ԵՒ ՈՒՂԵՒՈՐՔ. — Աշխարհագրաց և ուղևորաց մէջ անուանիներն են Կրթի (1770), որուն երևելի գործն է Ալեքսանդր Բալխան տասուերկու անգամ սպուած։ — Քարչըրէթ (1769), Քուբ (1779), Վէնքուվըր (1798) և Մընկոյ-Փարբ (1803) երևելի աշխարհատես աներկիւղ ուղևորներն են, որոնք շատ կողմներ ու երկիրներ գտան։

2 ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ. — Նկարչու թեան մէջ երևելի եղան շոկըրթ (1764), որ անուանի էր անախան տեսարաններ նկարելու մէջ։ — Ռէնըլտս (1792), որ Անգլիացի պատկերահանից ամենէն երևելին կը սեպուի իր կիրթ փորձակին և գոյներուն ընտանու թեանն ու ճոխու թեանը համար, աւելի ճարտար է կենդանագրի մէջ։ Նկարչու թեան վրայ գրուած ճառեր ալ ունի, որոնք Անտոյայի թագաւորական ճեմարանին առջևը խօսած է ու ամենն ալ սքանչելի են իրենց գեղեցկութեամբն ու ազգու թեամբը։

1 Անգլիացի հռչակաւոր աշխարհագիրներն և ուղևորները որոնք են։

2 Նկարչու թեան մէջ ինչ անուանի մարդիկ ունեցան Անգլիացիք։

ՍՊԱՆԻԱ. — ԺԸ դարուն սկիզբները Սպանիա երևելի մատենագիրները չունեցաւ, ունեցածները քանի մը բանաստեղծք էին. անոնցմէ ալ ոմանք անկիրթ ախորժակ ունէին, ոմանք ալ ակարամիտ հետեողք էին Գաղղիացւոց : Բայց քիչ ատենէն, ետէէ ետե անուանի մատենագիրները ու հանճարեղ քննաբաններ ելան : Լուսան (1754) իր Վեբլոդակոնը հրատարակեց : — Ֆէյխոյ (1764) սնուանի քննաբան եղաւ, և երևելի գործքերն էն թաքը քննաբանական ու Հեբրայի և օգրափար նաճականի ըսուածները : — Հայրն Իսլա (1783), որ երգիծաբան ու հանճարեղ քննաբանութիւններովը՝ Յերովանթէսին զօրաւոր ու ճարտարահար քննաբանութիւնը նորէն կենդանացուց : — Նիկողայոս Մորաթին (1780) թատերգակ բանաստեղծը, շատ ջանաց Սպանիացւոց թատերախաղերը կարգաւորել ու Գաղղիացւոց նմանցընել : — Իր օրգին Լէանգր Մորաթին (1828) կատակերգութեան մէջ աւելի գերազանցելով Մուլէն Սպանիոցի ըսուեցաւ :

2 ԳԻՏՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻՔ. — Գիտութեանց կողմանէ ամենեկին երևելի մարդ չէլաւ Սպանիա : Միայն գեղարուեստից մէջ քանի մը անուանի պատկերահաններ գանուեցան ինչպէս Ղուկաս Եօրտանոյ (1755), որ զարմանալի արա :

1 ԺԸ դարուն մէջ ինչ անուանի մատենագիրներ ունեցաւ Սպանիա :

2 Գիտութեանց ու գեղարուեստից մէջ ինչ երևելի մարդիկ ունեցաւ Սպանիա :

գուժեամբ նկարեցուն համար Փոփոխության այսինքն Արագագործ ըսուեցաւ. ուրիշ սլաակերահաններու շուտով նմանեցուն համար ալ Պրոֆեսոր Էփրեմ Բէնի կոչուեցաւ :

1. ՓՈՐԹՈՎԱԼ. — Երբոր Սպանիացիք Փորթոկալի տիրեցին, ազգային յառաջագիտութեան սղին երթալով մտրեցաւ, և երևելի մարդ մըն ալ կար նէ մեջերնին՝ Հայրն Վիէյրա (1697) էր. ան ալ Ամբրիկա գնաց քարոզութեան : Բանաստեղծութեան մեջ արուեստահութիւն տիրեց, և շատերը ազգային լեզուն թողուցած՝ սկսան սպանիարէն գրել : Պուալլյի բարեկամը՝ Էրիսէյրա կամըր (1743), յիշգարուն մեջ շատ ջանաց ազգային մատենագրութեան ոճը բարեկարգել Պապիկացւոյ արտօմակին հետեւելով : Ան միջոցներն երկու ճեմարան ալ բացուեցան ու տէրութիւնը անոնց սլաշապան կեցաւ. առաջինն էր ճեմարան Արիստոֆանոս ըսուածը, և երկրորդը Թափափոխան ճեմարան գիտութեան :

Գիտութեանց ու գեղարուեստից մեջ յիշատակի արժանի բան մը չունեցան Փորթոկալիք :

2. ԻՏԱԼԻԱ. Իտալիոյ մեջ հռովմեական Արիստոֆանոս ըսուած ճեմարանը, որ Շուեաի Քրիստոսեւթութեան հետն սլաշապանութեամբը հիմնեցին Ասեփի

1. Փորթոկալի ուսումնականութիւնը ինչ լինուի մեջ էր :

2. Իտալիոյ մատենագրութիւնը ինչով նորէն ծաղկեցաւ :

(1712), Ֆիլիքսյա (1707), Մէնցլինի (1704) Կրազննա (1718) և Քրէշչինսկինի (1728) գրադէաները, Խոալացւոյ ակորժակը շտկելու և մատենադրութիւնը նորէն ծաղկեցընելու շատ օգնեց, որով և ժՂ դարուն մէջ խոալական ստանաւոր մատենագրութիւնն նորանոր գեղեցիկ տաղերով, կատակարան գիւցազներութեան թիւններով, վարդապետական բանաստեղծութիւններով, ողբերգութիւններով ու տաղերգութիւններով ճոխացաւ : Արձակ մատենագրութիւնն ալ քաղաքական գրագիտական և խնամատիրական սլաամութիւններով ու վարդապետական սերճախօսութիւններով նորէն բարձրացաւ :

Աս միջոցներս էին հռչակաւոր Մեթասթասզեոյ (1782) հռովմայեցի բանաստեղծը, որ իր գեղեցիկահիւս տաղերգութեանցն ու թատրերգութեանցը համար Ռուսին Իսուէն ըսուեցաւ, և որուն հոգևոր բանաստեղծութեանցը մեկ քանին ծանօթ են մեր ազգին տաճկերէն թարգմանուած ըլլալով : — Գասպար Կոճճի վէնետիկեցի (1786), անուանի երգիծանքներ, քերթուածներ ու զուարճալի մանր սլաամութիւններ ունի : — Կոլոսնի վէնետիկեցի (1793), Խոալոյ առաջին կատակերգակ բանաստեղծը որ և Մուխէն Իսուէն ըսուեցաւ : — Ալֆիէրի (1803) Խոալոյ մեծահամբաւ ողբերգակ բանաստեղծը, եօթը տարուան մէջ տասնըչորս ողբերգութիւն շինեց, որոնց մեծ մասը ընտիր են. նոյն միջոցին կը շարագրէր միան-

1 Ան միջոցներն Խոալիա ինչ անուանի մատենագիրներ ունեցաւ :

դամայն արձակ այնպիսի գործերը՝ որ զինքը առաջին կարգի Իսաղացի մատենագիր ըրին . և ասանք էն ճառ զԲանաստեղծութիւնէ, Իշխանն և Կամականի, և ընտիր Թագաճամուռի-ն Սալուստիոսի : Ոճն ու իմաստներն էն կորովն ու համառօտափոս :

1. Գ.ԻՏՈՒԹԻՒՆ-Բ. — Գ.Խոռոթեանց մէջ անուանի կղզիներն էն Մանթրէաի (1739) երկրաչափ ու աստղաբաշխ : — Կալվանի (1795) Պոլսնիացի բժիշկ ու բնափոս, որ կալվանեան ելեկարականու թեան երկոյթները ամենէն առաջ գիտեց : — Վոլթա (1826) մեծ անուշ բնափոսներէն մէկը, որ շատ գիւտեր ըրած է, ամենէն երևելին է Վոլթայէան սի-նսի ըսուածը, որ բնալուծ ու թեաննոր ճամբայ մը բացաւ :

2. Գ.ԵՂԱՐՈՒԵՍ-Բ. — Արձանագրութեան մէջ անմահահայտ անուշ ձգեց Քանովա (1822) գեղացւոյ մը որդի . բազմաթիւ էն շինած հրաշալի արձանները, որոնց վրայ բնականութիւնն ու գեղեցկութիւնը կը փայլին . մէկ քանին միայն հոս յիշենք . Փսի+է ճանսի որ ձեռքին մէջ թիթեանիկ մը բռնած է թեւերէն, Մագր-աշէնայի, Հեբէ, Երե+Շնոց+ , Կրօն պսի-ազարի հակայածն արձան, Կշէ-Քս յ.Գ. ու Կշէ-Քս յ.Գ. սրապերուշ շիրիմները հոռովայ մէջ, և այլն և այլն :

1. Գ.Խոռոթեանց մէջ որոնք կղան հռչակաւոր :

2. Արձանագործութեան մէջ որ Իսաղացին ամենէն անուանի կղաւ :

1. Երաժշտութեան մէջ շատ անուանի եղան Փէրդիդէզէ Նէսալօլտէցին (1737), որ սա արուեստը շատ ծաղկեցուց. և Վիճթիթիթուրինցին (1824), որ Եւրոպայի առաջին քնարահարն էր :

2. ԳԵՐՄԱՆԻԱ. — Ժ. 1. Գարուն վերջերը սկսաւ գերմանական մատենագրութիւնը ձեւաորուիլ : Քաւնից իշխանը (1794) բանաստեղծութեան ետեւէ եղաւ ու իր նախորդներէն աւելի կիրթ աստեղացուց : Արձակ շարագրութիւնը առաջինին պէս ճոռամ և ուսուցիկ մնաց, ինչուան որ Վոլֆ (1754) խմատասերը Վէյպիցի խմատասիրական ոգին համալսարաններու մէջ ասրածեց : Ան ասէնը բանասիրութիւնը, պատմութիւնը, աստուածաբանութիւնն ու իրաւագիտութիւնը սկսան զարգանալ : 1734ին Վէթթինկի համալսարանը հիմնուեցաւ, ամէն աեղ հին հեղինակներ կարգալուփափաքը մտաւ և շրջառով ազգին նախորժակը մաքրուեցաւ : Սկսան գեղեցիկ բանաստեղծութիւններ յորինուիլ. արձակ շարագրութեան յառաջագիմութիւնն ալ ոտանաւորէն վար շմաց, և գերմանական մատենագրութեան օսկեղէն դարը սկսաւ հետագայ անուանի բանաստեղծներով, Վէսսինկ (1781), որ թատրերգութիւններ, կասակերգու-

1. Երաժշտութեան մէջ որոնք աւելի անուն հանեցին :

2. Գերմանիոյ մատենագրութիւնը ինչպէս սկսաւ ծաղկիլ, ու ինչ անուանի մատենագիրներունեցաւ :

Թիւններ ու առակներ ունի : Իր գործոցը դուրսի կը սեպուի Կաթնի Զգծն ըսուած տաղերգու թիւնը : — Կէսնէր (1788), որուն անուանի է Մահ ԱԲԵԼԻ ըսուած բանաստեղծութիւնը, որ և հայերէն արձակ թարգմանութեամբ տպուած է, նոյնպէս հռչակաւոր են իր Գեղծուք (Իտիլ) : — Վիլանա (1813) որ բազմաթիւ գրուածոցը համար Վիլիէո Գեթմանիոյ ըսուեցաւ : — Քլովիշ (1803) Մեծ խառն ըսուած դիւցազններգութեան հեղինակը, որուն մէջ թէպէտ չառ վսեմ հասուածներ կան, սակայն մութ ու երկայն կտորներ ալ պակաս չեն, աւելի անուանի են իր Տաղերը : — Շիլլեր (1805) որ անուանի տղերգութիւններ և ուրիշ շատ բանաստեղծութիւններ ունի լի կորովով, երեակայնութեամբ ու գեղեցիկութեամբ : — Կէթէ (1832) Գերմանիոյ գերագոյն հանձարներէն մէկը, իբրև բանաստեղծ՝ իր հայրենակից հռչակաւոր բանաստեղծներուն հաւասար է : Իսկ իբրև արձակ մատենագիր՝ իր ոճովը ամեն ամեն օրինակ է յստակութեան ու գեղեցիկութեան :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, — Պատմաբանից մէջ անուանի եղան ֓րեդերիկոս Միւլլեր (1784), Հելտեր Բրուսիացին (1803) որ կարգէ դուրս հանձարովը ինքիբմէ դիտութիւններ ու լեզուներ սորվեցաւ, և աստուածաբանութեան, իմաստասիրութեան, պատմութեան մատենագրութեան ու գեղարուեստից վրայ անթիւ գրուածներ թողուց իր երկա

Ի՞նչ անուանի պատմաբաններ ունեցան Գերմանացիք :

սիրութեանցը ամենէն անուանին կը սեպուի Իմաստաբան Գրգորիան-Սեբեաստիան ըսուածը, որուն մէջ կը ցուցնէ մարգկային ազգին աստիճանաբար ըրած յառաջադիմութիւնն ու նախահնամուտեան մարդուս վրայ ունեցած խորհուրդները կը ջանայ բացատրել: — Յովհաննէս Միւլլեր Չուիցերացի (1809), որուն անուանի գործն է Պապ-Տեբեան հէլեն-եփեան Դաշակոյց-Սեբեաստիան ըսուածը, անոր համար ալ Թոմիտիէն հէլեն-եփեոյ ըսուեցաւ:

1 ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ . — Իմաստասիրաց մէջ հռչակաւոր են Քանթ (1804) Թամբագործի մը որդի, որ անթիւ գրուածք թողուց, ոմանք իմաստասիրական, և ոմանք գիտութեանց վերաբերեալ: Կալ (1828) իմաստասէր և բժիշկ, որ ուղեղին կազմութիւնն ու գործողութիւնները գիտելով ըսաւ թէ մարդուս ամէն բնական ազգեցութիւններն ու մտաւոր կամ բարոյական կարողութիւններն ու յատկութիւնները ուղեղին մէյմէկ մասին վրայ ազաւորուած են, և ետեւէ եղաւ աս կարողութեանց աւելերը գանկու: Աս նոր վարդասպետութիւնը Գանիաֆան-Սեբեան (քրանտլոթի), Գանիադիֆան-Սեբեան (քրանտլոթի) ըսուեցաւ, որուն հիմայ իր հեռուողները սկսան ըսել ուղլաֆան-Սեբեան (ֆրէնտլոթի): — Լալաթը Չուիցերացի (1801) որ շատ աստիճան մարդուս երեսին գծագրութիւնը գիտելով, և բնաւորութեան ու հոգւոյն զգացմանցը հետ բաղդաստելով Բնագիտան-Սեբեան (ֆիզիոլոհիտանի) ըսուած գիտութիւնը հնարեց: Անուանի

1 Ի՞նչ երևելի իմաստասէրներ ունեցան:

Են նաև իր Հէլէ-էփաիան ջոյճի ըսուածներն որ
ազգային երգեր են :

1 ԳՒՏՈՒԹՅՈՒՆՔ . — Գիտութեանց մէջ երևելի
եղողներն են Յարէնհայտ (1740) Բրուսիացի
բնախօսը, որուն հնարած ջերմալախն ինչուան հիմոյ
կը գործածուի Գերմանիա ու Անգղիա : — Հէն-
քէլ (1744) բնալոյծն ու հանքագետը : — Մայէր
(1762) աստղագրաշխարհ, որ օգտակար գործիքներ
հնարեց ու լուսնի շարժմանըները ճիշդ հա-
շուի վրայ առաւ : — Այլեր (1783) երկրաչափն
ու բնախօսը, որ անխնայ աշխատասիրութեամբ
բազմաթիւ գրուածքներ հրատարակեց, ու չափա-
բանական գիտութեանց զարգանալուն շատ օգ-
նեց, մանաւանդ փաբէլերաիան ու ասթրոլաիան ըսուած
հաշիւներուն : — Պալլաս (1814) Բրուսիացի բնա-
պատումն և ուղևորը, որ շատ կարևոր գրուածներ
հրատարակեց : — Փրեդերիկոս Վէնիկ (1833)
բնախօսն ու մէքենագէտը, որ տպագրութեան
մէքենական մամուլներն հնարեց :

2 ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ . — Երաժշտաց մէջ անուանի
եղած են Կլուք Պոհեմիացին (1787), որ շատ մը
երևելի սաղերգութիւններ ունի : — Մոզարթ
(1791) Ժ՛՛՛՛ գարուն ամենէն հռչակաւոր երգա-
հանը, ու՛՛՛՛ թարեկան էր երբոր Վերայլի պա-
լատին մատրանը մէջ երգէհոն զարկաւ ու ան տա-
րիքէն մեծանուն երաժշտաց կարգն անցաւ . իր

1 Գիտութեանց մէջ որոնք կղան անուանի :

2 Հռչակաւոր Գերմանացի երաժիշտներն որոնք
են :

գլխաւոր գործքերն են Տնն յոսան , հարստիք Փէ-
 իւրոյի , Սրիւք Կիւսեալ , Գլխաւոր Տիպոսի , որ ին-
 չուան հիմոյ կը ձեացուին , և իր հռչակաւոր
 հանգստեան ըսուած պատարագը : Կ'ըսեն թէ առ
 սքանչելի երգը յօրինելու աստն գրեթէ դուշա-
 կելով որ իրեն համար կը շինէ՝ մտածմունքէն օրե-
 լը կարճեցան : — Հայան (1809) որ անուանի
 ապերգուծիւններ և սերիշ երգեր ունի :

ՌՈՒՍԱՍՏԱՆ. — Ռուսաց մատենագրութիւ-
 նը յի գարուն մէջ Սեծին Պետրոսի ջանքովը սկը-
 սաւ ձեւաորիչ ու յարուն ծաղկեցաւ : Անուա-
 նի մատենագիրներն են Փրոքթովովիչ (1736), որ շատ
 մը աստուածաբանական ու ճառական գրուած-
 ներ ունի : — Անտոնով Քանթի (1743), որ
 լատիներէնէ ու գաղղիարէնէ ըրած թարգմանու-
 թիւններովը Ռուսաստանը ճոխացուց : — Թրե-
 տեպովսի (1779) սերճախօս ու բանաստեղծ ,
 որ Փարիզու մէջ Ռուլէնին աշակերտութիւն ընե-
 լով անոր գրուածքները ռուսերէն թարգմանեց :
 — Վոլքով (1763) քաջ երաժիշտ ու բանաստեղծ ,
 որուն մեծ արդիւնքն ան է որ թատերախաղերը
 ինքը նախ մտուց Ռուսաստան : — Թաթիշեւիչ
 (1780) պատմաբան , որ ունի Պատմաւիշն Ռուսաց՝
 անկատար մտացած : — Լոմոնոսով (1768) Ռու-
 սիոյ Պիւրաբոսը , ձկնորսի մը որդի էր . ունի հռ-
 ղուական քերթուածներ , ողբերգութիւններ ,
 լատիներէնէ ու յունարէնէ թարգմանութիւններ ,

Ռուսաց մատենագրութիւնն էրը սկսաւ , և ա-
 նուանի մատենագիրներն որոնք են :

և Մեծին Պետրոսի վրայ ըրած 'Նէրբ-շէ'՝ ուսն պերճախօսութեան օրինակ է: — Սուսնորքով (1778) քաջ բանաստեղծ, որ շատ ողբերգութիւններ, կատակերգութիւններ, վարդապետական բանաստեղծութիւններ, ու սաղեր ունի: Ոճն է վսեմ ու ներդաշնակաւոր: — Քերթաքով (1776) որուն Ռոսսիային ըսուած գիւցաղնական բանաստեղծութիւնը շատ անուանի է: — Պղատն արքայիսկոպոս Մոսքուայի, Ռուսաց առաջին կարգի պերճախօս քարոզիչն է: — Շչերպով (1790) քաջ պատմագիր, որ Պարսկաստանի Ռուսաց ունի՝ առաջիններէն աւելի ճշգրտութեամբ գրուած: — Փոխովցի (1760) ճարտար թարգմանիչ, որ այլ և այլ աղբաց ընտիր հեղինակները թարգմանելով Ռուսաց մատենագրութիւնը ճիսացուց: — Քողովցի (1770) տաղերգակ բանաստեղծ, և թարգմանիչ Համբրոսի: — Ֆան վիզնի (1792) որ անուանի թատերասպեր կը շինէր: — Տերժավին (1816) որ հռչակաւոր Տաշէր ունի: — Օզերով (1816) տաղերգակ բանաստեղծ: — Քարամզին (1825) մեծանուն պատմաբան, որուն շատ անուանի է բազմահատոր Ռուսաց Պարսկաստանը, որով և Ռուսիայի տեղի Ռուսիայ կոչուեցաւ: — Պոկրանովիչ (1803) թարգմանիչ բանաստեղծ, որ իրէք հատոր Ռուսաց Լուսինէր ունի: — Քրիլով (1844) Ռուսաց առաջին առակախօսը:

1 ՏԱՆԻՄԱՐԻԱՆԻ ԸՈՒԷՏ. — Տանխմարքա.

1 Տանխմարքացուոց ու Շուկայ մատենագրութիւնը կ'ըր ծաղիկեցաւ:

յւոց ու Շուեապց մտանադրուածիւնը ՎՐ՝ գարուն մէջ աւելի ծաղկեցաւ . հոլտէրիկ (1754) անուանի կատակերգութիւններովը , և ուրիշները իրենց ողբերգութիւններովը մեծ անուն հանելցին : Քնարերգակ բանաստեղծութիւնը , բարոյական խնամասիրութիւնն ու հոգեւոր սերճախօսութիւնն ալ շատ առաջ գնացին :

1 ԳՒՏՈՒԹՒՒՆՆԵՐ . — Գիտութեանց մէջ ալ կըրնանք յիշել Կելսիոս (1744) աստեղաբաշխն որ հարիւրամասն (սանթիկրաս) ջերմաչափը հնարեց , հուսով (1764) աստեղաբաշխը , և Լիննէոս (1778) հաշակաւոր բնասպասումը՝ հովուի մը որդի , որ առնկերը ըստ սեռի գասաւորեց :

2 ՀՈՒԱՆՏԱՆ . — ՎՐ՝ գարուն կէսերը բանաստեղծութիւնը շատ ընկաւ հոլանտայի մէջ . ան առնի հեղինակները սկսան ամենեկին իրենց քովէն նոր բան մը չտակդել . շինածներնուն մէջ ալ համ չկար . որով և սպգին օխորժակը քիչ առնի մէջ խանդարեցաւ , ինչուան որ հարէն (1779) իր Մարտի 1-ի ըսուած հաշակաւոր բանաստեղծութեամբը նորէն սպգին օխորժակն արժընցուց :

1 Գիտութեանց մէջ ինչ անուանի մտորդիկ ունեցան :

2 ՎՐ՝ գարուն հոլանտայի մտանադրութիւնն ինչ զիճակի մէջ էր :

1. ԳԻՏՈՒԹԻՒՆԻ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ. — Գիտութեանց մէջ յիշատակի արժանի մարդ մը չեղաւ : Գեղարուեստից մէջ կրնանք յիշել Էրկու անուանի սպակերահաններ, վան-Օսթատ (1685), և Կէրար Տով (1680) սպակագործի մը որդի . սակիայ հասարակ անական բաներն ալ անանկ ճարտար կը նկարէր, որ աննորները կը զմայլէին . իր հրաշակերարը կը սեպուի ջրգու ին ըսուած նկարը :

2. ԺՐԴԱՐՈՒՆ ՄԷՋ ԵՒՐՈՊԱՅԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ : — Գ.Ե.Ղ.Ղ.Ն. — Քուլպերին հանձարովը ստացած վաճառականութիւնը ինչուան ժՐ դարուն կէսը սահեց Գաղլիա, արեմտեան Նիգիստանի ու Մարթինիկէ, Կուսաալուիա և Սուրբ Գոմինիիոս ըսուած կղզիներուն մէջ խահուէ մշակել տալով . բայց ժՐ դարուն վերջերը Գաղլիացւոց վաճառականութիւնը շատ վար ընկաւ իրենց Անգլիացւոց դեմըրած սպառնալիմներովը, որով և օտար երկիրներու մէջ ունեցած անդերնէն շատը կորսնցուցին :

3. ԱՆԳՂՆ. — ԺՐ դարուն մէջ Անգլիոյ վաճառականութիւնը կարգէ դուրս կերպով մեծցաւ, և Անգլիացիք իրենց ճարտարութեան ու անթիւ գաղթականներուն բերքերովը աշխարհիս

1 Գեղարուեստից մէջ ի՞նչ հռչակաւոր մարդիկ ունեցան հողանաացիք :

2 ԺՐ դարուն մէջ Գաղլիոյ վաճառականութիւնն ի՞նչպէս էր :

3 Ի՞նչպէս էր Անգլիացւոցը :

ամէն վաճառանոցները լեցուցին : Գրեթէ բոլորովին փճացուցին Սպանիոյ վաճառականութիւնը, Փորթոգալը իրենց վաճառքներուն մթերանոցը ըրին, և սրատերազմական ու առևտուրի նաւերնուն թիւը շատցրնելով կամաց կամաց բոլոր ծովային վաճառականութեան փրկեցին :

1. ՀՈՒԱՆՏԱ. — Հոլանտայի վաճառականութիւնը որ յի գարուն այնչափ ծաղկած էր, յի գարուն մէջ բոլորովին ընկաւ. և Հոլանտացւոց ձեռքը միայն Ռիկիանիոյ համեմանց վաճառականութիւնը մնաց :

2. ԻՏԱԼԻԱ. — Նոյն առեւնները Իտալիոյ վաճառականութիւնը գրեթէ ոչինչ էր, և միայն Ալեքսանդրի ու Ճենովա իրենց հին վաճառականութեան մէկ մասը կրցեր էին սրահել :

3. ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՀԻՒՍՒՍԱՆՏԻՆ ՏԷՐՈՒԹԻՒՆԵ. — Գերմանիոյ ու հիւսիսային աերութեանց վաճառականութիւնը յի գարուն մէջ սկսաւ ծաղկիլ, մանաւանդ Ռուսիոյ վաճառականութիւնը շատ ծաղկեցաւ, որով ոչ միայն Եւրոպիոյ հեռառևտուր կ'ընէր, այլ և Չինաստանի ու Ամերիկայի հետ :

1. Հոլանտայի վաճառականութիւնը ինչ վիճակի մէջ էր :

2. Իտալիոյ վաճառականութիւնն ինչպէս էր :

3. Գերմանիոյ ու հիւսիսային աերութեանց վաճառականութիւնն էր սկսաւ ծաղկիլ :

1 ՍՊԱՆԻԱ. — Սպանիա ժե դարուն մէջ Անդր-
զիացւոցմէ ու Հողանտացւոցմէ առած հարուածովը
ժե դարուն մէջ ալ չկրցաւ ինքզինքը կան-
գնել:

2 ՓՈՐԹՈՎԱԼ. — Պրազիլի սոկէ հանքներովն ու
ադամանգներովը, շաքարաբեր եղէգներովը, բամ-
բակէնիներովն ու ներկի փայտերովը Քորթոկալի
վաճառականութիւնը շատ մեծցաւ:

1 Սպանիոյ վաճառականութիւնը Բնչ վիճակի
մէջ էր:

2 Փորթոկալի վաճառականութիւնը ինչնով մեծ-
ցաւ:





ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ

Պ Ե Տ Մ ՈՒ Թ Ի Ի Կ

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ԽՈՌՈՎՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՒՈՅ

ԳԼՈՒԽ Ա .

Պարսնակիւն խոռովակեան Գաղղիոյ, աղփային ընդհա-
 նուր յաղղակէն ինչոսան Միլիարդի մահը (2789-1791):
 Աւագային ընդհանուր յաղղակ վերսայլի . — Փիլիպպոս
 Յոլանդի Օրակակի տոհմը . — Լաֆայէթ . — Միլիարդոյ
 Լիբիան հեղափոխութիւնը . — Աւագային յաղղակին հաշ-
 մով . — Երտոմի գնդակակազմ . — Թագաւորը ընդհա-
 նուր յաղղակի գործարկ . — Պայլի նախագահը . — Յոլան-
 դի 14ին խոռովակիւնը . — Վաճիւճեմակ . — Պարսնակի
 առումը . — Թագաւորին Փարիզ դատանակը . — Լոտովի-
 իոս յաղղակի վերսայլի գործարկ . — Աւագային յաղղակ
 Սահմանադիր կ'ըսուի . — Թագաւորին Փարիզ դատանակը .
 — Գաղղիականութիւն . — Գաղղիոյ ունեւորութիւնը քա-
 նաւ Բաթնի . — Սահմանադիր յաղղակի ուրիշ շեշտ-
 ները . — Յոլանդի 14ին դաշնակցութեան քանակ . — Արե-
 սեան դաշնակցութիւն . — Թաւալակ . — Միլիարդի մահը:

1 Մայիսի 5ին 1789ին վերսայլի մէջ բացուե-
 ցաւ աղղային ընդհանուր յաղղակը (Եթա-ժէնե)

1 ընդհանուր աղղային յաղղակը ինչպէս բացուե-
 ցաւ :

րոյ) : Ան ժողովն մեջն էր թագաւորը ու տէրու-
 թեան իրեք կարգերը, որ էին եկեղեցականք, ազ-
 նուականք և հասարակ ժողովուրդը : Անտիկե
 սիսկիսպոսը 'ի սմախե հոգւոյն սրբոյ ստասարսպ-
 մասաւցանելէն ետքը, դարձաւ ըսաւ թագաւո-
 րին . « Ընկալ զյարգ եկեղեցականաց, զմեծարանս
 աշնուականաց և զնսնարհ պապատանս երրորդ
 կարգին (Թիէրս էթա), հասարակ ժողովրդեան » :
 Այսպիսի կրօնական ու թագաւորական հանդէս
 ներուլ բացուեցաւ ան ժողովը, որ զթագաւորու-
 թիւնը սխախտործանէր ու կրօնքը ջնջէր :

Ժողովոյն անդամներն էին հազար երկու հա-
 րիւր հոգի : Աշնուականաց նուիրակներուն մեջն
 էր Փիլիպոս Յովսէփ՝ Օսլէանի գուքսը, որ իր
 կեանքը անկարգութեամբ անցընելէն ետքը, կար-
 ծէր թէ թագաւորին ու արքունեաց դէմ կենալով
 ժողովրդեան աչքը սխախտմանէ ու անոր գլուխ սխ-
 ախտի կենայ . բայց իր անհաստատ բնաւորութեամբն
 ու փառասիրութեամբը ժողովրդեան մը գլուխ
 ըլլալու մարդ չէր : Անոր քովը նստած էր Առ-
 Ֆայէթ . որ իր ընտանի՝ պարզ ու սիրելի կերպե-
 րովը, խնարհամբար իշխանութեամբն ու մեծան-
 ճնութեամբը անուանի էր : Մարդիկ եղած ատե-
 նը՝ Ամբրիկացւոց ազատութեանը համար ստան-
 բազմեր էր . սպառաական եղած ատենն ալ՝ ար-
 քունեաց զեզխութեանցը դէմ կրկինար : Ամբրի-
 րիկացէն գառնալէն ետքը հասարակապետական
 ազատութեամբ մը մտաւ ռամկին մեջ խառնուե-
 ցաւ, և ամենուն սիրելի եղաւ : Առանց մեծ հան-

1. Ժողովոյն գլխաւոր անդամներն որոնք էին :

Ճար ունենալու՝ անփոփոխ էր Վաֆայէթ, անշահասէր, և ուրիշներուն հատաղութեան ատենը ինքը անխառով օրինաց թագաւորերը կ'ուզէր: Անկէց քէջ մը հեռու կեցած էր Քաղալէս, որ անօգուտ տեղ էր արիական ճարտասանութեամբը ինքնակալութեան օգնելու պիտի աշխատէր: Եկեղեցականաց նուիրակներուն մէջն էին Մորիքահաննիս. ասիկայ կ'ուզէր որ օգտակար փոփոխութիւններ ըլլան, բայց կը ջանար խռովութեան առջևն ալ առնելու որ թագաւորութեան ու եկեղեցւոյն դէմ միանգամայն կը սպառնար. Թալէրան քաղաքագէտ եպիսկոպոսը՝ խորագիտութեան օրինակ, Սիւլէյմ և Գրիգոր քահանաներն ալ ազատութեան ու ռամհաւարութեան քարոզիչներ էին: Երբորդ կարգին նուիրակացը գլուխ էր Միրապոյ կոմսը՝ կորովամիտ, պերճաբան, անձնեայ, հերատանծ, երեսը ծաղկաւեր, զեղծ ու անառակ, սխերիմ՝ թշնամի արքունեաց ու թագաւորութեան: Անոր քովը նստած էին Պայլի, Պառնալ, Մունիէ, Ռոպէտիէր՝ երիտասարդ փաստաբանը, Փէթիսն, Թուրէ, Շափլիէ, Թարժէ, Մալուէ, Տիւփոր:

Թագաւորը Վուգոզիկոս ԺՁ ազնուական պարզութեամբ մը ժողովականաց առջև ճառ մը խօսեցաւ. « Ի՞նչ որ հասարակաց երջանկութեանը օգուտ մը կրնայ ընել: Ի՞նչ որ կրնայ մէկը թագաւորէ մը խնդրել, որ իր ժողովրդեան առաջին բարեկամն է, բոլոր անբաներուն կրնայ սպասել ինձ մէջ,

¹ Երբորդ կարգը ի՞նչ կ'ուզէր: — Ազգային ժողովը ի՞նչպէս կազմուեցաւ:

ըսաւ : Սրտաշարժ էին ան խոտամուշեքները . բայց խառվուծիւնն ուղղութեամբն համար բաւական չէին . երրորդ կարգը կ'ուզէր որ ոչ եթէ թագաւորը , այլ ինքը գնէ ու վերցընէ Գաղղոյ օրէնքները : Նոյն օրը սրահանջեց որ մեկալ երկու կարգերուն նուիրակներն ալ իրեն հետ միանան , և իրեք կարգերը հասարակաց գործողութեանցը վրայ զսաղաս խորհուրդ չընեն : Աս բանիս եկեղեցականք ու ազնուականք դեմ կեցան : Չվհասեցան երրորդ կարգի մարդիկը . աւելի ալ յանդգնութեան ձեռք զարկին . յունիսի 20ին (1789) գնացին տեսան որ թագաւորին հրամանովը ժողովարանին դռները դոցուեր են . հողերնին չեղաւ , գնացին Արասյլի մէջ գնահ կաղաղու աեղ մը կար՝ հոն ժողվուեցան . ան տանը Պայլի նախագահը աթուի մը վրայ ելաւ ու բարձր ձայնով աս ձեը կարգաց . « Երգում ըրեք որ ամենեկն իրարմէ չբաժնուիք : և ուր որ հարկը սահանջէ՝ ժողվուիք , ինչուան որ թագաւորութեան սահմանագրութիւնը որոշուի ու հաստատուի » : Մեկ բերան երգուընցաւ ժողովքը , ինքզինքը Արգայի կամ Օրինատի ժողովանուանեց , սրահին չորս կողմը դիզուած ժողվուրդն ալ ծափածայն աղաղակով ընդունեցաւ : Աս երգումը ըսուեցաւ սրահանութեան մէջ Երգումն գնացիւնս (Սերման ախ ժեօ սը փօմ) :

1 Յունիսի 23ին թագաւորը ընդհանուր ժողով մը գումարեց , և իրեք կարգին առջևը իր հրամաններն ու տալու ազատութիւնները կարգալ տուաւ .

1 Թագաւորն ինչ ըսաւ : — Պայլն ու Միրապոյ ինչ ըրին :

Ան յայտարարուածիւնը թէ որ սարի մը առաջ
 ըլլար՝ մեծ բարիքի տեղ պիտի անցնէր, բայց գնաս-
 կախագիւ երգմունքէն ետքը բանի չեկաւ . շատ ուշ
 էր : Անօգուտ տեղ թագաւորը հրամայեց որ ժո-
 ղովը ցրուի . այնուականներն ու եկեղեցականաց-
 մէ տմանք միայն հնազանդեցան . երրորդ կարգն
 ու եկեղեցականաց մէկ մասը ժողովարանէն չբաժ-
 նուեցան : Ան ասե՛ն հարկ եղաւ որ թագաւորը
 ղօրք բերել տայ . Պրեզէ արարողապետը ժողովա-
 րանը մտաւ և ուզեց թագաւորին հրամանը Պայլի
 նախագահին ըսել . Պայլի պատասխան տուաւ թէ
 « Ժողովքին հրամանները միայն կ'ուզեմ ըսել » :
 Ան ասե՛ն յանկարծ սոք ելաւ Միրապոյ , յիշեցուց
 ամենու՛ն գնասկախաղին երգումը , և դարձաւ արա-
 րողապետին ասխօսքս ըսաւ . « Գնա՛ ըսէք ու սիրո-
 ջըդ , որ մե՛նք հոս ժողովրդեան կամքովը ժողովուած
 ենք , և զմեզ հօսկեց հրացաններու սուխներովը
 միայն կրնայ դուրս հանել » : Ժողովքն ալ վճռեց
 որ ս'վոր իր անդամներէն մէկուն դպչի , վատանուն
 ըլլայ , մասնիչ հայրենեաց և պարտական մահու :

1 Արքունիքը անով ինքզինքը յաղթուած չկար-
 ծեց . վերսպլին չորս կողմը զօրքով պատեց : Բայց
 Փարիզու մէջ ձևացած « Էփ-դեբը աշտինքն ժողովակ-
 ները և Օռլէանի դքսին զօրաւոր կողմը՝ ժողովուոր-
 դը սոք կը հանելին , թագաւորու թեան դեմ կը
 դրդուէին : Ան միջոցին թագաւորը արսորեց Նէքեր
 իշխանը որ ժողովրդեան սիրելի էր , ասով ժողո-

1 Ժողովուորը ի՛նչ բանի վրայ աւելի բարկացաւ :
 — Յուշխի Նիլին խառվուածիւնը ի՛նչպէս ե-
 լաւ : — Պատժիլը ի՛նչպէս առնուեցաւ :

վերդեան գլուխը աւելի տարցաւ : Յուլիսի 13ին պզտիկ խռովութիւն մը ելաւ Փարիզ . Լամպէպը իշխանը ժողովրդեան վրայ հրացան պարսպել տուաւ զօրաց . ծեր մը սպաննուեցաւ , և Փարիզու ժողովուրդը զէնքի վազեց : Երկրորդ օրը քաղաքին փողոցներուն մէջ բազմութիւնը կը վստար , և Փալէ-Ռուայալին պարսէզին մէջ մեծ շփոթութիւն կար : Գամիլ-Տէմուլէն նստարանի մը վրայ ելած՝ խորհուրդ տուաւ որ երթան Պասթիլը և սուսմ միջնաբերդը պաշարեն . շուտ մը ծառի ճիւղ մը փրցուց ու իր գլխարկին վրայ անկեց . ամէնըը իրեն հեռակեցան . և որովհետև օրը կիրակի էր , քիչ մը ժամանակի մէջ հաղարաւոր մարդիկ ժողովուրդեան , ոմանք զինավաճառներու խանութներն ու աւերութեան զինարանները կողոպտեցին , մէկալ նոնք ձեռքերնին ջահեր առած շատ տեղ այրեցին ապականեցին . զիմեցին բազմութեամբ Պասթիլը վրայ , քանի մը ժամ պատերազմելով բերդը աւին , գլխաւորներուն գլուխները կտրեցին ու նիզակի վրայ անցուցած՝ ահաւելի ձայներով Փարիզու մէջ պարտցուցին : Բայց ապստամբութիւնը կարգաւորելու համար Պայլի քաղաքապետ ընտրուեցաւ Փարիզու , և Լաֆայէթ զօրավարը գլուխ գրուեցաւ Գաղղիոյ բոլոր քաղաքացի զօրաց , որ ան օրունէ ՚ի վեր կարգ նստեալ այսինքն ազգային պահապանք բտուեցան : Ան օրը սեպուեցաւ Գաղղիոյ խռովութեան սկիզբը :

1 Երկրորդ օրը թագաւորը Ալգային ժողովա-

1 Երկրորդ օրը թագաւորը ինչ ըրաւ : — Փալէ-Ռուայալն պատերուն վրայ ինչ կ'սպուցած էին :

լսանը գնաց . քաղաքին մէջ եղած զխողուածներուն վրայ ցաւ ցուցընելէն ետքը իմացուց թէ որովհետեւ ժողովը դռն չէ Վերայլին ու Փարիզու քովն զօրքերուն վրայ, անոնք անկէց պիտի հեռանան : Աս բանիս վրայ ամէնքը կէտքէ՛ աւելի կանչեցին . և յաղթանակով զինքը պաշտօնը տարին, անոնք՝ որ քիչ մը առաջ թագաւորութիւնը ձեռքէն առնելու համար կը պատերազմէին : Թագաւորին Մարիամ-Անթուանէթ արքայորդուոյն ձեռքէն բռնած պատըշգամը ելաւ . իրեն ալ կէտքէ՛ Լագրան՝ կանչեցին . ետքը պաշտօնին մատուցը մասն ու Զէլու Ասպետ Գալլիանէ՛՛ կըրդը երգեցին : Այլլային ժողովոյն հետ հաշտուեցաւ թագաւորը , Փարիզի ժողովըգեան հետ ալ հաշտուելու համար խոստացաւ որ մայրաքաղաքը այցելութեան երթայ : Փալէ-Ռուսայալին պատերուն վրայ շատ մը անուններու ցանկ կոչուցած էին խռովարարները , և անոնց դուրսները կ'ուզէին . ան ցանկին մէջ էին նաև թագաւորին եղբայրը Արթուայի կոմսը , և իր որդիքը Գոնաէ և Գոնթի իշխանները , ու Նէքէրին անզը գրուած պաշտօնատէրը , ժիայն թագաւորին անունը չկար . ան ալ վարպետութեամբ չէին գրած՝ որպէս զի զինքը մէյմը Փարիզ ձգեն : Առգովիկոս ԺԶ մահը աչքը առած , մտիկ չընելով թագաւորուոյն աղաքանացը ու թախած արցունքին , որոշեց որ երկրորդ օրը ճամբայ ելլէ Փարիզ երթալու :

1 Յուլիսի 17ին (1789) առաւօտը թագաւորը

Թագաւորը ինչպէս Փարիզ դարձաւ : — Բռքարար ինչ էր :

կառք մտաւ . բազմաւ թիւն նուիրակաց սարսփ չհար
կեր թայնն , չորս հարիւր զինուոր առջևէն կեր-
թար , հազարաւոր ալ գեղացիներ երեք ժամիններ
ու դաւազաններ բռնած թագաւորին ընկերա-
կցու թիւն կ'ընէին . եօթը ժամ այնպիսի ահուելի
հանդիսով ճամբոյ ընէլէն ետքը , Փարիզի մօտ Ղա-
ֆայէ թէ Պայլի թագաւորին առջևը ելան , և Պայլի
ըսաւ . « Ասոնք են , տէր արքայ , քու ազնիւ քա-
ղաքից Փարիզու բանալիքը , որ առենով չենրիկոս
չորրորդին արուեցան : Անիկայիւր ժողովուրդը շա-
հեցաւ , հիմա ժողովուրդը իր թագաւորը վաս-
արկեցաւ » : Ան խօսքերէն ետքը կառքը դէպ 'ի
Օթէլ-աը-Վիլ գնաց , և ժողովրդոց բազմաւ թիւ-
նը չորս գին կեցած՝ թագաւորը կը բարկէին Վեց-
օէ՛ ասօն կանչելով : Ղուգովիկոս հնգեասաննե-
րորդին հրապարակէն՝ իրէք հրացան սարսփուե-
ցաւ . գնտակին մէկը եկաւ թագաւորին կառքին
քովը կեցած կանանց մէկը զարկաւ սպաննեց .
ուրիշ մըն ալ թագաւորին զինակրին գլխարկը
ծակեց անցաւ : Վերջապէս հասաւ Ղուգովիկոս
Օթէլ-աը-Վիլ . Պայլի բերաւ իրեն քառքը ըսուած
եռագոյն նշանը առաւ իբրև պահպանակ , որ էր
կարմիր , կապուտ ու ճերմակ երիզէ ձեացած
ծաղիկ մը . կախեց վրան Ղուգովիկոս ան եռա-
գոյնը , և պատուհանէն երեցաւ ժողովրդեան :
Ան նշանը ըսել էր թէ ազգին կամքը կատարել
կուզէ թագաւորը . ուստի ամէնքը միարեւան ա-
զազակեցին Վեցօէ՛ արքայ և ազապետիւնն : Ղուգո-

* Որ է հիմնական Փլաս արը լա Քոնքորա ըսուած
հրապարակը :

վիկոս նորէն Ալեքսայլ տարուեցաւ . սպառաւն ներս մանկըու ատենը երբոր թագուհին վրան ապրտամբաց եռագոյն նշանը տեսաւ՝ սրտին ցաւէն ընկաւ վրան մարեցաւ :

1 Օգոստոսի 4ին գիշերը Ազգային Ժողովը — որ անկէ ետքը Սահմանադիր (Ասամուլէ Բանթի, Թիւանթ) ըսուեցաւ — ան նշանաւոր սրտմունքն ըրաւ որով թէ ազնուականք, թէ եկեղեցականք և թէ Ժողովրդականք զարմանալի եռանգով մը վառուած՝ իրենց ամէն իրաւունքներէն ու արտօնութիւններէն ետ կեցան . և որոշուեցաւ որ անկէց ետքը ծառայի անունը վերցուի, ակերտուն իրաւասութիւնը ջնջուի, ազնուականներ, դաւառներ ու քաղաքներ արտօնութիւննին կորսնցընեն, աւարքերը ամենուն վրայ հաւասար դրուին ու սր և իցէ Գաղղխացի կարենայ թէ քաղաքական և թէ վննութեան տաշածններու հասնիլ: Թըղթէ սասի մըն ալ կոխեցին ու անունը դրին սասիլնէա: Միանգամայն աս վճիռները հաստատելու համար որոշեցին որ հանդիսով Չքէզ Ասփոսթ Գովաբանէճ երգը երգուի, և Ղուգովիկոս ԺՁ Նուրֆիլ Գաղղիֆան աղաբոսութեան ըսուի:

2 Ժողովրդեան խառնութենէն առաջ եկած անկարգութիւնները ոչ միայն փարկըու մէջ եղան, հասա նաև բոլոր երկիրը տարածուեցան . շատ բերդեր ու սպառաներ կողոպտուեցան ու այրեցան, և բիջ ստենի մէջ ամէն Գաղղխացիք զէնք առին:

1 Ազգային Ժողովը ինչ նշանաւոր սրտմունք ըրաւ:

2 Գրտի երկիրներն ինչ վնճակի մէջ էին:

Իսուովարարները ձայն հանեցին թէ թագուհին երդում ըրած է որ բոլոր Գաղղիացիները ահոթի մեռցնեն . և որովհետև ժողովրդեան մեջ արդէն աղքատութիւնը սաստկացած էր , ութը հազարէն աւելի կասաղի կանայք Աւրասյի վրայ դնացին , մտքերնին դրած ըլլալով որ իրենց խեղճութեանը սրտաճառ եղողներուն ինչ փասս որ կրնան՝ հասցնեն : Երբոր թագաւորին առջևը ելան , ու հրամայական կերպով հաց ուղեցին իրմէ , անիկայ առանց չփոթելու այնպիսի հեղութեամբ ու իմաստութեամբ խօսեցաւ հետերնին՝ որ աչուրնին լեցուեցաւ ու իր ոտքը ընկան , բայց քիչ ատենէն առջինէն աւելի բազմութիւ զօրք հասաւ Փարիզէն (Յ հոկտեմբերի) : Աւրասյի մեջ շատ ատեսակ ձայներ տարածուեր էին , և տարակոյս չկար որ թագաւորին ընտանեացը և մանաւանդ թագուհւոյն կեանքը յայտնի վտանգի մեջ էր : Թագուհին բոլոր գիշերը արթուն կեցաւ , բայց անչփոթ . ու երբոր քովնները վախ կը ցուցնէին թէ սա խուովութեան ծայրը գեշի պիտի երթայ , ըսաւ անոնց . « Գիտեմ որ պիտի գան իմ գլուխս ուղեն . բայց ես իմ մօրմէս ստրվեր եմ որ մահուրնէ չվախնամ » : Մայրն էր Մարիամ Թերեզիա Աւստրիոյ կայսրուհին : Ուրիշները երբոր խորհուրդ կուտային որ փախչի , « Չէ , ըսաւ , ես ոչ երբէք մինակ պիտի թողում ոչ թագաւորը , ոչ

- Ի Կասաղի կանայք ինչո՞ւ համար Աւրասյի դնացին :
 — Թագուհին ինչ քաջարտութիւն ցուցուց : — Աւագակներն ինչպէս վաղեցին սրալատին վրայ :

զաւկրնեքս . իրենց ինչ որ հանդիպի՝ ես ալ կ'ուզեմ մասնակից ըլլալ)), : Առաւօտանց կանուխ երեսուն հազար աւազակ գինովցած ու կապած՝ վագեցին սլաւափին վրայ , սրահապանները ջարդեցին , և ինչուան թագուհւոյն բնակարանը հասան : Թագուհին սրահապաններուն կանչուբռտելէն ու իր դրանը զարնուած տապարներուն թնդմանէն յանկարծ արթնցաւ , ու կէս հագուած՝ ծածուկ սանդուխէ մը փախաւ : Աւագինները տեսնելով որ թագուհին հոն չէ , թրերով զարկին ծակծրկեցին անկողինը . անկէց թագաւորին բնակարանը գնացին , ու ստիպեցին զինքը որ Փարիզ գառնայ :

1 Ազգային յողովը տեսնելով որ ամէն խելացի մարդիկ աս բանիս վրայ բարկացել էն , որոշեց որ ան օրը եղած գիտուածներուն վրայ տեղեկութիւն առնուի . յողովքին գործակալները գնացին թագուհւոյն ալ սպառչեցին որ իրեն կենացը դէմ եղած դաւակցութեան վրայ գիտցածը զուրկ . անիկայ աս վտեմ խօսքերով միտջն սլատասխանեց . «Ես ամէն բան լսեցի , ամէն բան տեսայ , ամէն բան մտցայ » :

2 Ան ահաւոր տեսարանը ընննալէն ետքը ժողովուրդը որոշեց որ թագաւորը Փարիզ տանին : Լուգովիկոս Ժ.Զ հաւանեցաւ , ու Ազգային յողովը որոշեց որ հետը երթայ : «որ ցաւօղի տե-

1 յողովքին գործակալներուն ինչ վտեմ սլատասխան տուաւ թագուհին :

2 Թագաւորն ու իր ընտանիքը ինչ հանդիսով Փարիզ գարձան :

տարան մըն ալ ան ճամբորդու թիւնը եղաւ . Լուգովիկոս և իր ընտանիքը դեռ նոր մահու ընէ ազատած՝ ծաղրական թափօրով մը դարձան իրենց մայրաքաղաքը : Անթիւ բաղմու թիւն ժողովրդեան , ամենքն ալ զինեալ , թագաւորական թիւն նապահներուն գլուխները նիզակներուն ծայրը անցուցած՝ թագաւորին կառքին քովէն կ'երթային : Փարիզ որ հասան , բաղմու թիւնը սկսաւ կեօօէ՝ «բ+» կանչել . ասիկայ վերջին սիրոյ ցոյցն էր որ Լուգովիկոս իր ժողովրդէն ընդունեցաւ . վասն զի ան չարագուշակ օրէն ետքը աւելի գերի եղաւ քան թէ թագաւոր , և իր կեանքը դաւնու թեամբ լեցուեցաւ :

1 Թագաւորին եղբայրը և Քոնստէ իշխանը անու թեանէն դուրս ելան գնացին , և ուրիշներուն ալ օրինակ տուին Վաղղկայէն ելելու . առջինը Փեթրոսուրի գնաց . Աատարինէ Բ կայսրուհին սիրով զինքը ընդունեցաւ և քսան հազար զօրաց բանակ մը խոստացաւ իրեն . իսկ Քոնստէ Հակոբին քովերը ժողովեց միախոսականներն ու բանակ մը կազմեց , որուն մեջ եկան մտան թագաւորին մեկալ եղբայրը որ ետքը Լուգովիկոս ԺԸ ըսուեցաւ , Պաւրոսին դուքսը , և իր որդին Անիկէնի դուքսը :

2 Սահմանագիր ժողովը 1790ին բոլոր Վաղղկան ու թաւու իրերը դաւառ կամ բաժին բաժնեց , ամեն մեկուն մեջի դեաերուն ու լեռներուն

1 Թագաւորին եղբայրն ու Քոնստէ իշխանը ինչ ըրին :

2 Սահմանագիր ժողովը Վաղղկան ինչոյէս բաժնեց ու ինչ կարգադրու թիւններ ըրաւ :

անունները վրան գնելով. վանքերը դոցեւ տուաւ, բոլոր անոնց ստացուածքը գրաւեց, կրօնքի ազատութիւն հրատարակեց և աւերու թեան նոր սահմանագրութիւն մը շինեց, որուն վրայ թագաւորն ալ հանդիսով երգում պիտի ընէր անխախտ պահելու: Ան հանդիսին համար որոշեցին Պասթըլը առման տարեգարձին օրը:

1 Քանի մը օրուան մէջ վաթսուն հազար կամաւոր բանւորներ ընդարձակ Արիսեան գաշառ (չան աը Մարս) ամբիթէատրոնի ձևով պատեցին, որուն մէջ անբաւ ժողովուրդ կրնար մտնել: Յուլիսի 14ին (1790) ամէն բան պատրաստ եղաւ, և թագաւորը գնաց ան հանդէսը կատարելու որ ըսուեցաւ Պաշտօնաբեման ազգային: Հոն թալիբուրան եպիսկոպոսը հայրենեաց խորանին վրայ պատարագ մատուց Սրիսեան գաշառին մէջտեղը. ետքը սահմանագրութեան վրայ թագաւորը, նուիրակները, զօրքն ու բոլոր հանդիսականք երգում ըրին. ժողովրդեան ծափածայն աղաղակը թնդանօթին ու նուագարանաց ձայնին հետ միացած՝ կ'իմացընէր որ ժողովուրդը իր թագաւորին հետ հաշտուեցաւ: Բայց անանկ չեղաւ:

2 Միրասոյ տեսնելով որ իր սկսած գործքին ծայրը խիստ գեշ կ'երթայ որ ինքը ան աստիճանի չէր ուզէր հասցնել, միտքը դրաւ որ թագաւորին կողմը անցնի. կ'ըսեն ալ թէ թագաւորին կողմը անցնելու համար շատ ալ ստակ կերէր էր: Թագուհին սկըսէր էր ըսել թէ «Քանի որ Միրա-

1 Արիսեան գաշառին հանդէսն ինչպէս եղաւ:

2 Միրասոյ ինչպէս մեռաւ:

պոն ողջ է, և ս չեմ վախնար)), : Բայց մահը Մխ-
րապոյին ատեն չթողուց խոտապածը հասարե-
լու, ու քանի մը օրուան մեջ զինքը դերեզման
տարաւ : Մեռնելու ատեն երբոր թնդանօթին
ձայնը լսեց Մխրապոյ, « Ահա, ըսաւ, Աքիււ-
լեան յուզարհաւորութիւնը)), և ա ս դուշակա-
կան խօսքերով կեանքը լննցուց, « Մխապեառ-
թիւնը անպաշտպան կը թողում. ինծմէ ետքը կը
տեսնէք որ խռովարարները անոր մնացորդը իրա-
րու ձեռքէ պիտի յափշտակեն)), : Մխրապոյին
մահուանը վրայ ամենքը ցաւեցան, վասն զի անիկայ
իր հանճարոյն զօրութեամբ ամենուն վրայ կ'իշ-
խէր. բոլոր Աղգային Ժողովը, Փարիզու գառա-
ւորները, զօրքը, աղգային սպահապաններն ու
բիւրաւոր քաղաքացիք փառաւոր հանգիսով մար-
մինը Սէնթ-ժընըվիէվի եկեղեցին տարին, որ եր-
կու օրէն ետքը Փանիէն ըսուեցաւ այսինքն Ամե-
նադից տաճար. շէնքին ճակատն ալ ա ս մակա-
գրութիւնը փորեցին. ԱԻԱԳ ԱՐԱՆՑ ԵՆՈՐՀԱՊԱՐՏ
ՀԱՅՐԵՆԻՔ :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Շարայարու-Բիւն Խոտով-Բեան Գաղաթոյ՝ Միւրապոյի
Տահուանէն Ինչուան Լագաւորին Բանաբարգէլու-Բիւնը
(1791-1792) :

Թագաւորին ու ընդանեացը Փարիզէն իտալիէն ու Բըու-
նուիւն . — Սու սաղաթապէսը . — Ազգային Ժողովոյն
Խորհած Տարտիլը . — Պատնաւ և Փէլիոն . — Թագաւո-
րին Փարիզ Բերուիւն . — Տասարայնապէսու-Բեան Յայնը .
— Պրիսոս , Տանոն և Քամիւ-Տէճու-Էն . — Պայլի
ու Լաֆայէլ . — Մեկուլ քերու-Բեանց Գաղաթոյ Վրայ
Վալէլու սպառնաւիտք . — Սահմանադիր Ժողովոյն
քեւած պարբասաբու-Բիւնը . — Օրէնսդիր Ժողովը .
— Աջնոյնուտ և Չախնոյնուտ . — Ժիւրնալէն .
— Ժառնգիւններոն ու Քորալիէններոն տիւայը . —
Օրէնսդիր Ժողովոյն Վճիռները . — Գաշնալից Լագա-
ւորաց Դէճ պարբարաճ հրապարակուիւն . — Ռոշաճ
պոյ , Լաֆայէլ և Լի-քնէր զօրաժաբները . — Ռոշաճ
պոյին յաղթուիւն . — Ժողովրդեան Թիւիւնների Վրայ
Վալէլը . — Սանձեա . — Փէլիոն ու Լագաւորը . —
Մարտիւնացիտ . — Թիւիւններ պալատին նորէն պալա-
տուիւն . — Թագաւորին ընդանեոտք հանդերձ օրինադիր
Ժողովաբանը իտալիւն . — Չորիցբարացի զօրաց քաջա-
լիւնն ու Չարտը . — Թագաւորին ընդանեոտք Թաճիւ
աշխարհիին ՎէՋ Բանա Դրուիւն :

Լուգովիկոս ԺՁ Ազգային Ժողովոյն ու ժո-
ղովրդեան աչքը մանեւու համար ամէն ջանք ընե-

Ազգային Ժողովը ինչ կերպով ուղեց ժողո-
վուրդը հանգարտեցընել :

լէն ետքը , երբոր տեսաւ որ ճար չկայ , և օրէ օր
 էր կեանքը աւելի մեծ վասնդի մեջ է , որոշեց որ
 քանի մը հաւատարիմ ծառաներուն ու բարեկա-
 մաց ձեռքովը Գաղղիայէն ձգէ փախչի : Յունիսի
 21ին 1791ին կէս գիշերանց Թիւրքլըրի սպառակէն
 էր ընտանիքովը ծարսեալ հասարակ կառք մը մտաւ ,
 ելաւ քաղաքէն ու անվտանգ ինչուան Սէնթ-Մե-
 նեուէ քաղաքը հասաւ , հոն կառքին ձիերը փո-
 խելու ատեն՝ Տրուէ անունով մէկը զլծագաւորը
 կը շանչնայ , մէկէն կ'երթայ ամէն տեղ կ'անացը-
 նէ , և Վարէն քաղաքին կամրջէն անցնելու ատեն՝
 կառքը կը բռնեն : Սող քաղաքապետը վրայ կը հաս-
 նի , հրամանագիրնին կը հարցնէ ու միանգամայն
 կը հրաւիրէ որ կառքերնէն իջնան , քիչ մը հանդ-
 չին , և թագուհւոյն կատակ մը ուզելով ընել որ ան-
 ծանօթ անուն մը իրեն առեր էր , « Տիկին , ըսաւ ,
 քու սենեկապետդ ի՞նչպէս կը նմանի մեր թա-
 գաւորին » , և հանեց Նուզովիկոս վեշտաւանե-
 րօրդին կենդանագիրը իրենց ցուցուց : Տեսաւ Մա-
 րիամ-Անթուանէթ որ շանչուեր են . յայտնեց
 ինքզինքը թէ թագուհին է , և սկսաւ Սողին ա-
 զաջէլ որ աղատէ զիրենք : Յանձն չառաւ Սող :
 Ան միջոցին Ազգային Ժողովը իր անգամներէն ի-
 րեք հոգի խրկեց Պառնավ , Փէթիոն և լաթուր-
 Մոսուր , որ երթան թագաւորը զօրքով փարկը
 բերեն : Ան ճամբորդութիւնը ութը օր քշեց , և
 թագաւորին տարաբաղդ ընտանիքը նախաախիք ու
 արհամարհութիւն չմնաց որ չքաշէ . ինչուան Պառ-
 նավոր զՄիրապոն կը նախաատէր՝ թագաւորին կող-
 մը բռնէլ սկսելուն համար , թագաւորական ընտա-
 նեաց քաշած խեղճութիւնը տեսնելով սիրար շար-

ցաւ, ու սկսաւ անկէց ետքը վրանին դուժ ու մեծ արանք ցուցնել: Ընդհակառակն վայրենամիտ ու վատ Փէթիոնը կոպտութիւն չմնաց որ չընէ ան թագապսակ կալանաւորներուն: Թագաւորին կառքը մայրաքաղաքին մէջէն անցնելու ատենը՝ Փարիզացիք ալ Փէթիոնէն վար չմնացին. Թիւլիլըրի պալատը տարին, բնակարանը զօրքով սրտացին, ու Լուդովիկոսը թագաւորական պաշտօնէն իբր թէ քիչ մը ատենի համար կախեցին: Արդէն հասարակապետութեան ձայնը քիւսպներուն մէջ կը հնչէր: Հասարակ ժողովուրդը միշտ փոփոխութիւն տեսնել ուզելով, յուլիսի 17ին 1791ին բազմութեամբ Արիսեան դաշտը կը ժողովուն՝ Պասթիլլի առման երկրորդ տարեգարձը տօնելու, և Պրիսոյի, Տանթոնի ու Քամիլ-Տեմուէնի կրակոտ ճառերէն շարժած՝ կը պահանջեն որ թագաւորը իշխանութենէն ձգուի: Արդային ժողովը տեսնելով որ ասոնց խօսք սլտի չկարենայ հասկըցնել, Լաֆայէթին ու Պայլիին կը յանձնեն որ զանոնք ցրուեն: Արդային պահապանները կուգան, և Լաֆայէթ զանոնք տեղերնին երթալու յորդորէն ետքը, հրաման կուտայ որ վրանին կրակ պարպեն. պահապանները կը հնազանդին, ամբօխը կը փախչի, բայց շատ մարդիկ ալ մեռած կը մնան հրապարակին մէջ: Ժողովը գեան առ բանէս խրատ առնելու ժամանակը անցեր էր. մանաւանդ որ դեռ չէր մոռցած նոյն զօրավարին խօսքը թէ Ապրիլսի-Բի-նը սրբաւան պարտ ճն է:

1 Ան միջոցին դրսի երկիրները փոթորիկ մը

1 Թագաւորին եղբարքը ինչ պատրաստութիւն

կը պատրաստուէր Գաղղիոյ վրայ թափելու : Թափաւորին եղբարքը , որ էին Փառլամանի դուքսը և Արթուրայի կոմսը , իրենց եղբայրը վասնդէն ազատելու համար Աւստրիոյ կայսեր և Բրուսիոյ թագաւորին հետ դաշինք գրին Գերմանիոյ Փիւնից քաղաքը յուլիսի 27ին (1791) . յայտարարութիւն մըն ալ ըրին Գաղղիացւոց որ Լուզովիկոս վեշտասաներորդը նորէն աթոռը հաստատեն , և ան Աղբային ժողովը ցրուեն . ապա թէ ոչ կը սպառնային որ բռնի կռուան ու աս բաներս ընել կուտան իրենց : Ան յայտարարութեան վրայ սաստիկ բարկացաւ Սահմանագիր ժողովը . հարիւր հազար աղբային պահապան հանեց , և բոլոր սահմանագրուիները ղինեց , բայց իրեն ալ վերջը հասեր էր : Լուծուելէն առաջ իր դրած սահմանագրութիւնը թագաւորին ներկայացուց . ընդունեցաւ թագաւորը , և անով նորէն իր թագաւորական պաշտօնին մէջ հաստատուեցաւ :

1 Հոկտեմբերի 1ին 1791ին բացուեցաւ Օրէնսդէր ժողովը (Ասամպլէ Լէժիպլաթիվ) , որուն անդամներուն մեծ մասը խառնարարներէն էին : Ժողովքը երկու բաժնուած էր , աջակողմեան ու ձախակողմեան . աջակողմեան կ'ուղէին որ սահմանագրութիւնը պահուի , և անոնց գլխաւոր անդամներն էին Տիւմա , Ռամոն , Վոսլլան և Պէօնեոյ . իսկ ձախակողմեան

կը անսնէին : — Սահմանագիր ժողովը լուծուելէն առաջ ինչ ըրաւ :

1 Օրէնսդէր ժողովը քանի՞ կը բաժնուէր : — Աջակողմեանց ու ձախակողմեանց գլխաւոր անդամներն որո՞նք էին :

Քանի՜ հասարակապետութիւն կ'ուզէին, և ժիրոն-
պէն կ'ըսուէին, որովհետեւ իրենց երեւելի ասե՛նա-
բանները ժիրոնա գաւառին նուիրակներն էին,
ինչպէս Վէռնիոյ, Կասէ, Ճանսոնէ, ասոնց դոր-
ծակից էին նաև Պրիստոյ, Քոնտորսէ, Ինսար,
Մարա, Մատամ Ռորան՝, և Փէթիոն՝ որ նոր քաղա-
քապետ գրուեր էր: Չախակողմեանց համամիտ
էր նաև Ճաքոսկէններու* քիււպը, որոնց գլխա-
ւորն էր Ռոպէսփիէր. իսկ Տանթոն, Քամիլ-Տէ-
մուլէն և Սանթէու Քորաբլիէներուն** քիււպը
կը ձեռայրնէին, և իրենց կատարութեամբը Ճաքո-
սկէններն ալ կ'անցընէին: Աս երկու քիււպներն
ալ թագաւորին Վարենէն գառնալէն՝ ի վեր կ'ու-
զէին որ դասաստանի կանչուի:

Օրինագիր ժողովոյն գլխաւոր վճիռները իշ-
խանաց, վախատահանաց ու ան քահանայից գէմ-
էին որ սահմանագրութեան մէջ եկեղեցականաց
համար գրուած կանոնները սլահելու երդում

Օրինագիր ժողովոյն վճիռներն ի՞նչ էին: —
Դաշնակցաց վրայ խրկուած զորավարներն ու-
րո՛նք էին:

* Ասոնց Ճաքոսկէն ըսուելան պատճառը ան էր որ
Դոմինիլէան կ'ընտարաց վանքը կ'ընէին իրենց ժողովը և
անոնց էլէշեցոյն անոնք Սէն-Ճատոսպ այսինքն Սորբ
Յակոբ էր:

** Ասոնց ալ Քորաբլիէ ըսուիւր՝ Քրանլիւիլէան կ'ընտար-
որն երոսն վանքը ժողովուելան համար էր, որովհետև Գաղ-
ղիացիք անոնց համար Քորաբլիէ կամ Չոսանաւոր է՛ ըսէին:

չէին ըրած : Առաջին վճռովը Թագաւորականց հարստութիւնները գրաւեցին . և որոշեցին որ Եթէ Թագաւորին եղբայրը մէկ ամսուան մէջ Գաղղիա չգառնայ՝ խնամակալութեան իրաւունքէն զրկուի . երկրորդը՝ ՚ի մահ կը դատապարտէր սր և իցէ փախստական՝ որ յունուարի 1ին 1792ին Գաղղիա չգառնայ . երրորդովն ալ սր քահանան որ ութը օրուան մէջ քաղաքական երդում չընէ , իր ամէն իրաւունքներէն զրկուի : Թագաւորը աւ վճիւնները չուզէր հաստատել : Երբոր Գաշնակցաց զօրքը սկսաւ Գաղղիոյ սահմանը մտնեալ , Օրինագիր ժողովոյն անդամները զԹագաւորը ստիպեցին որ Աւստրիոյ դէմ պատերազմ բանայ : Չկարենալով դէմ կենալ հաւանեցաւ Ղուգովկիոս . ուստի իրէք բանակ պատրաստուեցաւ սահմանագլուխը . Ռոշամպոյ հիւսիսային զօրաց գլուխ գրուեցաւ , Ղաֆայէթ մէջնեղի , և Ղիւքնէր հռենոսին քովի բանակին : Գաշնակցաց հետզարնուեցան , և Ռոշամպոյ Բրուսիացոցմէ յաղթուեցաւ (ապրիլ 1792) : Աս ձախորդութեան վրայ խռովարարները աւելի կատաղեցան . և Թագաւորը պատճառ սեպելով՝ սկսան զինքը սպաննելու մտածել :

1 Յունիսի 20ին (1792) Փարիզու փողոցներուն մէջ սկսան Թմբուկները զարնուիլ . Ժաքոսպէնները արուարձաններուն խառնիճաղանճը — որ իրենք զիրենք Սանփելլի կամ Անվարալք կ'անուանէին —

1 Թիւլլիքըրի սպառար սպաշարողներն որոնք էին :
— Թագաւորն ինչ ըրաւ :

գլուխնին ժողվեցին, անոնք ալ ձեռքերնին տէգ, նիզակ, սղոց, դաւազան ու ամէն տեսակ խառնափնդոր զէնքեր ու դրօշակներ առած, գլուխնին կարմիր գտակ դրած (սրնէ բուժ) * ու կիսամերկ գնացին Թիւշլըքի սալաօր սաշարեցին: Թնդանօթ մը հետերնին առած ներս մտան ու սկսան դռները կտարակել: Ան ատեն Թագաւորը դէպ'ի դուռը վազեց ու ըսաւ սահասպան զօրաց որ Ջուլիցերացի էին. « Բացէք, բացէք. ես Գաղղիացւոցմէ վախնալու բան չունիմ », : Իսկ կատաղի ժողովուրդը առաջ վազեց ու կը կանչուրուտէր. « Ուր է, ուր է, սպաննէնք », : Ան միջոցին որ Թրերով ու աէգերով Թագաւորին վրայ յարձըկեցան, Ջուլիցերացիք ալ Թրերնին քաշեցին: Բայց Թագաւորը անոնց ըսաւ որ Թրերնին տեղը դնեն: Երբ սպաննէնքէն մեկը առաջարկեց Թագաւորին որ քահանայից դէմ ելած վճիռը հաստատէ. բայց անկիայ սաստախան տուաւ. « Աւելի յանձն կ'առնում Թագաւորութիւն հրաժարիլ. քան Թէ մարդկանց խզմտանքին վրայ այնպիսի բռնաւորութիւն ընել », : Աս քաջութեանը դէմ չկրօցան կէնալ ու չհամարձակեցան զինքը սպաննելու. միայն խռովարարներէն մեկը նիզակին ծայրը կարմիր գտակ մը անցուցած հրամայեց Թագաւորին որ առնու գլուխը դնէ. ան ալ առաւ դրաւ. մէկ

* Կարժիբ գրասիւճ Երանոսէնէրոսն մէկտեղ ժողովուրդն անն էր. ինչ անասի էր նաև հայրենասիրութիւն ու քաջասրբութիւն, ինչուսան իանայտ ալ աս կարժիբ գրասիւճ ինչ էն էին :

ուրիշն ալ գաւաթ մը գինի տուաւ, ու թագաւորը առաւ խմեց: Խեղճ թագաւորին ճակատէն քրտակնքը աղբիւրի սէս կը վազէր:

1 Ան միջոցին քանի մը հոգի թագաւորը ներս քաշեցին. ժողովուրդը սկսաւ կանչել. « Թագուհին ո՛ւր է, անոր գլուխը կ'ուզենք »: Թագաւորին քոյրը Եղիսաբէթ, որ իր եղբօրմէն չէր ուղած բաժնուիլ, դարձաւ ըսաւ աւազակներուն արիւն թեամբ. « Ահա ես եմ թագուհին »: Ծառաներէն երկու իրէք հոգի կանչեցին թէ « Չէ, ասիկայ թագուհին չէ, թագաւորին քոյրն է »: Ան ատեն ըսաւ իշխանուհին. « Թողէք կ'աղաչեմ, լաւ է որ իմ արիւնս թափուի քան թէ իմ քոյրս սպաննուի »: Թագուհին ալ ուզէր էր թագաւորին հետ դուրս ելլել, բայց քովինները արգիլէր էին:

2 Սանթէռ անունով գինեվաճառը — որ աղքային սղահասակներուն զօրավար եղեր էր — դաւիթը կը սպասէր. երբոր վեր ելլողները հոն կ'ուշանային, իր կատաղի զօրքովը վեր ելաւ, ու թագուհին տեսնելով քիչ մը սրտհառեցաւ: Քովին ները աղաչեցին զինքը որ քիչ մը ժողովուրդը մեկ դի ընէ, վասն զի բազմութենէն սրահին մէջ կեցողները կը խղզուէին. Սանթէռ ծուռ ծուռ նայելով ըսաւ թագուհւոյն « Ի՛նչ անկին, մի վախնար, ես քեզի վնաս չեմ ըներ. բայց գիտցիր որ ու-

1 Թագաւորին քոյրը Եղիսաբէթ ի՛նչ ըսաւ:

2 Սանթէռ ի՛նչպէս վարուեցաւ թագուհւոյն հետ:

ընկերը կը խաբեն զքեզ, և ժողովուրդը խաբելը վտանգաւոր բան է ։ Աս ըսաւ , ու հրամայեց իրեններուն որ ետ քաշուին . ինքն ալ անոնց ետեան գնաց ։

1 Ան վտանգաւոր կելը հինգ ժամ քշելէն ետքը , Փարիզու քաղաքապետը Փէթիոն տեսնելով որ իր վախճանին չկրցաւ հասնիլ , մտաւ թագաւորին կեցած սրահն ու կանչեց . « Մի վախնար , տէր արքայ ։ — Ե՞ս վախնամ , ըսաւ թագաւորը , մաքուր խղճմտանքի տէր մարդը ոչ երբէք կը վախնայ . վախը անոնց համար է որ իրենց խղճմտանքէն կը չարչարուին » . ու քովն թիկնապահներէն մեկուն ձեռքը բռնեց , « Բե՛ր ձեռքդ , ըսաւ , սրտիս վրայ դիր ու տես թէ սովորականէն աւելի շուտ կը զարնէ թէ չէ » ։ Փէթիոն շփոթած պատասխան չտուաւ . ու դարձաւ ըսաւ ժողովրդեան . « Ո՛ր քաղաքացիք , դուք այսօրուան դործողութիւնը վայելչասպէս ու խմաստութեամբ սկըսաք , և ցըցուցիք որ ազատ էք . նոյն վայելչութեամբ լմնցուցէք աս օրը ինձի պէս ու սներնիդ դարձէք » ։ Ժողովուրդն ալ բոլորովն քաշուեցաւ գնաց ։

2 Քիչ ատենէն ետքը Գաղղիոյ հարաւային կողմերէն շատ մը անզգամ մարդիկ , մեծ մասը բանտերէ վախած , ճամբայ ելան Փարիզու վրայ գալու , և որովհետեւ շատերնին Մարսիլիայէն էին ,

1 Թագաւորը ինչ պատասխան տուաւ Փէթիոնին ։

2 Թագաւորը ինչո՞ւ համար Օրինագիր ժողովը գնաց ։

անոր համար ամենքն ալ Մարտիրոսայիք ըսուեցան : Ժպրօպէնները անոնցմով աւելի զօրացած , որոշեցին որ օգոստոսի 10ին մեծ խռովութիւն մը հանեն : Կէս գիշերուն թնդանօթ մը նետուեցաւ , զանգակները սկսան զարնուիլ , ու քաղաքին աւազակները՝ քսան հազարի չափ Մարտիրոսայուց առաջնորդութեամբը ահուելի աղաղակներով գնացին Թիւրքիւրքին սղաշարելու : Թագաւորը աս բանս որ իմացաւ , ինչ ընելիքը չէր գիտեր . ոմանք կ'ուզէին որ առաջ նետուի ու քաջութեամբ սպանբազմութեամբ հին ալ աս կարծիքին վրայ էր . ուրիշները կ'ըսէին թէ մէկ հասիկ ճարն է ժամ մը առաջ Օրինագիր ժողովոյն անդը երթալ ապաւինիլ : Թագաւորը մահուընէ չէր վախնար . բայց իրեն համար արիւն թափուիլն ալ ամենեկին չէր ուզէր . ուստի Ռեատերէր անուէով հազարապետին խորհրդովը ելաւ իր ընտանեօքը Օրինագիր ժողովոյն խորհրդարանը գնաց որուն նախագահն էր Աէսնիոյ :

1 Հաղիւ թէ թագաւորը Թիւրքիւրքին ելաւ՝ չորս կողմէն յարձակմունքը սկսաւ . նուիրակները կը կանչէին Կեօսէ՛ Աւփը , Աւագուէիւնն ու Հասասուրուիւնն : Զուելցերացի զօրքը ամէն գիաց մահուան ձայները լսելով՝ ամենեկին չթուլցան . եօթը հարիւր հոգի քաջութեամբ սկսան հարիւր հազար կատաղիներու հետ սպանբազմիլ ու վրանին կրակ

1 Զուելցերացի զօրքը կրնա՞ր գէ՛մ կենալ ժողովըրդեան :

Թափել. օգնութիւն ալ հասաւ իրենց գրտէն և խռովութիւնը ցրուելու վրայ էին. բայց յանկարծ խորհրդարանէն հրաման եկաւ որ ետ քաշուին ու կրակը դադրեցնեն. և աս հրամանը Թագաւորը սուեր էր: Ան ասեն անգութ ժողովուրդը հեղեղե պէս Թիւլիլըրին կոխեց ու խեղճ Ձուլցերայցիներէն ձեռք ձգածը դազանաբար սպաննեց:

1 Օրինագիր ժողովոյն անգամները քանի որ գործողութեանը յաջողելուն վրայ սպասուէին, Թագաւորին ընտանեացը վրայ քիչ մը դուժ ու սպառնալիք կը ցուցնէին, և Թագաւորը նախադասին քովը նստեցուցեր էին. բայց երբոր ուղածնին կատարուեցաւ, այսինքն ժողովուրդը յաղթանակեց, հանեցին զինքը անկեց ու քովին ներովը մէկտեղ գրադիրներուն նստարանը տեղաւորեցին: Անկէջ ետքը բոլոր ժողովը հրատարակեց Թագաւորին առջևը թէ Ղուգովիոս Թագաւորութենէ ընկած է, ու տարին Թամիլը սուած աշտարակին մէջ բանա գրին զինքը, հեան ալ Թագուհին, Թագաւորին քոյրը Եղիսաբէթը, եօթը տարեկան արքայորդին, Թագաւորին ազնկը տասուիրէք տարեկան, և երկու սենեկապան:

2 Թագաւորը բանտին մէջ իր վրայ ելելու վը-

1 Օրինագիր ժողովը ինչպէս Թագաւորութենէ ձգեց զՂուգովիոսն և ո՞ւր բանա գրաւ:

2 Թագաւորին բանա գրուելէն ետքը իշխանութիւնը որոնց ձեռքն անցաւ: — Կելլութիւնը ինչ բան էր:

Ճաշին սպասած ատենը՝ ժողովուրդը (ծագաւոյ
 ըաց արձանները կործանեց, և բոլոր իշխանու-
 թիւնը անցաւ Տանթոնի, Ռոպէսփիերի ու Մա-
 ըայի ձեռքը, որ զանազան վճիռներ հանեցին
 շատ երեւելի մարդկանց դէմ, ու հրապարակաւ
 գլխատեցին զանոնք Իյուլիէն * ըսուած գործի-
 քովը :

* Ա՞ գործիք Կիյուլիէն անունով Բժիշկ Կա-
 ընո որ սպանեալէն մարդիկ ատանց եղաւ Իլիւն Կաշե-
 ւա Տեանին, և իր անունով գործիքն ալ Կիյուլիէն Ե-
 րուստան :



Գ. Լ. ՈՒԽ Գ .

Շարայարու-Յի-ն Խոռով-ն Գաղաթոյ թագաւորին Բանարգեւ-Յի-նէն ինչուան գլխապո-իւց : (1792-1793) :

Օտար արեւո-Յի-ն Գաղաթոյ Գեղ թագաւորին . — Փարիզ- ժողովրդեան իտաղա-Յի-ն . — Սեպտեմբերի 2ին Բանարու- իտաղաթ . — Լաճալ իշխանո-հոյն սպանո-Յի-ն . — Որդի-ի-ն սիրոյ օրինակներ . — Օւլեանի Դո-սու Փիլիպպոս . — Օրինատի Ժողովոյն Ալ- Գաթա-ճ Սպեանից ից յաջորդի . — Լեւանի-ն արգեւ- Յի-ն . — Ժիւրի-ն արգեւ- Յի-ն արգեւ- Յի-ն . — Թագաւորու- Յի-ն ից Վերցո-ի ու Հասարակապետ- Յի-ն ից Կրասարակո-ի . — Ալաշի-ն ու Ժեմաթի յաղ- Յի-ն . — Սան- Յի-ն Եր- Պատեր . — Թագաւորին Տահուան Վճի-ն . — Իշխո-ն Գիւրճոն Գահանան . — Թագաւորին Ից ընթա- նեացը Կեպ Վերջին արեւո-Յի-ն . — Մահուան պար- րասարու-Յի-ն . — Գլխապո- յի-ն Երեւան . — Սան- Յի-ն . — Լո-ր-Վի-ն Վերջապետներորդին Տահ : :

1 Օտար արեւո-Յի-նները փախաւան Գաղ- յիւրցոց հետ միացան որ երթան Լուրդովիկոսը ա- ղատեն : Օգոստոսի 23ին Բրուսիոյ թագաւորը

1 Օտար արեւո-Յի-ններն ի՞նչ ըրին : — Փարիզու- ընտանեւորն ջարդը ո՞րն է : — Լաճալ իշխա- նուհին ի՞նչպէս սպանուեցաւ :

1 շնկիլի ու վէրահեան քաղաքներուն տիրեց : Փարիզացիք երբոր աս բանս լսեցին , սեպտեմբերի 2ին ամէնքը մեկէն ոտք ելան որ թշնամեաց դէմ պատերազմի երթան . բայց խռովարարներուն գլխաւորները սկսան կանչել Յողովորդեան մէջ թէ « Մեր գլխաւոր թշնամիները Փարիզու բանտերուն մէջն են . ան թագաւորականներն որ քաղաքին մէջ պահուըտեր են՝ բանտերը պիտի բանան ու բանտարկելոց հետ մեր վըայ պիտի յարձըրկին . մեր կանայքն ու որդիքը ան աւազակներուն ձեռքը պիտի թողունք : Ուրեմն օտարաց դէմ երթալէն առաջ զանոնք վերցընենք . վազէնք բանտերը , բանտարկեալները ջարդենք » : Աս սոսկալի կատաղութեամբ սեպտեմբերի 2ին վազեցին քաղաքին մեծամեծ բանտերուն վըայ ու չորս օր սարսափելի ջարդ ընելով ութը հազար հոգի սպաննեցին . մինակ Վարմեղականաց վանքին մէջ երկու հարիւրէն աւելի քահանայ սպաննեցին , որոնց մէջ շատ ալ եպիսկոպոս կային . և աս մարդասպանները խեղճ՝ դատասպարտեալները սպաննելէն և կամ անոնց գլուխը կտրելէն ետքը , անոնց չորս գին սլար կը բռնէին , կ'երգէին , անոնց փորտիքը դուրս կը քաշէին , արիւննին կը խմէին և մտերնին հրասարակներու մէջ կ'եփէին ու կ'ուտէին : Աս արիւնարբու գաղաններուն ձեռքէն ձկրցաւ աղաախ նաև առաքիլնի Վամուալ իշխանուհին՝ որ թագուհւոյն սիրելի բարեկամն էր . թրերով զարկին սպաննեցին , մարմինը բզկի բզկի ըրին ու գլուխը նիզակի մը ծայրը անցուցած՝ տարին թամիլին սրատուհաններուն առջևէն անցուցին որ թագուհւոյն սիրտը կտրտի :

1 Ան սեպտեմբերի օրերը Գաղղիացւոց ցցուցած գաղանամխտ կատաղութեան օրինակ՝ վայրենի ժողովրդոց սլատմութեան մէջ ալ չկայ : Քաջասիրտ աղջկան մէկը երբոր կը տեսնէ որ տասպարը հօրը վզին վրայ սլիտի իջնայ , մէկէն կ'իյնայ հօրը կը սլլուի , և աղաչանքով ու արցունքով աղատել չկրցած հայրը , առ վսեմ յուսահատութեամբ կը փրկէ : Ուրիշ աղջիկ մըն ալ սրտաշարժ ճարտասանութեամբ կը ջանայ հօրը անմեղութիւնը ցուցնել , ճար չըլլար . անդիէն մէկը կուգայ , գեանէն մարդու սիրտ մը կ'առնու , գաւաթի մը մէջ կը ճղմէ ու անոր կուտայ ըսելով . « Խմէ՛ ասիկայ որ հայրդ աղատի » : Կ'առնէ աղջիկը ու հօրը սիրոյն համար կը խմէ :

2 Ան սոսկալի տեսարաններէն ետքը Օսլէանի դուքսը Փիլիպպոս Ժաքոպէններուն ժողովարանին մէջ ելաւ բեմը , կարմիր դտակը դրուխը դրաւ , և իր խնդիրքովը Փարիզու ժողովուրդը վճռեց որ անկէց ետքը անոր մականունը ըլլայ Էփաւէիէ այսինքն հաւասարութիւն : Անկէց հինգ օր ետքը սեպտեմբերի 20ին (1792) Օրինադիր ժողովը հրատարակեց որ իր սլաշտօնը ըմնցաւ , և անոր յաջորդեց Ազգախումբը Ատեանը (Քոնստանտինոն Նապոլիոն) :

1 Որդիական սիրոյ ինչ օրինակներ տեսնուեցան :

2 Օսլէանի դուքսը ինչ ըսուեցաւ : — Օրինադիր ժողովոյն օվ յաջորդեց :

1 Աս նոր Ազգախումբ Ատեանը կը գումարէր Թիւրքերի պալատը, և երկու գլխաւոր կողմբաժնուած էր. առաջինն էր Լա Մանթանէլ կամ Լեռնահանք ըսուածը, որովհետեւ իր անդամները խորհրդարանին ամենէն բարձր նսասրաններուն վրայ կը նստէին. ասոնք ամենէն աւելի կատարի ռամկապետականք էին, ամենքն ալ Քորտըլիէներուն ու յարգուէններուն դպրոցէն ելած. և գլխաւորներն էին Ռոսկէտիէր, Տանթոն, Մարա, Քութոն, Սէն-ձիւսթ, Պաուէր, Թալլէ, Լը յանար, Քամիլ-Տէմուլէն, Քամսոն, Քառնոյ, Փուշէ, Ամար, Քառիէ, Քոլոյ-ա՛լքրպուա, Հէպէր, Շոմէթ և Շապոյ: Երկրորդ կողմն ալ յիւրոնատեանք էին որ կ'ուզէին Գաղղիոյ սահմանագրական իշխանութիւն մը դնել. ասոնց ալ գլխաւորներն էին Վէռնիոյ, Պարսպարու, Լուվէ, Ռոլան, Տիւքոյ, Կատէ, Լանթուինէ, յանսոննէ, Իլնար, Տիւշաթէլ, Փոշէ և Օուլէանի դուքսը:

2 Ազգախումբ Ատեանը յայտարարութիւն ըրաւ թէ ասկէց ետքը Գաղղիոյ մէջ թագաւորութիւնը վերջացաւ ու հասարակապետութիւն հաստատուեցաւ. ուստի ամէն հասարակաց գրուածները Գաղղիական հասարակապետութեան թուականը

1 Ազգախումբ ատեանն ո՛ւր կը ժողովուէր և քանի՞ կը բաժնուէր: — Լեռնահանաց գլխաւոր անդամներն որո՞նք էին: — յիւրոնատեանց գլխաւորներն որո՞նք էին:

2 Ազգախումբ Ատեանն ի՞նչ յայտարարութիւն ըրաւ:

պիտի գործածեն, և ան թուականին տարեգլուխը պիտի ըլլայ սեպտեմբերի 22ը 1792ին :

Երբոր Քելէքման զօրավարը Շարթրի գեւահասակ գբսին* հեռ (սեպտեմբերի 20ին) Գաղղիոյ Վալմի գեղին քով Բրուսիացւոց, ետքն ալ Տիւմուրիէ զօրավարը նոյնպէս Շարթրի գբսին հեռ Պելճիոյ Ժէմնափ աւանին քով Աւստրիացւոց դէմ յաղթութիւն մը ըրաւ (նոյեմբեր 6), Ազգախումբ Ատեանն ուղեց որ թագաւորը գատաստանի կանչուի : Սանժէս զլուգովիկոսը Ժողովին առջևը հանեց, և թագաւորը իրեն դէմ եղած ամէն ամբաստանութիւններուն քաջութեամբ, արգարութեամբ, և ամենայն չափաւորութեամբ ստատասխան տուաւ : Պառէր նախագահն աս ամբաստանութիւնն ալ ըրաւ թագաւորին վրայ որ մէկուն մէկալին ողորմութիւն տալով Ժողովուրդը խաբել ուղեր էր . « Ահ սարսն, ըսաւ թագաւորը, կարօտելոց ողորմութիւն տալէն աւելի մեծ ուրախութիւն էս ոչ երբէք ունեցեր եմ » : Աս խօսքին վրայ Ժողովըդեան մեջէն շափն սիրար կարակցաւ : Պառէր վերջապէս իրեն հարցմունքները ասով ըմբոցուց . « Գուն, ըսաւ, օգոտոտսի 10ին Գաղղիացւոց արիւնը թափեցիր ասոր ինչ սրատասխան կուտաս : — Չէ սարսն,

1 Լուգովիկոս Ժ.Չ երբ գատաստանի կանչուեցաւ : — Իրեն դէմ եղած ամբաստանութիւններուն ինչ սրատասխան տուաւ :

* Լ-ի-Պիէի Բագատարն էր՝ Գասանիւնը Գաբելիտն :

ըսաւ թագաւորը բարձր ձայնով, Գաղղիացւոց աւրիւնը թափելը տուողը ես չեմ¹ : Աս սլատասխանին վրայ ան չարագործներուն շատը գոյնեղնին նետեցին, վասն զի յայանի գիտէին որ ան օրուան կոտորածին սլաածաւ իրենք էին :

1 Դեկտեմբերի 26ին թագաւորը նորէն դատաստանի կանչուեցաւ, և իր իրեք փաստաբաններէն մէկը ջատագովու թիւն մը խօսեցաւ, թագաւորը անոր ըսածներուն վրայ քանի մը սրտաշարժ խօսք ալ աւելցուց ու նորէն բանտը տարուեցաւ : Իսկ յունուարի 15ին (1793) Ազգախումբ Ատեանը վճիռ հանեց թէ թագաւորը յանցաւոր է՝ իբրև ազգին ազատութեանը մասնիչ ու տէրութեան ապահովութեանը թշնամի : Նոյն ամսուն 17ին ալ հինգ ստորասական քուէ աւելի ելլելով որոշուեցաւ որ թագաւորը սպաննուի :

2 Ան վճիռը երկու օրէն ետքը արգարութեան տեսուչ իշխանը թագաւորին խմացուց, անիկայ ալ անխառով ու անշփոթ կերպով ընդունեցաւ, միայն խնդրեց որ իրեք օր ատեն տրուի իրեն մահուան պատրաստուելու, բայց հրաման չտուին, այսչափին միայն զիջան որ կարենայ իր խեղճ ընտանեացը հետ մէյմը տեսնուիլ, ու Էճուօրթ Ֆիլլամոն անունով Խուանտացի քահանան խոստովանութեան համար քովը կանչեն : Իրիկունը ուշ ատեն

1 Ն՞րք որոշուեցաւ որ թագաւորը սպաննուի :

2 Թագաւորը երբոր մահուան վճիռն ըսեց ի՞նչ ըրաւ : — Ընտանեացի հետ ի՞նչպէս տեսնուեցաւ :

դնաց թագաւորը որ ընտանեացը հետ տեսնուի . անոնք երեսին զուարթութիւնն ու հանդարտութիւնը տեսնելով՝ կարծեցին թէ իրենց ազատութեան աւետիսը բերեր է . բայց խաբուած ըլլալնին շուտով իմացան : Լուդովիկոս քիչ մը ատեն հազիւ կրցաւ գիմանալ թագուհւոյն , իր աղջկանը , որ դուոյն և քրոջը հետ խօսելու . երկու ժամէն ետքը տեսնելով որ ալ պիտի չգիմանայ , օրհնեց զանոնք ու առանց խօսք մը ըսելու , ձեռուընկերուք երեսը դոցեց ու իր տեղը դարձաւ :

1 Անկէց ետքը բոլորովին ինքզինքը մահուան պատրաստելու հետ եղաւ . իրէք ժամ խոստովանահօրը հետ մտակուեցաւ . ետքը սաստիկ յոգնած ըլլալով՝ անկողնոյն վրայ ընկաւ ու ինչուան առաւօտ քնացաւ :

2 Երբոր արթընցաւ , ուզեց որ սատարագ լսէ ու հաղորդուի . և սուրբ խորհրդով աւելի զօրացած՝ երբոր գլխատման տեղը հասաւ * , կառքէն վար իջաւ , ինքիրմէ հանուեցաւ ու թողուց որ գլխուն մաղերը կարեն : Եւոյն ատենը ձեռուընկերը բռնեցին որ կապեն . Լուդովիկոս աս բռնութեան չէր սպասեր . ուստի գահիճները մէկգի հրեց .
 “Տէր արքայ , ըսաւ ան ատենը Ֆիրմին քահանան ,

1 Մահուան ինչ պատրաստութիւն տեսաւ :

2 Լուդովիկոս յօգնուեցաւ գլխատուեցաւ :

* Որ էր Փլաս ար լա Վոնքորա հրապարակը : Լուդովիկոսի գլխատման պէշը իննգնուեցաւ ետքը Եփեպոսէն Բերուած Սեպուրի ինքուընկեր :

ասիկայ ալ մէկ խոնարհութիւն մըն է որ դքեղ ալ աւելի նման կ'ընէ որդւոյն Աստուծոյ որ քու վարձքդ ինքը սլիտի ըլլայ 77 : Ան ասէն ինքիրմէ ձեռուընէրը երկընցուց, ու քաջութեամբ գլխատման գործէքին տեղը դնաց : Երբոր բարձրաւանդակին վրայ ելաւ թագաւորը, կանչեց ժողովրդեան .

“ Ո՛վ Գաղղիացիք, իմ վրաս դրուած ամէն յանցանքներէն ալ ազատ եմ ես . կը ներեմ թշնամեացս և կը փափաքիմ որ իմ մահս հեռացրնէ 77 . . . Կատաղի Սանթէսը խօսքը կտրեց . “ Ես հոս դքեղ ճառխօսելու չբերի, ըսաւ, հասցա մեռնելու 77 : Շուտ մը թմբուկները զարկին, թագաւորին ձայնը դուրեցաւ, և Լուգովիկոս գլուխը երկնցուց գործէքին տակը, խոստովանահայրն ալ բարձր ձայնով մը կանչեց . “ Որդի՛ սրբոյն Լուգովիկոսի, եւ յերկինս 77 : Այսպիսի մահուամբ մեռաւ Լուգովիկոս ժ.Ձ. ժամը տասնուկէսին յունուարի 24ին (1793) . երեսուներու թը տարեկան էր և տասներկու տարի թագաւորեր էր :



Գ. Լ. ՈՒՒԽ Գ .

Շարայարու-նիւն Խոտոլո-նիւն Գաղղիոյ, Լոտոլիկոսի
Տահո-ընէն Ինչոսան Իր ԲՆԸ Եւրիսաբէլիէն Տահը :

(1793-1794) :

Լոտոլիկոսի Տահո-ան ըրած աղբեցո-նիւնը . — Լոտոլիկոս ժեռ Լաֆա-նոց Ին հրապարակո-նի . — Անգղիոյ, Տոլանպիոյ և Սպանիոյ Դեմ պարբերապէս հրապարակո-նիլը . — Ռուպէսիէր . — Արհաս-իբ . — Մարա . — Շարլը Բերք . — Մարային սպանո-նիւնը . — Շարլը Ի Տահ Ին Դապապարա-նի . — Ժափոպէնիւն Լաֆա-նոց արիւնիւնը . — Վանպէ, Պրէլայն, Թաւան և Լիոն լին սպար զորք սալ . — Բաղապալան պարբերապէս . — Շարլը Լիոնի Իստա-լարը . — Լըսի-ր և Լա-Ռաշթալէն . — Վանպէա-նոց զորք Բաշո-նիւնը . — Թափոս-հոյն Թաժ-իլէն Բանիէրթըրի Կարո-նիլը . — Գապասպանի Իան-լո-նիլը . — Գապապարա-նիւնը . — Արիսիան Տահը . — Մարաժ Ռուան . — Գլա-իւր Իբրո-նիլը . — Ժիբոն-պէանց Դապապարա-նիւնն ու Տահը . — Փիլիպպոս Է-իալիլէ . — Պայլիլին Գլիսա-նո-նը . — Փիլիպպոսի Տահը . — Կրօնի Վերո-նիլը . — Տոմարին Դիսո-նիլը . — Բան սապո-ածո-հին . — Գաղղիոյ հասարակապետ-նիւն Լոտոլիկոսի հասարակո-նիլը . — Տօներոսն Վերո-նի-լը . — Ոստա-ժոսիան Կեղեաց Գորո-նիլը . — Եւրիսաբէ-լի Տահը :

1 Լուգովիկոս վեչասաներորդին մահուանը վրայ Գաղղիացւոց մէջ սրչափ լծադաւորական

1 Լուգովիկոսի մահն ինչ աղբեցուծիւն ըրաւ .

կողմէն մարդիկ որ կային՝ սաստիկ ցաւեցան . նոյն պէս ալ Եւրոպայի ամէն թագաւորները . Քոնստէնդինան ալ որ հռենոսէն անդին կեցեր էր զօրքով, երբոր անդոյժը լեց՝ կանչեց իր զօրացը մէջ, ինչ պէս որ հին ատենէն Գաղղիացւոց սովորութիւնն էր . « Թագաւորը մեռաւ , կեցցէ՛ արքայ » . և ութը տարեկան արքայորդին , որ թամիլին մէջ բանաւ արկուած էր , թագաւոր հրատարակեցին՝ Լուդովիկոս Ժ, անուհով :

1 Լուդովիկոսի մեռնելէն ետքը Ազգախումբը Ատեանը տեսնելով որ օտար տէրութիւնները Գաղղիոյ դէմ պատերազմի կը պատրաստուին , ինքն ալ պատերազմ հրատարակեց Անգղիոյ , հոլանտիոյ և Սպանիոյ դէմ . սե գրօշակներ անկեցին Փարիզու մէջ ամէն տեղ ու հայրենիքը կոտորէին : Ազգախումբը ատեանն ալ երկու գլխաւոր հերձուած բաժնուած՝ որ Ժերոնտէն ու Ժաքոսպէն կ'ըսուէին , մեծ շփոթութեան մէջ էր , ինչուան որ հռչակաւոր Ռոսպէսֆիէրը Ժաքոսպէններուն գլուխ կեցած՝ յաղթող ելաւ , և բոլոր Գաղղիան ահագին բանա ու սպանդանոց մը դարձուց : Ան միջոցը Թեբեթօր այսինքն Արհաւիրք կամ Արհաւերաց իշխանութիւն կ'ըսուի :

2 Ռոսպէսֆիէրին գլխաւոր գործակիցներէն մէկն

1 Ազգախումբը Ատեանը օտար տէրութեանց պատրաստութիւնն տեսնելով ինչ ըրաւ : — Ո՞ր միջոցը Արհաւիրքը ըսուեցաւ :

2 Մարան ո՞վ սպաննեց : — Ռոսպէսֆիէր ինչ մէտեֆինդրութիւն ըրաւ :

էր արիւննախանձն Մարա : Շարլոթ-Վորտէ ա-
նունով քսանըհինգ տարեկան աղջիկ մը շատոնց
միտքը դրեր էր որ Գաղղիան ազատէ ան գաղանին
ձեռքէն , որ համարձակեր էր ըսելու և գրելու թէ
Գաղղիոյ խոռով-Թիւնը հասարակեալ համար՝ էրիտ հա-
րիւր յիսուան հազար գլուխ կարելու է : Շարլոթ Փարիզ
գնաց ու Մարային հետ ուղեց տեսնուիլ . անիկայ
ալ ան միջոցին սոսկալի բորոտուածին մը ունենա-
լով՝ տանը մէջ ջուր մտեր էր . Շարլոթ քովը
գնաց , սկսաւ հետը խօսիլ ան յիրոնաէններուն
վրայ՝ որ իր երկիրը փախեր էին . Մարա անոնց ա-
նունները հարցուց ու վրայ բերաւ թէ « Քիչ ա-
տենէն պատիժնին կ'աւնուն . — Բայց դուն հիմա
կուրնէ աւ , ըսաւ Շարլոթ , ու թուրը քաշեց զար-
կաւ անոր սրտին . Մարա ալ մէկէն հողին փչեց
(յուլիսի 13) : Բանուեցաւ Շարլոթ , և ըրածը
քաջուածեամբ խոստովանեցաւ . « Մէկ մարդ մը
սպաննեցի , ըսաւ , հարիւր հազար մարդ ազատելու
համար . մէկ չարագործ մը՝ անմեղները փրկելու .
վայրենի գաղան մը՝ երկիրս հանգչեցրնելու հա-
մար » : Շարլոթին գիւցաղնական գործքը վար-
ձատրելու տեղ գատաւորները ՚ի մահ գատապար-
տեցին զինքը՝ Ռոպէտփիերին խորհրդովը . Ճարտ-
պէնները աս բանիս վրէժխնդրուածին ընելու հա-
մար սկսան արիւնները հեղեղի պէս վաղցրնել . որ
մարդուն վրայ որ կրնային կասկած մը ունենալ ,
մէկէն բռնելն ու հրասպարակը տանիլ գլխատելը
մէկ կ'ընէին : Ասանկով հազարաւոր իշխաններ ,
գլխուներ , արհեստաւորներ գլխատուեցան , ո-
րոնց մէկ հատիկ յանցանքն էր հարստուածին ,
խելք կամ առաքինուածին ունենալը : Ինչուան

1793ին նոյեմբերի երկուքը հարիւր հազար մարդ բանա դրուեցաւ՝ և ասոնց տեղ դանկելու համար բոլոր սալասաները դարձոցներն ու վանքերը մէյմէկ բանա դարձուցին :

Ի Գաղղիոյ հասարակապետութեան կողմը չէին վանտէ, Պրեթայն, Թուլոն, Լիոն և անոնց քովի գաւառները . ասոնք կրօնքին վերցուիր, թագաւորին մահը և աս անդ-թու-թիւնները անսնելով ոտք ելան, ու չէին ուզեր Ազգախումբը Ատենին զօրք տալ՝ գաշնակից թագաւորաց դէմ. « Որովհետեւ սխալ սատերազովք, կ'ըսէին մայրերը իրենց որդւոցը, երկրին մէջ մեր քովը սատերազմեցէք որ ձեզի օգնենք ու ձեր վրէժն առնենք » : Քաղաքական սատերազով սկսաւ հասարակ ժողովըրդեան գլուխ կեցաւ Շաթլինոյ անուսով կառավարը և իր օրինակովը զանոնք կը խրախուսէր . աղնուականաց գիւցազուններն ալ ելան Լըբիւր և Լա-Ռոշֆաբլէն, աս երկրորդը որ հազիւ քսան տարեկան կար՝ զօրավար դրուեցաւ, և աս կ'ըսէր իր զօրացը . « Պատանի եմ, բայց արիութեամբս ձեզի հրամայելու արժանի սխալ ընեմ ինքզինքս : Թէ որ առաջ երթամ, ետեւս եկէք . թէ որ ետ քաշուիմ՝ սպաննեցէք զիս . իսկ թէ որ մեռնիմ, վրէժս առէք » : Ասանկով վանտէացիք արք և կանայք յանուն Աստուծոյ և Լուգովիկոսի վեշտասաներօրդի և հոգևոր երգեր երգելով շատ յաղ-

1 Ո՞ր գաւառները հասարակապետութեան դէմ էին : — Իրենց զօրավարները օրօնք էին : — Զօրքերնին ենչպէս էր :

Թուժիւններ ըրին հասարակապետականաց վրայ ,
 և շատ անգերու արեւելին : Զօրաց մեծ մասը գե-
 ղացիներ էին . զէնքերնին էր որսի հրացան , բահ ,
 բրիչ , մանգաղ , դաւազան ու երեքժանի . աս ան-
 պարաստ զօրքը իրենց երկրագործի հագուստովը
 թշնամոյն առջևը կ'ելլէին վրանին մէյմէկ խաչ
 կախած՝ ու ձեռքերնին վարդարան դարձնելով :
 Հասարակապետականաց հետ պատերազմի ճակա-
 տելէն առաջ ամէնքն ալ ծունկ կը չըքէին , քահա-
 նան զիրենք կ'օրհնէր ու ետքը քաջուժեամբ թըշ-
 նամեաց սուխներուն ու թնդանոթներուն դէմ
 կը յարձրկէին , և աս իրենց կոյր քաջասրտու-
 թեամբը զամէնքը կը սարսափեցնէին :

Թագաւորին մեռնելէն ետքը Թագուհին աս
 խնդիրքը միայն ըսեր էր՝ որ սուգի հագուստ տան
 իրեն . ան ալ չըրին : Յուլիսի Աին 1793ին զինքը իր
 զաւկրներէն բաժնեցին , ամէն մը ետքն ալ թամ-
 վիլէն հանեցին դիշերով , ու առին Քոնստանտնու-
 քուստը քանար տարին որ վրան դատաստան ընեն .
 հոն եօթանասունը չորս օր կեցաւ , ու դռնապանը
 միայն հազիւ կրնար ծածուկ անոր պէտք եղած
 խիստ հարկաւոր բաները հոգալ : Հոկտեմբերի
 16ին դատաստանը սկսաւ . դատաւորները ամբաս-
 տանեցին զինքը որ իբր թէ իր որդոյն միտքը դար-
 ձուցեր է . Թագուհին ռոք ելաւ ու առաքինական
 բարկուժեամբ մը կանչեց . « Աս բանիս դէմ ամե-

1 Թագաւորին մեռնելէն ետքը Թագուհին ի՞նչ
 վիճակի մէջ էր : — Վրան ի՞նչ դատաստան
 եղաւ ու ի՞նչպէս մեռաւ :

նայն մայրերու կը բողբոքեմ ես , : Շովոյ-Լահարա փաստաբանը խեղճ թագուհւոյն ջատագովութիւն ըրաւ . բայց ան կատաղի գատաւորները ոչ ճարտասանութեան մտիկ կ'ընէին և ոչ թշուառութեան վրայ կը ցաւէին : Իսկ թագուհին ըսաւ անոնց . « Ես թագուհի էի , ու դուք իմ թագաւորս մեռուցիք . մայր էի , զաւկըներս ձեռքէս յախշտակեցիք . հիմա արիւնս միայն մնացեր է , փուճ տեղը չարչարանքս մի երկընցընէք , : Արիւնարբու դահիճներուն ուղածն ալ ան էր . ուստի 'ի մահ գատասպարտեցին զինքը , և թագուհին առանց խռովելու լսեց իր մահուան վճիռը : Մեռնելու երթալէն առաջ իր վերջի զգացմունքները սքանչելի կերպով մը բացատրեց ան թղթին մէջ որ Եղիսաբէթին գրած է : Քանի մը ժամ եաքը սայլի մը վրայ գրին զինքն ու հրապարակը տարին . մէկ կողմանէ ալ ցած ժողովուրդը , որ կաշառուած էր զթագուհին անխճելու համար , անդադար կը նախատէր զինքը : Հետը եղող քահանան ըսաւ իրեն ան ատենը թէ հիմայ է քաջութեան ժամանակը . « Քաջութիւն , ըսաւ թագուհին , ես շատ տարիէ 'ի վեր քաջութեան կրթութիւն կ'ընեմ . իմ թշուառութեանս վերջանալու ատենը չեմ կրնար անկէց ետ կենալ , : Ելաւ սպանութեան գործիքին քովը , ծունկ չոքեցաւ , ու աչուրները երկինք վերցընելով կանչեց . « Ո՛վ տեր , լուսաւորէ իմ դահիճներս ու սրտերնին շարժէ : Մնաք բարով որդեակք իմ , ես ձեր հօրը քովը կ'երթամ , : Ասանկ մեռաւ Մարիամ-Թերեզային աղջիկը Մարիամ-Անթուանէթ երեսունութը տարեկան (16 հոկտեմբեր 1793) :

1 Շատ տարբեր կերպով եղաւ Մատամ Ռոլանին մասը, որ Երոնտեանց գրգռիչն էր: Երոնտեանց կողմը բռնեւուն համար Լեռնականաց ձեռքովը 'ի մասն գատապարտուած, առանց մէկ կրօնական պատրաստութեան՝ առանց խնայելու մահուն տեղը գնաց, անգագար սիրտ տալով քովի գատապարտուած էրիկ մարդու մը որ մեռնելուն վրայ կուշար: Ճամբան երբոր տեսաւ Ռոլան Ազատութեան հսկայածն արձանը, հառաչելով մը կանչեց. «Ո՛հ ազատութիւն, առ ի՞նչ ոճիրներ կը գործուին քու անունովդ»: Ախոսս որ շատ ուշ խմացաւ: Գլուխը կարեցին նոյեմբերի 8ին (1793): Երեսուներինը տարեկան էր:

2 Երոնտեանց վրայ ալ ամբաստանութիւն եղաւ՝ իբր թէ չափաւորաց կողմը կ'ուզէն բռնելու քսանուերկու հոգի բանա գրուեցան: Երբոր լսեցին ասոնք իրենց մահապարտութեան վճիւղը, մէկը կատաղութենէն ինքզինքը սպաննեց. մէկալ նոնք նոյն գիշերը կերան խմեցին ու Երոնտեանց դժոխք իջնալը կատակերգութիւն ձեացուցին. միայն մեջերնէն երկու հոգի զղջալով՝ հոն կատակալ քահանայի մը խոստովանեցան: Երկրորդօրը ամէնքն ալ մեծ հրապարակին մեջ գլխատուեցան. շատը մեռան Մարտէյլէզ՝ ըսուած երգը եր-



1 Մատամ Ռոլան ինչպէս մեռաւ:
 2 Երոնտեանց վերջն ինչ եղաւ: — Մարտէյլէզն ինչ բան է:

դէրով, ու ազատութեան պատկերին բարև տալով (13 հոկտեմբերի 1793) : Անոնց մէջն էր նաև Վէռնիոյ :

Փիլիպպոս Իկալիթէն ալ չկրցաւ ազատիլ, իրեն գլուխն ալ կարուեցաւ : Հուշար, Պոհառնէ, Լիւքնէր, Պիրոն զօրավարներն ալ գլխատուեցան՝ պարզ թշնամեացմէ յազթուէլնուհն համար : Յուրա ու անճրևոս օր մը Պայլին ալ բռնեցին խռովարարները — որոնց ասելի եղեր էր վրանին Արիսեան դաշտին մէջ կրակ սարսալ տալուն ու թագուհոյն դատապարտութեան տակնը վրան գութ ցուցնելուն համար —, և Արիսեան դաշտը տարին . գլխատման գործէքը ազբանոցի մը վրայ գրին, առջևը բերին կարմիր գրօշակներ սյրեցին և ուրիշ շատ նախաախնքներ րրին : Աւազակներէն մէկը տեսնելով որ խեղճ ծերը կը գողայ, ըսաւ « Կը գողան Պայլն » : Անկիայ պատասխան տուաւ « Չէ բարեկամ, ջրակն է » . ու մէկէն գործէքը գլուխը տարաւ : Փախած Ժիրոնաէններուն գրութե ամենն ալ խեղճութեամբ մեռան . խի փէթիտնին մահը աւելի սոսկալի եղաւ . վան զե երբ որ իրեն ալ դատապարտութեան վճիռ ելաւ, ինքը Պորտոյ փախաւ, ու հոն անտառի մը մէջ գասն իր մեռելը, որուն կէսը դայէրը կերեր էին :

Փիլիպպոս Իկալիթէն կրցան մահուընէ ազատիլ : Պայլինն մահն ինչպէս եղաւ : — Փէթիտն ինչ մահուամբ մեռաւ :

Դժ. և Մարտիւիայ Էնեիողնէր և երգե երգելով օգոստոսի 10ին (1792) Թիւիւրիի Վրայ վաղեմուն համար, Էրենց անոնիւ շէր և Մարտիլէզ ըսողեցաւ :

1 Ինչուան ան ատենը որ Գրիգորեան տոմարը և Քրիստոսի թուականը կը դործածուէր Գաղղիա, ինչպէս նաև Հիմայ, անոնց տեղ Գաղղիոյ հասարակապետութեան տոմարն ու թուականը հաստատեցին. ասորին տասուերկու հաւասար ամիս բաժնեցին, երեսնական օր, մնացած հինգ օրը Սահեթ-Էթիփ կամ Սանբիւլթեան աւուրք անուանեցին. ամսոց անուններն ալ փոխեցին ու ամէն մէկ եղանակին յարմար անուններ գրին : Չմեռնային ամիսներն էին Նիժու (ձիւնաբեր), Էթիւփօզ (անձրևային) Չանդու (հողմաւոր) . դարնանայիններն էին Ժէրֆնաւ (բողբոջային), Քէրէու (ծաղկաւէտ), Ժէրֆու (մարգաւէտ) . ամառնայինները Ջեսիփօր (ոսկեհունձ), Էթիփօր (ոսկեջերմ), Քրիսթիփօր (ոսկեպտուղ) . աշնանայինները Չանթէր (այգեկուձք), Պրիֆէր (բքաբեր), Քրիֆեր (ցրտաբեր) : Իւրաքանչիւր ամիսն ալ իրէք մաս բաժնեցին որ կ'ըսուէր, Տէրփ կամ Տասնեակ : Քրիստոսի, սուրբ Աստուածածնայ և Սրբոց աներուն տեղը՝ մանկութեան, սրտանեկութեան, պրութեան ու ծերութեան պլ և այլ տօներ գրինաս տօներուն մէջ էր նաև օգոստոսի 10ին ու յունուարի 21ին տարեգարձը : Ճեմարանները, համալսարանները, ու դպրոցներն ալ վերուցին ու նայեցան որ կրօնի, բարոյականի և դիտութեանց ամէն ազբիւրները դոցելով Գաղղիացիները նորէն բարբարոսութեան մէջ ձգեն :

1 Տոմարի ինչ փոփոխութիւն ըրին : — Տասուերկու ամսոց անուններն որոնք էին : — Սրբոց տօներուն տեղ ինչ գրին :

1 Իրենց 'երկրաւոր թագաւորին դէմ պատե-
րազմելէն ետքը՝ երկնից Թագաւորին դէմ դարձու-
ցին ամագարչաութեան զէնքերնին՝ Ազգախումբ
Ատեանը հրատարակեց որ Աստուած չկայ, և թէ
մի միայն կրօնք՝ ժողովրդեան կամքն է. տօները
վերուցին, եկեղեցիներուն սրը քանդեցին, սրը
գոցեցին, զարդերը կողոպտեցին, պատկերներն
ու Սրբոց մասունքը այրեցին, և անոնց տեղ Մա-
րային արձանները դրին: Անամօթ երգիչ կնկան մե-
կուն ալ աստուածուհւոյ հագուստ հագցուցած,
Ռէզն կամ Բան անունը տուին անոր, ու յաղթա-
նակաւ տարին զինքը ժողովարանը, անկէջ ալ Մայր
եկեղեցին ('Նոթը-Տամ'), խորանին վրայ դրին ու
գխմացն ընկած երկրպագութիւն ընելէն ետե՛ս ան-
որ աստուածուհւոյն նուիրեցին եկեղեցին:

2 Լուսավիպութիւնը քոյրը Եղիաբեկթ, որ
տէրութեան գործողութեանցը մէջ ամենեկին չէր
մտած, և խռովութեան ատեն թագաւորական
ցեղին այնչափ խեղճութիւններուն վրայ ողբա-
լով քաջութեամբ գխմացեր էր, ինքն ալ մայխին
Զին 1794ին դատաստանի կանչուեցաւ: Երբոր
հարցուցին, ինչպէս որ սովորութիւն է, իր ա-
նունն ու վեճակը, պատասխան տուաւ. « Ես կը

1 Ազգախումբ Ատեանը կրօնքի ինչ որոշմունք
ըրաւ: — Ռէզն ըսածնին ինչ բան
էր:

2 Լուսավիպութիւնը քոյրը Եղիաբեկթ ինչ եղաւ:
— Երբոր գլխատուեցաւ՝ քանի՞ տարե-
կան էր, ու ան տարիներն ինչով անցու-
ցեր էր:

սուխմ Եղիսարեթ Գաղղիոյ , ու ձեր թագաւորին
 հօրաբոյրն եմ, : Աս արիական պատասխանին վրայ
 զարմացան դատաւորներն ու քիչ մը ատեն հարց-
 մունքները դադրեցրնելէն ետե՛ մահուան վճիռը
 սուին . և վեհանձն դշխոյն ամենեկին դանդաւ մը
 ճհանեց բերնէն : Երեսուն տարեկան էր երբոր
 գլխատուեցաւ , բոլոր ան տարիները դ[թու]թեան
 ու ամէն տեսակ առաքինութեան օրինակ ըլլալէն
 էսքը (10 մայիս 1794) :



Եւ անոր սր զարկու զէ արեւմտեան
 արդիւն իր ժամանակին , ինքնուրոյն զօրք
 Եւ անոր ինչ զարկու զէ արեւմտեան
 արդիւն իր ժամանակին , ինքնուրոյն զօրք
 Եւ անոր ինչ զարկու զէ արեւմտեան
 արդիւն իր ժամանակին , ինքնուրոյն զօրք

ԳԼՈՒԽ Ե .

Շարայարուսեան Խոռովուսեան Գաղաղիոյ՝ Եղիսաբէթեան
Սահաւանին ինչուսան Ազգախոսմբ Արեւինն հրածարելու :

(1794-1795) :

Նախնական Թուրքիա կ'ազատէ . — Գաղաղիոյ գաւառանէ-
րունն յեջ եղած խոռովուսեանը . — Լիոն քաղաքին ինչ-
ծանուսմբ . — Բուսնան և Բուլղարիոյ Տ'իբուրուս . — Մե-
նիէ . — Թաւուսիէն , Յոնիէի Լազոն . — Բարսիէ . —
Թագաւորական և նորին զէնք և կ'առնուան . — Իրենց գլխա-
ւոր զօրաւարները . — Վէսեիսի . — Փարսիսու յեջ ար-
հաւարաց իստաւարուսեան սասարիսեանը . — Անտրեան
Շէնիէ Բանաստեղծը . — Ռուսիէից ինչ ճանայ իր լինա-
թիւնը ինչոյնէն . — Թաւուսիէն . — Ազգախոսմբ Արեւանը
Ռուսիէիցին զէնք կ'ելլէ . — Ռուսիէիցին ու իր գոր-
ծախիցիները քաղաքացիներ յարուս ինչոյնէն . —
Ռուսիէից իր ընկերներու կ'ազատէ . — Պատաս զօ-
րապետ ինչ քորի . — Ռուսիէիցին և իր գործախիցացը
ճանը . — Եղիսաբէթեան հասարակաց . — Գաղաղիացաց
քորիսը ըրած յաղթուսեանները . — Մասսէնա , Փիլիսի-
ոս Երզրան զօրաւարները . — Փարսիսու յեջ նորին խոռ-
վուսեան կ'ելլէ . — Պատասի ք'Անիլուս . — Թագաւորա-
կանաց հանած խոռովուսեանը . — Մընուս , Պատաս ու
Պանախար . — Ազգախոսմբ Արեւինն հրածարելու . —
Ըրած իստաւարուսեանները :

1 Ան ասեանն որ Փարսիսու յեջ այնչափ անմեղ
մարդիկ կը գլխատուէին , թնդանոթաձիգ զօրաց

1 Նախնական ինչոյն յախ սկսաւ քաջութեան ա-
նուն հանել : — Ազգախոսմբ Ասեանը ի իոն
քաղաքին վրայ ինչ սոսկալի լճիս հանեց :

գնդապետը Նախորդէն Պոնափարթ իր ճարտարութեամբը թուլն քաղաքը Անդրկասպեցոց ձեռքէն առնելով սկսեր էր քաջութեան անուն հանել: Իսկ Գաղղիոյ դաւառներուն մէջ քաղաքական խռովութիւնը երթալով սաստկացաւ, ու վայրենամիա հիւստատոսները սոսկալի կոտորածներ կ'ընէին: Լիոն քաղաքին խեղճութիւնը աւելի մեծ եղաւ: Երկար ատեն պաշարուելէն ու շատ աւերմունքներով ու կրակներով փաստուելէն ետքը առնուեցաւ: Ազգախումբ Ատեանն ալ ուրիշ քաղաքներուն աչքը վախցընելու մտքով հրաման հանեց որ Լիոն քաղաքը կործանուի՝ բաց 'ի հասարակաց շէնքերէն ու աղքատաց տներէն: Հինգ դործակալ երթան հոն՝ սպաստամբները պատժեն, Լիոն անունին տեղը անկէց ետքը ըսուի Ալափեալ քաղաք, և անոր աւերակներուն վրայ յիշատակարան մը կանգնուի աս արձանագրութեամբ: Լիոն ալափեան դէմ պափերալեցաւ ու 'ի լիք դարձաւ: Քութուն և Քողոյ-ա' Էրպուա աս սոսկալի վճիռը հաւատարմութեամբ կատարեցին: Հարուսաներուն աները քանդեցին, մեծամեծ ու գեղեցիկ փողոցները կործանեցին, բնակիչներուն դէմ ալ աւելի անգթութեամբ վարուելով ժողովուրդը խումբ խումբ ժողովեցին ու թնգանօթներու մէջ ողկուզամե սումբեր դնելով՝ զանոնք ջարդեցին:

Թուլոն ու Մարսիլիա քաղաքներն ալ նոյն

Մէկալ քաղաքներուն մէջ ինչ անգթութիւններ եղան: — Երպոն ու Քարիէ ինչ սոսկալի բարբարոսութիւններ կ'ընէին:

սկիսի ջարդերը ըրին թագաւորականաց դէմ: Մէնիէ անուշնով կատաղի մարդը Օրսնի՛ք քաղաքին մէջ արեան գետեր կը վազցընէր. թալլիէն Պորտոյի մէջ սարսափելի ջարդեր կ'ընէր. բայց Առասու՛ Նանթ քաղաքներուն մէջ եղածները անոնցմէ ալ սոսկալի էին: Յովսէփ Ղըզոն անուշնով մէկը Առաս քաղաքին մէջ գլխատման դործիքը հաստատած, բայ թուր մը ձեռքը բռնած ու երկու լեցուն ատրճանակ մէջքը դրած, փողոցները կը ստըտէր ու գիմացը եկածը կը բռնէր կը գլխատէր. դահճին հետ կերակուր կ'ուտէր, սեղանին վրայ սղտիկ կիլըթին մը դրած էր, ու կերակուրի ատեն վրան նայելով կը զուարճանար: Այն էր ան մարդուն որ Ղըզոնին աչքին հարուստ կամարուսքինի երեւար. մէկէն սլափի՛ք մահ էր: Քարիէ անուշնով մէկը Նանթի մէջ Ղըզոնէն ալ աւելի կատաղութիւններ կ'ընէր. բանտերը լեցուն էին մահասպարաներով, աղայ, ծեր, կին ամէնքն ալ նեղ նեղ տեղերու մէջ փակուած՝ սպականեալ օգով կը հիւանդանային ու կը մեռնէին. Քարիէ եւ իր դահիճները մասնաւոր նաւակներ շինել տուին. բացուելու դռնակներով. անոնց մէջ խառնափրն գոր կը լեցընէին բանտարկեալները ու Ղուար դէտին վրայէն դէպ 'ե ծով կ'իջեցընէին. ծովուն մտ դռնակը կը բացուէր ու նաւակներուն մէջի խեղճերը ծովը կը թափէին. և որոնք որ լողալով ազատիլ ուզէին՝ թրով կը ջարդուէին: Աս սոսկալի գիւտէն զատ ուրիշ բան մըն ալ հնարեց մարդախոշոշն Քարիէ որ կ'անուանէր հասարակալեպական ամուսնութիւն, և ան էր ասիկայ որ մէկ էրիկ մարդու մէկ կնիկ մարդ չուաններով իրարու կապել

կուսար ու լուար գեաը կը նեաէր : Երբոր ծովը
ան դիակները դէտ 'ի եղերքը կը ձգէր, գիշակեր
Թռչուններն ու գաղանները կ'ուաէին զանոնք,
և մարդիկ անոնց հոակն կը հիւանդանային և կամ
անոնց աեսքովը կը զարհուրէին :

1 Աս չըուած բարբարոսութիւնները աեսնէ-
լով Թագաւորականք՝ նորէն ուր ելան Գազզիոյ
արեւմտեան կողմերը, իրենց ճարտար Քաթիլնոյ,
Պոնչան, ա' Էլզսէս, լ ըբիւր, Սթոնիլէ, լ շա Ռոշ-
ժաբլէն ու Շարեթ գլխաւորներուն առաջնոր-
դութեամբը սրատերազմներ, յաղթութիւններ ը-
րին ու քիչ մը ժամանակ հասարակապետութիւնը
գողացուցին: Բայց անընկճելի Ազգախումբ Ատեա-
նը յաղթանակեց, իր Աէսթերման զօրավարը որ Գա-
հիճ Ասիֆէայոնոյ ըսուեցաւ, Մանս ու Սաիլէ քա-
ղաքներուն քովի սրատերազմներուն մէջ Թագաւո-
րականները խորտակեց, ու Անաէացւոց ապրա-
տամբութիւնը շատ սկարացուց :

2 Այնչափ մարդկանց մէջ որ մաքերնին դրած
կ'երեւնային ամէն բան կործանել, միայն Ռոսպէս-
փիկերը քանի մը մասած մունքներ ունէր բարեկար-
գութիւններ ընելու. ասիկայ միտքը դրած էր որ
ամենուն վրայ արհաւիրք ձգելով մարդկային ըն-
կերութեան մէջ նոր կարգ մը դնէ. եղած մար-

1 Թագաւորականք ինչ ըրին : — Ազգախումբ Ա-
տեանը որուն ձեռքովը յաղթանակեց :

2 Ճշմարիտ Աստուծոյ պաշտօնն ու՛ր ուղեց նորէն
հաստատել : — Ո՛ր բանը Ռոսպէսփիկերին
կործանմանը պատճառ եղաւ :

դիկը ջարդելով կը յուսար որ նորերդն վրայ կա-
րենայ փորձել իր մէկ քանի կարծիքները : Անկէց
'ի զատ հասկըցած էր թէ առանց հաւատոյ մարդ-
կային ընկերութիւնը չկրնար հաստատուն մնալ
ու կարգաւորուիլ . բայց անկէց անդին ուրիշ բան
չէր կրնար կամ չէր ուզեր մտածել : Աւերջապէս
եակէ եակ թագաւորութիւնը , չափաւորահան-
ները , Պրիստոյ , Օռլէան , Տանթոն ու Հէպէրը
կործանեւէն եակ՝ մտածեց որ իր դործողութեա-
նը ձեռք զարնէ . Ազգախումբ Ատենին բեմը ելաւ
(7 մայիսի , 1794) ու շատ մը խօսեցաւ որով կը
համոզէր ժողովն որ Բան ըսուածին ծաղրահան
պաշտօնին տեղը ճշմարիտ Աստուծոյ պաշտօնը
հաստատուի : Այնչափ անդգամութիւններէն եա-
քը Ազգախումբ Ատենին աս կերպով անաստուա-
ծութենէն ելլելն ալ մեծ բարեբաղդութիւն մըն
էր : Ուստի Ռոպէպիէրին առաջարկութեամբը
աս վճիռը հաստատեցին թէ Գաղղիացոց ազգ իւ
բաւանի Գերագոյն Էակին փոյտ-բիւնն աւագոյ ան-
ճահո-բիւնը : Եւ աս օրէնքը հաստատելու համար
որոշեցին որ մասնաւոր օր մը տօն կատարուի 'ի
պատիւ Գերագոյն Էակին : Ան օրը հանդէսին
պարագլուխը Ռոպէպիէր եղաւ , որ Ազգախումբ
Ատենին ալ նախագահ էր , և տեսնելով որ բոլոր
Ատեանը , յաբոպէնները , ազգային պահապաննե-
րը , զօրքը և ժողովուրդը զինքը կը համարին իրենց
հաւատք և օրէնք գնող , միաքը դրաւ որ ալ ատենն
է ամենուն վրայ տիրապետելու . բայց խաբուե-
ցաւ , և ան հանդէսը իր կործանմանը պատրաս-
տութիւն եղաւ :

Փարիզու մէջ արհաւիրաց կառավարութիւնը ան աստիճանին սաստկացեր էր որ յայտնի կ'երևնար թէ վերջը մօտեցեր է : Նոր նոր կտասրածները ընելու մէյակէ պատճառ եղան Քոլլոյ-ա'կըպուայի ու Ռոպէսփիէրին կենացը գէմ'եղած դաւաւակցութիւնները : Ան միջոցին գլխատուեցան նաև Լալուազիէ անուանի բնաւոյժն ու Անդրէաս Շէնիէ երիտասարդ քաջ բանաստեղծը , բայց ժողովուրդը ասոնց գլխատուած ատենը ծափ չգարկաւ' ինչպէս որ ուրիշներուն կ'ընէր : Անկէջ 'ի զատ երբ որ տեսաւ որ մարդկանց արիւնը Սէն գետը վազցընելու համար ճամբայ մը շինուեցաւ , սկսաւ խղճմտանքը զարնել , և անոնք որ օրը երկու Ֆրանք կ'առնէին մահապարաները ծաղը ընելու համար' սկսան ան չարութեան վաստակէն ետ կենալ : Հասկըցան խռովարարները որ աս կառավարութեամբ գլուխ պիտի չելեն . Ռոպէսփիէր ալ տեսաւ որ ժողովուրդը Գալլիսացւոց գրտի յաղթութիւններուն զբաղած' իրմէ սկսաւ սլաղիլ , մտածեց որ կուսակիցներուն մէջէն մէկ քանին ալ վերցընէ ու բոլոր իշխանութիւնը ձեռք առնելով' ուղած կառավարութիւնը հաստատէ : Անոնց մէջ գլխաւորներն էին Թալլիէն , Քոլլոյ-ա'կըպուա , Պառէր և ուրիշ չարագործ մարդիկ , որ Ռոպէսփիէրին ձեռքէն ազատելու համար' Ազգախումբ

1 Ինչէն կ'իմացուեր որ արհաւիրաց կառավարութեան վերջը մօտեցեր է : — Ռոպէսփիէր իշխանութեանը մէջ հաստատուելու համար ինչ մտածեց :

ատենին լեռնականք ըսուած մասին հետ միացան :

1 Ռոսպէսփիէր յուլիսի 27ին (9 Թերմիտոր, 1794) բեմն ելաւ ու ըսաւ թէ նոր դաւակցութիւններ կան. ուստի պէտք է որ մէկ քանի հողուոյ ալ գլուխը կարուի : Բայց Ժողովը սկսաւ մրմուռները որ Ռոսպէսփիէր շփոթեցաւ ու երեսին գոյնը նեակց, Թալլիէն բեմն ելաւ ու ձեռքը թուր մը առած՝ ստիպեց Ռոսպէսփիէրն որ միտքը բացարկ . անոր պատասխանին չսպասելով դարձաւ հարցուց Ժողովոյն թէ « Ատենը չէ՞ արդեօք սս նոր Քրոմուելին ձեռքէն ազատելու » : Ան խօսքէն Ազգախումբը Ատենը սիրտ առած՝ սկսաւ կանչել . « Մեռնի բռնաւորը, մեռնի իշխանապետը » : Ռոսպէսփիէր ուզեց ինքզինքը արդարացընել, բայց Ժողովըրդեան ազազակէն իր ձայնը չսուեցաւ . ան ատեն կատաղութենէն փրփրած՝ դարձաւ կանչեց նախագահին . « Նախագահ աւազակաց, խօսելու կարգը իմն է » : Բայց նախագահը՝ Քոլոյ-ա՛ Էրսուա, հրամայեց Ռոսպէսփիէրին որ վար իջնայ ու գտաապարտել մարդկանց տեղը նստի . ան ալ գնաց նստաւ հոն՝ ուր որ ինքը նստեցուցեր էր իրմէ առջեւ անդգամները Վէռնիոյ, Տանթոն, Պրիստոյ, Քամիլ Տէմուլէն, և ուրիշները : Ազգախումբը Ատենը սկսաւ կանչել որ Սէն-Ժիւսթ, Քուլթոն, Լըպա և Ռոսպէսփիէրին բոլոր գործակիցները անոր քովը երթան նստի : Ան ատենը ղինուսորները ներս մտան ու զանոնք բռնա

1 Ռոսպէսփիէրին կործանուածն ինչպէս եղաւ :

աարին : Աս վճիռը հանողներուն ժողովը ըսուեցաւ յօղով խորհրդան հասարակաց (Քովիթէ տը սալիւ փիւսլիք) :

1 Ան միջոցին դրսի ժողովուրդը Ազգախումբ Ատենին մէջ եղածները ընկող, ուղեց Ռոսպէս փիւերին կողմը բռնեւ ու նոր խառովութիւն մը հանեւ : Հանրից՝ որ Ռոսպէսփիւերին կուսակիցներէն մէկն էր, ձին հեծաւ ու սկսաւ կանչել ժողովըր գեան թէ իր բարեկամները քանի մը անդգամներու ձեռք մասնուեր են, սէտք է զանոնք ազատել : Թնդանօթաձիգ զինուորներն ու խաժամուժ ամբոխին մէկ մասը հրատարակին մէջ լեցուեցան ու ժողովարանը սղաշարեցին : մէկ կողմանէ ալ բանտապաններուն հրաման խրկեցին որ չըլայ թէ Ռոսպէսփիւերն ու անոր ընկերները ներս առնուն : Ասանկով բռնաւորը իր ընկերներովը ազատեցաւ, ու յաղթանակաւ դատաստանարանը տարուեցաւ : անթիւ բազմութիւն ժողովուեցաւ անոնց քովը և նշանի մը կը սպասէր որ թիւյիլըսիին վրայ վազէ : Բայց Ազգախումբ Ատենին քաջութիւնը յաղթեց իր թշնամեացը : Քուլայ-ա՛ իբրպուա երգուընցուց ժողովականներն որ հասարակապետութեան համար մեռնին : Պսուաս զորսպետ դրուեցաւ ու թնդանօթներ հեան առած՝ դատաստանարանին վրայ դնաց : և որովհեան ժողովուրդը արդէն

1 Ռոսպէսփիւեր ի՞նչպէս ազատեցաւ : — Իր դործակիցներովը ի՞նչ շփոթութեան մէջ ընկաւ ու ի՞նչ բրին : — Ի՞նչպէս մեզաւ Ռոսպէսփիւեր :

յրուեր էր, Ռոսպէսիներ իր գործակիցներովը մի-
նակ մնաց ու չէր գիտեր թէ ի՞նչ ընէ: Ան ասե՛նը
ստակալն շփոթութիւն մը ընկաւ մէջերնին: Եւ
քոպէններու գլխաւորը Քոֆէնալ բռնեց զհան-
րինն սպասուհանէն վար՝ ազանդութեանց մէջ
ձգեց: Եւ ըստ ինքզինքը զարկաւ մեռուց: Ռոսպէս-
փէերին եղբայրը փողոցը նեաուեցաւ ու կիսամեռ-
հոն մնաց: Ինքը Ռոսպէսիներ ալ ատրճանակով մը
ինքզինքը ուղեց մեռցրնել բայց չկրցաւ, ու միայն
կզակը ջախջախեց: Ան միջոցին զնուորները բռ-
նեցին զանոնք գատապարտութեան տեղը տարին, և
հոն Ռոսպէսիներ արիւնշուայ երկար ատեն բարձր
տեղ մը կեցած: Ժողովրդեան անէծքներն ու նա-
խասինքները լսեց լուութեամբ ինչուան որ ինքն
ալ ընկերներուն հետ գլխատուեցաւ: Ասանկով
վերցուեցաւ աշխարհէս ան մարդը որ բոլոր մարդ-
կայինն ազգի նախասինք ու սարսամ տխախ ըլլայ
ամէն ատեն, և ժողովրդոց մէջ ելած խռովու-
թիւններուն հոգին իր վրայ տխախ երևնայ: Նոյն
օրը արհաւրականներէն (թերէօրխաթ) հինգ հա-
րիւր հոգի գլխատուեցան ու Գաղղիան հոգի ա-
ռաւ:

1 Անկէց ետքը երկրին ամէն կողմէն ամէնքը
սկսան ազազակել որ գլխութիւն և վրկութիւն ըլ-
լայ: Ազգախումբը Ատեանն ալ ահամայ կամօք հրա-
ման տուաւ որ բանտերը կամայ կամայ բացուին:

1 Ի՞նչպէս սկսաւ երկիրը քիչ մը հոգի առնուլ:
— Ազգախումբը Ատեանն ի՞նչ հրաման տուաւ,
ու կատարել խռովարարներն ի՞նչ եղան:

կատկածելի ըստածները իրենց առնը դառնան .
 Գուրբիկ-Թենվիկ, Քարիկ, Յովակիմ Լըպոն, Ազ-
 գախուսմբ Ատենին մեջէն ալ քանի մը կատաղի
 խոսվարարներ դիտատուեցան : Ան առեն թա-
 դաւորականաց կողմը զօրացաւ ու շատ ազնուա-
 կան երխտասարգներ որ յէօնէս փոքէ այսինքն
 ոսկեզօծ Պատանեկուծիւն ըսուեցան , Փալէ-
 Ռուայայլին մեջ սկսան դաւազաններով յայքո-
 պէնները ծեծել ու կատաղի կնիկ մարդիկը անոնց
 քովէն վազնաւ : Ազգախուսմբ Ատենին ալ յայքո-
 պէններուն քիււպը գոցեց , և ողջ մնացած փա-
 խըստական յիրոնաւորները ետ կանչեց . դատա-
 սարտեց նաև քանի մը շեռնականներ՝ որոնց գըլ-
 խաւորներն էին Քոլոյ-ա՛կըսուա , Պաուեր և
 Պիլիոլ-Վարէն . Մարա՛ արհաւիրաց սլաշապանը ,
 հասարակաց տեղերէն ու Փանծէոնէն դուրս հա-
 նուեցաւ . արտօրելոց ստացուածքը իրենց դար-
 ձուեցան , ու կրօնքի թոյլտուութիւն եղաւ :

Գաղղկացիք մեկ կողմանէ ալ դուրսը յաղ-
 թութիւններ կ'ընէին . մեկ միլիոն երկու հարիւր
 հազար մարդ զէնք կը կրէր . և թէպէտ շատը նոր-
 ընախր երխտասարգներ էին , բայց շուտով կը
 կըթուէին ծառայելու և հրամայելու : Շուտ մը
 Պիրենեան շեռներէն անցան , Մասսէնա զօրավարը
 Սարաւենիոյ Օնէլիա քաղաքն առաւ ու եռագոյն
 դրօշակը խաւիա իջեցուց : Առջե բերան հիւսի-



Գաղղկացիք դուրսը ի՞նչ կ'ընէին : — Եւրոսլայի
 տէրութիւնները Գաղղկացի զօրավարաց յաղ-
 թութիւններն տեսներով ի՞նչ ըրին :

սային կողմը Գաղղիացւոց բաները ձախող գնացին . բայց Փիլիբիւ Թուրքուէն քաղաքին քով յաղթուածին մը ընելով բանը շահեց : Պելճիոյ Իփր քաղաքը սղաշարեց առաւ : Եւրոսան զօրավարն ալ Պելճիոյ Ֆլէօրիւս քաղաքին քով կայսերահանաց վրայ մեծ յաղթուածին մը ընելով, Պրուսելն ու Պելճիոյ ճամբան իր զօրացը բացաւ . Գաղղիոյ Քոնտէ , Վալանսիէն , Լանարրախի ու Քէսնոյ քաղաքները նորէն առնուեցան : Հողանտա որ Փիլիպպոս երկրորդին ու Լուգովիկոս չորեքտասաներորդին դէմ կեցեր էր , չկրցաւ Փիլիբիւյին զօրացը ընդդիմանալ . սառած Մէօզ գետէն անցաւ Փիլիբիւ , Ամսերոսամի տիրեց և Հուլանտան Գաղղիացւոց Հասարակապետութեան դաշնակից եղաւ : Եւրոսայի տերութիւններն աւ յաղթուածինները տեսնելով շատ վհատեցան . Գերմանիոյ կայսրը ահամայ առաջ կը տանէր սլատերաղմբ . Բրուսիոյ Թագաւորը Փրեդերիկոս Գուլիէլմոս հաշտութիւն կ'ուզէր ընել . Թոսքանա հաշտութիւնը խնդրեց առաւ : Վանտէ դաւառն ալ խաղաղեցաւ Հօշ զօրավարին ճարտարութեամբը՝ որ Խաղաղարար Վանպէտցոց ըսուելու արժանի եղաւ , և իր հայրենիքը Վերսայլ քաղաքը հրատարակի մը մէջ տեղը իրեն սղինձէ արձան մը կանգնեց :

Սակայն Փարիզու մէջ արիւնհահեղ տեսարան

1 Ինչո՞ւ համար Փարիզու մէջ նորէն խառնութիւն եղաւ : — Աղբային Ատեանը որո՞նք կոխեցին , ու հոն զո՞վ սպաննեցին :

ները նորէն սկսան շատնալ . սովը տիրած էր , և յայրօպէնները անգագար ժողովուրդը Ազգա-
խումբ Ատենին գէմ կը գրգռէին : Փրէրիալի Աին
(20 մայիսի 1795) զանգակները սկսան զարնուիլ ,
արուարձաններու ժողովուրդը Ազգախումբ ժո-
ղովարանը թափեցաւ՝ ժողովականաց մեծ մասը
ջարգելու համար . ահաւոր ձայներով Ս^ա Իբա և
Բաբաճանէն ըսուած կատաղի երգերը կ'երգէին ու
տանն ատեն երգը դադրեցընելով՝ հաց ու 1793ին
Սահմանագրու թիւնը կ'ուզէին : Ժողովականք երբ
որ քաշուած խորհուրդ կ'ընէին մէջէրնին ասոր
ճար մը գտնալու ու ժողովրդեան հաց հասընե-
լու , մէյմըն ալ յանկարծ սոսկալի ազադակ մը
բրգաւ ժողովարանին մէջ թէ Ազգախումբ Ատենին
զորայք զէնքերը կողոպտուեցան , գինով ու կիսա-
մերկ մարդիկ և կատաղի կանայք հրացաններով ,
գանակներով ու տէգերով ժողովարանը վազեցին :
Ժողովականաց մեծ մասը սարսափած ձգեցին
փախան , Լեռնականք ծափ զարկին ու աւազա-
կաց սիրտ տուին : Անոգուտ տեղ ազգային նուի-
րակը Ֆերոյ ժողովրդեան առջևը ելաւ , ուզեց
զանոնք համոզել որ օրէնքը ոտքի տակ չառնեն .
մէկէն զինքը պատըռուեցին ու դլուխը տեգի մը
ծայրը անցուցին . անկէ վազեցին նախագահին
քով ու սկսան մահ սպառնալով ուզել որ 1793ին
Սահմանագրու թիւնը հաստատէ ու օրէնք հանէ
որ ուզածնին աքտորեն և ուզած բաներնին կողոպ-
տեն : Նախագահը Պուասսի ա' Անկլաա՝ գէմ կե-
ցաւ ամբոխին . շատերը հրացաննին կուրծքին
գրին ու խեղճ Ֆերոյն արիւնշուուայ գլուխը ի-
րեն ջրցուցին : Ան միջոցին զօրքը ետեկն հա-

սաւ, մտաւ սրահը ու ան կատարել բազմութիւնը
ցրուեց :

1 Վրան հաղեւ թէ քանի մը ամիս անցեր էր,
ուրիշ աւելի սարսափելի խռովութիւն մը ելաւ .
Թագաւորականը ժողովրդեան ու զօրաց կէսը
հեռերնին միարանած՝ պատրաստուեցան Թիւշի-
լըրին կոխելու ու Ազգախումբ Ատեանը կործա-
նելու : Թնդանօթները սկսան չորս գիէն որոտալ,
խռովութիւնը սասկացաւ : Դեռ Ազգախումբ
Ատեանը անանկ մեծ վտանգի մէջ չէր ընկած :
Հասարակապետական զօրաց զօրավարը Մընու-
սյատերազմելու սիրտ չըրաւ ու ապստամբաց հեռ
գաշնակցեցաւ . բայց Ազգախումբ Ատեանը զինքը
ձգեց ու տեղը Պառասը գրաւ . անիկայ ալ իրեն
օգնական առաւ երխտասարգ Պոնափարթը : Շուտ
մը ձի հեծաւ Պոնափարթ, քանի մը հազար հոգի
ընտրեց հեան առաւ, չորս գին վաղեց, զօրքն ու
թնդանօթները ճարտարութեամբ շարեց, ապրս-
տամբները պաշարեց . սնունդմէ կէսը փախան,
կէսն ալ անձնատուր եղան, ու Հասարակապե-
տութիւնը յաղթանակեց ան մարդուն ձեռքովը՝
որով ետքը պիտի կործանէր :

2 Քանի մը օրէն ետքը Ազգախումբ Ատեանը
հրաժարեցաւ, բայց ցրուելէն առաջ Հաստատեց

1 Թագաւորականը երբոր զօրացան ի՞նչ ուղեցին
ընել : — Հասարակապետութիւնը վտանգէն
ո՞վ փրկեց :

2 Ազգախումբ Ատեանը հրաժարելէն առաջ ի՞նչ
բարեկարգութիւններ ըրաւ : — Լուրդովիկոս
Ժէ ի՞նչ եղաւ :

ան դաշինքը՝ որով Գաղղիացիք Լուդովիկոս վեշտասաներորդին աղջկիւր Աւարիացւոց տուին ուանոր տեղը աւինն ան երեսփոխանները որ Տիւմուրիէ զօրավարը Աւարիացւոց ձեռքը մատներ էր : Նոյն ատեանը հաստատեց նաև Բաղմարուեստից Գալրոցը (էքօլ Փօլիթէքնիք), և Գաղղիոց ճեմարանը (Լչնսթիթիւ), չափերու ու կշիռքներու ալ միակերպութիւն մոցուց : Ուղեց նաև Լուդովիկոս Էօթնեւտասներորդին նեղութիւնները քիչ մը թեթևցրնել . բայց ան խեղճ սղանիր քաշած նեղութիւններուն չգիմանալով, Թամփլին մեջ իրեք տարի բանատուած կենսալէն ետևտասնըմէկ տարեկան մեռաւ (8 յունիսի 1795) :



Չարայարու-Ռէան Խոսովան-Ռէանն Պաշտոնայ՝ Ապագայու-Տէ
 Ապէնին հրաժարելէն Ինչուան Քաճոյ-Պարտոյի Դաշ-

նադարու-Ռէան (1793-1797) :

Օրինատիբ Խոհարարան . — Ծեբախոյ . — Տէնգհա-
 րի-բոյ ծոռով . — Անպէտաց-ոյ Բուրու-Չին նուաճու-
 ւել . — Սնու-Քէնի ու Շարէնի Տահ . — Տի-Տու-րիկ ու
 Լու-Ռի-Պիլի . — Քիւրուի կոպուրած . — Փիլի-Պի-Յին
 կաշառու-Ռէան . — Մարոյ Ե Դու-րոյան զօրաւարնեբուան
 յաղթու-Ռէանեբ . — Պանաթարի Խաւի-Պի զօրացը սպարա-
 պէս իւրու-Ռէան . — Ըրած յաղթու-Ռէանեբ . — Փիլի-
 Տանի Բագու-րու հասարակ-Ռէան իւրու-Ռէան . — Պանաթարի
 Դիւի 'ի Լու-Պարիս իւրու-Ռէան . — Ասպարիաց-ոյ Պուլի-
 զօրաւար . — Պանաթարի Միլան իւրու-Ռէան . — Ման-
 Բուան իւրու-Ռէան . — Ասպարիաց-ոյ Ան-Տի-Պի զօրա-
 վար . — Պանաթարի յաղթու-Ռէանեբ . — Ալի-Պի-Յին
 զօրաւար Ան-Տի-Պի օգնու-Ռէան կոպուր . — Պանա-
 թարի Արտուի կոպուր ի'անցնի . — Ման-Բուան անյնա-
 րու-Ռէան . — Ալի-Պի-Յին սուրու . — Քաճոյ-
 Պարտոյի Դաշնատարու-Ռէան :

1 Ազգախումբ Ատենին տեղը Օրինագիր խոր-
 հրդարան մը հաստատուեցաւ որ երկու խումբ
 կը բաժնուէր , մէկը Ծեբախոյ (Քոնստէյլ տեղ
 Անտիէն) որ Թիւրքերի պաշտար կը կենար , մե-

2 Ազգախումբ Ատենին տեղը Ինչ զրուեցաւ :

կալն ալ Հինգհարիւր-րոց յարաւ՝ Փալէ-Պուրպոն * քսուած սլալաար . ասոնցմէ զատ Տիւէթիոսար այս-կնքն Վարչութիւն կամ Ատեան Վարչաց անու-նով հինգ հոգի դրուեցան՝ օրէնքները կատարող որ Լիւքսանսուրի սլալաար կը կենային : Հինգ Վարիչներն եղան Լարվէլիէր-Լէփոյ , Լըթուր-նէօր , Ռէպէլ , Պաուսս և Քառնոյ : Սիւյէսն ալ ընարուեր էր , բայց յանձն չառաւ :

1 Հասարակաց դանձը սլարսուած էր . ուստի հարկ էր ամէն օրուան համար թղթէ ստակ հանել . ասանկով քսանըթօթը հազար միլիոնի թուղթ ստակ ելած էր , բայց աս ստակը ամենեկին յարգ-չունէր թէ ըրած կորուստին համար և թէ սուս թղթէ ստակներուն շահնալուն , այնպէս որ հա-զար հաս թղթէ ֆրանքը հազիւ կը բաւէր մէկ նամակի մը երթալուն կամ գալուն համար վճա-րելու . ութը հոգւոյ կերակրին համար ալ վաթ-սուն հազար ֆրանքը :

2 Ան միջոցին Վանտէ ու Պրէթայն դաւառները նուաճուեցան , և հօշ զօրապէսը քաղցրութեամբ դեղացիները շահեցաւ . Սթոֆլէ բանուեցաւ ու հրացանով սպաննուեցաւ : Վանտէացւոց յոյսը միայն Շարէթին վրայ մնացեր էր . ան ալ շատ ան-գամ զարնուելէն ու յաղթուելէն ետքը վերջապէս

1 Թղթէ ստակը ինչ յարգ ունէր :

2 Վանտէ ու Պրէթայն դաւառներուն վերջն ինչպէս եղաւ : — Շարէթ ինչպէս մեռաւ :

* Հիմախոսան Ազգային յողովարանն է :

Հասարակապետականաց ձեռքն ընկաւ, և թէպէտ գլուխն ու ձեռքը վերաւորուէր էին, բայց քաջութիւնը ամենեւին չէր կորսընցուցած. դատաստար սուէցաւ զինուորական դատաստանով որ Նանթ քաղաքին մէջ սպաննուի. թող չառաւ որ աչուընէրը կապեն, ինքը հրամայեց որ հրացանները սրարպեն վրան ու կէօօէ՛ աբոյ կանչելով ընկաւ մեռաւ (27 մարտի 1796): Տիւմուրիէ զօրավարն ալ էր որ սեսաւ թէ Օուլէանի դուքսը — որ էր Լուի-Ֆիլիպի — թաղաւորեցընէլու յոյս չկայ, Քուպուրիի իշխանին քովը քաշուեցաւ:

1 Անգղիոյ տերութիւնը իրեն կրկիրը քաշուած Գաղղիացւոց քիչ մը յոյս տալով, անոնցմէ ութը հազարի չափ մարդ Պրեթայնի Քիպրոն ըսուած թերակղզին հանեց, ուր արդէն տասը հազար հոգի թողվուած՝ անոնց կը սպասէին. բայց հօշ զօրավարը գնաց ան զօրքը ջարդեց, և որովհետեւ Անգղիացիք ան խեղճ փախստականներէն մէկն ալ չուղեցին իրենց նաւերն ընդունիլ, ամենքն ալ թրէ անցան. անոնց զօրավարներն ալ հրատարակաւ գլխատուեցան, և ասանկով Գաղղիոյ մէջ քաղաքական սպաւերացմները վերջացան:

2 Գուրան ալ Հասարակապետութեան զօրքը քաջութիւններ կ'ընէր: Երբոր Ֆիշկրիւ Քոնտէ իշխանէն կաշառուելով սկսաւ թողուլ որ Աւս-

1 Քիպրոնի կոտորածն ինչ է:

2 Հասարակապետութեան զօրքը դուքսը ինչ քաջութիւն կ'ընէին: — Մորոյ ու ժուրտան զօրավարներն իրենց ձեռքին տակը ինչ անուանի զօրագլուխներ ունէին:

արկայքէր իր զօրացը վրայ զօրանան, Վարչութիւնը անոր տեղ Մորոյ զօրավարը դրաւ՝ որ գնաց Պաւերա մտաւ . Ժուրտան զօրավարն ալ Պոհեմիա : Ասերկութիւն ալ իրենց ձեռքին տակը անուանի զօրագլուխներ ունէին, ինչպէս Սէն-Սիր, Տըզէքս, Բլէպէր ու Մարսոյ, և ասոնց ամենուն ջանքը անէր որ Իտալիոյ բանակին հետ միանան : Աւսարիոյ կայսեր Ֆրանչիսկոսի եղբայրը Կարոլոս արշի-գութսը շատ անգամ Գաղղիացւոցմէ յաղթուելէն ետե՛ր՝ Պամպէրի քաղաքին քովը Ժուրտանին յաղթեց . Մորոն ալ մինակ մնացած՝ շատ նեղութեամբ Գերմանիայէն ետ քաշուեցաւ դէպ ՚ի Գաղղիոյ սահմանը :

Իտալիոյ զօրաց բազմը բանեցաւ, Վարչութիւնը իրենց վրայ սպարապետ դրաւ Պոնափարթը որ քահնութեց տարեկան սպայ էր, ասիկայ ճամբայ ելլելու ատենը խոստացաւ որ իրեք ամիսէն կամ Փարիզ դառնայ և կամ Միլան մտնայ յաղթական : Աս յուսով ու քաջութեամբ լեցուած՝ անցաւ Ալպեան լեռներէն, Նիցցա քաղաքը վաթսուն հազար Գաղղիացի դտաւ խեղճ վիճակի մը մէջ (26 մարտ 1796), որ ոչ հազուսա ունէին, ոչ ստակ, ոչ կերակուր և ոչ ձի, բայց քաջութիւն, հաստատութիւն, հասարակապետական եռանդն ու քաջ զօրավարներ ունէին, որոնց մէջ էին նաև Մասսէնա և Օժրոյ՝ որ իրենց



1 Իտալիոյ բանակին ո՞վ սպարապետ դրուեցաւ :
— Պոնափարթ ի՞նչ վիճակի մէջ դտաւ իր զօրքը, ու ի՞նչպէս զանոնք իրախուսեց :

քաջութիւնը զօրաց հաղորդելու կերպը աղէկ գիտէին . անուանի էին նաև Վահարի, Սէրիւրիէ և Պէրթիէ զօրասէտները : Ամէն բանէ առաջ իր զօրացը սիրտ տալ ու անոնց վստահութիւնը շահելու ջանաց Պոնափարթ . «Ո՛վ զօրականք, ըսաւ, ձեր կերակուրը կերակուր չէ, հագուստանիդ ալ հագուստ չէ . տէրութիւնը շատ բան պարտական է ձեզի, բայց տալու կարողութիւն չունի . ձեր քաջութիւնն ու համբերութիւնը ձեզի պատիւ կ'ընեն՝ բայց ուրիշ օգուտ մը չէն բերեր . եկէք ես զձեզ աշխարհիս ամէն դաշտերէն տուելի պողաբեր երկիր մը տանիմ՝, ուր մեծամեծ քաղաքներ ու հարուստ դաւառներ պիտի տեսնէք, ուր պատիւ՝ փառք և հարստութիւն միանգամայն պիտի գտանէք » : Զօրքը մեծ ուրախութեամբ ընդունեցաւ աս խօսքերս ու պատրաստուեցաւ իր զօրավարին խօսքէն դուրս չելլելու :

1 Գաղղկացւոց թշնամիները երկու բանակ էին . մէկը Փիէմոնթեցիք, մէկալը Աւտարիացիք . Պոնափարթ այնպիսի հնարքով շարժեց իր բանակը, որ Մոնթէնոթթէ, Միլէզիմոյ, Տէկոյ ու Մոնտովի քաղաքներուն քով ըրած յաղթութեամբը երկուքն ալ զարկաւ իրարմէ բաժնեց, և խառնացւոց այսպիսի յայտարարութիւն մը ըրաւ . « Ետդովուրդ Իտալիոյ, Գաղղկացւոց բանակը եկեր է ձեր

1 Պոնափարթ թշնամեացը յաղթելով՝ խառնացւոց կ'նչ յայտարարութիւն ըրաւ : — Փիէմոնթի հետ ըրած հաշտութեամբը կ'նչ քաղաքներ ձեռք ձգեց :

չլթաները խորատակելու . Գաղղկացիք ամեն ժողովրդոց բարեկամ են , եկէք անոնց ընդ առաջ : Ձեր ստացուածքին , սովորութեանցը , կրօնքին մարդ չգալէր , : Փիէմնեթի թագաւորը հաշտութիւն խնդրեց , ու Քուշեոյ , Աղէքսանդրիա և Թորթոնէ ամուր քաղաքները Պոնափարթին թողուց , որով անիկայ Գաղղկոյ հետ հազորդակցութիւն կ'ունենար :

1 Անտանը Նափոլէոն պատրաստուեցաւ լոմպարտիոյ բարեբեր դաշտերը իջնալու . իրախուսեց զօրքն ու ըսաւ « Տասնըհինգ օրուան մէջ վեց յաղթութիւն ըրիք . քանըմէկ դրօշ առիք , յետեւը հինգ թնդանօթ , շատ ամուր քաղաքներ , տասնըհինգ հազար դերի , սլասերազմներու յաղթեցիք առանց թնդանօթի , գետերէ անցաք առանց կամուրջի , քաղեցիք առանց ոտքի ամանի : Ասոնք այնպիսի բաներ են որ հասարակապետութեան փաղանգներն ու ազատութեան զինուորները միայն կրնան ընէլ : Ձօրակա՛նք , հայրենիքը գեռ ձեզմէ մեծամեծ բաներու ակնկալութիւն ունի . իր յոյսը պարսպ մի հանէք , : Աս խօսքերս ըսաւ ու բանակը դէս 'ի լոմպարտիա ճամբեց : Աւսարիացւոց բանակին զօրավարն էր Պոլէէօ , որ շուտ մը ետ քաշուեցաւ Փոյ և Ատտա գետերէն անդին : Պոնափարթ ծանր պայմաններով հաշտութիւն ըրաւ Փարմայի դքսին հետ . ետքը Փիաճենցա քաղաքին մէջ Փոյ գետէն անցաւ , լոտի քաղաքին քով Ատտա գետին կամրջէն ալ սաստիկ

1 Անիկէց ետքը ո՛ւր շտկեց Պոնափարթ զօրքը :

պատերազմէ մը ետքը անցաւ, Միլան հասաւ ու յաղթանակաւ ներս մտաւ :

1 Պոնափարթին խորասկած զօրքերուն տեղը նոր զօրքեր խրկեցին Աւսարիացիք Վուրմներ զօրավարին ձեռքովը : Ան միջոցին Պոնափարթ Փաւհա և Քոմոյ քաղաքներուն ալ սիրեր էր, Փաւհային մէջ խառովութիւն մը ելաւ, բայց շուտով հանգարտեցաւ, և երբոր Պոնափարթ Մանթուա քաղաքը պաշարեր էր, Աւսարիացեոց սպարապետը Վուրմներ վաթսուն հազար հոգևով թիրոջ լեաներէն Պոնափարթին վրայ եկաւ՝ որ երեսուն հազար մարդմիայն ունէր : Գաղղիացիք Մանթուայի պաշարումը թողուցին, բայց այլ և այլ տեղեր Աւսարիացեոց յաղթելով՝ անոնցմէ քսան հազար հոգի ջարդեցին : Աս յաղթութիւնները տեսնելով՝ Նափոլիի թագաւորն ու Պապը՝ հաշտութիւն խնդրեցին : Պոնափարթ ալ զօրք խրկեց Քորսիքա կղզոյն սիրելու՝ որ Անգղիացիք Գաղղիացեոց ձեռքէն առեր էին :

2 Նորէն պաշարեցին Գաղղիացիք Մանթուա քաղաքը : Աւսարիացիք Ալվինցի զօրավարին հետ նոր զօրք խրկեցին որ Վուրմների հետ մեկտեղ Գաղղիացեոց դիմացն առնէ ու չթողու որ Ատիճէէն ասղին անցնին : Բայց Պոնափարթ իր գոր-

1 Ան միջոցին ուրիշ լինչ յաղթութիւններ ըրաւ Պոնափարթ :

2 Ալվինցի ու Վուրմներ զօրավարներուն լինչպէս յաղթեց : — Գաղղիացեոց զօրքն լինչ վիճակի մէջ էր :

ծուռնէութեամբն ու յանդգնութեամբը յաղթեց թշնամիներուն, թրենթոյ քաղաքն առաւ ու Ա. Բաբելոն գեալը երկու տեղէ անցաւ. Պատան, Փատուա ու Ալեքանդրա քաղաքներուն տիրեց, և Աւստրիացոց հետ նորէն զարնուելով ցրուեց զանոնք: Բայց Գաղղիացոց զօրքերն ալ շատ տկարացան, և ան միջոցին որ Աւստրիան անգագար նոր զօրք կը խրկէր առջիններուն տեղը, Գաղղիացիք օրէ օր քիչնալու վրայ էին, և իրենց ժուսէր, Ալան, Ալեքթոր, Միւրա, Տիւփիւշի ու Ռամփոն զօրավարները վերաւորուած էին. Օֆրոյ և Մասսէնա զօրավարներն ալ Աւստրիացոցմէ յաղթուելու վտանգի մէջ էին:

Պոնափարթ ամենեկն ջուսահատեցաւ. Արքով քաղաքին քովը կամուրջ մը կար որ սէտք էր անցնել. և ան կամրջին տակը այնպիսի ճահիճներ կային որ Գաղղիացիք անոնց ոչ ընդարձակութիւնը գիտէին և ոչ խորութիւնը. սակայն իրենց զօրավարին ձայնովը կոյր զկուրայն առաջ նետուեցան: Ալվինցիին բանակը անգագար կրակ թափելով Գաղղիացիները ետ քշեց: Պոնափարթ տեսնելով որ վտանգը մեծ է, և խառնոյ գործուելութեան յաջողութիւնը անկէց կախուած է, շուտ մը գրոշակ մը առաւ ու քանի մը քաջ զօրավարներու հետ մէկտեղ առաջնեառուեցաւ: Անոնց օրինակովը զօրքն ալ յարձրկեցաւ, և ռումբերուն ու գնաակներուն մէջէն ինչուան կամրջին ծայրը հասաւ: Հոն Աւստրիացիք կրակը աւելի սասա-

Վերջոյն միջոցառումը միայն անոնց օգտին էր: Արքովի կամրջէն ինչոյէս անցաւ Պոնափարթ:

կացուցին ու կամրջին մեկ մասը փլուցին, Լան զօրավարը երրորդ անգամ վերաւորուեցաւ. Միւլիւրոն զօրավարը Պոնափարթին ալ ճահիճին մեջ ընկաւ՝ Աւսարիացւոցմէ երեսուն քայլ հեռու: Քիչ մնաց որ ստաննուէր կամ ձեռք իյնար. բայց իր զինուորները կայծակի պէս ցատքեցին քովը հասան, զինքը ան վասնդէն ազատեցին. գիշերն ալ վրայ հասնելով պատերազմը դադրեցաւ:

1 Երկրորդ օրը նորէն զարնուեցան շատ մարդ մեռաւ, ու մեկ կողմն ալ յաղթող չեղաւ, վերջապէս երրորդ օրը (նոյեմբերի 17) Մասսէնա և Օժրոյ զօրավարներուն օգնութեամբը Պոնափարթ կատարեալ յաղթութիւն ըրաւ՝ եօթանասուն ժամ պատերազմելէն ետև: Ան յաղթութեամբ թէ՛ զօրքը և թէ՛ ժողովուրդը մեծ համար մունք առին Պոնափարթին վրայ. Ռիսլոլի յաղթութիւնն ալ անով աւելի դիւրացաւ որ ըրին յունուարի 14ին: Հոն Աւսարիացիք նորէն ցրուեցան. Վուրմսէր դէս 'ի Մանթուա քշուեցաւ, Ալվինցի ձգեց փախաւ, և Աւսարիացիք Իտալիոյ ամէն կողմերը տկարացան (յունուարի 17):

2 Քիչ ատենէն Մանթուա անձնատուր եղաւ, ու բոլոր Լոմպարտիան Գաղղիացւոց ձեռքն անցաւ, որ յիսուն հազարով՝ երկու հարիւր հազար Աւսարիացւոց յաղթեցին, ութսուն հազարէն

1 Ո՞ր յաղթութեամբ զօրքն ու ժողովուրդը մեծ համարունն առին Պոնափարթին վրայ:

2 Գաղղիացիք Աւսարիացւոց վրայ ի՞նչ յաղթութիւններ ըրին:

աւելի մարդ ձեռք ձգեցին, տասուերկու կարգաւորեալ սրատերազմներ ըրին, վաթսուէն անգամ անոնց հետ զարնուեցան ու դետերէն և ձորերէն անցնելով այնչափ բերդերու և քաղաքներուն տիրեցին: Բոլոր Եւրոպա սարսափեցաւ ու զարմացաւ, և Գաղղիացիք ինչուան երկինք կը բարձրացընէին իրենց 'Նոր Աննիբալը՝ որ քիչ ատենէն Վեսարին ըրածը սխալ ընէր:

1 Պոնափարթ ան յաղթութիւններէն ետքը Միլանի գաւառը հասարակապետութիւն ձեացուց՝ անունը դնելով Հասարակապետութեան յայսիոյս Աւստրիացի, Ճենովայի երկրին անունն ալ գրաւ Լիգուրեան Հասարակապետութեան: Վերոնան առնելէն ետքը, աչքը Վենետիկոյ վրայ դարձուց. մանաւանդ որ անոնք Գաղղիացի նաւու մը վրայ թնդանօթ արձրկեր էին: Վրնար Վենետիկ երկար ատեն Գաղղիացուց յարձակմանցը դէմ կենալ, բայց իր թշնամիքը ներսէն էին. շատ մը շահասէր ազնուականներ հայրենիքը մատնելու կը մտածէին՝ որպէս զի նոր տերութեան մէջ սաշտօններու հասնին: Տոժը Մանին ըսաւ ժողովըրդեան որ « Եւ ոչ աս գիշեր ապահով էնք » և իրաւցընէ քաղաքը թշնամոյն մատնեցին:

2 'Նափուէոն Վենետիկը ապահովըննէն եւ-

-
- 1 'Նափուէոն Միլանի գաւառն ու Ճենովայի երկրին ինչ կառավարութիւն հաստատեց: — Վենետիկոյ ինչպէս տիրեց:
- 2 Վենետիկն առնելէն ետքը ո՞ւր արշաւեց: — Քամիոյ-Փորմիոյի գաշնադրութեան գլխաւոր սլայմաններն որոնք էին:

քը գէտ 'ի Վէննա սկսաւ երթալ, հօշ և Մուրոյ զօրավարներն ալ ուրիշ բանակով Գերմանիա մտան : Քրանչիսկոս Բ կայսրը սասաիկ տաղնապի մէջ ընկած՝ հաշտութիւն ինդրեց, ու Գաղղիոյ տէրութեանը հետ Լոմպարտիոյ և Վէնեակոյ թագաւորութեան մէջ Քամիոյ-Ֆորմիոյ ըսուած քաղաքը ան հռչակաւոր դաշնագրութիւնը կղաւ (17 հոկտեմբեր 1797), որուն պայմաններն ինքը Պոնապարթ գրաւ . պայմաններուն մէկն ալ աս էր որ Վէնեակոյ Հասարակապետութիւնը վերցուի ու բոլոր երկիրը Աւստրիոյ տրուի, Աւստրիան Պելճիոյ ու Լոմպարտիոյ վրայ ունեցած իշխանութենէն հրաժարի, և Գաղղիոյ ու Գերմանիոյ սահման՝ հռենոս գեան ըլլայ :



Գ Լ ՈՒ Խ Ե .

Պատմա-ու-ն-ի-ան Գաղղիոյ՝ Գրամմոյ-Յորմոյի հասցա-ու-ն-ե-
ն-էն Ինչո-ս-ան Ապոս-տ-ո-լ-ի-ր-ի պատերազմը (1797-1798) :
'Ն-ր ընտր-ու-ն-ե-ամբ էլած շփո-ն-ու-ն-ի-ան-է-ր-ը . — Պատա-
ս-ին Յե-ռ-ո-ւ-ն-ը Աւր-ը-ն-ի-ն-ը Ի-ը-յաղ-ն-ան-ակ-է . — Հո-ո-մ-
Տ-ը էլած Խո-ո-ւ-ն-ի-ն-ը . — Պե-ր-ն-ի-է պատմ-ար-ը Հո-ո-մ-
Ի-ը Տ-ան-է . — Պ-ն-ա-փ-ար-ն-ի-ն Գաղղիա Դ-ա-ռ-ո-ւ-ն-ը . — Ա-ր-
ը-ն-ի-ն-ի Ի-ր-ա-ւ-ի-յ Բ-ան-ակ-ի-ն ըն-ծ-այ-ած Դ-ր-ո-ւ-ն-ը . — Փ-ա-
ր-ի-ն-ը Տ-ը Պ-ն-ա-փ-ար-ն-ի-ն Դ-ր-ո-ւ-ն-ը պատ-ի-ն-է-ր-ը . — Պ-ն-ա-
փ-ար-ն-ի-ն Ե-փ-ի-պ-ո-ս է-ր-ն-ը . — Ա-ն-փ-ի-ո-յ-ո-ւ-ն 'Ն-ը-ն-ի-ն
ժ-ո-ւ-ն-ը . — Պ-ն-ա-փ-ար-ն-ի Մ-ա-լ-ն-ի-ն ո-ւ Ա-ղ-է-ս-ան-ի-ր-ի-ո-յ
Ի-ը Կ-ի-ր-է . — Բ-ր-գ-ան-ի պատերազմ-ը . — Ե-փ-ի-պ-ո-սի Ճ-ե-
Տ-ար-ան-ը . — Ա-պ-ո-ս-տ-ո-լ-ի-ր-ի պատերազմ-ը :

1 Գաղղիոյ մէջ երկու խորհրդարաններու
համար նոր ընտրութիւն եղաւ, և ընտրուած
անձինքը Աւրչութեան գէմ էին, ուստի անոր ա-
մէն գործքերը կը սարսաւէին, մանաւանդ Ա-ն-ն-
ա-ի-կը Աւարիացւոց ձեռքը մասնէր : Թաղաւո-
րահանաց մէջէն Գաղղիա դարձած փախտա-
կանները սկսան շփոթութիւն ձգել, իրենց կողմը
զորացնել . բայց զորքը հասարակապետական էր,
և Պառաս հօշին յանձնեց որ դայ խորհրդարան-
ները պաշտպանէ : Աս բանիս վրայ քիււսինքրը

1 'Նոր ընտրութեան պատճառաւ ինչ խոսվու-
թիւն եղաւ : — Պառասին ձեռքովը Աւրչու-
թիւնն ինչպէս զորացաւ :

ձայներնին բարձրացուցին, [Թագաւորականները շատ մարդ որսացին ու ստորաստուէցան յանկարծ տէրութիւնը փոխելու . սահմանադրականը — որոնց մէջն էին նաև Ս[Թաւել կամ Ս[Թաւ տիկինը ու Թալլերան — կը ջանային խողազու[Թիւն ընել . բայց ճար չէր ըլլար : Պառաս տեսնելով որ հանդարտութեամբ բանը պիտի չլիննայ, յանկարծ դնաց Թիւլլերին կոխեց (18 Պրիւք[Թիւտոր, 4 սեպտեմբերի 1797), Փիշկրին, Պար[Թէլլի Վարիչը և ուրիշ քանի մը նուիրակներ բռնեց Վերսալին աշտարակէն և կանչելով : Բաւնոյ փախաւ, շատ մարդիկ բռնուեցան քշուեցան, Նուիրակ ընտրուած խռովորար մարդիկը դուրս ձգուեցան, և ասով քաղաքական խռովութեան սովեր առնուեցաւ : Վարչութիւնը զորացած՝ հայրենասէր մարդիկը պաշտօնի դրաւ, Մէսէն և Ֆրանսուա տը Նեօշա[Թոյ Վարիչ դրուեցան :

1 Պոնափարթ Ղոմպարտիայէն ելլելու ատենը երկիրը Պերթիէ զօրավարին յանձներ էր : Պիոս Զ պապը Գաղղիացւոց խոստացած տուրքը վճարելու համար երբոր եկեղեցեաց զարդերը հանեց, եկեղեցականաց վրայ տուրք դրաւ ու մեծաճախ արարողութիւնները դադրեցուց, ամէնքը սկսան դանդաւարիլ, ու երբոր [Թլ[Թէ սասկ ալ հանեց՝ ալ աժգոհութիւնը վերջի ծայրը հասաւ :

1 Պոնափարթ որո՞ն յանձներ էր Ղոմպարտիան :
— Հռոմի մէջ ինչո՞ւ համար ժողովուրդը սկըսաւ դանդաւարիլ :

1 Պատկերահանութիւն սորվելու համար հռոմ գնացած Գաղղիացի երիտասարդներ ժողովրդեան գլուխ կէցած՝ ապստամբութիւն մը հանկեցին, բայց ան խռովութեան ատենը Տիւֆոյ զօրավարը սպաննուեցաւ : Աս սպանութիւնը իբրև իրաւանց ազգաց դէմ բան մը սեպուելով, Յովսէփ Պանափարթ – որ ան միջոցին հռոմի մէջ Գաղղիացւոց գեսպանն էր – իր հրամանագիրն ուղեց և քաղաքէն դուրս ելաւ, որ սրասերազմի նշան էր, և մէկէն Աարչուութիւնը հրամայեց Պէրթիէ զօրավարին որ հռոմի վրայ երթայ : Պէրթիէ հասաւ հռոմայ առջևը և ժողովուրդը Սուրբ Հրեշտակապետ ըսուած բերդը բացաւ անոր՝ աս պայմանով որ իր հաւատքին, հասարակաց շէնքերուն, մարդկանց ու անոնց ստացուածքին չդուչին : Պէրթիէ Քուրինալ լեռան վրայ բանակը դրաւ, Կապիտոլինոնի զինանքը ազատութեան ծառը անկուեցաւ, Բրուտոսի ու Սկիպիոնի անունները ամենուն բերանը սկսան ստորախլ • պասը Ալատիկան քաշուած՝ չէր ուղեր ժամանակաւոր իշխանութեանէն հրաժարիլ, ուստի զինքը Թոսքանա խրկեցին : Տէրութեան ու օտար կարգինալներուն պաշտաներն ու եկեղեցիները կողոպտեցին, Փրոփականտան վերցուցին ու անոր հարուստ գրատունը կողոպտեցին : Առանձնականաց ստացուածքին ալ ջինայեցին և հարուստներու վրայ մեծամեծ տուրքեր դրին :

1 Պէրթիէ ինչո՞ւ համար հռոմի վրայ գնաց, ու ժողովուրդն ի՞նչ ըրաւ :

1 Պոնափարթ ամէն անցած տեղերէն մեծամեծ յաղթանակներ ընելով Պաղղլիա դարձաւ, և Փարիզու մէջ չլսուած սրատիւններ ընդունեցաւ: Ալալէնու թիւնը Իտալիոյ բանակին դրօշակ մը ընծայ տուաւ, որուն վրայ ոսկի գրերով գրուած էր. « Իտալիոյ բանակը 150,000 գերի բռնեց, 170 գրօշ տուաւ, 555 սաշարիչ թնդանօթ, 600 սա տերազմական թնդանօթ, 55 նաւ: Զինադագարունն ըրաւ Սարտենիոյ ու Նէապոլոյ թագաւորութեանցը, Պապին, Փարմայի և Մոսենայի գբտերուն հեա: Պոլոնիոյ, Ֆէաարայի, Մոսէնայի, Մասսայի, Քաւաարայի, Ռոմանիայի, Լոմպարաիոյ, Պրէշիայի, Պէրկամոյի, Մանթուայի, Քրեմոնայի, Ալերոնայի, Քիալէննայի, Պորմիոյի ու Ալալթէլլինոյի Ժողովրդոցը աղատութիւն տուաւ: Միլբէլ-Անճէլոյի, Ռաֆայէլի և Լէոնարոյ Տավլինչիին հրաշակերտ գործքերը փարիզ բերաւ: — Տանրուածը կարգաւորեալ սատերազմի մէջ յաղթանակեց, որոնց տեղերն են Մոնթէնօթթէ, Միլէզիմոյ, Մոնտոլի, Լոսի, Պորկէթթոյ, Լոնաթոյ, Քասթիլիոնէ, Ռովէրէտոյ, Պասսանոյ, Սան-Ճիորճիոյ, Փոնթանա-Վիլա, Քալտիերոյ, Ալբոլի, Ռիվոլի, Փալորիթոյ, Թալիամէնթոյ, Թարվիզոյ, Նայմալթթ: — Ալաթտունընօթը սրատերազմ ըրաւ »:

1 Պոնափարթ լինչուէս Պաղղլիա դարձաւ: — Ալալէնու թիւնը Իտալիոյ բանակին լինչ ընծայ տուաւ:

1 Պոնափարթին բնակած փողոցին անուճը գրին Ռի- ԿԸ ԼՄ ԱՒԻՆՈՒՄԸ այսինքն փողոց Յալթուլթուլեան • բոլոր օրագիրները ըրած գործքերը, ըսած խօսքերը կը սլաոմէին : Իսկ ինքը Պոնափարթ իր կողմանէ մեծ չափաւորութիւն կը ցուցընէր • Գաղղիոյ Ճեմարանին անդամ անուանուելով ուսումնականի հազուստով հոն գնաց • միշտ անուանի մարդկանց հետ կը տեսնուէր և կը ջանար անոնց ամէն մէկուն հետ իրենց մասնաւոր զրահմունքին վրայ խօսելու : Ան ասենէն սկսաւ ժողովուրդը վրան մեծ համարումն առնուլ, և կը զարմանար որ այնչափ փառաց մէջ ասանկ անփառասէր էր :

2 Աւարջութիւնը մտածեց որ Պոնափարթին Փարիզու մէջ ուշանալը աղէկ չէ, և իրեն առաջարկեց որ երթայ Արխիպաոսին տիրէ : Պոնափարթ միտքը գնելով որ անով Անգղիոյ մեծ փնաս կ'ընէ, ու Գաղղիացւոյ իշխանութիւնը ինչուան հնգկաստան կը տարածէ, քառասուն հազար փորձ զինուորներ առաւ հեան՝ Տրզէքս և Քլէպեր զօրավարներով ու ճամբայ ելաւ Թուրնէն

-
- 1 Պոնափարթին Փարիզ ինչ պատիւներ ըրին : — Ինքն ինչ չափաւորութիւն կը ցուցընէր, և ուսումնականաց հետ ինչպէս կը վարուէր :
- 2 Աւարջութիւնը Պոնափարթին ինչ առաջարկեց : — Անգղիացւոյ ծովակալն ո՞վ էր : — Մալթա կղզոյն տիրելէն ետքը ո՞ր քաղաքին վրայ գնաց Պոնափարթ ու ինչպէս զանհկայ առաւ :

Եղիսպոստ երթալու Պրիւէյիս ծովակալին աւաջնորդութեամբը (19 մայիս 1798) : Անդղիացիք սարսափած՝ շատ մը նաւերով՝ Նեղոսն կամ՝ Նեղոսն ծովակալը խրիկեցին որ հեռուէն անոր ետեւէն երթայ : Մալթա կղզւոյն առջևն որ հասաւ Պոնափարթ, թեթև սրտերազմով մը զանկեաց ասպետաց ձեռքէն առաւ ու նաւերը դէսը՝ Նեղոսն գրիւս շահեց : Հոն շատ դժուարութեամբ ցամաք ելլելէն ետքը զիւրաւ տիրեց քաղաքին, վասն զի կըսէր բնակչացը թէ « Զձեզ Մէմլուքներու ձեռքէն ազատելու եկեր եմ » :

1 Աղեքսանդրիան ամրացընելէն ետքը Գահիրէի վսայ գիւմեց, և Նեղոսի մօտ ընդարձակ դաշտին մէջ բուրդերուն քովը մեծ սրտերազմ մը ըրաւ Մէմլուքներուն դէմ, որոնց զօրասէտը Մուրատ սէյ կըսուէր : Առաւօտանց Պոնափարթ իր զօրքերը շարեց (22 յուլիս), բուրդերը ցուցուց անոնց ու աս նշանաւոր խօսքերս ըսաւ . « Ո՛վ զօրակամք, աս բուրդերուն վսայէն քառասուն դարք ձեզի կը նային » : Անկէց ետքը այնպէս կարգաւորեց բանակն որ Մէմլուքներուն ձիաւորները չկրցան Գաղղիացուց կրակին առջևը գիտնալ, գրեթէ ամէնքն ալ ջարդուեցան ու ցրուեցան : Երկրորդ օրը Նափոլէոն իր յաղթական զօրքովը Գահիրէ մտաւ, ու երկու ամսուան մէջ Գաղղիացիք բոլոր Ստորին ու Միջին Եգիպտոսը

1 Բրդանց սրտերազմն ի՞նչ է : — Զօրացը ի՞նչ նշանաւոր խօսք ըրաւ Պոնափարթ : — Եգիպտոսի մէջ ի՞նչ ճեմարան հաստատեց :

տոսի տիրեցին : Մասնատականաց սիրտը շահելու համար Պոնափարթ կը ձեացընէր թէ մեծ համարում ունի զուրանին վրայ և անոնց կարգացողներուն ու մզկիթներուն սրտիւ կընէր . տեղացիք ալ իրեն վրայ մեծ սէր ունեցան : Պոնափարթին արժանի մտածութիւն էր նաև Եգիպտոսի ճեմարանին հաստատուիլը . վասն զի հետը շատ մը գիտուններ ու սրտկերահաններ տարած ըլլալով, ոմանց յանձնեց որ երկրին աշխարհացոյցը շինեն , ոմանց ալ Եգիպտոսի հնութիւնները նկարել ու ստորագրել տուաւ : Ան ժողովին գլխաւորը Մոնե՛՛ աստղաբաշխութեան , բնական ստամութեան և բնաբանութեան վերաբերեալ շատ գիտողութիւններ ընել տուաւ :

։ Ա՛րին Եգիպտոսը միայն կը մնար տիրապետելու . բայց փառքը ան կողմանէ անկատար մնաց Պոնափարթին : Գաղղիացւոց նաւատորմիցը Աղեքսանդրիոյ նաւահանգիստը մանելու տեղ՝ Ասպուքիւր գեղին ծոցը խարխիս նետեր էր . հոն յանկարծակի վրանին հասաւ Նելսոն , Պրիւէյիս մեռաւ , ու նաւերէն շատը այրեցան , շատն ալ ջարդուեցան կամ բռնուեցան (1798) : Ան անգարմանելի ինասովը Եգիպտոսի բանակին ամէն հազորդակցութիւններն ու օգնութիւնները կըտրուեցան , յոյս ալ չմնաց որ կարենայ Օսմանցւոց գէմ կենալ , որ Անգղիացւոցմէ գրգռուած՝ Գաղղիացւոց գէմ սրտերազմ հրատարակեր էին՝ Եգիպտոսի նորէն տիրելու համար :

1 Ասպուքիւրի քով ի՛նչ ջարդ կերան Գաղղիացիք :

1 Նախորդի թագաւորը Գաղղիացւոց հետ քրած գաշանցը դէմ՝ Նեղոսնը նաւատորմիցովը մեկտեղ յաղթանակաւ Նափելի ընդունեցաւ : Ամենքը կը կարծէին որ Պոնափարթին բաղգը աւրուեցաւ, և անոր յաղթելու յուսով Իսպլիոյ իշխաններուն ու բոլոր Եւրոպայի թագաւորաց վրէժխնդրութեան հողին սկսաւ վառուիլ :

1 Աս ձախորդութեան վրայ Եւրոպայի թագաւորներն ինչ սկսան մտածել :

ԳԼՈՒԽ Ը .

Պատմութեան Գաղղիոյ՝ Ապուստիքի պատերազմին ինչուան Տիւրքապատմութեան հասարակութիւնը, (1798—1799) :

Անգղիացիք + Տեղւոյ պէտքութեանեւրջ Գաղղիացոցոց շէժիւն համեմէն . — Սոսնուրու ու Վրայս զօրավարները . — Գաղղիացոց զօրավարները . — Գաղղիացիք + Պոնաթարութիւն գաւառն իւր իտաթաթին . — Պոնաթարութիւն Օսմանցոց շէժ ըրած յաղթութեանեւրջ . — Ջօրաց արժգոհութեանը . — Պոնաթարութեւն Եգիպտոսին ճամբայ ի'ելլէ . — Փարիզ համեմիւր . — Իշխանութեան եպիսէ ըլլաւ . — Փարիզս զօրաց սպարապետ իւր շրոտի . — Սահմանադրութեան լրաց երգոսմ ընելու համար Սէն-Վրլու ի'երթայ . — Ջօրս բարարարութեան իւր յորդորէ . — Տիւրքացիքոց ժողովարանին Տեղ գաւառ լրանգ . — Ժողովարանի իւր շրոտին ու Պոնաթարութեան իշխան իւր Տայ . — Տիւրքապատմութեան հասարակութիւնը :

« Եւրոպայի յաղթութեամբը Անգղիացիք սիրտ առած՝ Եւրոպայի տերութիւնները յորդորեցին որ հեռերնին միանան Գաղղիացոց ղէմ, և գրեթէ ամենքն ալ միացան : Պօլոս Ա, Ռուսաց թագաւորը, որ Կատարինէ երկրորդին յաջորդեր էր, շատ

1 Ռուսաց ու Աւստրիայ կայսերքը ինչ զօրավարներ խրկեցին Գաղղիացոց ղէմ : — Գաղղիացոց զօրքը որ զօրավարներուն յանձնուեցան : — Սուլթանու ու Վրայս ինչ յաղթութիւններ ըլին :

զօրքով Խաալիա խրկեց Սուվորով անուհով աներկեւզ զօրավարը • Աւարտիոյ կայսրն ալ խաւրեց բազմութեամբ զօրաց Քրայ սլարոնը : Գաղղիացւոց անուանի զօրավարներէն շատը մեռեր էին , շատն ալ հեռու տեղեր գնացեր էին , Մորսն ալ կասկածելի եղեր էր • Խաալիոյ բանակին վրայ սպարապետ գրուեցաւ Շէրեր , բայց ասիկայ ծեր էր և զօրքը զինքը չէր սիրեր , Նափուլի զօրքը Մաքտոնալաի յանձնուեցաւ , Զուլիցերիինը Մաստէնայի , Դանուրիինը Ժուրասանի , Հուենոսինը Պէռնատովի , Հոլանտայինը Պրիւնի : Ասոնք թէպէտ տեղ տեղ յաղթութիւններ ըրին գաշնակցաց վրայ , բայց Սուվորով և Քրայ Խաալիոյ մէջ առաջ քաշելով ու Ժողովուրդները հետերնին միացրնելով՝ գրեթէ ամէն կողմէն Գաղղիացիքը քշեցին , Անգղիացւոց հետ Հոլանտայի վրայ յարձրկեցան ու Գաղղիոյ վրայ սկսան սպառնալ :

1 Այնպիսի նեղութեան ատեն ամէն Գաղղիացւոց աչքը Պոնափարթին վրայ էր , իր եղբայրը Լիւոիէն ալ անոր կ'աշխատէր • Սիէյէս գնաց Ժաքոպէններուն քլուպին գուները գոցեց՝ ըսելով • “ Ալ շատախօսութեան ատեն չէ , մեզի գլուխ մը ու թուր մը հարկաւոր է ” : Ամէնքը կ'ըսէին որ Պոնափարթը միայն կրնայ Սուվորովին վայրենի գնդերը հալածել :

2 Ան միջոցին Օամանյիք ալ Անգղիացւոց գըր-

1 Գաղղիացիք որուն սկսան փափայրել :

2 Պոնափարթ Օամանցւոց գեմ ինչ յաղթութիւններ ըսաւ : — Զօրաց տեղահասութիւնն ինչ էր :

դռութեամբը Գաղղիոյ գէմ՝ սլատերազմ հրատարակած ըլլալով, Պոնափարթ իր բանակին մէկ մասը հեան առաւ գէտ ՚ի Ասորեոց երկիրը գնաց՝ Սիւէզի սլարանոցէն անցնելով, Գաղա և Յոսպէ քաղաքներուն տիրեց սլատերազմով ու պահապանները թրէ անցուց • ուրիշ երևելի տեղեր ալ առնելէն ետև գնաց Աքեա բերդաքաղաքը սաշարեց : Արարացիք անդագար նեղութիւն կուտային Գաղղիացեոց • բայց վերջապէս ապրիլ 19ին (1799) Պոնափարթ թաբոր լեռան քովը մեծ յաղթութիւն մը ըրաւ անոնց գէմ : Սակայն բոլոր այն յաջողութիւնները անպատու պիտի մնային • վասն զի զօրացը մէջ ժանտախտ ընկաւ, Աքեայի մէջ սաշարուողներն ալ անգղիացի ճարտարապետի մը առաջնորդութեամբը այնչափ քաջութիւն ցուցուցին որ Գաղղիացիք հարկադրեցան Եգիպտոս դառնալու, և հոն Ապուբիր գեղին քովը Պոնափարթ մեծ յաղթութիւն մը ըրաւ Օսմանցեոց գէմ : Ան յաղթութեամբ ալ զօրաց աժգոհութիւնը չդադրեցաւ • այնչափ աշխատանքէն զատ՝ վեց ամիսէ ՚ի վեր իրենց հայրենիքէն լուր մը չէին առած, վասն զի Անգղիացեոց նաւերը բոլոր Միջերկրական ծովը բռներ էին :

Արդէն Պոնափարթ ան արշաւանքէն ձանձրացեր էր, և ուրիշ ատենի կ'ուզէր թողուէրբոր իր կուսակիցները Գաղղիոյ լուրերը իրեն հասուցին, և թէ ինչպէս ամենուն աչքը իր վրան

1 Պոնափարթ Եգիպտոսը որո՞ն յանձնեց : —
Հեար զո՞վ առաւ :

է, ամէն վասնդ աչքը առած՝ որոշեց որ Գաղղիա դառնայ . Եգիպտոսը յանձնեց Քլէպէր զորավարին, ու Պէրթիէ, Լան, Միւրա կամ Մուրաա, Անարէոսի և Մարման զորավարներն ու Պէրթուէ և Մոնթ գիտունները հեան առած՝ երկու մեծ նաւով ճամբայ ելաւ :

1 Երբոր հեռագրով իմացուեցաւ Պոնափարթին յանկարծակի Գաղղիոյ ծովեզերքը հասնիլը, ամենուն սէրն ու հետաքրքրութիւնը վառուեցաւ : Պոնափարթ սաստիկ աճապարկելով չքստասեց որ Ժանափաթի զգուշութեանը համար գրուած արգելարանին օրերը լնննան, ճամբայ ելաւ շուտով Փարիզ հասնելու, ուր կամ պիտի սրաս ժուէր՝ այնպէս անհրաման գալուն համար և կամ թագաւորական աթոռը սիտի ելլէր : Բայց ամէնքը զինքը իրիւ ազատարար ընդունեցան . զանգակներ զարնուեցան, թնդանօթներ նետուեցան ու հրախաղութիւններ եղան . Պոնափարթ ալ իր թուրը Արջութեան ծառայութեանը նուիրեց երգում ըսաւ որ Հասարակաստութիւնը պաշտպանելու համար միայն գործածէ ան թուրը :

2 Երբոր տեսաւ Պոնափարթ Ժողովրդեան իր վրայ ունեցած սէրն ու համարումը — որ ինչուան կանայք զաւակնին օրորելու ատեն իր քաջու-

1 Պոնափարթ ինչպէս Գաղղիա դարձաւ : — Իրեն ինչ ընդունելութիւն ըրին :

2 Գերագոյն իշխանութիւնը ձեռք ձգելու համար ինչ ըրաւ :

Թիւնները կ'երգէին — ետեւէ եզաւ որ իշխաններն ու զօրավարները իր կողմը որսաց և գերազոյն իշխանութիւնը ձեռք առնու . Թալէրան , Ֆոշէ , Ռոսէ-Տիւբոյ , Վասպանիս ու Ռեակերէր իշխաններն ու երեսփոխանները որսաց , Պոհառնէ , Պէրթիէ , Տիւրոբ , Մարմնն , Լան , Միւրա և Օժրոյ զօրավարներն ալ հետը միացան :

Պոնափարթին կուսակիցները ձայն հանեցին Թէ Ժաբոսէնները դաւակցութիւն մը կը պարտասեն , որպէս զի կարեւոր անով Օրինագիր Ժողովը Սէն-Վլու փոխադրել ու Պոնափարթը բոլոր փարիզու զօրաց սպարապէա անուանել : Ուղածնին յաջողեցաւ . մեկալ երկու խորհրդարաններն ալ Սէն-Վլու հրաւիրուեցան : Պրիւմէր ամսոյն 18ին (9 նոյեմբերի 1799) Պոնափարթ կանչուեցաւ որ գոյ սահմանադրութեան վրայ երգում ընէ : Զօրքով ու զօրավարներով ելաւ գնաց Պոնափարթ . զօրքը դուրս կեցուց ու զօրավարներովը ժողովարանը մտաւ , և երեսփոխաններուն քանի մը գովեստ տալէն ետքը ըսաւ անոնց . « Մենք հասարակաստութեան ինքնուրոյն , այնպիսի հասարակաստութեան որ ճշմարիտ ու զտտութեան վրայ հիմնած ըլլայ ու երեսփոխաններ ունենայ . և պիտի ունենանք աս հասարակաստութիւնը , կ'երգնում ձեզի յանուն իմ և զինուորակցացս » :

1 Օրինագիր Ժողովն ինչո՞ւ համար Սէն-Վլու փոխադրուեցաւ : — Հոն ի՞նչ երգում ըրաւ Պոնափարթ :

1 Պոնափարթ նյայտիսի ճարտարութեամբ սահմանադրութեան վրայ երդում ընելէն ազատեցաւ, դուրս ելաւ, զինուորաց ճառ մը խօսեցաւ, բոլոր զինուորանոցները բռնեց, և սպասամբութիւնը սկսաւ կէշոյէ՝ Պոնափարթ ձայներով: « Ի՛նչ խեղճութեան հասուցեր են կ'ըսեր, սա Գաղղեան որ ես այնչափ փառաւոր թողեր էի: Խողողութիւն թողեր էի հոս ու պատերազմ գտայ, յաղթութիւններ թողեր էի ու սպարաութիւններ գտայ: Իսաղիոյ միլիանները հոս զիզեր էի, ու կողոպտելու օրէնք և խեղճութիւն գտայ: Ան հարիւր հազար Գաղղեացիք իմ զինուորակիցքս ու փառակիցքս ո՛ւր են: Մեռե՛ր են »:

2 Աս բաներս տեսներով՝ վարիչներէն ոմանք հրաժարեցան իրենց իշխանութենէն, ոմանք ալ կողմն անցան, որով և Պոնափարթ վարչութեան փրկեց: Երկրորդ օրը խորհրդարանները Սէն-Վլու ժողովուեցան, և թէպէտ չորս կողմէն զօրքով պաշարուած էին, սակայն երդուընցան որ սահմանադրութեան վրայ մեռնին: Ան ատեն հաւկրցաւ Պոնափարթ որ թուրը պատեանէն հանելու է՝ իր զօրավարներովը գնաց Ծերակոյսը մտաւ ու բողբոջեց Վրճո՛ւն ու կէսաբ անուններուն դէմ որ իրեն կուտային. « Հայրենեաց խեղճ

1 Սահմանադրութեան վրայ երդում ընելէն ազատելէն ետքը՝ Պոնափարթ ի՛նչ ըրաւ:

2 Ծերակուտին մէջ Պոնափարթ ի՛նչ բողբոջ ըրաւ:

ճուրճիւնը միայն, կ'ըսէր, իմ ու ձեր նախանձը շարժեցին : Կայինք որ այնչափ խեղճութեանց առջևն առնուէք . մտածենք թէ որչափ ծանր նասան մեզի ազատութիւնն ու հաւասարութիւնը : Սահմանադրութիւնը ամէն հայրենասէրք կ'ուզեն ջնջել : Դուք Գաղղիոյ փրկութեանը վրայ մտածեցէք, ես ալ զինուորակցացս հետ մէկտեղ կ'օգնեմ՝ ձեզի . և թէ որ կաշառուած ատենախօսին մէկը զիս յանցաւոր ցուցնելու վրայ խօսի, զինուորակցացս կը բողբեմ : Ըս գիտցէք, որ ես ուր որ երթամ՝ բախտի ու պատերազմի ատուածը հետս է 33 :

1 Անկէց ելաւ Հինգհարիւրոց Ժողովարանը գնաց . հոն ամէնքը սկսան կատաղաբար կանչել, Մեռնի իշխանապետը, Մեռնի Բանաւորը : Պոնափարթ տարակուսած՝ երեսին գոյնը նեակց . կարծէր թէ մէկէն հոն զինքը սլօտի սպաննեն . բայց իր թիկնապահները շուտ մը առին զինքը հեռացուցին ան սրահէն ու զօրաց մէջ տարին, ուր թէ որ քիչ մըն ալ ուշանար, ինքն ալ Ռոսպէսփիէրին պէս սլօտի ըլլար : Ան միջոցին Ժողովարանին մէջ խռովութիւնը երթալով շատցաւ . և Ղլուսիէն ատենելով որ զինքը կը ստիպեն իր եղբայրը դատասպարաւորու, նախադահութեան նշանները մէկզի դրաւ ու աթուռէն վար իջաւ : Ան գին Պոնափարթ զօրաց ծափահարութիւններէն

1 Հինգհարիւրոց Ժողովարանին մէջ Պոնափարթին գլուխն ինչ էկաւ : — Պոնափարթ ինչպէս ինքնիշխան մնաց :

սիրտ առած՝ առանց ատեն անցրնելու հրամայեց Միւրա և Լէքլէր զօրաւարններուն որ դռնդ մը զօրքով ժողովարանին վրայ երթան . ժողովականք ետքի աստիճանի կաողեցան . բայց զօրաց թմբուկներէն իրենց ձայնը չսուեցաւ , դնդասպետներն ալ բարձր ձայնով զօրքը առաջ կը բռնէին , ան ատեն ժողովականք իրենց վերարկունները թողուցած՝ սրը կողմնական դռներէն , որը սլափուհաններէն ձգեցին փախան , և Պոնափարթ ինքնիշխան մնաց :

« Նոյն գիշերը երկու նոր ժողով հաստատուեցաւ , որոնց մեջինները Պոնափարթի կուսակիցներն էին . ասոնք ամեն բանէ առաջ սահմանադրութիւնը ջնջեցին և Վարչութեան տեղը Հիւսպատտութիւն (Վոնսիւլա) հաստատեցին՝ իրեք հոգւով ձեւացած . առաջին Հիւսպատտն եղաւ ինքը Պոնափարթ , երկրորդը Ռոսէ-Տիւրոյ և երրորդը Սիէյէս » . Երկու խորհրդարաններուն տեղն ալ մեկ Երեւակոյտ մը գրուեցաւ , մէյմնն ալ Օրենսդիր ժողով (Վոս Լէժիսլաթիֆ) :

« Հիւսպատտութիւնն ինչպէս հաստատուեցաւ , և առաջին Հիւսպատտներն որոնք եղան :

* Աճէ իւր Երեւակոյտի քաղաքացիներն իրենց քաղաքացիներն իրենց քաղաքացիներն իրենց քաղաքացիներն :

Գ. Լ. ՈՒԽ Թ.

Պատմաբան-ինքնակենսագրող Վաղղիտայ՝ շիտապատում-ընկերան հասարակարան-
 ւէն ինչուստեան՝ Կատիւնի իտայու հրատարակութիւնը :

(1799—1804) :

Կատիւնի ըրած բարեկարգութիւնները . — Իրաւաւոր
 արշաւելը . — Յաղթանակները . — Լիւնիւնի ռ-
 Ամիէնի հաշտութիւնները . — Գաղղիտայ մէջ քրիստոնէս-
 ւան իրօնքին նորէն հասարակութիւնը . — Սուրբ Գոթիէնի
 իշխանայն ապստամբութիւնը . — Թոմսէն-Լաւիէրիտ . —
 Լեփեռն պատերազմը ըստ-ըստ առաջնութիւնը . — Պոնա-
 տարիէն դէմ եղած դատաւիցութիւնները . — Գոթիտային
 մեքենայ . — Անիէնի դատին ապստամբութիւնը . — Կատիւ-
 ւէն թագաւորութիւնը հրատարակութիւնը :

1 Հասկըցան Գաղղիտայից Պոնափարթին միտ-
 թքը, որ կ'ուզէր ինքնիշխան կերպով Գաղղիտան
 կառավարել . բայց տասուերկու տարի այնչափ
 շփոթութիւն, այնչափ տաղնապ ու փնաս քաշեր
 էին որ ամէն բանէ աւելի բարեկարգութեան ու
 խաղաղութեան կը փափաքէին, և Պոնափարթ
 լիւնի կը խոտտանար ան բաները . ուստի անոր
 ինքնիշխանութեանը դէմ մէկը ձայն չհանեց :

2 Պոնափարթին առջի հոգը ան եղաւ որ տե-
 րութեան կառավարութիւնը բարեկարգէ . և ան-

1 Գաղղիտայից Պոնափարթին միտքը չհասկըցան :

2 Պոնափարթ մէկէն ինչ բարեկարգութիւններ
 ըրաւ :

յածնները մուսընէլ տալու մտքով՝ երևելի մարդիկ մեծամեծ պաշտօններու հասուց՝ կէս մը փախըստականներէն, կէս մըն ալ խռովարարներէն ընտրելով: Յունուարի 21ին սոսկալի սօնը որ Ղուդովիկոս վեշտասաներորդին գլխատուելուն յեշտակ հաստատեր էին՝ վերուց. Փարիզու բանտերը ստրտեցաւ ու բանտարկեալներն ազատեց. ասով թագաւորականաց ալ սկսաւ հաճոյսնալ: Վիչ տակնէն սպազրու թեան ազատութիւնն ալ վերուց՝ ըսելով թէ երբոր խաղաղութիւն ըլլայ, նորէն կը հաստատեմ. զինուորներուն վարձատրութեան համար սրատուց թրեր ու հրացաններ բաժնեց. մէկ կողմանէ ալ հասարակասպեհանները միտթարելու մտքով՝ Թիււրքիի պալատին մէջ մեծ հանդիսով Բրուտտի արձանը կանգնեց. Ետքն ալ հրաման հանեց որ Ամերիկային ազատարար Առլինկլթոնին մահուանը պատճառաւ՝ որ ան օրերը հանդիպէր էր, հասարակասպեհութեան բոլոր դրօշակները տասը օր սեքօզերով ծածկուած կենան: Վիչ տակնէն ալ շատ մը պալատականներով ու ժողովրդեան ծափահարութեամբը գնաց Թիււրքիի պալատը բնակեցաւ:

1 Ան տակնէները օտար աղքատ զօրքերը Գեր-

-
- 1 Պոնափարթ ինչո՞ւ համար նորէն խառնա արշաւեց, ու ի՞նչ յաղթութիւններ ըրաւ: — Տրզէքս զօրավարը ո՞ր սրտերազմին մէջ մեռաւ: — Նոյն օրը ուրիշ ո՞ր անուանի զօրավարը սպաննուեցաւ:

մանիոյ և Խաալիոյ մէջ ամէն ջանք կ'ընէին որ Գաղղիացիները խոնարհեցընեն. Պոնափարթն ալ դարնան սիկզըները ուղեւով իր թէնամիները Խաալիոյ մէջ նուաճել, ճիներայի մօտ բանակ մը կազմեց, ու հետը մէկտեղ Ալպեան լեռներէն անդին անցաւ : Այնչափ զօրք, ձի, թնդանօթ, ամէնն ալ ան լեռներուն անմատոյց կարծուած տեղերէն անցուց, ու քանի մը օրէն Լոմպարտիոյ մէջաւղուանքն հասաւ, ուր Աւստրիացիք Փոյ դեալին քովերը կեցած էին : Պոնափարթ մէկ յաղթութենէն մէկալը անցնելով, Էտեէ Էտե Նոլարա, Միլան, Փաւիա, Լոտի, Քրեմոնա, Փիազենցա ու Պերկամոյ քաղաքները մտաւ : Սարտենիոյ Մոնթէ-Պելլոյ ըսուած գեղն քովը յաղթութիւն մը ընելով ճենովային տիրեց. քանի մը օրէն Էտքն ալ յունիսի 14ին 1800ին Մարէնկոյ գեղն քովը Աւստրիացւոց Մէլաս սպարապետին բոլորովին յաղթեց : Ան սպատերազմը շատ երկայն քշեց, ու քիչ մնաց որ Պոնափարթ սիտի յաղթուէր. բայց Տրդէքս զօրավարը նոր գնդով Աւստրիացւոց վրայ յանձըկեցաւ ու ցրուեց զանոնք, թէսկէտ ինքն ալ գնտակով մը զարնուեցաւ սրտին ու մեռաւ : Նոյն օրը Քլէպէր զօրավարն ալ Եգիպտոսի մէջ սպաննուեցաւ :

Սարէնկոյի հռչակաւոր յաղթութեամբը հիւսիսային Խաալիան նորէն Պոնափարթին ձեռքն ան-

1 Լիւնէվիլի հաշտութեամբը Գաղղիացիք որ երկիրներու տէր եղան : — Ամիենի հաշտութիւնն ինչ է :

ցաւ : Մորոյ զօրավարն ալ նոյն ասեկները մեծա-
 մեծ յաղթութիւններով ինչուան Ղէննայի մօտե-
 ցաւ . Ասարիոյ կայսրը սախաուեցաւ հաշտու-
 թիւն խնդրելու , և դաշնագրութիւնը եղաւ Գաղ-
 զիոյ Ղիւնեվիլ քաղաքին մէջ փետրուարի 9ին
 1801ին . առ հաշտութեամբ կայսրը Գաղզիոյ կը
 թողուր Պելճիան , Ալիկիսնի ու Նիցցայի կոմ-
 սութիւնները , Սալոյայի դքսութիւնը և Մոնա-
 քոյի իշխանութիւնները : Անդղլայիք տեսնելով
 որ մինակ մնացին , իրենք ալ սրտաբաղմէլէն դա-
 դրեցան , 1803ին Ալիէնի դաշնագրութիւնը բրին
 Գաղզիոյ հետ ու Պոնափարթը շահացան առաջին
 հիւսիստոս : Աս դաշնագրութեամբ Աւրոսպախա-
 զաղեցաւ քիչ մը ասեկն :

1 Սահմանագիր ժողովոյն դրած օրէնքներէն
 'ի վեր քրիստոնեական հաւատքը հալածանքի
 մէջ էր , եկեղեցիները դոց էին , քահանաները սք-
 սորուած , նոր սղանդ մըն ալ հնարուեցաւ Աս-
 քոսածամարտուէր ըսուած , որ Գերագոյն էակին
 տեսակ մը ստեղծուի կը մատուցանէր . բայց ան
 ծաղրական սղանդին հետեւողներն ալ քիչ էին :
 Ասանկով թէպէտ հասարակաց կրօն մը չկար
 Գաղզիոյ մէջ , բայց արխասիրտ քահանաներ հա-
 դուստնին փոխած՝ ուր որ կրնային՝ հաւատա-
 ցելոց հոգևոր մխիթարութիւն կը հասցընէին .
 դեանափոր տեղուանք , շտեմարաններու մէջ , առ-
 անձին անակներու մէջ սեղան կը կանգնէին ու

1 Գաղզիոյ մէջ ինչպէս նորէն հաստատուեցաւ
 ուղղափառ հաւատքը :

վրան սլառարագ կ'ընէին : Պոնափարթ իշխանութեան հասնելուն պէս աս բաներս դադրեցան . ան միջոցին Պիոս Զ սրապը Վալանս քաղաքը արսորանաց մէջ մեռած ըլլալով, անոր յաջորդերէր Պիոս Է . Պոնափարթ անոր հետ դաշնագրութիւն մը ըրաւ , որով ուղղափառ հաւատքը նորէն հաստատուեցաւ , Գաղղիոյ եկեղեցին ընդհանուր եկեղեցւոյ հետ նորէն միացաւ , և աս բանիս յիշատակ՝ մեծ հանդէս մը կատարուեցաւ Փարիզումայր եկեղեցւոյն մէջ . Պոնափարթ բոլոր իր զօրավարներովն ու հասարակապետական ղինուորներովը հանգիսին մէջ էր . և Փարիզու ժողովուրդը մեծ ուրախութեամբ լսեց եկեղեցական զանգակներուն ձայնը , որ տասը տարիէ 'ի վեր խռովութիւն հանելու համար միայն զարնուած էին :

1 Անկէց ետքը Պոնափարթ Գաղղիոյ օրէնքները կարգի գրաւ , և մասնաւոր ժողովի մը հետ մեկտեղ քաղաքական օրինաց գիրքը (Քոս սիվիլ) հաստատեց : Սուրբ Գոմինիկոս կղզւոյն մէջ ասլըտ տամբած սևերն ալ նուաճելու համար լքելէր զօրավարը խրկեց . բայց անիկայ բան մը չկրցաւ ընել , և Հայիթի կղզիները առանձին հասարակապետութիւն մը եղան : Աստամբաց գլխաւորը Թուսէն-Ղուվէրթիւրը միայն կրցան ձեռք ձգել Գաղղիացիք՝ խարդախութեամբ սեղանի մը հրաւիրելով, ու Գաղղիա բերին . դերուութեանը մէջ մեռնելու ատեն ըսաւ Թուսէն . « Սևերուն ազա-

1 Թուսէն-Ղուվէրթիւր ո՛վ էր :

տուժեան ծառը կը կտրէք, բայց արմատները կը մնայ ու նորէն կը ծլնն 77 :

1 Ան կղզիներուն տեղ Գաղղիոյ հեա միացաւ Փիլեմոնթի թագաւորութիւնը Էլլոյա կղզին ու Փարմայի և Փիաչէնցայի դաւառներն ալ Գաղղիացւոց ձեռքն անցան : Անգղիացւոց ձեռքէն ալ Մալթա կղզին ուղեցին առնել՝ Ամիէնի դաշնագրութեան նայելով, բայց երբոր Անգղիացիք գէմկեցան, Գաղղիացիք մեծ պատերազմի պատրաստութիւն տեսան անոնց դէմ : Էլլոյա գետին բերնէն ինչուան Սիկիլիոյ նեղուցը Պոնափարթ բռնած ըլլալով՝ Անգղիացւոց նաւերուն ճամբոյ չէր թողուր : Անգղիացիք ալ բոլոր ծովուն երեսը իրենց նաւերովը ծածկեցին, ու այսպիսի պատրաստութիւններով անցան 1803 և յաջորդ տարւոյն առջի ամիսները :

2 Ան միջոցին Պոնափարթ ասպետութեան կարգ մը հնարեց՝ Լեզէոն պատուոյ (Լէժիոն օ'Օնէօր) անունով, և անով զորաց գլխաւոր-

1 Ան կղզիներուն տեղ՝ Գաղղիացիք ի՞նչ երկիրներ ձեռք ձգեցին : — Գաղղիացիք ու Անգղիացիք ի՞նչ պատրաստութիւններ տեսան իրարու դէմ :

2 Պոնափարթ ասպետութեան ի՞նչ կարգ հնարեց : — Ի՞նչպէս սկսաւ միասպետութեան ետեւ ըլլալ : — Գժոխային մեքենան ի՞նչ էր : — Թագաւորակամք ի՞նչ դաւաւիցութիւն կ'ընէին իրեն դէմ : — Անոնց գլխաւորն ո՞վ էր, և որո՞նք անոր խորհրդակից սեպուկեցան :

ներուն սիրտը աւելի շահեցաւ : Ան բաւական չէր , ուղեց որ իր հիւստատուութիւնն ալ մշարն ջեհաւոր ըլլայ : Երբոր աս բանիս ալ հաւանեցան թէ Ծերակոյտը և թէ Ժողովուրդը (1802) , սկսաւ յայտնի միասեռութեան ետեւ ըլլալ : Հին ժաբողէնները իրեն դէմ դաւակցութիւն կ'ընէին , բայց իմացուեցան ու պատժուեցան : Օր մը երբ որ Պոնափարթ թէաարոն կ'երթար , փողոցի մը մէջէն անցնելու ատենը վառօդով ու զնտակներով լեցուն տակառ մը յանկարծ ձաթեցաւ ու քովիններէն յիտուն հողի սպաննեց , բայց Պոնափարթին մնաս մը չեղաւ . աս դործիքն էր որ Գժոխային մէքենայ (Մաշին Էնֆեռնալ) ըսուեցաւ : Մէկ կողմանէ ալ հին թագաւորականք դաւակցութիւններ կ'ընէին Պոնափարթին դէմ , անոնց գլխաւորը Գէորգ Քատուտալ , որ Պոնափարթը սպաննել ուզեր էր , ձեռք ընկաւ , և անոր խորհրդակից սեպուեցան նաև Մորոյ ու Փիշկրիւ զորավարները . Փիշկրիւ բանտին մէջ խղճուեցաւ , Մորոն ալ երկու տարի բանա գրուեցաւ . իսկ Քատուտալ և ուրիշ գլխաւորներն 'ի մահ դատապարտուեցան , բայց Պոնափարթ անոնցմէ շատին ներեց :

1 Միտքը դրեր էր Պոնափարթ որ իրեն դէմ դաւակցութիւն ընողները թագաւորական ցեղին փախստականներն են , մանաւանդ Անկիէնի դուքսը , որ ան միջոցին (1804) Պատէնի երկիրը կը բնակէր . ուստի ան օտար երկրին մէջ Անկիէնի դուքսը

1 Անկիէնի դքսին սպանութիւնն ինչպէս եղաւ :

բռնել առաւ ու Փարիզու մօտ Վէնսէնի բերդը բերաւ : Առաջուց բերդապանին հրաման տրուած էր որ անոր համար դերեզման մը փորէ . երբոր դուքսը անօթի ծարաւ հասաւ , ու քիչ մը հաց ուտելէն ետքը սպառնացաւ որ քնանայ , սահապանները կէս գիշերուն զինքը արթնցուցին ու զինուորական դատաստանի կանչեցին : Հոն ամէն կողմանէ յանցաւոր սեպուելով 'ի մահ դատապարտուեցաւ , և առաւօտանց կանուխ հրացանով սպաննուեցաւ ու հոն թաղուեցաւ : Աս բանս երբոր քաղաքացիք լսեցին , ամենուն վրայ տրամուծիւնն ու սարսափը տիրեց , բայց ձայն չկրցան հանել :

Հասարակապետութեան կործանումը հասեր էր . ուստի ծերակոյտը մայիսի 18ին 1804ին ժողովականաց մէկուն առաջարկութեամբը հրատարակեց թէ ժողովրդեան փախաբանացը համեմատ Նափոլէոն Պոնափարթը թագաւոր եղաւ , և սխտի ըսուի Ինքնակալ կամ Կայսր Գաղղիացի : Միայն Քառնոյ անունով հասարակապետականը աս բանիս դէմ ձայն հանեց . բայց իրեն մտիկ ընող չեղաւ :

1 Նափոլէոն ինչպէս կայսր հրատարակուեցաւ :

Գ. Լ. Ռ. Խ. Ժ .

Պատգամաւթիւն Գաղղիոյ՝ Նախնականի կայսերութենէն ինչուան Տնայնասոյի Գիրապեպոսութիւնը (1804-1810) : Նախնականի կայսր օժտութիւն . — Գաղղիոյն Ռաֆաէլայ Նախնականին Գեմ . — Նախնականին Երազմուսութիւնները . — Աստուծոյն պատերազմը . — Աստուծոյն Ռոմասոյ կայսերազ Նախնականին հաշտութիւնն ինչ ինչերէն . — Նելսոն ծովային Երազմուսութիւնը . — Ենայի պատերազմը . — Պրուսի երկրին Գիրապեպեւը . — Էյլաւի պատերազմը . — Պրիսլանի Գաղղիոյ պատերազմը . — Թիւրքի հաշտութիւնը . — Յամասոյի պատերազմը . — Ժիւնիոյ Փորթոկալի ինչ Գիրէ . — Անտաթիստութեան հաստատութիւնը . — Նախնական Սոսիոյ լրաց ինչ Ռաֆաէլայն ինչ Յոլանտի երազմը . — Պատի երկրին ինչ Տասը կ'ատեն . — Աստուծոյ Երազմուսին Գեմ ըրած Երազմութիւնները . — Տնայնասոյ պատերազմութիւնը Գաղղիոյ հէտ ինչ Ռոսըն . — Ինչ Երազմութիւնները . — Արիստի պատերազմը . — Տնայնասոյի Գիրապեպոսութիւնը :

Նախնական ուղեց որ Պեպլինոսի և Մեծին Կարողանի պէս զինքն ալ պատը կայսր օժէ . ուստի Պիոս Է Փարիզ գնաց , ու Մայր եկեղեցւոյն մէջ գեկանմերի Չին հին աստենի արարողութեան կայսր օժեց զինքը . Նախնական ալ իր ձեռն

Նախնական ինչպէս կայսր օժուեցաւ : — Իր զորավարներուն ինչ պատիւներ տուաւ :

քովը Մեծին Կարողոսի թագն առաւ գրաւ իր գլուխը . ետքն ալ յողէ՛ջին կայսրուհւոյն գլուխը գրաւ թագուհիներուն սրակը : Իր Լուսիզ կամ Լուսի եղբայրը մեծ գոնգատապղ անուանեց . իր քեռայրը Միւրան մարաջախա կամ սարապեա Գաղղիոյ , և առ սրախէը ուրիշ շատ զօրավարներու ալ տուաւ՝ որ իրեն հետ քաջութիւնները բերէին , ինչպէս Քէլէբման , Օժրոյ , Լան , Պէրթիէ , Մասսէնա , Մոնսէ , Մորթիէ , Նէ , Տալուսթ , Ժուրտան , Սուլ և Պէռնատթ :

3 Յաջորդ տարին կայսրը անուանեց ինքզինքը նաև Թագաւոր Իսաւիոյ , Լոմպարասայի թագաւորաց հին երկաթի թագը գլուխը գրաւ (18 մարտի 1805) և իր որդեգիրը՝ որ էր Եւգենէոս Պոհոանէ՝ Խապլիոյ փոխարքայ անուանեց : Անկէց ետքը Լիգուրեան հասարակապետութիւնն ալ (այսինքն Ճենովայի երկիրը) , նմանապէս Փարմայի տէրութիւնը Գաղղիոյ կայսերութեանը հետ միացուց , և Լոմբարդի հասարակապետութիւնը իր Ելիզաբրտը սաշտատական տուաւ :

2 Նապիոլէոնին այսչափ մեծնալը հարկաւ անոր գէմ սլախի հանէր Եւրոպայի մէկ մասը . ուստի Անգլիոյ Փիթ իշխանին խորհրդովը Շուեախ և Բրուսիոյ թագաւորներն ու Ռուսաց և Աւս-

1 Յաջորդ տարին ինչ ըրաւ :

2 Եւրոպայի տէրութեանց դաշնակցութիւնն որ տեսաւ՝ ինչ ըրաւ : — Ասթերիցի հռչակաւոր սրտերազմն սրն է : — Պատերազմէն ետքը ինչ ըրաւ Պոնափարթ :

արիւոյ կոյսերքը նոր գաշնակցութիւն մը ըրին Անգղիոյ հետ Գաղղիոյ դէմ: Նափուէոնն տանն շտուաւ անոնց պատրաստուելու. քանի մը օրուան մէջ Պաւերա մտաւ, Գանուբէն անցաւ ու շատ պատերազմներու մէջ յաղթող ելլելէն ետքը՝ Մոնաքոյ քաղաքն առաւ ու Աւստրիացիները Պաւերայէն հանեց: Անկէց ետքն ալ զանազան քաղաքներու տիրելով՝ երկու ամսուան մէջ բոլոր Թիրսլի երկրին տիրապետեց. Ռուսաց յառաջապահ զօրքին յաղթեց, նոյեմբերի 13ին Վէննա մտաւ, 15ին Փրեսպուրկ, 19ին ալ բոլոր Մորաւիայն նուաճեց: Բայց որովհետև Աւստրիացիք ու Ռուսները շատ աւելի բազմաթիւ էին քան թէ Նափուէոնին զօրքը, Նափուէոնն դէպ ՚ի հիւսիս քաշուիլ ձեացուց. անոնք ալ շուտ մը անոր առջևը առնել նայեցան: Նափուէոնին ուղածն ալ ան էր. գեղատեմբերի 2ին 1805ին Գերմանիոյ Աւսթերլից գեղին քովի հաչակաւոր պատերազմը ըրաւ, որով իր թշնամեաց բանակը երկու ճղքեց, զատ զատ զանոնք խորտակեց ու սոսկալի ջարդ ըրաւ. Ռուսներն ու Աւստրիացիք քառասուն հազար մարդ կորսնցուցին մեռած ու վիրաւոր, և ինը զօրավոր. ութը հարիւր սպայ ալ գերբ ընկան: Տասնըհինգ հազար Ռուս զինուորներ ստառած լճի մը վրայէն կը փախչէին. Նափուէոն ան սառը թնդանօթներով կորել տուաւ ու բոլոր վրայինները ջրին մէջ ընկղմեցան: Ան պատերազմին մէջ ցրցուց Պոնափարթ որ քաջութեամբ ու ճարտարութեամբ քիչ մարդով ալ բազմադունդ բանակի դէմ փառաւոր յաղթութիւն կրնայ ըլլալ: Պատերազմէն ետքը մէկէն ժողովեց իր յաղ-

Թափան զօրքն ու ըսաւ անոնց . « Ո՛վ զօրականիք , դուք աշխարհիս առաջին զինուորներն էք . սա սլաաերազմիս ու մեր մէկալ յազթուլթեանց յիշատակը յաւիտեան սլիախ մնայ : . . . Զօրականիք , անմահութեան արժանի էք դուք : Ի՞նչ սլիախ ըսէ Գաղղիա : Դուք և ձերինները իմ օրդիքս էք : Աս ըսած սլաաերազմիս ձեզի ու ձեր կայսեր արժանի սլաաերազմ էր » :

1 Երկրորդ օրը Աւսարիոյ կայսրը անձամբ Նափոլէոնին վրանը գնաց ու հաշտութիւն խնդրեց . Ռուսաց կայսրն ալ զինադադարումն ըրաւ , ու մնացած զօրքերովը իր երկիրը քաշուեցաւ : Նափոլէոն Աւսարիոյ հետ Փրեսպուրի քաղաքին մէջ գաշնադրութիւն ըրաւ , որով Թիրոլն երկկրը ու Վենետիոյ հասարակապեաութիւնը Գաղղիոյ մնաց : Գեղանմէրի 27ին վճիռ մը հանեց Նափոլէոն որ Նափոլիի Պուրպոնեան Թադաւորութիւնը վերցուած է , և իր Յովսէփ եղբայրը ան երկրին վրայ Թադաւոր դրաւ : Նաւական սլաաերազմը միայն ջաջողեցաւ Նափոլէոնին : Եոյն տարին (21 հոկտեմբեր 1805) Նելսոն ծովակալը Սպանիոյ Թրաֆալկար հրուանդանին գիմացը Սպանիացւոց ու Գաղղիացւոց նաւերուն յաղթեց :

2 Յաջորդ տարին Նափոլէոն ինքզինքը անսւա-

1 Աւսարիոյ ու Ռուսիոյ կայսերքն ի՞նչ ըրին : — Նափոլիի Թադաւորութիւնը Նափոլէոն որուն տուաւ : — Նաւական սլաաերազմին մէջ ալ յաջողութիւն ունեցաւ Նափոլէոն :

2 Յաջորդ տարին Նափոլէոն ի՞նչ ըրաւ :

նեց Գլուխ Գերմանական Գաշնակցութեան, և իր պատուանուններէն մէկն եղաւ Պաշտպան Գաշնակցութեան Տոնասի . Պաւերայի ու Վերթեմուկերկի կայսրընտիրներուն Լափառք անունը տուաւ, Տալանայի հասարակագետութիւնը թագաւորութիւն ձևացուց, ու իր լուի եղբորը տուաւ . Պէրկ քաղաքին մեծ դքսութիւնը տուաւ Միւրայի, Փոնթէ-Քորվիյի իշխանութիւնն ալ Պէանատթիւն . և ինքը Զուկերացուց Գաշնակցութեան Միջնորդ անունով՝ ան երկիրն ալ պաշտպանութեանը տակ առաւ :

Մն ատենները Պրուշի տէրութեանը մէջ երկու կարծիք կար, ոմանք կ'ուզէին Գաղղիացուց հեա բարեկամանալ, ոմանք անոնց դէմ պատերազմիլ : Նախուէոն ատեն չտուաւ իր վրայ յարձըկելու . 1806ին հոկտեմբերի առաջին օրերը մեծ բանակով մը հսկնտէն անցաւ, Պրուշի թագաւորն ալ Գուլիելմոս Գերմանիոյ Ենա քաղաքին քովը Գաղղիացուց դէմ պատերազմի ելաւ : Նախուէոն մեծ ճարտարութեամբ շարեց իր զօրքերը, ետքը զօրաց առջևէն անցնելով ցրցուց անոնց հեռու կեցած Պրուշի բանակն ու ըսաւ . « Ո՛վ զօրականք, ով որ մահուընէ չլախնար՝ մահը թշնամեաց վրայ կը դարձընէ » : Աս կարուկ խօսքերէն զօրքը ելէքարացած՝ սիրտ առաւ՝, քանի մը հողի մէջերնէն կանչեցին . « Ա-

1 Ենա քաղաքին քովի պատերազմն ինչպէս եղաւ : — Ետքը ինչ տեղերու ակրեց Նախուէոն :

ուսջ երթանք 33 : Բայց Նախուէն անշխոթ կերպով մը ըսաւ անոնց . « Հրաման տալու համար սպասեցէք որ երեսուն հաս կարգաւորեալ պատերազմի մէջ հրամայած ըլլաք 33 : Ան պատերազմին մէջ այնպէս յաղթուեցան Պրուշներն որ իրենց թագաւորին քովը դրեթէ զօրք չմնաց , և Գուլիէլմոս զինադադարումն խնդրեց , բայց Նախուէն չտուաւ : Քանի մը օրէն դնաց Երեւոյ Լիւսիս , Վ իրթեմակերկ ու Փոցտամ քաղաքներուն . յաղթանակաւ Պեռլին մտաւ ու քանի մը շաբթուան մէջ բոլոր Պրուշի երկրին բերդերուն ու քաղաքներուն անրապետեց , երկու հարիւր յիսուն դրօշ առաւ թշնամիներէն , չորս հազար ութը հարիւր թնգանօթ և հարիւր քառասուն հազար մարդ : Նոյեմբերի 28ին Գաղղիացիք մտան Վարսաւիս , ուսկից Ռուսները ելեր էին :

1 Փետրուարի 8ին 1807ին Բրուսիոյ Էյլաւ քաղաքին քովը մեծ պատերազմ մը ունեցան Գաղղիացիք Ռուսաց հետ . պատերազմին ատենը այնպիսի սաստիկ ձիւն եկաւ , որ երկու բանակներն ալ հազիւ մեկզմեկ կը տեսնէին՝ քանի մը քայլ իրարմէ հեռու . ուստի սոսկալի կատաղութեամբ զարնուեցան : Գաղղիացիք ան գիշերը տարակուսեր էին թէ երկրորդ օրը նորէն պատերազմին թէ ետ քաշուին . բայց առաւօտանց տեսան որ Ռուսաց զօրքը ձգեր քաշուեր է , և բոլոր

1 Էյլաւի պատերազմն ինչպէս եղաւ : — Ֆրիտլանտի պատերազմին մէջ Նախուէն ինչպէս վառեց զօրաց քաջութիւնը :

քաղաքին քովի դաշտը մեռեւնեցող ու վերաւոր-
նեցող ծածկուած էր : Ան ձմեռը շատ պատե-
րազմ չեղաւ . և դարնան սկիզբը Գաղղեացիք Խի-
րեցին Տանցիկ քաղաքին , ու թը հարիւր ալ թընդ-
անօթ ձեռք ձգեցին : Ֆրիա-Վանա քաղաքին
քովը երբոր մեծ պատերազմի մը պատրաստուեր
էին երկու կողմէն , Նախուէոն պատերազմի նշան
տալու ատենը տեսնելով որ արեւը ամպերու մե-
ջէն դուրս կ'ելլէ՝ կանչեց . « Ահա Աւսթերլիցի
արեգակը » : Աս խօսքէս զօրաց քաջութիւնը ա-
ւելի վառուեցաւ . ու մեծ յաղթութիւն մըն ալ
ըրին ան օրը որ յունիսի 14 էր :

1 Ռուսաց Աղէքսանդր կայսրը հաշտութիւն
ինդրեց և Նախուէոնին հետ տեսնուեցաւ Նեմէն
գետին վրայ , Պրուշի թագաւորն ալ մեկտեղ-
եաքը իրեք թագաւորներն ալ Բրուսիոյ Թիլզիթ
քաղաքը գնացին ու հոն խաղաղութեան դաշինք
դրին : Անով Պրուշի թագաւորը իր գաւառնե-
րուն մէկ մասը ձեռք ձգեց , Սաքսանիոյ կայսրն
աիրը թագաւոր ըսուեցաւ . ուրիշ նոր թագաւո-
րութիւն մըն ալ ձեացաւ Ախսթփալիս գաւառը , և
անոր վրայ թագաւոր եղաւ Նախուէոնի եղբայրը
Հերոնիմոս Պոնափարթ : Պրուշը , Ռուսը և ու-
րիշ տէրութիւններն յանձն առին նաև Նախու-
էոնին ան վճիւր՝ որով արգելք հաներ էր որ ոչ



1 Նախուէոն մէկալ թագաւորաց հետ լիճալէս
հաշտութիւն ըրաւ : — Իր եղբայրը Հերոնի-
մոս Պոնափարթ ո՞ր երկրի թագաւոր եղաւ :
— Յամաքային սաշարումն ո՞րն է :

Գաղղիացիք և ոչ անոնց դաշնակիցները կարենան Անգղիոյ հետ վաճառականութիւն ընել, և աւսիկայ ըսուեցաւ Յամաթայի պաշարոսն :

1 Փորթոկալի թագաւորը տա վճռոյն հնազանդիլ չուզելով, ժիւնոյ զօրավարը գաղղիացի բանակով մը շարթուան մէջ Փորթոկալի տերութիւնը մտաւ, ու Պրահանցայի թագաւորականցեղը անկեց քշեց : Ան ատենները Նափուէոն Մեծին Կարողոսի հետեւելով ազնուականութիւնը նորէն հաստատեց, իր տեղակալներուն կաշուածներ բաժնեց, ու անոնցմէ շատը իշխան, գուբա, կոմս, և սպարոն անուանեց (1807) :

2 Գաղղիացւոց ամենէն աւելի ասպահով դաշնակիցը Սպանիան էր. բայց Նափուէոն լսելով թէ Սպանիոյ Կարողոս Գ թագաւորին որդին Փերդէնանտոս խռովութիւն հանել կ'ուզէ, զօրք խըրկեց Սպանիա՝ իբր թէ ծեր թագաւորին պաշտպանութիւն ընելու համար, ու երբօր կախը երկրնցաւ, Նափուէոն Գաղղիոյ Պայոն քաղաքը կանչեց Կարողոս չորրորդը, անոր որդին և Մանուէլ Կոտոյի իշխանը, ու կէս մը անուշուութեամբ՝ կէս մըն ալ սպառնալեօք հրաժարեցոյց զանոնք Սպանիոյ թագաւորութենէն : Կարողոս

1 ժիւնոյ զօրավարն ինչո՞ւ համար Փորթոկալի տերութեան վրայ արշաւեց : — Նափուէոն մը բանը նորէն հաստատեց :

2 Նափուէոն ի՞նչ կերպով ուզեց անրել Սպանիոյ : — Որո՞ւն տուաւ Սպանիոյ թագաւորութիւնը :

Վ, իր թագուհին և Կոտոյի իշխանը Իտալիա քաշուեցան . Փերդինանտոս ալ սքստրուեցաւ . իսկ Սպանիան Նափոլէոն իր Յովսէփ եղբորը տուաւ , որ արդէն Նափոլիի թագաւոր էր , և Նափոլիի թագաւորութիւնը տուաւ Յովակիմ Միւրային՝ որ ըսուեցաւ Լուիս-Երեմի Սիւր-Էսթր :

Նափոլէոն իր տէրութեանը հետ միացուց նաև սպայի երկրին չորս դաւառները , ըսելով թէ իմ նախորդիս մեծին Կարոլոսի ըրած սպարգեին մէկ մասը ետ կ'ստանում : Այսպիսի չափազանց տիրապետութեան սիրովը սկսաւ նուաճած ազգերուն ատելի ըլլալ : Նախ Սպանիացիք սպրտաամբեցան անոր Յովսէփ եղբորը դէմ . Անգլիացիք ալ Փորթոգալի երկրին տիրեցին : Նափոլէոն անձամբ Սպանիա գնաց , ամէն տեղի թշնամեացը յաղթեց ու յաղթանակաւ Մատրիա մտաւ . բայց շուտով հարկագրեցաւ Գերմանիա դառնալու՝ Աւստրիոյ կայսեր դէմ (1809) : Վասն զի Կարոլոս արշիգութքը Սպանիոյ սպաներազմը յարմար առիթ սեպելով , մեծ բանակով մը Պաւերա մտաւ ու Թիրոլի երկիրը որք հանեց . բայց Նափոլէոն Պիրենեան լեռներէն կայծակի սկսանցաւ Փարիզ , Փարիզէն Հռենոս , ըսնի մը օրուան մէջ Պաւերան ազատեց , շատ տեղուանք զար-

1 Ինչո՞վ սկսաւ ատելի ըլլալ նուաճած ազգերուն : — Կարոլոս արշիգութին ըրածն որ լսեց ինչ ըրաւ : — Վերնայի մէջ ինչ վճիռ հանեց :

նուէցաւ յազմեց թշնամեաց, Ռաթիսպոն քաղաքին առնելու ատեն թեթև կերպով մը վերաւորուէցաւ, ու մայիսի 13ին վէննա մտաւ: Հոն վճիռ մը հանեց որ Հռովմայ տերութիւնը բոլորովին Գաղղիոյ ինքնակալութեան հետ միանայ. Պիոս է պապն ալ վատիկանէն հանել տուաւ ու Գաղղիոյ Փոնթիքիոյ քաղաքը տարաւ:

1 Նափուէոն վէննայի մօտ Շէնպրուենի սպալատը քաշուած՝ սրտերազմը առաջ կը տանէր. ան միջոցին իր տեղակալներէն Փոնթաթովպի զօրավարը վարսաւիա քաղաքը Աւստրիացոց ձեռքէն ազատեց, ԼըՖիէսիւր զօրավարը Թիրոլի երկրին տիրեց, Իտալիոյ փոխարքան Եւգինէոս՝ Ռասսպի սրտերազմին յազմեց ու Փրեսպուրի քաղաքն առաւ, Մարմին զօրավարն ալ Տալմանյոյ տիրեց, և անոր համար ըսուէցաւ Դո-սո Ռաֆուէայի:

2 Յուլիսի 6ին (1809) վահրամ գեղին քովերը Գաղղիացոց ու Աստրիացոց բանակները (որ չորս հարիւր հազար հոգի էին) իրարու հետ զարնուէցան. երկու կողմէն ալ խիստ շատ մարդ ջարդուէցաւ, բայց վերջապէս Նափուէոնին քաջութիւնն ու ճարտարութիւնը յազմող ելաւ. և Մաքտոնալ զօրավարը, որ ետքը Դո-սո Տաշէնֆոնի ըսուէցաւ, ան սրտերազմին մէջ մեծ քաջութիւն ցրցուց: Աւստրիոյ կայսրը հարկադրեցաւ

1 Իր զօրավարներն ինչ տեղերու տիրեցին:

2 վահրամի սրտերազմն ինչպէս եղաւ: — Աւստրիոյ հետ եղած հաշտութեամբ՝ Գաղղիացոց ձեռքն ինչ երկիրներ անցան:

նորէն հաշտութիւն խնդրելու . անով Գաղղիոյ ձեռքն անցան Լիւրիկէ, Խաթրիա, Տարմայիա, Փրիուէ, Խառաթիու Քառնիոյլի երկիրները և ուրիշ գաւառներ՝ Ագրիսական ծովուն արևելեան եզերքը :

1 Ան սրատերազմին ատենը Անգղիացիք Ձեւնտայի մէկ մասին վրայ յարձրկեցան, բայց շուտով ետ քշուեցան, անկէց առիթ առնելով Նափուէան հողանտան ալ Գաղղիոյ հետ միացուց, և Լննդերտամը Գաղղիական ինքնակալութեան երրորդ քաղաքն անուանեց . երկրորդը հռոմն էր (1810) :

1 Հողանտայի ինչո՞ւ համար տիրասպետեց :



ԳՂՈՒԽ ԺԱ.

Պատմութիւնն Գաղղիոյ՝ Հռոմիոսոյի արժարեպոսութենէն
 Ինչուան Մաւլէի դասակարգութիւնը (1810-1813) :
 Հռոմիոսայ Լատիներէն ծնունդը . — Սպանիոյ պատեր-
 ըստէն . — Ռոմիոսոսոսանի արշաւանքը . — Տրեւիսա քա-
 ղաքը եղած Լատիներաց ժողովը . — Ալեքսանդրի կայ-
 սեր արեւած պատմութեանն . — Սմիլնիսի առաւելը .
 — Մոսկուայի հրդեհը . — Գաղղիացոց Ռոմիոսոսա-
 նէն դասակարգը . — Ճամբան քաղած իտալներէն . —
 Պէրսիական պատերազմը . — Կատիլէնի շրջանի ժող-
 վի :

Կատիլէնի սոցիալիսի մեծամեծ աշխարհակա-
 լութիւնները ընկերներէն ետեւ ուղեց իրեն ժառանգ մը
 ունենալ, ուստի ժողովի կայսրուհին արձրկեց
 իբրև ամլութեանը համար, և անոր տեղը 1810ին
 Աւստրիոյ կայսեր Մարիա-Լուիզիա ազնիւն ա-
 ռաւ : Փախաբաժ ժառանգն ունեցաւ Կատիլէնի
 1811ին . ան ազուն ծնունդը խիստ մեծ հանգի-
 սով կատարուեցաւ բոլոր ինքնակալութեանը մէջ,
 և Կատիլէնի անոր անունը դրաւ Լատիներ Հռոմի-
 ոսայ :

Կատիլէնի ինչո՞ւ համար ժողովի կայսրուհին
 ձգեց, ու տեղը զո՞վ առաւ : — Անկէ ունե-
 ցած տղուն անունը ինչ դրաւ :

Սահայն ան միջոցին պատիւն հետ ունեցած դժտուածիւններուն պատճառաւը 'Նափողէոնի'ն անունը շատ կոտորեցաւ, ու եկեղեցականք իրմէ պաղեցան. ուրիշ կողմանէ աշխարհականներն ալ փառաց ու յաղթուածիւններու վարժածի պէս սկսան իրենց կորսընցուցած աղատուածեանը վրայ ցաւիլ: Գաղղիոյ մէջ ամէն տեղ տրտունջ կար անդադարելի զօրաժողովներուն համար. Սպանիոյ քաղաքական կռիւն ալ չէր դադրած, և 'Նափողէոնի' տեղականները սրջամբ ալ յաղթուածիւններ ընէին, շատը մեկտեղ ձեռք ձգածնին՝ քիչ քիչ կը կորսընցընէին. սասնկով իրեքհարիւր հազար հոգի կորսընցուցին Գաղղիացիք՝ միայն Սպանիացւոց դէմ պատերազմելով. վասն զի բոլոր Սպանիացիք հայրենեաց աղատուածեանը համար իրենց քահանաներովն ու կրօնաւարներովը սոց ելած էին, և ամէն տեղ սա ձայնը միայն կը լսուէր. Մեթիս Գաղղիոցի, Կեթե՛ արտայ Փերտինսարտ: Ձեռք ձգած դերիները կը սպաննէին. ինչուան կանայք ալ պատերազմի մէջ կը մաննէին. ամէն դեղ մէյմէկ միջնարեքդ և ամէն վանք մէյմէկ ամրոց դարձեր էր: Անդղիացիք ալ անդադար կ'օգնէին Սպանիացւոց. մանաւանդ Արթուր Ալէլէզլի իշխանը, որ ետքը Ալէլլինկթոն (կամ Ալէլլինթըն) գուքս ըսուեցաւ: Իրեք ասորի քչեց սա

1 'Նափողէոնի'ն անունը ինչպէս սկսաւ աւրուիլ:
— Սպանիացիք որպիսի՞ արիւութեամբ Գաղղիացւոց դէմ կը կենային: — Արտնք իրենց կ'օգնէին:

Սպանիոյ պատերազմը , և Նափոլէոն իր հին զօրաց քաջերը ան պատերազմներուն մէջ կորսնցուցուց : Յովսէփ Թադաւորը մէկ գաւառէն մէկալը քշուելով , վերջապէս Վելլինկ(մանէն յաղթուէցաւ ու Գաղղիա փախաւ (1811-1813) :

Ռուսաց կայսրը տեսնելով որ Անգղիոյ հեա վաճառականութիւն չընելը իրեն մեծ վնաս է , ու Շուեաի երկրին վրայ ալ Նափոլէոնի ՊէաՆաասթ զօրաւարը Թադաւոր սխաի գրուի , Թիւսիթի գաշնապրութեանը դէմ սկսաւ Անգղիոյ հեա վաճառականութիւն ընել . սպաճառ բերելով Նափոլէոնի փառասիրութիւնն ու Գաղղիոյ չափէ գուրս մեծնալը : Ան ասէն Նափոլէոն միաքը գրաւ որ երթայ բուն Ռուսաստանի մէջ սպաերազմ ընէ . Փարիզէն ելլելու ատենը ըսաւ .
 « Աղէքսանդրը նուաճելու կ'երթամ . երկու յաղթութեամբ Մոսքուա ու Փեթրուրկ սխաի մանեմ ու հոն սխաի խօսիմ հաշտութեան վրայ » :
 Գաղղիայէն , Չուիցերիէն , Փորթոկալէն , Սպանիայէն , Իտալիայէն , Գերմանական Գաշնակցութենէն , Բրուսիայէն . Ղէհաստանէն , Աւսարիայէն հինգ հարիւր հազարի չափ զօրք ժողլեց , և առաջ Սաքսոնիոյ Տրեղտա մայրաքաղաքին մէջ իրեն հստատակ Թադաւորաց ժողով մը ըրաւ :
 Հոն էին Աւսարիոյ կայսրը Ֆրանչիսկոս Բ , Փրեգերիկոս Գ.ուլիէլմոս՝ Բրուսիոյ Թադաւորը . Պա

1 Ինչո՞ւ համար Նափոլէոն Ռուսաստանի վրայ պատերազմի գնաց : — Ո՞ր ժողով ըրաւ , և ան ժողովին մէջ որո՞նք կային :

ւերայի ու Վիրթէմպերկի թագաւորները, Հերոնիմոս Վեսթփալիոյ թագաւորը և Գերմանական Դաշնակցութեան մեծ զքսերը . Նափուէոն անոնց ամենուն իբրև հասարակ իշխանի մը հետ կը վարուէր, ու երբոր աս թագաւորաց զալուստը իրեն կ'իմացընէին, թող սպասէն կ'ըսէր :

1 Այսպիսի ահաւոր արշաւանքին առջևն առնելու համար հասկըցաւ Աղէքսանդր որ սլաոն բազմը սէպք է ըլլոյ ազգային ու կրօնական: Աղգին եռանդն ալ վառեց՝ զորաց դուռիը անուանի զօրավարներ դնելով ինչպէս լիթուանիացին Պարքլոյ տէ թողլի, Բագրատիոն հայկազն և Քուլթուզով: Խաչակրութեան ձայնը ամէն տեղ սկըսաւ հնչել, ու հարիւր տարեկան Պղատոն արշիմանարիար նզովքներ հանեց Գաղղիացւոց դէմ: Ամէն կողմէն վազեցին զինուոր գրուեցան Ռուսները՝ իրենց հայրենիքը ազատելու . խիստ բազմաթիւ էր հեծելազօրքը, լծնգանօթածիգ գունդերը ահաւոր, թեթեւնիթաց խաղախներն ալ անոնց առջևէն սարսափ կը ձգէին: Այսպիսի բանակով Աղէքսանդր կայսրն գնաց Վիճնա քաղաքը կեցաւ, որ իր երկիրը ահաւոր թշնամւոյն դէմ պաշտպանէ:

2 Նափուէոն իր բազմազունդ բանակին գլուխ

1 Աղէքսանդր կայսրը ի՞նչ պատրաստութիւն տեսաւ Նափուէոնի դէմ:

2 Նեմէն գետէն անցնելէն ետքը Նափուէոն ի՞նչ ըրաւ: — Սմոլենսքը առնելէն ետքը Գաղղիացիք ի՞նչ ըրին: — Մոսքուայի պատերազմն ի՞նչպէս եղաւ:

կեցած՝ Նեմէն գեաէն անցաւ յունիսի 24ին 1812ին . երկու օր ետքը Վարսաւիայի ժողովոյն մէջ Լեհաստանի թագաւորութիւնը կանգնուած հրատարակեց ու մտաւ Վիէնա՝ Ռուսաց երկիրը : Զօրքը մեծամեծ գժուարութիւններով առաջ կ'երթար ան ահագին տղմուտ դաշտերուն մէջէն . հիւանդութիւններ ալ ընկան բանակին մէջ ու սկսան զինուորները ջարդել ու վհատեցընել . ամէն տեղ գեղացիները կը փախչէին ու քաղաքացիք իրենց ստացուածներն առած՝ Ռուսաստանի ներսերը կը քաշուէին , ինչպէս որ Աղեքսանդր կայսրը հրամայէր էր . թէպէտ և տեղ տեղ Ռուսաց զօրքերն ալ Գաղղիացոց գէմ կ'ելլէին ու հեանքին կը զարնուէին : Օգոստոսի 17ին երբոր Սմոլէնսք քաղաքին քով հասաւ բանակը , հոն շատ քաջութեամբ Ռուսները դէմ կեցան . վերջապէս քաղաքն առնուեցաւ , բայց Ռուսները կրակ տուին , բոլոր քաղաքը այրեցին : Անկէց Գաղղիացիք Մոսքուայի վրայ գնացին . և Նախուլէոն թէպէտ և ջերմով հիւանդացեր էր , բայց ուղեց Ռուսաց մեծ բանակին հետ սլաոտերազմիւ Մոսքուայի քով : Հարիւրաւոր տարիներէ 'ի վեր այնպիսի ջարդ չէր ըսուած , Ռուսները անսլաոտ մեղի քաջութեամբ ահաւոր թշնամոյն կ'ընդդիմանային , հազար երկուհարիւր թնդանութեան հողմէն ահագին որոտմամբ իրարու վրայ կրակ կը թափէին , և Նախուլէոն բարձր տեղ մը կեցած՝ կը նայէր իրեն հպարտութեան զոհ եղած մարդկանց վրայ : Ետեւէ ետեւ իր զօրավարներէն շատը , Մարիոն , Պոննամի , Քոմիէր , Մոնպրէոն ու Քոլէնքուր ընկան մեռան . ամբողջ գունդեր բոլո-

տովին ջարդուեցան : բայց վերջապէս Գաղղիացիք յաղթեցին և Ռուսները յիսուն հազար հոգի կորսնցընեցին և ետքը իրենց հին մայրաքաղաքն ալ թշնամեաց ձեռքը տուին : Գաղղիացիք ան մեծ քաղաքը տեսնելով շատ ուրախացան . ինքը Նախուէնն ալ ուրախութեամբ կանչեց . « Վերջապէս աս դուռը քաղաքն ալ տուինք » : Բայց չէր գիտեր որ ան քաղաքը իր զօրացը գերեզման պիտի ըլլար :

1. Սեպտեմբերի 14ին Նախուէնն քաղաքին դուռը հասաւ , բայց մեկը իր առջևը չէլաւ , որ քաղաքին բանակները բերէր . Նախուէնն զարմացած ներս մտաւ . անմարդի փողոցներուն մեջ զօրքերը շարեց . վասն զի բոլոր բնակիչները ձգեր փախեր էին ու միայն քանի մը հարիւր հոգի մնացեր էին որ Գաղղիացուոց քնացած ժամանակը կրակ սան քաղաքին : Կէս դիշերուն հրդեհը սկսաւ . կրակը սոսկալի արագութեամբ անէտուն , փողոցէ փողոց անցաւ ու բոլոր քաղաքը մոխիր դարձուց : Նախուէնն Քրեմլին ըսուած միջնաբերդին մեջ թաղաւորաց պալատը կեցած էր . կրակը հոն ալ հասաւ , ու սախալեց զինքը որ բոցերուն մեջէն փախչելով ազատի . ինքզինքը մոխիթարելու համար հրամայեց որ միջնաբերդը կործանեն , ու Գաղղիացուոց բանակը ելաւ Մոսքուայէն :

1 Գաղղիացիք ի՞նչպէս Մոսքուա մտան : — Հըրդեհն ի՞նչպէս եղաւ :

1 Նախորդէն երբոր տարակուսեր էր թէ մեր էր թայ, Փեթրպուրկի՞ վրայ առաջ քալէ թէ Լեհաստան դառնայ, խաղախները անդադար վրայ յարձրիւելով՝ Գաղղիացոց բանակը կը նեղէին, իսկ Գաղղիացիք Մոսքուայէն կողոպտած հարլստու թիւններովն ու ըմպելիքներովը զուարճացած, Փարիզէն ալ հետերնին կատակերգակներ բերած ըլլալով, իրենք զիրենք ապահովութեան մէջ կը կարծէին ու կը զուարճանային :

2 Վերջապէս որոշեց կայսրը որ ետ դառնայ, հոկտեմբերի 18ին ճամբայ ելաւ բանակը . և խեղճութեան տեսարանները բացուեցան : Ռուսները նայեցան որ Գաղղիացիք Ռեքրանիա միայն չմտնեն, ու Սմոլենսքի ճամբան ազատ թողուցին որ անկէց ետ դառնան . թէպէտ և ճամբուն վրայ շատ անգամ խաղախները կը հասնէին Գաղղիացոց բանակին վրայ ու կը ջարդէին . մէկ կողմանէ կերակրոյ ու հագուստի կարօտութիւնը Գաղղիացիները կը նեղէր . ձմեռն ալ երթալով կը սաստկանար : Գիշեր ցորեկ թանձր ձիւն մը գալով ճամբաները ծածկեց, ու ետէն դնացող զօրքերը օտըկիներուն անցած ճամբան չէին տեսներ, ոչ փայտ ունէին վառելու և ոչ ծածք մը կար՝ տակը ապաւինելու . ձիաւորներուն ձիերը

1 Ի՞նչ բանի վրայ կը տարակուսեր Նախորդէն :
— Գաղղիացիք ինչով կը զուարճանային :

2 Վերջապէս ի՞նչ որոշեց Նախորդէն : — Ճամբան ի՞նչ անտանելի նեղութիւններ քաշեցին Գաղղիացիք :

հաղարնէրով մէկէն կը մեռնէին, զինուորներն ալ անոնց միտը կ'ուռակէին. Թնդանօթներուն կառքերն ալ քաշող չգանուէրով՝ Թնդանօթներն ու ռումբէրը ճամբուն վրայ կըմնային: Շատ զինուորներ զէնք վերցընելու կարողութիւն չունենալով՝ մէկգի կը նեակէին զանոնք ու ձիւնին վրայ հաղիւ կը քաշէին: Ան պատուական անօթներն ու անգին գանձերն որ Մոսքուայէն կողոպտեր էին՝ գաշտին մէջը ձգեցին: Անոնց ետէն կ'երթային խումբ խումբ կանայք, տղայք և ուրիշ խեղճեր կէս հագուած կամ կիսամեռ, որ բազմութեամբ կը քալէին ու ասդիս անդին օգնութիւն կը խնդրէին, բայց տուող չկար. ցրտէն ու՛ջ մնացողներն ալ խաղախներուն կացիններուն բերանը կ'երթային: Յուրաքանչէր քանի գնաց սաստկացաւ. երբոր բանակը Սմոլէնսք հասաւ (նոյեմբերի 13), կամաց կամաց ջերմաչափը քսանըվեց սաստիճան իջաւ զոյէն վար: Գիշերը ձիւնի վրայ կը պառկէին զինուորները, և առաւօտը խիստ շատ մարդիկ սառած կը մնային: Իտալիոյ թագաւորական թիկնապահաց գունդը գրեթէ բոլոր սառեցաւ. նոյնպէս ջարդուեցաւ նաև Միւրային Նախօրէին բերած բանակը. կայսեր քովը միայն կայսերական թիկնապահները մնացեր էին, և ինքը անոնց հետ ոտքով կը քալէր: Եւ թէ որ վերջապահ գնդերը՝ Նէ ստարանպետին առաջնորդութեամբը մեծամեծ քաջութիւններ չընէին, բոլոր բանակն ալ սխալ ջարդուէր. վասն զի մէկալնոնց մէջ ոչ կարգ կար՝ ոչ կանոն, ոչ գնդապետ և ոչ զինուոր, ամէն բան խառնափնդորեր գացեր էր:

1. Նոյեմբերի 29ին Պերեզինա գետին քովը հասան Գաղղիացիք, որ կէս առաւած ընդարձակ ճահիճներուն մէջէն կ'անցնէր. և թէ որ սա գետը չանցնէին, Գաղղիան տեսնելու յոյս չէր մնար իրենց: Նախ ձիաւորներուն մէկ գումղը անցաւ գետէն, ամէն ձիաւոր մէյմէկ հեռակալ առած ձիուն վրայ. ետքը շատ աշխատանքով գետին ու ճահիճներուն վրայ իրեք կամուրջ շինեցին որ թնդանօթներն ու զանազան զէնքերը անցընեն. բայց անոնց ծանրութենէն կամուրջները փլան և թնդանօթները հոն ընկղմեցան: Ան միջոցին որ խուճի խուճի արք և կանայք գետին եզերքը ծոզվումա՞ծ՝ կը ջանային կամուրջներուն վրայէն գեմացը անցնելու, Ռուսի բանակը սկսաւ վրանին կրակ թափել, որով ջրէն ազատողները թնդանօթներէն կը մեռնէին, և անոնցմէ փախչողներն իրենք զիրենք յուսահատաբար առաջ կը նետէին. ձիաւորները թուրը ձեռքերնին կամուրջներուն վրայ վազեցին, և մեռելներու ու վերաւորներուն վրայ կոխկռակելով իրենց ճամբայ բացին: Ժողովրդեան մեծ մասը գետը թափեցան որ լողալով փախչին ազատին, բայց խիստ քիչ մասրդ կրցաւ դուրս ելլել, մեկազնոնք խեղճ կերպով խղզուեցան մեռան: Ան մեռնողներուն ու մահը առջևնին ականաղներուն դռուով գոչուանք անսպասմելի էր: Իրեք օր քշեց Պերեզինայէն անց

Պերեզինայի սոսկալի անցքը ո՞րն է: — Ո՞ր զօրավարները քանի մը գեղերուն ազատութեան սպասճառ եղան:

նիլը, և թէ որ ան ահագին բանակէն քանի մը գունդեր ազատեցան, անոր ալ պատճառ եղան Նէ սպարապեան որ Վաշն քաջաց (լը սրավ տէ սրավ) ըսուելու արժանի եղաւ Նափուլէոնէն, և Ուափնոյ զօրավարը՝ որ Կաթա Ռեճճի-յի ալ կը սուել: Այսան զի ասոնք քանի մը գունդ զօրք քովերնին ժողված Ռուսաց դէմ ելան ու զանոնք հարածեցին:

1 Աերջապէս ան արշաւանքէն ողջ մնացած զօրքերը Աիլնա հասան, ուր Նափուլէոն բանակէն զատուեցաւ ու Աարսաւիա գնաց. քանի մը ժամ հոն հանգչելէն ետքը ճամբայ ելաւ ու դեկտեմբերի վերջն օրերը Փարիզ հասաւ: Իր գալէն օր մը առաջ Գաղղիա հասեր էր Ռուսաստանի արշաւանքին ձախորդ լուրը, և ամէնքը մեծ արամուծութեան ու սարսափի մէջ էին. միայն ասով քիչ մը կը մխիթարուէին որ նոյն լուրին վերջն կատրը աս էր թէ Կաթա Ռեճճի քաջաց և մանաւանդ որ իրեք ամիս առաջ Նափուլէոնի թշնամիները սուտ ձայն հաներ էին թէ կայսրը մեռեր է, և անոնց գլխաւորը Մալէ զօրավարը ամէն բան պատրաստեր էր հասարակապետութիւնը նորէն հաստատելու: Բռնուեցաւ, ու երբոր ըսին իրեն որ ինքզինքը պաշտպանէ, պատասխան տուաւ. «Ան մարդն որ իր երկրին իրաւունքները պաշտպանելու կ'եկէ, պաշտպանութեան կարօտութիւն չունի. կամ

1 Երբոր զօրքը Աիլնա հասաւ՝ Նափուլէոն ինչ ըրաւ: — Աս ձախորդ լուրն որ Գաղղիա հասաւ՝ ինչով քիչ մը մխիթարուեցան: — Մալէ ով էր ու ինչպէս սպաննուեցաւ:

կը յաղթանակէ, կամ կը մեռնի » : Եւ իր դաւա-
կիցներուն հետ մէկ տեղ հրացանով սպաննուեւը
առենը կանչեց . « Ո՛վ քաղաքացիք, ես վերջին
հռովմայեցին չեմ » :

1 Անկէց ետքը Եւրոպայի տէրութեանց մէկ
մասը, առաջ Բրուսիան, ետքը Շուեարը, Նափո-
լէոնի գաշնակցութենէն ետ կեցան . Սպանիոյ
մէջ ալ անգագար կը յաղթուէին Գաղղիացիք :
Նափոլէոն գնաց Օրինագիր ժողովը, իմացուց որ
իր բանակը ցրտէն ջարդուեր է, և ուրիշ բանակ
մը ուզեց . մէկէն որոշուեցաւ որ իրէք հարիւր
հազար մարդ նորէն ժողովուի :

2 Չմեռուան մէկ գիշեր մը (1813) յանկարծ
Ֆրոնթէնըսլլոյի սպառառ գնաց Նափոլէոն, ուր
որ Պիոս Է սպառ բանա գրուածի սէս էր . ու ան
միջոցին հիւանդ էր : Նափոլէոն կէս մը քաղցրու-
թեամբ՝ կէս մըն ալ սպառնալեօք ստիպեց զզաւն
որ իր ժամանակաւոր իշխանութենէն հրաժարի .
և ան բռնի գաշնագրութիւնը մէկէն ՚ի մէկ բոլոր
կայսերութեանը մէջ հրատարակեց : Բայց սպառ
առողջանալուն սէս՝ ան գաշնագրութեան գէմ
բողբեց . Նափոլէոնին ալ յայտնի գրեց թէ ան
գրուածքը ամենին ոյժ չունի : Աս բանիս վրայ
Նափոլէոն աւելի բարկացաւ սպալին գէմ :

1 Եւրոպայի ո՞ր տէրութիւնները Նափոլէոնի
գաշնակցութենէն ետ կեցան : — Նափոլէոն
Օրինագիր ժողովէն ի՞նչ ուզեց :

2 Ֆրոնթէնըսլլոյի սպառառ գնաց ի՞նչ ըրաւ :

ԳԼՈՒԽ ԺԲ .

Պատմութիւնն Գաղաղիոյ՝ Մաւկի դասակարգութենէն ինչո՞ւն
 'Նախնական' Էլզպա Կաթին Երթաւ, (1813-1814) :
 'Նախնական' ու իր Բնակավայրը պատերազմի պատրաստ-
 Բնակները . — 'Նախնական' յաշմոսութիւնները . — Լիբ-
 արայի պատերազմը . — Գաղաղիոյ դժբախտութիւնները . — Գաղ-
 աղիոյ Գաղաղիոյ վրայ վաղերը . — Վելլինգտոն, Պիտ-
 րիեր ու Շլայքենպերի դժբախտութիւնները . — Գաղաղիոյ
 Կաթին Կաղաղութիւնն ընել . — Փարիզու պաշարումը . —
 Գաղաղիոյ դժբախտութիւնն ընել . — 'Նախնական' Էլզա-
 րայի Կաթին Կաթին Երթաւ . — Զօրօկն Բաթմանները . — Էլզա-
 րայի Կաթին Երթաւ :

Գաղաղիոյ որ եկաւ, նորէն պատերազմի պատ-
 րաստութեցաւ 'Նախնական' իրեք հարիւր հազար
 հոգի՝ մեծ մասը պատանի՝ նորէն ժողովուրդան
 դէպ 'ի Գերմանիա երթալու համար . Սպանիոյ
 զօրքն ալ նոյնչափ պիտի ըլլար և բոլոր կայսերու-
 թիւնը մեծ զինարան մը դարձեր էր : Բայց աս
 պատրաստութիւններէն շատ աւելի մեծ էր թըշ-
 նամի տէրութեանց ըրածը . իրեն դէմ միացեր էին
 իրեք մեծամեծ տէրութիւններ, Ռուսիա, Անգ-
 ղիա, Բրուսիա . Աւստրիա ալ միանալու հետ էր .

'Նախնական' և իր թշնամեացը պատրաստու-
 թիւններն ի՞նչ էին : — 'Նախնական' ի՞նչ
 յաղթութիւններ ըրաւ, ու անոնցմով ի՞նչ
 կը յուսար :

արդէն Ռուսաց մեծ բանակը և Բրուսիոյ դուշ-
դերը Գերմանիա մտեր էին : Նափողէոն , ինչպէս
որ իր սովորութիւնն էր , աճապարեց թշնամեա-
ցը դէմ վաղէլու , և փառաւոր յաղթութիւններ
ըրաւ Բրուսիոյ լիւցէն քաղաքին ու Գերմանական
Գաշնակցութեան Պաւլէն քաղաքին քով այսպիսի
յաղթութիւններով կը յուսար որ Աւստրիոյ հետ
ունեցած գաշնակցութիւնը նորէն հաստատէ .
բայց Ֆրանչիսկոս Բ կայսրը իր Մեթութեանիք իշ-
խանին խորհրդովը Գաղղիոյ դէմ միաբանեցաւ՝
Անգղիոյ , Ռուսաց , Շուեաի , Բրուսիոյ ու Գեր-
մանիոյ տէրութեանցը հետ :

1 Աս գաշնակից տէրութիւնները 1813ին բո-
լոր Գերմանիան ոտք հանեցին որ Գաղղիոյ բրա-
նակալութեանը դէմ իրենց ազգութիւնն ու ա-
զաաութիւնը պահէն : Ուստի որչափ որ դպրո-
ցական երկնամարդներ ու ծածուկ ընկերութիւն-
ներ կային Գերմանիոյ մէջ՝ ամենն ալ զէնք սափին ,
և Պիրենեան լեռներէն ինչուան Գանուր ու
Լըլպա դեակերը Գաղղիացւոյ դէմ պարտատուե-
ցան :

2 Նափողէոն թէպէտ և Աւստրիոյ իրմէ բաժ-
նուիլը տեսնելով զարմացաւ , բայց միտքը դրա-
ծէն ետ չկեցաւ : Ուստիւոյ զորավարը օգոստոսի
22ին յաղթեց Պեռնատտիին՝ որ Գաղղիոյ թըշ-

1 Գաշնակից տէրութիւններն ի՞նչ ըրին :

2 Նափողէոն միտքը փոխեց : — Տրեղտայի քով
մեռնողներուն մէջ որ Գաղղիացի զորավարը
կար :

նամի եղեր ու հարիւր հազար հոգւով Նափօղէոնին գէմ՝ ելէր էր : Նոյն ամսոյն 27ին Նափօղէոն ուրիշ յաղթութիւն մըն ալ ըրաւ Տրեզաայի քով, ուր թշնամիներէն երեսուն հազար հոգի մեռան : անոնց մէջ էր նաև Մորոյ զօրավարը՝ որ թշնամեաց կողմն անցեր էր, ու հայրենեացը գէմ՝ սպաւերազմելով վատորկած փառքին հետ կեանքն ալ կորսնցուց :

Սեպտեմբերի 8էն ինչուան հսկանքերի 16 ուրիշ այլ և այլ սպաւերազմներ ալ եղան, բայց ամենէն մեծը Վիփսիայինն էր, որ իրէք օր քէց : Նափօղէոն այնպէս սրատրաստուել ու զօրքը կարգաւորեր էր որ յաղթութեանը վրայ տարակոյս չունէր : բայց սպաւերազմին սկսած ասանը Սաբաոնիայի զօրքը յանկարծ թշնամեաց կողմն անցաւ ու թնդանօթները Գաղղիացւոց գէմ դարձուց : անով յուսահատեցան Գաղղիացիք ու յաղթուած ետ դարձան : Երբոր Նափօղէոն ու բանակին մէկ մասը Էլւսթեր գետէն անցան, ագէտ զօրավարի մը խորհրդով գետին վրայի կամուրջը փլուցին, որով գետէն անդին մնացած զօրքը բոլոր ջարդուեցաւ : Փոնեաթովքի լեհացի իշխանը՝ որ ան սպաւերազմներուն մէջ մեծամեծ քաջութիւններ ըրած էր՝ ինքզինքը գետը նետեց, բայց ջրին սասկուտութեանը չգիմանալով խղճուեցաւ :

1 Վիփսիայի սպաւերազմը քանի՞ օր քէց, ու ինչո՞ւ ձախող գնաց : — Փոնեաթովքի իշխանն ի՞նչպէս մեռաւ :

1 Ան բանակէն մնացած Գաղղիացիները ճամբան քանի մը անգամ թշնամեաց հեռ զարնուէլէն կողք Գաղղիոյ սահմանները հասան . դաշնակից տէրու թիւններն ալ անոնց ետէն ընկած՝ հեռ զհեռէ գրեթէ բոլոր Գերմանիան ու Հոլանտան ազատեցին : Իսպիոյ մէջ Եւգինէոս իշխանը քիչ զօրքով շատ անգամ յաղթեց Աւստրիացւոյ . բայց իրեն ամէն քաջութիւններն ալ անօգուտ եղան երբոր Միւրա թագաւորը մասնութեամբ թշնամեաց կողմն անցաւ . Գաղղիոյ ծերակոյսը հրաման հանեց որ նորէն իրէք հարիւր հազարի զօրաժողով մը ըլլայ . բայց Գաղղիոյ մէջ մարդ չէր մնացած , գեղերն ու արտերը սլարսուէր էին . ուստի խիստ քիչ մարդ կրցան ժողովել :

2 Ամէն ջանք ըրաւ Նափոլէոն որ Գաղղիացւոյ հայրենասիրութիւնը նորէն վառէ , բայց անօգուտ . վասն զի ինչուան զօրավարներն ալ ճանձրացեր էին սլատերազմելէն ու հանդիւ կ'ուզէին : Ծերակոյսը խօսք տուաւ Նափոլէոնին ազգին կողմանէ թէ « Պատրաստ ենք սլատերազմելու և հայրենեաց համար մեռնելու » մեր հարցը

1 Գաշնակից տէրութիւններն որ երկիրները ազատեցին : — Ինչո՞ւ համար Եւգինէոս իշխանին քաջութիւններն անօգուտ եղան : — Ծերակոյսն ի՞նչ հրաման հանեց :

2 Նափոլէոն ի՞նչ ջանաց ընէլ : — Ծերակոյսն ի՞նչ խօսք տուաւ Նափոլէոնին : — Օրինազիր ժողովը ջրուէրու ատեն ի՞նչ ըսաւ Նափոլէոն :

գերեզմաններուն և որդւոց օրոցքներուն մեջտեղը 33 : Բայց Օրինադիր Ժողովը սկսաւ Նափուէոնին հետ խստութեամբ վարուիլ, ան ատեն Նափուէոն յանդիմանեց զանոնք, ցրուեց ժողովը ու ըսաւ .
 “ Գնացե՛ք աներնիդ քաշուեցե՛ք ու մտածեցե՛ք թէ ի՞նչ օգուտ կ'ըլլայ խաղաղութենէն այնպիսի ատեն որ ամէն ատենէն աւելի սպաւերազմ հարկաւոր է 33 :

1 Յունուարի 2ին 1814ին մեկ միլիոն թշնամիք Գաղղիոյ ամէն կողմերէն հեղեղի պէս ներս վազեցին : Նափուէոն Փարիզու ազգային պահապանները ժողովեց, անոնց հաւատարմութեանը յանձնեց կայսրուհին և իր որդին Հռովմայ թագաւորը, ու ինքը քառսուներհինգ հազար զօրքով Մառն դէտին վրայ Շալոն քաղաքը գնաց՝ հինգ հարիւր հազար հոգւոյ դէմ : Անգղիացիք Լորա Ալլլենիկ-թոնին առաջնորդութեամբը Պիրենեան լեռներէն Գաղղիա մտան, և անոր դէմ Սուլ զօրավարը քիչ մը զօրք միայն ունեկր : Ալպեան լեռներէն Աւստրիացիք Փիէմոնթի երկիրը արշաւեցին ու Սաւոյիան ատնելու վրայ էին . անոնց դէմ Օժրոյ զօրավարը (որ Քասթիլիոնի դուքս ալ կ'ըսուի), պիտի պաշտպանէր Գաղղիոյ սահմանները . բայց իր հաւատարմութիւնն ալ շատ տարակուսական էր :

1 Երբոր թշնամիք սկսան Գաղղիան կոխել՝ Նափուէոն ի՞նչ ըրաւ : — Անգղիացւոց դէմ որ զօրավարն երկիրը պիտի պաշտպանէր : — Աւստրիացւոց դէմ ո՞վ :

Նախօրէն յունուարի վերջերը Բրուսիոյ Պլիւխէր զօրավարին գէմմէկ քանի յաղթութիւններն ըրաւ, բայց երրորդին էա քաշուեցաւ. ան ատեն գաշնակիցները խօսք դրին որ ինչուան Փարիզ քէն Նախօրէնը: Անպարտելի կայսրը այնչափ նեղութեան մէջ ալ քանի մը մեծամեծ յաղթութիւններ ըրաւ թշնամեաց դէմ, բայց անոնց բաղնութիւնը իր քաջութեանն ու հանճարոյն յաղթեց, և Պլիւխէր քանի մը օրուան մէջ Փարիզու մօտեցաւ: Նախօրէն իր սովորական յանգուգն քաջութեամբը ետէն ընկաւ ու փեարուարի 11ին յաղթեց անոր Մանսիւրայլ քաղաքին քովը, 17ին ալ Աւստրիոյ Շվարցենպերկ զօրավարին յաղթեց բոլորովին, և յաջորդ օրը Ախրթեմպերկի զօրաց ձեռքէն Մանթրոյ քաղաքը ետ առաւ: Աս դիւցազնական գործողութիւնները ատենելով գաշնակից տերութիւններն առաջարկեցին Նախօրէնին որ հաշտութիւն ըլլայ, բայց սա պայմանով որ Պաղլիսացիք 1792ին որչափ երկիր որ ունէին անսով գոհ ըլլան. բայց Նախօրէն յանձն չառաւ. չուզեց որ իր այնչափ յաղթութիւնները պարսպ ելլեն: Նորէն այլ և այլ պատերազմներ ու յաղթութիւններ ըրաւ. բայց իր զօրավարներն ալ Պաղլիոյ զանազան քաղաքներուն քով յաղթուեցան: Ան միջոցին ստալին հետ հաշտուեցաւ.

1. Նախօրէն ինչ յաղթութիւններ ըրաւ թշնամեաց վրայ, ու ինչո՞ւ յանձն չառաւ հաշտութիւնը:

կայսրը, ու Փոնթէնըպլոյէն ղենքը Իտալիա շամբեց :

1 Երբոր Նափոլէոն Գաղղիոյ արեւելեան կողմերը յաղթութիւններ կ'ընէր, Պլիւխերու Շվարցենպերկ Փարիզու վրայ գնացին. Նափոլէոն սկըսաւ շուտ շուտ գէտ 'ի Փարիզ երթալ որ թշնամեաց գէյն առնու, և կայսրուհին իր որդին առած՝ Փարիզէն ելաւ, Պրուս քաղաքը քաշուեցաւ : Ռուսաց և Պրուշի մեծ բանակները հասան պաշարեցին Փարիզը ամէն կողմէն, և մարտի 30ին առաւօտանց թմբուկը զարնուեցաւ որ բոլոր ազգային պահապաններն ու դպրոցաց աշակերտները ղէնք առնուն :

2 Յովսէփ Պոնափարթ թագաւորը — որ Փարիզը պաշտպանելու համար հոն մնացեր էր —, Մորթիէ ու Մառմոն զորավարներն ունէր ձեռքին տակը՝ իրենց բիւ մը զօրքերովը . իսկ ազգային պահապանները Մոնսէ զորավարին իշխանութեանը տակն էին : Եւ որովհետեւ Փարիզ ան ատենը պարկաւ չունէր, Գաղղիացիք շուտ մը քաղաքին չորս կողմը տախտակէ պատեր քաշեցին : Քաղաքացւոց յուսահատութեանը չափ չկար : Փարիզ որ օր մը առաջ բոլոր աշխարհիս թագաւորին կը կարծուէր, ան օրը անհամար գունդերէ պաշարուեցաւ :

1 Պլիւխերու Շվարցենպերկ ինչպէս Փարիզը պաշարեցին :

2 Փարիզ ինչ զինճակի մէջ էր : — Ո՞ր մասնեց քաղաքը թշնամեաց : — Նափոլէոն ո՞ր էր ան ատենը :

Կայսրը ապաստաններ էր որ ինչուան կայրը պաշտպա-
նեն Փարսիցը , փողոցները քարերով ու փայտե-
րով գոցեն և աները մէյմէկ բերդ դարձնեն :
Բայց տէրութեան պաշտօնէից անհոգութեամբը
քաղաքին մէջ վառօդ չէր մնացած . և թէպէտ
ազգային պահասարանները մեծ քաջութիւն սրաշտ-
պանեցին մէկ քանի կողմերը , բայց Մառմին
զօրավարը խօսք դրաւ թշնամեաց հետ որ քաղաքը
ձեռքերնին մտանէ , ան ատենն որ քաղաքացիք
դեռ կրնային գիմանալ : Գաշնադրութիւնը մար-
տի 31ին հաստատուեցաւ , ու Վափուէնն որ եր-
կու ժամէն պիտի հասնէր Փարսիզ ու անտարա-
կոյս պիտի ազատէր իր մայրաքաղաքը , եղածները
լսելուն պէս դէպ 'ի Գոնթէնրպուլը դարձաւ :

1 Ան օրը գաշնակից զօրքերը իրենց խաղախնե-
րովն ու թաթարներովը խուճի խուճի Փարսիզ
մտան ու բոլոր հրապարակական տեղուանքն ու
ճեմելիքները բռնեցին : Քաղաքացւոց մեծ մասը
տրտուժախուր կը մտածէին թէ ան է եղեր քսան-
ուերկու տարուան սրտերազմներուն ու չորս
միլիոն Գաղղիացւոց ջարդուելուն պտուղը . բայց
շատ թագաւորականներ ալ յուսալով որ Պուր-
պոնեանց թագաւորութիւնը նորէն պիտի հաս-
տատուի , սկսան բերախանալ ու շասն ալ իրենց
գլխարկներուն վրայ շուշանաձև ճերմակ նշանը
դրած՝ քաղաքին մէջ ցրուած կը կանչէին , Կէոթէ
արտայ : Իսկ ուրիշները օտար ազգաց յաղթութեա-

1 Գաշնակցաց զօրքը ներս մտնելու ատեն՝ Փա-
րսիզացիք ինչ ըրին :

նը վրայ արամած մեծ վախի մէջ էին որ չըլլայ թէ յաղթականները ուզեն Գաղղիան կտոր կտոր բաժնել . ուստի անոր համար ալ աւելի յանձն առին Պուրպոններուն դառնալը , որպէս զի ազգային անկախութիւնը չվերցուի : Պուրպոնեանց կողմը բռնողներուն մէկ խումբը Անատոլի հրապարակը գնաց որ Նափոլէոնի արձանը կործանէ , բայց չկրցաւ , ուրիշ խումբեր ալ Աղէքսանդր կայսեր ու Գուլիէլմոս թագաւորին անցնելու ճամբուն վրայ շարուած կը կանչէին ուրախութեամբ . կեօթէն դաշնախօս , կեօթէն աշտարարս մեր : Շատ ազնուական կանայք ու երիկ մարդիկ իրենց ուրախութենէն կուլային , ու ան երկու օտար թագաւորներուն ոտքը կ'իյնային : Բայց բոլոր աս բաներս քիչ ատենէն մնացան ու իրենց երկրին թշուառութիւնը հասկըցան :

1 Ան միջոցին դաշնակից թագաւորները յայտարարութիւն մը ըրին , որով Նափոլէոնի իշխանութիւնը չէին ճանչնար , և միանգամայն Ծերակոյտը հրաւիրեցին որ առժամանակեայ կառավարութիւն մը հաստատէ . Ծերակոյտն ալ ան կառավարութիւնը հաստատելէն ետքը , որուն գլուխը Թալերան իշխանն էր , հրատարակեց որ Նափոլէոն ու իր ցեղը թագաւորութենէն ընկած է , և զօրքն ու ժողովուրդը իրենց երգմունքէն արձրկեց : Աս բաներս երբոր Նափոլէոնի խմացուցին

1 Գաշնակից թագաւորներն ի՞նչ յայտարարութիւն ըրին : — Ծերակոյտն ի՞նչ բան հրատարակեց : — Նափոլէոն ի՞նչ ըրաւ :

Ֆոննթէնըսլլայ եղած Ֆամանակը, սլատափան տուաւ թէ ինքը իրեն համար կայսերութենէն կը հրաժարի, բաւական է որ իր կլինն ու որդին տեղը անցնին. բայց աւժամանակեայ կառավարութիւնն ու Ծերակոյտը թագաւոր անուաներ էին Ղուգովիկոս ու թեաքաներորդը՝ որ Ղուգովիկոս վեշաասաներորդին եղբայրն էր: Նափուէոն տեսնելով որ ամէնքը ղինքը թողուցին, Ֆոննթէնըսլլայի սլալափին մէջ ստորագրեց ան հրաժարական թուղթը՝ որ գաշնակից տերութիւններն առաջարկէր էին ապրիլի 11ին 1814ին, և իր այնպիսի ընդարձակ ինքնակալութեանը տեղ Միջերկրական ծովուն մէջ Նշուր կղզին միայն արուեցաւ իրեն գաշնակից թագաւորաց երաշխաւորութեամբը, և որոշուեցաւ որ ապրիլի 20ին ճամբայ ելլէ:

1 Նափուէոնին իր զօրավարներէն ու հաւատարիմ ղինուորներէն բաժնուկը խիստ սրառչարժ տեսարան մը եղաւ: Բոլոր կայսերական թիկնաւորացիները Ֆոննթէնըսլլայի սլալափին բակին մէջ շարուեցան, երբոր Նափուէոն երեցաւ ու մեծ ասեղուխէն ծանր ծանր վար կ'իջնար, ամէնքը սկսան լալ ողբալ ու ավաստալ, ամէնքն ալ նոյն զգածմամբ իրենց այնպիսի թագաւորին խեղճութեանը վրայ կը ցաւէին, և կարծես թէ ան ծեր ու արդիւնաւոր մարդիկը իրենց հօրմէն կը բաժնուէին: «Ո՛վ » իմ հին թիկնաւորացիներս, ըսաւ անոնց Նափուէոն, մնա՛ք բարով. քսան տարի է որ մեկ » տեղ կեցեր ե՛նք ու միշտ դո՛հ եղեր եմ՝ ձեզմէ:

1 Իր զօրքէն ինչպէս բաժնուեցաւ Նափուէոն:

22 միշտ զձեզ վառաց ճամբուն մեջ գտեր եմ: Բո-
 22 լոր Եւրոպա ինձի գէմ զինեցաւ, և անսնք մտա-
 22 նեցին զիս՝ որոնց վրայ ամենեկին չէի կասկա-
 22 ծեր . . . Մի ցաւիք իմ վրաս: Ես գիր սկսի
 22 անցընեմ ան մեծամեծ բաներն որ մեկտեղ ը-
 22 ըինք: Ո՛վ զօրահանք, ևս զձեզ ամէնքնիկ ալ համ-
 22 բուրել չեմ կրնար, ձեր գլխաւորը համբու-
 22 րեմ: Եկուր Փր[ժ]ի զօրավար որ գրկեմ զքեզ: Ար-
 22 ծիւն ալ բերէք որ սպազնեմ: Ա՛հ սիրելի ար-
 22 ծիւ, երանի՛ թէ աս համբոյրը մեզմէ ետքը գա-
 22 լու ժողովրդոց մեջ ալ չմտցուի 22 . . . : Անկէց
 ետքը ինքզինքը քաջալերեց, նշան տուաւ որ ճամ-
 բայ ելլէ իր սքսորանաց տեղը եր[ժ]ալու: Ինչուան
 լիոն ամէն տեղ ուրիշներէն կարեկցու[ժ]իւն տե-
 սաւ. բայց փռովանս գաւառին մեջէն անցնելու
 ատենը քանի մը անգամ ժողովուրդը զինքը սկսի
 սպաններ, ու մեծամեծ զգուշու[ժ]իւններով հա-
 զիւ ազատեցաւ:

ԳԼՈՒԽ ԺԳ .

Պատմութիւնն Գաղղիոյ՝ Նախնականի Իշխան իշխան Էրեւան-
 ւէն ինչո՞ւն Սուրբ Տեղիէն իշխան արարողն ու-
 ճահը (1814-1821) :

Գաղղիոյ նուաճութիւնը . — Արեւոսայի իմաստ . — Լո-
 տովիոս ԺԼ Փարսիս ի ճիւղ . — Տոսած սահմանադրու-
 ւիւնը . — Ժողովուրդը ի ճիւղ իր ճիւղ արարիւ . — Նախ-
 նական Գաղղիոս ի ճիւղ . — Նե սպարապետը Նախնականին
 ի ճիւղ իմաստ . — Լոտովիոս ԺԼ Փարսիս ի ճիւղ . —
 Նախնականի հարիւր օրոսան իսպախութիւնը . — Ի-
 ճիւղն արեւ ի ճիւղ արարողութիւնը . — Նախնականի արեւած
 արարողութիւնը . — Փիւնօրիսայի յաղթութիւնը . —
 Վախիկէրոսի արարիւրստը , — Նախնական ի ճիւղսահմանն
 ի ճիւղ հարիւր . — Դաւանիստը արարիւ Փարսիս ի ճիւղ . —
 Լոտովիոս ԺԼ Փարսիս ի ճիւղ արարող . — Նախնականի
 Սուրբ Տեղիէն իշխան արարողն ու ճահը :

1 Փարսիս և Գաղղիոյ հիւսիսային կողմերն օ-
 տարազգի զորաց հպատակելէն ետքը , մեկտալ դա-
 լաններն ալ ետևէ ետև անձնատուր եղան կամ
 առնուեցան : Ապրիլի 10ին Սուլ զորավարը քիչ
 զորքով Անգղիացոց դէմ Թուրուզի հուշակաւոր
 բայց անօգուտ պատերազմն բրաւ . Լիոն քաղաքը
 Օժրոյ զորավարին մասնուլթեամբը առնուեցաւ ,
 և բոլոր Իտալիան Աւստրիացոց ձեռքն անցաւ :

1 Բոլոր Գաղղիա ի՞նչպէս նուաճեցաւ :

1 Արթուայի կոմսը (որ Լուդովիկոս ութեասն-
 ներորդին եղբայրն էր) ապրիլի 12ին մտաւ Փա-
 րիզ իբրև փոխարքայ՝ Թագաւորին գալուն սպա-
 սելով, որ դեռ Անգղիա էր, և ամէն տեղ եռա-
 գոյն գրօշակին տեղը ճերմակ գրօշը անկուեցաւ :
 Նոյն ամսուն 23ին Թագաւորին եղբայրը դաշնա-
 կից տերութեանց հետ խօսք գրաւ, որ Գաղղիոյ
 աստուիրէք սմուր բերդերը, աստուերկու հազար
 թնդանօթ, երեսունըմէկ պղտիկ ու աստուերկու
 մեծ նաւ անոնց արուի, Լուդովիկոս ԺԸ ապրիլի
 24ին Քալէ անցաւ, ու քանի մը օրէն հանդիսով
 Փարիզ մտաւ, հետն ալ Անկուլէմի դքսուհին՝ որ
 Լուդովիկոս վեշտասաներորդին աղջիկն էր, Պէր-
 րիէ դուքսը՝ որ էր Արթուայի կոմսին որդին, ու
 Քոնսէ իշխանները, ամէն տեղ անթիւ Ժողովուրդ-
 դիզուած՝ մեծ ուրախութեամբ ընդունեցան ի-
 րենց Քափեթեան Թագաւորաց ցեղը, որ նորէն
 Գաղղիոյ աթոռը կ'անցնէր : Խռովութեան կող-
 մը եղողներն ալ Լուդովիկոսի ըրած խոսամանը
 վստահացած որով սահմանադրական կառավա-
 րութիւնն սխալ տար իր Ժողովրդոցը, միայն աս
 բանիս վրայ աժգոհ էին որ Լուդովիկոս իր հրօ-
 վարտակներուն Թուակամը Թագաւորութեանը
 իննեռասաներորդ աարիէն կը սկսէր փոխանակ
 առջինէն սկսելու, որով Հասարակապետութեան
 ու Կայսերութեան ժամանակները չէր համրէր :

1 Լուդովիկոս ԺԸ ինչպէս Փարիզ մտաւ ու հետն
 ո՞վ կար : — Ժողովրդեան ինչ խոստացաւ
 սալ :

։ Սահմանադրութիւնը իրաւընէ տուաւ Գաղղիացւոց՝ Անգղիացւոց՝ սահմանադրութեանը նման՝ քանի մը հարկաւոր փոփոխութիւններով։ Գործադրական իշխանութիւնը թագաւորին պահուած էր։ Իսկ օրէնսդրականը բաժնուած էր թագաւորին խորհրդարանին ու երեսփոխանաց խորհրդարանին։ Սեպուհներու (փէր) իշխանութիւնը ան ատեն ժառանգական էր, իսկ երեսփոխան (տէփիւթէ) ընտրողները այնպիսի քաղաքացիք պիտի ըլլային որ տարին գէթ իրեք հարիւր Ֆրանք տուրք հուսացին, երեսփոխաններն ալ երեսուն տարեկան պիտի ըլլային ու տարին հազար Ֆրանք տուրք վճարող։ Պատերազմ ու խաղաղութիւն հրատարակողը թագաւորն էր, և իր անձը անգրգէշի ու սրբազան, իսկ պատասխանատուութիւնը իր իշխաններուն կամ խորհրդականներուն վրայ էր։ Ամէն Գաղղիացիք օրինաց առջև հաւատարէին և ամէնքն ալ հասարակաց պաշտօններու կրնային համնել, ամէն հաւաքը հրաման կար պաշտելու, բայց տէրութեան հաւաքը կաթաղիկէ ուղղափառ կրօնը ճանչցուած էր։ Ազնուականներն իրենց պատուանունները պահեցին ու Նափօլէոնի դրած օրէնքները ընդհանրապէս հաստատ մնացին, սոցադրութեան ազատութիւնն ալ հրատարակուեցաւ՝ քանի մը ղզուշութիւններով։ Նափօլէոնին ցրուած Օրինագիր ժո

։ Սահմանադրութեան գլխաւոր կտորներն որոնք էին։

զովք Արեւփոխանաց ժողով եղաւ : Տին Ծերա-
կաւախն մեծ մասն ալ Սեպուհներուն խորհրդա-
րանք մտաւ :

31 Բայց երբոր Լուգովիկոս շատ պաշածններու
ան մարդիկը հասուց որ խաւովութեան ատեն ի-
րեն հեա վախեր ու ետքն ալ Գաղղիոյ հասարա-
կանութեան թեմապետերազմեր էին, թէ զօրքը
և թէ ժողովրդեան մեջէն շատ մարդիկ պաղեցան
իրմէ : Անկուլեմի դքսուհին ալ աւելի բարկը կ'ը-
նէր անոնց որ իր հօրը համար պատերազմեր էին՝
քան թէ անոնց որ անոր խեղճութեանը կամ
պաաճառ եղեր էին, և կամ քաշածներուն վրայ
ուրախացեր էին : Սակայն ժողովուրդը առ բնա-
կան պարագեքը չհասկնալէն զատ, թագաւորին
ու անոր բնասնեացը մէյմէկ յանցանք կը սեպէր
առ բաներս, որով Տին ատելութիւնները նորէն
սկսան բորբոքիլ, և տերութեան ատած ազատու-
թիւնները բանի տեղ չսեպուեցան : Թագաւորը
սրբոյն Լուգովիկոսի սապիտութիւնը նորոգեց,
և թշնամիները սկսան ըսել թէ ասով Ագեոն պա-
տուոյ ըսած ասպետութիւնը կ'ուզէ վերցընել, և
որչափ բարկը որ կ'ընէր ուրիշներուն՝ կաշառքի
տեղ կը սեպուէր :

2 Նախուէն իր աքսորանացը տեղէն կը գիտեր
ժողովրդեան կարծիքները, իր բաղմաթիւ սուր-
հանդակներն ալ ամէն տեսակ լուրեր կը ասնէին

1 Ինչո՞ւ համար ժողովուրդը սկսաւ Լուգովիկո-
սին պաղիլ :

2 Նախուէն իր աքսորանացը մեջ ինչ կ'ընէր :

իրեն՝ տէրութեան բռնած ճամբուն և զօրաց
 ու ժողովրդեան տժգոհութիւններուն վրայ: Ան-
 կէց զսա Ղուգովիկոսի իշխաններէն շատն ալ ի-
 րենց խօսքերովն ու գործքերովը կը ցուցնէին թէ
 աւելի ազէկ էր Նափոլէոնի կայսերութիւնը և
 անոր ատենի փառքը, քան թէ Ղուգովիկոսի խա-
 զազութիւնն ու խեղճութիւնը: Աս բաներս տես-
 նելով Նափոլէոն մտքը գրաւ այնպիսի յանգիւնու-
 թիւն մը ընել որուն նմանը չէր եղած:

1 Փետրուարի 26ին 1815ին երբոր Ելլպա կըղ-
 զւոյն Փորթոյ Ֆերայոյ քաղաքին մէջ իրիկուան
 սլար մը սխալ ընէր ՚ի սլաախւ անգղիացի հիւսա-
 առսին որ Ելլպա կղզին գրուէր էր իր շարժմունք-
 ները գիտելու համար, Նափոլէոն ծածուկ ելաւ
 սրալատէն ու նաւահանգիստն իջաւ, հոն սլաառասա
 կէցած նաւերուն մէջ իր հին թիկնապահներէն
 վեց հարիւր հոգի գրաւ, անոնց հետ ալ քանի մը
 խաալացիներ ու լեհացիներ, և Պէրթրանն ու
 Քամպրոն զօրավարները. ինքն ալ մտաւ նաւե-
 րէն մէկը ու յաջողութեամբ Գաղղիոյ Քան ը-
 սած սլաախի քաղաքը ելլալէն ետև, լեւներուն մէ-
 ջէն սկսաւ դէպ ՚ի Փարիզ երթալ: Քանի որ առաջ
 դնաց, տեղացիք կամաց կամաց սկսան իր քովը
 ժողովուրդ. ինքն ալ զանազան յայտարարութիւն-
 ներ տակեց ու հրատարակեց, և անոնցմէ մէկուն
 մէջ կ'ըսէր թէ Վայսեբախն արժիւժ մէ՛: զանգախա-
 նէն մէկաւ Ռուսիա ինչո՞տն Փարիզո՞ յայր է՛իւղեցոյն

1 Ի՞նչպէս Գաղղիա անցաւ: — Վըրնոսպէն երած
 զօրքն ի՞նչպէս իր կողմը ձգեց:

աշխարհներու ծայրը դիպի հասնի : Մարտի 7ին Կրընոսկլ քաղաքէն մեկ գունդ մը զօրք իրեն գէմ ելաւ : Քամուրոն զօրավարը մօտեցաւ որ խօսի անոնց հետ , բայց չուզէցին մտիկ ընել . Նախուէոն տեսնելով որ ճար չկայ , ինքը անձամբ մօտեցաւ զինուորներուն ու կուրծքը ցուցնելով ըսաւ . « Զարկէք , սպաննեցէք ձեր կայսրը թէ որ կը համարձակիք » : Աս լսելով զինուորներուն վրայ գող մը եկաւ , աչուրնին արցունքով լեցուեցաւ , ու հրացանին վար գրած կանչեցին ուրախու թեամբ . կեցօ՛ք իայսբ , կեցօ՛ք Նախուէոն . եսքը իրենց ճերմակ նշանը որքի տակ կոխկրուացին ու եռագոյն նշանները առին :

1 Նախուէոն տեսնելով որ իր զօրքը եռասպտակ աւելցաւ , շուա շուա առաջ քալեց , Կրընոսկլը հասաւ , ու առանց ընդգիսնու թեան ներս մտաւ . հոն մեծամեծներն ու եպիսկոպոսը գիմացն ելլելով կայսր անուանեցին զինքը , և թագաւորութիւնը նորէն սկսան : Անկէց վեց հազարի չափ զինուորով Վիոնի վրայ գնաց , ու մարտի 8ին հոն մտաւ , ան միջոցին որ Արթուայի կոմսը և Օուէանի գուքսը իրենց զինուորներէն մասնուած ու քաղաքին զինուորներն ալ Նախուէոնի գէմ հանել չկարենալով քաղաքէն գուրս կ'ելլէին : Մայն մեկ թիկնապահ մը մնացեր էր , որ

1 Կրընոսկլ ինչպէս մտաւ : — Արթուայի կոմսին թիկնապահը ինչո՞ւ համար վարձատրեց :

Արթուայն կոմսէն չբաժնուելով՝ անոր հեազնացեր էր, լսեց Նափուէոնն ու անոր հաւատարմութեանը փոխարէն ասպետութեան խաչը խըրկեց :

Վարիզու մէջ Նափուէոնի փախուսար երբոր տարածուեցաւ, աէրութիւնը խմացաւ թէ ինչ մեծ վտանգի մէջ է, ու Նէ սպարապետին յանձնեց որ երթայ մեծ բանակով մը Նափուէոնի գէմն առնու : Նէ ան պաշտօնը յանձն առաւ ու խօք տուաւ թագաւորին որ Պոնափարթը երկէէ վանքի մէջ Դրած Բերէ իրէն . բայց անոր մօտենալուն սէս մէկէն միաքը եկան իր հին տիրօջը ըրած երախտիքն ու թագաւորաւայել կատարելութիւնները, և բոլոր զօրքովը անոր կողմն անցաւ : Ալ անկէց ետքը Նափուէոնի յաղթանակները նորէն սկսան, ամէն քաղաք ու բախութեամբ կ'ընդունէր զինքն, զօրքն ալ երթալով կ'աւելնար : Լուդովիկոս ԺՂ երկու խորհրդարաններն ալ ժողովեց, նորէն երդուընցաւ որ սահմանագրութիւնը հաւատարմութեամբ պահէ և իր աթոռ աղքային պահապանաց պաշտպանութեան տակը ձգեց, բայց անօգուտ . սէտք եղաւ որ մարտի 19ին զիշերը ձգէ փախչի իր եղբօրը հեա Վիլ քաղաքը, անկէց ալ Վանա : Երկրորդ օրը Փարիզ մեծ շինութեան մէջ էր . չէր գիտեր ժողովուրդը թէ

Նէ զօրավարն ինչպէս Նափուէոնին կողմն անցաւ : — Նափուէոն ինչպէս Փարիզ մտաւ : — Աս երկրորդ կայսերութիւնը քանի՞ օր միայն սկսի տէր :

նր թագաւորին կողմը բռնէ : մէյմըն ալ իրիկունը զրահաւոր զօրաց գունդեր սկսան մտողոյներուն մէջէն վազելով անցնիլ ու կիցցէ՝ իայտ կանչել . և Նափուէոն քաղաքը մտեր էր : Բոլոր ժողովուրդը աներէն գուրս թափած աէպ ՚ի Թիւրքլըրի սկսան վազել . ու երբոր վերջապէս կայսրը երեցաւ՝ ան թիւ ջահերուն լուսովը, վազեցին զինքը ձիուն վրայէն առին ու Թիւրքլըրի սալատը մտուցին, ու սկից նորէն սկսաւ Գաղղիոյ օրէնքներ որոտալ : Հարիւր օր միայն սկիտի բշեր աս կայսերութիւնը :

1 Գաղղիոյ հարաւային կողմերը Նափուէոնի չհնազանդեցան . Պորտոյ քաղաքին մէջ Անկուէլէ մի դքսուհին աղքային պահապաններէն ու միջ նարեբղին զօրքէն հաւատարմութեան երգումն ուզեց : Երբոր տեսաւ որ միջնարեբղին զօրքը լուութեամբ միայն ստատասխան տուին, պէտք է զաւ որ նորէն Գաղղիայէն ելլէ : Անտէացւոյ գլխաւորներն ալ ուզեցին վերստին իրենց երկիրը սաք հանել . բայց Լամարը զօրավարը զանոնք նուաճեց :

2 Ան միջոցին Եւրոպայի թագաւորները Աննա ժողովուած յայտարարութիւն մը րրին որ անկէց ետքը Նափուէոնին հեա դաշնագրութիւն չընեն, ու Անգլիա Աւստրիա և Բրուսիա ստատեաղմի պատրաստուեցան : Անգլիացւոյ զօրավարն էր

1 Անկուէլէ մի դքսուհին ինչ րրաւ : — Անտէացւոյն ինչ ուղեցին նորէն ընել :

2 Եւրոպայի թագաւորներն ինչ րրին : — Իրենց զօրավարներն որոնք էին :

Վէլլինկիթոն, Աւստրիոյ՝ Շվարցենպէրկ, և Բրուսիոյ Պլլեխէր :

1 Նափուէոն թէսկէտ անոնց սպառնալիքը արհամարհեց, բայց տեսնելով որ ոչ թնդանօթ մնացեր է Գաղղիոյ մէջ և ոչ հրացան, ամէն տեղ զէնքի դործարաններ բանալ տուաւ, աղգովին զօրաժողով ըրաւ, ու խռովարարաց կողմը շահելու մտքով նոր Սահմանագրութիւն մը հրատարակեց՝ 1814ին սահմանագրութեանը նման : Սեպհաց ու երեսփոխանաց Խորհրդարանները ժողովեց Փարիզ, ու Գաղղիոյ ամէն դաւառներէն մարդիկ հրաւիրեց որ դան հանգիստով իր դրած Սահմանագրութիւնն ընդունին : Ան հանգէսը Բանալ Տայիսի ըսուեցաւ : Արիսեան դաշտին մէջ սեղան մը կանգնեցին ու սլատարագ մատուցին, և սրբութիւնը բարձրացրնէլու ատեն բոլոր թնդանօթները նետուեցան, թմբուկները զարնուեցան ու անթիւ ժողովուրդ, զօրքն քւ կայսրը ծուռնկի վրայ եկած երկրագագութիւն ըրին : Զքէշ Ապուսաթ գովաբանէ՞ք երգը երգելէն ետև, կայսրը բարձր տեղ մը ելաւ ու զօրաւոր ճարտասանութեամբ ճառ մը խօսեցաւ, արծուոյ նշաններ բաժնեց զօրաց ու այն անբաւ ժողովոյն երգումը ընդունեցաւ :

2 Բանի մը օրէն ետքը մեծ բանակով դէս ՚ի

1 Նափուէոն ինչ ըրաւ : — Բանալ Տայիսի ըսուած հանգէտն ինչպէս կատարուեցաւ :

2 Ֆլէօրիսի սլատերազմին ո՞վ յաղթեց : — Վաթիերլոյի սլատերազմն ինչպէս եղաւ :

Հիւսիս գնաց, և յունիսի ԱՅին Պելճիոյ Ֆլէօրիւս
աւանին քովի դաշտին մէջ փառաւոր յաղթու-
թիւն մը ըրաւ Պրուշներուն դէմ, ու քսան հա-
զար մարդ ջարդեց: Երկու օր ետքը Պելճիոյ Աշ-
թերլոյ կամ Մոն-Սէն-Ճան գեղին քովը Գաղ-
ղիացիք Անգղիոյ, Բրուսիոյ և Հոլանտայի զօրացը
դէմ մեծ պատերազմ մը ունեցան, ու երկու կող-
մէն ալ խիստ շատ մարդ ջարդուեցաւ: Բայց վեր-
ջապէս Գաղղիացւոց ձիաւորները յաղթելու վրայ
էին, մէյնըն ալ տեսան որ հեռուանց նոր զօրք ե-
րեցաւ: Նափուէոն Արուշի զօրավարին ձեռքը բազ-
մաթիւ վերջապահ գունդ մը թողած ըլլալով՝
կարծեց թէ նոյն գունդն է որ ան նեղ ասեւր ի-
րեն օգնութեան կը հասնի. բայց քիչ ատենէն ի-
մոցաւ որ ան չէ, հասլա Պլիսխեր զօրավարը բրու-
սիացի զօրքով իր բանակին վրայ կուգայ՝ քովէն
զարնելու համար: Ան շփոթութեամբ ամէն բան
փոխուեցաւ, ու Գաղղիացիք կարծելով թէ մատ-
նուեր են՝ փախչող փախչողի եղան: Նափուէոն իր
հին թիկնասլահներուն մէջ կեցած, ձեռքը թու-
րին տարաւ որ թշնամեաց բազմութեան մէջ նե-
տուի ու մեռնի. բայց քովինները թող չտուին:
Հերոնիմոս թագաւորն ալ իր եղբորը պէս կան-
չեց թէ « Պոնափարթ անուն ունեցողը այսօր
պէտք է մեռնի »: Ախրաւորուեցաւ պատերազմի
մէջ, ու ինքն ալ ետ քաշուեցաւ: Քամարոն զօրա-
վարին գունդը անձնատուր ըլլալ չուզելով՝ քա-
ռակուսի շարուեցաւ, ու թշնամեաց թնդանօթ-
ներուն գիմացը կեցած գրեթէ բոլորովին ջար-
դուեցաւ:

1 Վէլլինկթոնն և Պլեխեր տեսնելով որ իրենց բանակն ալ շատ սկարացեր է, Գաղղիացոց Ետեէն ջնկան. իսկ Նափուէոնն Փարիզ գարձաւ որ նորէն խնդրէ խորհրդարաններէն պէտք եղած վերջի օգնութիւնը. բայց Վաթէրլոյի սպաերազմը՝ ամենուն սիրաը պաղեցուցեր էր Նափուէոնէն: Ան ատեն Ղաֆայէթ զօրավարն որ քսանուիրեք տարիէ ՚ի վեր մէկդի քաշուեր էր, կարծեց թէ ատենը հասեր է Հասարակապետութիւնը նորէն հաստատելու. Երեսփոխանաց խորհրդարանը գնաց ու յորդորեց զանոնք որ 1789ին կարգադրութիւնները նորէն ձեռք առնուն: Ժողովը միաբան բողոքեց թէ պէտք է Նափուէոնն հրաժարի. անիկայ ալ իշխանութիւնն ու պատուանունը իր գեուահասակ որդւոյն թողուց՝ որ ըսուեցաւ Նափուէոն Բ:

2 Երեսփոխաններուն Ժողովը գործով հակառակը կատարեց ան իրատին որ Նափուէոնն սպաերազմի գնացած օրը տուեր էր անոր. « Չըլլայ թէ, ըսեր էր, վերջի կայսերաց ատենի Յունաց պէս ընէք, որ Կոստանդնուպօլսոյ դռները թըշ-

1 Նափուէոնն կրցաւ օգնութիւն գտնել թշնամեացը դէմ: — Ղաֆայէթ ինչ ըրաւ: — Նափուէոնն որուն ձգեց իր իշխանութիւնը:

2 Նափուէոնն ինչ իրատ տուեր էր Երեսփոխանաց: Անոնք ինչ տղայական բանի վրայ վիճակ կը ձգէին երբոր թշնամիք Փարիզ մտան: — Երբոր Լուդովիկոս Ժ.Ը Կանակն գարձաւ ինչ որոշմունքներ եղան:

նամբներէն ծեծուելու ասեն՝ իրենք ներսը բարակ խնդիրներու վրայ կը կռուըտէին 33: Այսին զի պատերազմը առաջ ասնելու տեղ, սկսան նոր սահմանադրութիւն մը շարագրել. և ան միջոցին որ իրենք աղայտանութեամբ վիճակ կը ձգէին աս խնդրոյս վրայ թէ արդեօք Երեսփոխանաց բանուած օձիքը քանի մաս լայնք պիտի ունենայ, Անդրկասպոց և Բրուսիասոց զօրքերը Փարիզու արուարձաններէն ներս մտան: Ան ասեն առժամանակեայ կառավարութիւնն ալ դադրեցաւ, Նափօղէոնի կողմը եղողները ծակէ ծակ մտան, զօրքն ալ անձնատուր եղաւ թշնամեաց: Լուգովիկոս Ժ.Ը Կանտէն դարձաւ, յաղթանակաւ Փարիզ մտաւ, և նորէն դաշնագրութիւն ըրաւ թշնամեաց հետ. անով Գաղղիացիք Սաւոյայի դաւառն և ուրիշ քանի մը տեղուանք կորսնցուցին, և որոշուեցաւ որ օտար զօրքերը շատ սարիւնէր Գաղղիոյ մէջ կենան, ու Գաղղիացիք պատերազմի ծախքին համար ութը հարիւր միլիոնի չափ փրանք վճարեն*: Լուվրի պալատին մէջ ալ որչափ որ դրսի երկիրներէն պատակերներ ու արձաններ բերուած էին՝ բոլոր եւ խրկուեցան: Օր մը Պիոս է Լուվրի պալատը պարտելու ասեն,

* Նափօղէոնի ըրած պատերազմներուն համար 1802-1815, եղած ծախք իւր հանէն պատը երկուքուն քարէն քի: — Անգլիան ալ երկու պատերազմներուն այսինքն Սիւացեալ Նահանգաց ու Նափօղէոնի հետ ըրած պատերազմներուն մէջ 1773-1802 և 1803-1815, քառասուն երկուքուն ու հինգ հարիւր միլիոն քարէն քի ծախք էր:

էրբոր թանգարանին տեսուչը Տընոն ըսէր էր իրեն որ բոլոր աս հրաշակերտ գործքերը Իտալիայէն բերուած են, պատասխան տուեր էր պապը . « Յաղթութիւնը բերեր էր զանոնք Իտալիա, յաղթութիւնը հիմա ալ հոս բերաւ . ո՞վ գիտէ թէ նոյն յաղթութիւնը գեռ ո՞ւր պիտի տանի » : — Ասանկով Գաղղիան նորէն հաշտուեցաւ Եւրոպայի հետ :

Նափուէոն յուլիսի Յին Գաղղոյ Ռոշֆոր նուահանգիստը հասեր էր . հոն ինքնակամ՝ Բեքլերովոն ըսուած անգղիացի նաւը մտաւ, ու Անգղոյ տերութենէն հիւրընկալութիւն խնդրեց . բայց Անգղիացիք չհաւանեցան . միայն կեանքը շնորհեցին Նափուէոնին ու զինքը հասարակածէն անդին Ովկիանոսի մէջ Սուրբ Հեղինէ ըսուած ապառաժ կղզին տարին : Հոն վեց տարի դէրիկ պէս աքսորուած՝ շատ նեղութիւններ քաշելէն ու Անգղիացոց կողմանէ զանազան նախատինքներ ընդունելէն ետքը, մայիսի ճին 1821ին իր զարմանալի կեանքը կնքեց յիսուն ուերկու տարեկան : Մահունէն քիչ մը առեն առաջ ուղղափառ հաւատոյ խորհուրդները ընդունեցաւ ու թողութիւն ինգրեց Աստուծմէ որ զինքը աշխարհքս խրկեր էր՝ իբր Եւրոպայի

Նափուէոն ի՞նչ ըրաւ : — Ո՞ւր քշեցին զինքը Անգղիացիք ու ի՞նչպէս մեռաւ :

Նոյն իսկ Նափուէոն ալ աս բանս բերնով խոսցով անած է . Աւագեան ըսուէրէն անցնելու ապէն իր զօրավարներէն

պատիժ և միանգամայն ընդունայն փառաց տխուր օրինակ :

Նախորէն իր հզոր ու անդիւա հանձարովը, իր բարակամտութեամբն ու զինուորական արուեստինն հմտութեամբը այնչափ վեր է իրեն նման աշխարհակալներէն՝ որ անոնց մէկն ալ իր հետը չկրնար բազդատուիլ . և մահուընէն ինչուան հիմա անցած ժամանակն ալ կը ցուցնէ թէ աս կարգէ դուրս մարդը ան առասպելէալ հսկաներուն կը նմանի , որ կարծես թէ որչափ հեռանան՝ այնչափ աւելի մեծ կ'երևնան : Բոլոր Եւրոպայի ժողովուրդները իր անչափ փառասիրութեանը սպատուանդան ու աստիճան բրաւ . և սակայն զարմանալին ան է , որ ամենքն ալ զինքը սիրելցին ու դեռ կը սիրեն : Նր անունը միշտ այնպիսի փառաւոր լուսով մը սպտած է որ վրայի արասներն ու բծերն ալ աչքի չեն երևնար , այնչափ որ ոմանք ուղեցին նաև իրեն անարդարանալի բռնութիւնները , անիրաւ աշխարհակալութիւններն ու ինքնակամ տիրապետութիւնները , և մանաւանդ այն-

Նախորէն ընդհանուր նկարագիրն ինչ է :

Մէկուն ըստ . « Ինչ, իբր թէ » թէ Գաղտնիոյ իայոց ու Իսրայէլիոյ խաղաղութեան ընկալը մեծ բան է : Ինչպէնքս լինի խաբէր էս . Նախախնամանութեան գործիք մըն է՛մ , որ քանի որ ինքի հարկաւորութեան ունի զիս պիտի պահէ . և հարկը Ե՛րևանալուս պէս աստիճի մը պէս զիս պիտի խորպակէ :

չափ անդ[ժու]թեամբ միլիոնաւոր մարդկանց ա-
րիւնները [ժափելը արդարացինէլ : Միայն [ժէ
Նափուէոն զինուորական քաջու[ժիւններէն զստ
աշխարհաշինու[ժեան սարժանքն ալ ունեցաւ ,
որով [ժէ Գազլիա և [ժէ ուրիշ տիրած տե-
ղուանքը շատ օգտակար շէնքերով զարգարեց .
ուստի Նափուէոնի անունը ոչ միայն պատանու-
[ժեանց և աւանդու[ժեանց մէջ անջնջելի սխախ
մնայ , հասլա նաև իր մեծագործ յիշատակներուն
վրայ :



ԳԼՈՒԽ ԺԴ .

Պատմութիան Ռուսաց՝ Պօղոս առաջնոյն Լափառոս-
Լեւէն ինչուսն Նիկողայոս Ա . (1796-1852) :

Պօղոս Ա . — Սուլբով զօրավար . — Պօղոս Կայսեր
ըրած Բարեխարհութեաննէրը . — Մահը . — Աշխատեալ
Կայսր . — Փարիզ Վիեննա . Փեմբուրգի Դատանալը . —
Ճամբորդութեանը . — Մահը . — Նիկողայոս Ա . —
Պարսից Դեմ պայերապիւր . — Փաստեւիլ . — Օսմանցաց
Դեմ պայերապիւր . — Տիպիլիսի Փաստեւիլ զօրավարնէ-
րան ըրած յաղթութեաննէրը . — Լեհացաց ապստամ-
բութեանն ու նստաճոհը :

Պօղոս Ա սղփիկուց ՚ի վեր սաստիկ ատելու-
թիւն մը ունէր Գաղղիացաց թեթևամտութեանն
ու ամէն տեսակ նորաձեռութեանցը դէմ . ուստի
մօրը Կատարինէ երկրորդին յաջորդելուն պէս
(1796) , ուղեց անոնց խռովարարները նստաճել ,
ու շատ զօրքով Սուվորով քաջ զօրավարը Խտալիա
խրկեց , որ հոն ըրած յաղթութիւններուն համար
Խաւախիան ըսուեցաւ : Չուիցերիի ձեռնապատ
լեռներուն վրայէն անցնելու ատենը երբոր զօրքը
աշխատութեան ու նեղութեան չգիմանալով չու-

Պօղոս Ա Գաղղիացաց թեթևամտութեանն
ու նորաձեռութեանցը դէմ ըլլալուն համար
Լեհ ըրաւ : — Սուվորով զօրավարն ինչպէս
Չուիցերիի լեռներէն անցաւ : — Ինչէն
մեռաւ :

դեց առաջ երթալ, ծերունի զօրավարը ճամբուն
վրայ մարդաչափ փոս մը փորել տուաւ ու մէջը
պառկելով ըսաւ զօրացը. « Սա հողին տակը ծած-
կեցէք ձեր զօրավարը. գոք խ'որդիքս՝ չէք և
ոչ ևս ձեր հայրն եմ, թողուցէք որ հոս մե-
նիմ »: Աստեասարանին վրայ զօրաց սիրար շարժե-
ցաւ, վերուցին ղինքն ու արծիւի սէս լերան
վրայ սրանալով Գաղղիացիքը հալածեցին: Բայց
երբոր կայսրը լսեց մեկաւ նիզակահիցաց յաղթուել-
ը, ինքն ալ իր զօրքը ետ կանչեց. Գաղղիացեաց
բոլորովին չյաղթած ետ կանչուելուն վրայ շատ
ցաւեցաւ. Սուվորով, Փեթրուրիկ գարձաւ ու
սրտին ցաւէն մեռաւ:

1 Պօղոս կայսրը առաջինն եղաւ որ իր տերու-
թեանը մէջ թղթագրամը մտուց, բայց երբոր
տեսաւ խիստ շատնալը, որ մը վեց միլիոն թուղթ
հրատարակին մէջ այրել տուաւ: Ամենայն կերպով
կը ջանար որ Գաղղիացեաց սովորութիւններն ու
նորեւեկ բաները իր երկիրը չմտնէր. ասեան մըն
ալ հաստատեց որ տերութեան մէջ մտած գրքերը
քննեն: Աքսորուած Վեհացեաց աղատութիւն
չնորհեց, որոց ու աղջկանց գաղտնիքը բանալ
տուաւ և կայսրուհին անոնց սրաշտարան գրաւ:
Մոպբուայի ու Փեթրուրիկի մէջ հասարակաց
փառաւոր շէնքեր շինել տուաւ. իր տերու-
թեանը մէջ բնակած հայոց առանձին հրո-
վարակալ շատ աղատութիւններ տուաւ, ու

1 Պօղոս Ա ինչ կարգաւորութիւններ ըրաւ:

Վրաստանի տիրեց : Եւ այսպէս սակաւամեայ
Թագաւորութեանը ատեն շատ շինութիւններ ու
ժողովրդեանը բարիք ընէլէն ետքը մեռաւ Պօղոս ,
ու չորս որդիք թողուց . Աղեքսանգր , Կոստան-
գին , Նիկողայոս և Միքայէլ :

1 Աղեքսանգր Ա հօրը յաջորդելով , 1801ին
մեկէն իր ազնիւ դաստիարակութեանն ու բար-
բին գեղեցիկ պատուիները ցրցուց . շատ ազատու-
թիւններ տուաւ ու բարիք ըրաւ սղքատաց ,
տուրքերը թեթեցուց , արսորուած իշխանները
հայրենիքին դարձուց ու իրենց պաշտօնին մէջ
հաստատեց , դասալիք զօրաց ներեց , գիտու-
թեանց ու արուեստից ծաղկելուն վրայ մեծ փոյթ
ունեցաւ՝ ընտիր մատենագիրները առատապէս
վարձատրելով , ճեմարաններ հաստատեց և հա-
սարակաց մեծամեծ դպրոցներ շինել տուաւ :

2 Մեծին Պետրոսի ու Կատարինիի գիտաւո-
րութիւնները ՚ի գործ դնելով Աղեքսանգր կայսրը
ներսէն իր իշխանութիւնը զօրացուց և գեղ ՚ի ա-
րեմուտք ընդարձակեց : Վերջի ժամանակաց պա-
մուտեանը մէջ մեծ անուն հանեց ասով որ երկու
անգամ իբրև ազատարար գովեստներ ըսեց բոլոր
Եւրոսպայէն . բաղդը յաջողեցաւ , և Նափօլէոնի

1 Աղեքսանգր կայսրը ինչով ցրցուց իր ազնիւ
դաստիարակութեանն ու բարուց գեղեցիկ
պատուիները :

2 Աղեքսանգր կայսրը ինչ բաներով աւելի ա-
նուանի եղաւ :

անխոհեմ՝ արշաւանքովը երկիրը ազատեցաւ : Ամէն տեղ առատաձեւնութիւնն ու վեհանձնութիւնը կը ցուցնէր . Փարիզու մեջ Լաֆայէթ իրեն համար կ'ըսէր . « Քաղաքավար , սիրելի և մանաւանդ վեհանձն » . Իսկ ժողովուրդը Կեօքէ՛ Ալէքսանդր , Իեօքէ՛ Խաչաբարբն Եւրոպիոյ կը կանչէր : Գաղղիոյ արշաւանքէն դառնալու ատեն երբոր լսեց թէ Փեթրոպոլիս մեջ իրեն շքեղ հանդէսներ կը սպասրասան , գրեց . « Միշտ աս պէրձութիւնները չեմ ախորժած , ևս առաւել հիմա չեմ ախորժիր : Եւրոպայի արիւնհահեղ պատերազմները դադրեցնողն Աստուած է . իրեն միայն պէտք է շնորհակալ ըլլանք » : Ուստի երբոր սրտուոյ միտալ մը տպել տուաւ իր զօրացը բաժնէլու՝ մէկ կողմը սաղմոսին աս խօսքը փորագրուած էր . « Մի՛ մեզ , Տէր , մի՛ մեզ , այլ անուան քում տուր զփառս » :

Այսպէս Ալէքսանդր Եւրոպան իտաղաղէցընելէն ետքը սկսաւ իր տէրութիւնը բարեկարգել , և անձամբ ամէն տեղ ստորակելով կը ջանար ժողովրդեան հանգստութիւն տալ , գխութիւններն ու արուեստները քաջալերել , բոլոր երկիրը զարգարել ու քաղաքականութիւն մտցնել . բայց չկրցաւ աս գովելի ճամբորդութիւնը շատ առաջ տանիլ : Խրիմը ստորտելէն ետքը երբոր Թայլան քաղաքը հասաւ՝ վրան սաստիկ ջերմ մը եկաւ ու քանի մը օրուան մեջ մեռաւ . և իր մահուանը

1 Իր տէրութեանը մեջ ինչ բարեկարգութիւններ ըրաւ , և ո՞ւր մեռաւ :

վրայ ոչ միայն իր ժողովուրդը լացաւ, այլ և օտար ազգեր սուգ մտան (1825) :

1 Աղէքսանդր կայսրը իրեն ժառանգ որդի չէր թողուցած, ուստի Կոստանդին եղբօրը կ'իյնար թագաւորութիւնը . բայց անիկայ հրաժարած ըլլալով՝ Նիկողայոս եղբայրը յաջորդեց : Փեթըրպուրկի ժողովուրդը երկու բաժնուեցաւ, կէսը Կոստանդինը կ'ուզէին թագաւորեցընել, կէսն ալ Նիկողայոսը . քսանըջորս ժամ մայրաքաղաքին մէջ արիւնհահեղ պատերազմ եղաւ . Նիկողայոս թշնամեացը հետ քաջութեամբ զարնուեցաւ, իր կողմը յաղթեց ու զինքը թագաւոր հրատարակեցին Նիկողայոս Ա անունով :

2 Նիկողայոս 1826ին սեպտեմբերի 5ին Մոսքուայի մէջ պսակուեցաւ ինքնակալ Ռուսիոյ, և նոյն օրը իրեն ժառանգ հրատարակեց իր որդին Աղէքսանդր Նիքոլայեւիչ իշխանը : Պարսից շահը Ֆէթհ-Ալի լսելով որ Աղէքսանդր կայսրը մեռեր ու տէրութիւնը տակնուվրայ եղեր է, կարծեց որ դիւրաւ կրնայ Ռուսաց յաղթել, պատերազմ հրատարակեց անոնց դէմ, ու որդին Ապպաս-Միրզա յիսուն հազար զօրքով սկսաւ առաջ քալել : Փայրեւիչ զօրավարը Երասիս գետէն անդին անցաւ, կտորեց վախուց Պարսիկները, տիրեց Ապասասպատ բերդին, Երեւանայ և Դավրէժի ,

1 Աղէքսանդր կայսեր ո՞վ յաջորդեց :

2 Պարսից շահը Աղէքսանդր կայսեր մահը լսելով ի՞նչ ըրաւ : — Ո՞ր զօրավարը Պարսից դէմ գնաց ու ի՞նչ յաղթութիւններ ըրաւ :

ինչուան որ շահը խոնարհելով հաշտութիւն խընդրեց՝ կայսեր թողլով Երեւանն ու Նախիջևանը բոլոր գաւառներովը (1827) :

1 Պարսից պատերազմը նոր ըննցեր էր . Օսմանեցւոյր բացուեցաւ . հարիւր հազար Ռուս վիթկէնշիթէյն զօրավարին առաջնորդութեամբը մտան Վալարբիա ու Մոլտաւիա . ուրիշ երկու բանակ ալ կայսեր առաջնորդութեամբը ինչուան Շուվլա հասան, Վառնան ալ առին Եռուսեֆ փաշային մասնութեամբը : Երբոր ձմեռը վրայ հասաւ, կայսրը զօրացը յանձնեց պատերազմը ու ինքը Վարաաւիա գնաց և Վհհաստանի թագաւոր պատկուեցաւ (1829) :

2 Ան միջոցին լսեց կայսրը որ Պարսիկք Թեհրան քաղաքին մէջ իր գեասպանները սպաններ են, երբ որ կը սպաորասաուէր Պարսկաստանի վրայ յարձըրկելու առ բանիս համար, Ապպաս-Միրզա արքայորդին եկաւ սիրար առաւ ու հաշտեցուց : Ան առենը Տիպիչ անուանի զօրավարը երկու հարիւր քառասուն հազար զօրքով Օսմանեցւոյ հարիւր ութսուն հազար զօրացը հետ զարնուեցաւ, կտորեց զանոնք ու Սիլիսարէ և Շուվլա բերդերն

1 Պարսից պատերազմէն ետքը ի՞նչ պատերազմ բացուեցաւ :

2 Տիպիչ ու Փապեւիչ զօրավարներն ի՞նչ յաղթութիւններ ըրին Օսմանեցւոյ վրայ : — Եւրոպայի տերութիւններն ի՞նչ բանի յորդորեցին սուլթան Մահմուտը : — Տիպիչ և Փապեւիչ զօրավարներն ի՞նչ ըսուեցան, և ինչու :

առաւ . անկէց թրով ու կրակով առաջ քալեց , կոտորեց Խորահիմ փաշային բանակը , անցաւ Պալզան լեռներն ու առանց պատերազմի յաղթանակով Ագրիանուսօղլու մտաւ : Ան միջոցին Փասքէւիչ զօրավարն ալ Հայաստանի մէջ տիրելով առաջ կերթար , Կարինը (Էրզլուրլում) առաւ , ու Տրապիզոնի մօտեցաւ : Շիտթեցան Եւրոպայի տերութիւններն ու հաւանեցուցին սուլթան Մահմուտը որ հաշտութիւն ընէ , և Հիւնթեար Խաքէլէսին հաշտութեամբը Հայաստանի մէկ մասը Ռուսաց ձեռքը մնաց : Տիպիչ զօրավարը Չոպուֆանսի ըսուեցաւ՝ զօրքը Պալզան լեռներէն անցնելուն համար , Փասքէւիչն ալ Երեսնսֆի՝ Հայաստանի մէջ ըրած տիրապետութիւններուն համար :

1 Լեհացիք ազատութիւննին ձեռք ձգելու յուսով , 1830ին Վարսաւիա քաղաքին մէջ ոտք ելան Ռուսները կոտորեցին , կայսեր եղբայրը Կոստանգին մեծ դուքսը փախուցին , ու Խլոփիցքի զօրավարն իրենց իշխանապետ դնելով ամենայն հոգեով սկսան պատերազմի պատրաստութիւն տեսնել . երբոր Խլոփիցքիին վրայ բիչ մը կասկած առին որ կ'ուզէ Ռուսաց հետ հաշտութիւն ընել , մեկէն զինքը ձգեցին ու անզը Ռաժիվիլ իշխանը զօրավար դրին : Քրաքովիայի քով քաջութեամբ զարնուեցաւ Ռաժիվիլ Ռուսաց Տիպիչ զօրավարին հետ , առջի բերան յաղթեց , բայց

1 Լեհացիք ինչպէս ասպատակեցան ու ո՞վ զիրենք խոնարհեցուց :

եայքը յաղթուեցաւ : Ան առնն Լեհացիք Աքրի-
նեցքի անուհով կարիճ երիտասարդը սպարապետ
անուանեցին , որ շատ անգամ յաղթեց , շատ
անգամ ալ յաղթուեցաւ , ինչուան որ Տիպիչ
զորավարը մաղձախտէն բռնուեցաւ ու մեռաւ :
Տեսան Լեհացիք որ տեղէ մը օգնութեան յոյս
չունին՝ ազգովին ոտք ելան , և ինչուան կանայք
ալ զէնք առին . բայց Փապրեւիչ դնաց մտաւ
Վարսաւիա ու զամէնքը հնազանդեցուց (1831) :
Նոյն Փապրեւիչ քաջանուն զորավարն էր որ Աւս-
տրիայէն գլուխ քաջած Մաճառներն ալ խոնար-
հեցուց 1849ին :

1 Նիկողայոս կայսեր ժամանակը շատ ծաղկե-
ցաւ Ռուսաստան , զորացաւ ու սահմաններն ընդ-
արձակեցաւ և օրէ օր ալ ծաղկելու և ընդարձա-
կելու հետ է (1852) :

1 Նիկողայոս կայսեր ժամանակն ինչ յառաջա-
գիմնութիւն ունեցաւ Ռուսաստան :

ԳԼՈՒԽ ԺԵ .

Պարսկո-թիւն Օսմանեանց՝ սուլթան Մահմադին ինչուան սուլթան Ապրիլ-լ-Մեճիփին թագաւորելը (1808-1832) : Սուլթան Մահմադին թագաւորած ժամանակը . — Պայ-
 րագրաւ Ռուսիաֆ տալա . — Իր ճահը . — Ենիէլէրէ-
 ներոան իսկարհիւր . — Տալէթ ու Իսիէլ . — Մեհմեճ
 Տէր Ալի . — Մեճլու-սներոան կոպուրածը . — Վահա-
 պիններոան յաշլու-իւր . — Մեհմեճիփ Ալիին ըրած Բա-
 րէկարգութիւնները . — Սուլթան Մահմադին Ռուսաց
 հէր պարտերադիս ու հաշտութիւնը . — Տէրէփիէնէնէ
 Ալի տալա . — Տիւրքեանք . — Տալէթին ու Իսիէլի
 ճահը . — Յոնաց ապարտքութեան սկզբնաւորութիւնը .
 — Յոնաց Տէրատէրոան ապանութիւնը . — Ալի տա-
 շային ճահը . — Օսմանց-ոց Յոնաց հէր պարտերադիւ-
 րը . — Լըրի Պայրըն . — Իպրահիմ տաշային տաշութիւն-
 ները . — Ենիէլէրէներոան վերո-իւր . — Կա-արինի
 պարտերադիւր . — Ռուսաց դէժ պարտերադիւր . — Արդիս-
 նապուրոց հաշտութիւնը . — Յոնաց ապարտութիւնը . —
 Մեհմեճիփ Ալիին դէժ պարտերադիւր . — Տաշտութիւնը .
 — Սուլթան Մահմադին ըրած Բարէկարգութիւնները . —
 Կեղիպի պարտերադիւր . — Սուլթան Մահմադին ճահը .
 — Սուլթան Ապրիլ-լ-Մեճիփ . — Մահմադի Ատաթէլ
 Տաթ Արթայ . — Պեղձեան Յարութիւն Արթայ . —
 Տիւրքեան Յալիֆ Չեւիպի . — Պօզու պէյ Երասուփեան :

1 Սուլթան Մահմադի աթուր նստաւ այն-
 պիսի ժամանակ (28 յուլիսի 1808), որ տէրու :

2 Սուլթան Մահմադի ինչպիսի՞ ժամանակ աթու-
 ր նստաւ, ու իր արիտութիւնն ու հաստա-
 տամտութիւնն ինչո՞վ յուշուց :

Թիւնը ներսէն ու գրսէն մեծ ալէկոծ ու թեան մէջ էր . իրեն արիւժիւնն ու հաստասամուռ թիւնը պէտք էր որ ան վիճակին դարման ընէր : Շուտ մը իրեն քաջ ու խելացի իշխաններ ընտրեց , Պայրազտար Մուսթաֆա փաշան վեզիր ըրաւ ու հրաման տուաւ անոր որ սուլթան Սէլիմին սպաննողները բռնէ մեռցընէ ու բոլոր չարագործ մարդիկը պատժէ :

1. Մուսթաֆա փաշան տեսնելով որ քանի որ Ենիչէրիները ուզած անկարգութիւննին կ'ընեն՝ երկիրը խաղաղութիւն պիտի չգանէ , ուզեց անոնց մէջ կարգ կանոն մտցընել : Ենիչէրիք աս կարգադրութեանց համար սատակ թշնամացան Մուսթաֆային , ու բազմութեամբ գնացին անոր պալատին կրակ տալին , անիկայ փախաւ , ու պարտեղին մէջ շինել տուած քարուկիր աշտարակին մէջ պահուրտեցաւ : Երկրորդ օրը Ենիչէրիները Մուսթաֆան կրակին մէջ այրած կարծելով երբոր կ'ուրախանային , խմացան որ անիկայ ողջ է եղեր , աշտարակը սրաշարեցին , թնդանօթ ալ բերին որ զարնեն կործանեն : Տեսաւ Մուսթաֆան որ ալ ազատելու ճար չկայ , աշտարակին տակը պատրաստած ականին կրակ տուաւ ու թշնամեացը հետ մէկտեղ օդը ելաւ :

2. Մուսթաֆային մահուամբն ալ Ենիչէրիները չհանգարտեցան , Բամիզ ու Գասըր փաշաներն ալ չկրցան դանոնք նուաճել , և քաղաքը տակնու-

1. Ենիչէրիք ինչ ըրին Մուսթաֆա փաշային :

2. Ինչով հանգարտեցան :

վրայ էր խնչուան որ սուղդան Մահմուտ հրաման տուաւ որ իր եղբայրը սուղդան Մուսթաֆան սպաննեն որ Ննիչէրիները կը գրգռէր : Ննիչէրիք տեսնելով որ թագաւորին արխարտութեանը սլիախ չկարենան յաղթել, խոնարհեցան ու իրմէ ներուամն խնդրեցին :

1 Ան ատենները Հալէթ անունով մէկը վաճառահանի մը գրագիր էր : տերութեան ծառայութեանցը մէջ մտնելով համաց կամաց մեծցաւ ու Նափուլէոնի ատեն Գաղղիա գեսպան դնաց . սուղդան Մուսթաֆային ատենը անկէց գարձաւ ու Քեահեա սէյ եղաւ : Սուղդան Մահմուտին ժամանակը երբոր Պաղտատու կուսակալը Սիւլէյման փաշան սպատամբեցաւ, դնաց Հալէթ՝ անոր Իսխէլ անունով հրեայ լուսնոյափոխին ձեռքովը գլուխը կտրեց ու առաւ Կոստանդնուսօղիս թագաւորին բերաւ : Աս յաղթութեամբն ու խորամանկ կերպերովը սուղդան Մահմուտին աչքը մտաւ, բոլոր տերութեան կառավարութիւնը ձեռքն առաւ, ու գէշ խորհուրդներովը թագաւորին միտքը գարձուց : Ամենեկն մէկը չէր ուզեր իրեն իշխանակից . զամէնքը սլաշածնէն կը ձգէր ու իր կուսակիցներն անոնց տեղը կը դնէր : Աս չարութեանցը գործակից էր նաև Դսիսէլ հրեան :

2 Հինգ վեց տարուան մէջ այնչափ թափածանմեղ արիւններն ու կործանած աները բաւական

1 Ո՞վ էր Հալէթ :

2 Ան միջոցին խնչ ցաւալի գիպուած եղաւ մեր ազգայնոց համար :

չսեպելով Հալէթ, աչքը Տիւղեանց աղգատոճմին վրայ դարձուց, որ արքունի փողերանոցին ու թագաւորին ոսկերչացը ոստիկաններն էին. իր չարութեան գործակից գտաւ նաև Պէրսէր սրաչին որուն վրայ մեծ համարումն ունէր սուլդան Մահմուտ: Հաւատաց թագաւորը անոնց քուտթեանը, որ իբրև թէ անհաւատարիմ գտնուած են Տիւղեանը իրենց բարձր սրաշոծին մէջ. հրաման տուաւ որ բանա գրուին, ու բոլոր ստացուածքներն աւանուի: Իրեք եղբարք Գրիգոր, Սարգիս և Միքայէլ Չէլէպիները և իրենց մէկ հօրեղբորորդին Մկրտիչ Չէլէպի՝ հօկտեմբերի 15ին (1819) ՚ի մահ գատասպարաուեցան, մէկալ եղբարքն և աղգակիցները Ախոյ ուրիշ կողմերն ու Յունաց կղզիները արսորուեցան: Շուտով զղջացաւ թագաւորը ըրածին վրայ, որուն և յայանի սպացոյց մը կրնայ սեպուիլ նոյն արգիւնաւոր աղգատոճմին վրայ ցուցրցած ետքի սպախեն ու սերը:— Ինքը Հալէթ ալ ըրած չարեացը սպախիժը գտաւ. քիչ ատենէն իմացաւ թագաւորը անոր չարութիւնը ու իր Իսխէլ գործակիցին հետ խղճել տուաւ զինքը:

Մէհէմմէտ Ալի փաշան Աւնաւուտ էր աղգաւ և աննշան մարդու մը որդի. բայց իր ճարտարութեամբն ու խորագիտութեամբը Արաբացուց վրայ ըրած արշաւանքին ատենը (1807) մեծ անուն հա-

1 Ո՞վ էր Մէհէմմէտ Ալին և ի՞նչ կէրպով Մէմլուքները նուաճեց ու Վահապիներուն յաղթեց:

նեց, ու Եգիպտոսի կուսակալ դրուեցաւ: Ան
ատենները Եգիպտոսի մէջ շատ զօրացեր էին
Մէմֆուքը կամ Բեօլէմէն ըսուած Արարացի իշ-
խանները, և Անգղիացւոց օգնութեամբն ալ օրէ
օր աւելի կ'ըմբոստանային: Մէհէմմէտ Ալին ու-
ղեւոր զանոնք նուաճել, նախ ջանաց քաղցրու-
թեամբ զերենք որսալ. և օր մը սեղանի հրաւիրե-
լով՝ գլխաւորներէն չորս հարիւր եօթանասուն
հոգի թրէ անցուց, մնացածներն ալ հալածեց
Եգիպտոսի ներսերը: Ետքը Վահապլներուն հետ
ալ պատերազմելով յաղթեց անոնց, Մէքքէն ու
Մէաինէն առաւ, և բանալիները ապստամբաց
գլխաւորներուն հետ Կոստանդնուպօլիս խրկեց:

1 Անկէց ետքը սկսաւ Մէհէմմէտ Ալին Եգիպ-
տոսը զարդարել ու մէջը քաղաքականութիւն
մտցընել. փախստական Գաղղիացիները սիրով
կ'ընդունէր ու անոնց ձեռքովն երկիրն ու ա-
րուեսաները կը ծաղկեցընէր:

2 Երբոր Ռուսները վրաստանի ու Չերքէզնե-
րու երկրին մէկ մասին օրեցին, սուլդան Մահ-
մուտ վրանին զօրքով Ահմէտ փաշան խրկեց, որ
Ռուսները չորս կողմէն զինքը պաշարեցին ու շատ
մարդ ջարդեցին, ինչուան որ վէղերը զինադա-
դարումն խնդրեց. ան միջոցին Նափօլէօնի Ռու-
սաստանի վրայ ընկու աբշուանքին ձայնը ելե-
լով, Ռուսները առջի պահանջմունքնին թողուցին

1 Անկէց ետքը ինչ ըրաւ Մէհէմմէտ Ալին:

2 Սուլդան Մահմուտ ինչո՞ւ համար Ռուսաց հետ
նորէն պատերազմ բացաւ:

ու. Օսմանցեոց հետ հաշտութիւն ըրին, Մուսա-
ւիան, Վալաքիան ու Սըրֆերուն երկիրը նորէն
անոնց ձեռքը թողալով (1812) :

1 Վաղղկացիք 1814ին յաղթուեցան ու Յոնիա-
կան կղզիներէն քշուեցան. ան առէն Անգղիացիք
զանոնք իրենց սլաշտպանութեանը սակ առին և
սուրբան Մահմուտ դէմ շէեցաւ՝ իր երկիրը բա-
րեկարգելու ետեւ ըլլալով :

2 Ալի փաշան Ալալանիոյ Տէփեաէէն աւանէն
էր ու սլաւիկուց ի վեր աւազակութեամբ մեծ-
ցեր էր. ընկերները ձեռք ընկան բայց ինքը հնար-
քով մը ազատելով Վափլան փաշային փեսայ եղաւ,
քիչ ատենէն իր աներն ամբաստանելով իբրև տէ-
րութեան մասնիչ՝ մեռցնել տուաւ, և յոյս ունէր
որ թագաւորը զինքն անոր տեղը կը դնէ : Բայց
էրբոր յոյսը սպարազ էլաւ, սկսաւ աւազակաբար
ասդխ անդին զարնել, քաղաքներ, գեղեր քան-
գել կողորսակել ու բնակիչքը թրէ անցընել. որով
շատ հարստացաւ, Կանեսայի մեջ ամուր բերդ մը
շինել տուաւ ու բոլոր հարստութիւնը հոն գի-
ղեց : Ետքը 1812ին Նափոյէսնին ու Անգղիա դեռ
պաններ խրկեց և անոնցմէ ստակով զէնքեր
գնեց :

1 Յոնիական կղզիներն էրք Անգղիացեոց պաշտ-
պանութեան տակը մտան :

2 Տէփեաէէնի Ալի փաշան ո՞վ էր և ի՞նչպէս
մեծցաւ :

1 ՌԲԻՆՔ ասեանի մէջ շատ զօրանալով՝ երբոր յայտնապէս սկսաւ գրան հետ թշնամութիւն ընել, թագաւորը հրաման տուաւ որ զօրաժողով ըլլաւի: Ան ասեանը Ալի փաշան Ռումէլի սլաւայէրէ կիրները մարդիկ խրկեց, ու սկսաւ զանոնք ապրատամբութեան յորդորել: Ազատութեան ու սարկի սիրոյն համար ամէն կողմէն դունդ դունդ սրիկաներ գնացին Ալիին քովը ժողովուրդեցան, և անոնցմով սկսաւ մէկ կողմանէ թագաւորական զօրաց գէմ կենալ, մէկ կողմանէ ալ Յոյները ապստամբութեան գրգռել:

2 Երբոր Եանեայի բերգը քաշուած կեցեր էր, խուրշիա փաշան գնաց զինքը պաշարեց ու իրեք ամիս բերգը թնդանթնէրով զօրնելով՝ մէկ կողմը փլուց: Մէջի զօրքը սախակեցին Ալին որ անձնատուր ըլլայ. ան ալ խուրշիաին խօսքերովը խաբուած՝ ելաւ բերգէն ու մտաակայ կղզի մը քաշուեցաւ, յուսալով որ թագաւորը իրեն ներէ, ինչպէս որ խուրշիա իրեն կը խոստանար: Բայց իրեք օրէն երբոր մահուան գատակնիքը եկաւ, կատուեցաւ Ալի, թուրը քաշեց: քովի սպաներէն մէկը մեռուց, մէկալը վերաւորեց. բայց ինքն ալ շատ տեղէն հրացանով զարնուէրով ընկաւ մեռաւ (1822):

3 Ան ասեանները սկսան Մուլաախոյ ու Վլա-

1 Երբոր թագաւորին իրեն գէմ ըրած զօրաժողովը լսեց՝ ինչ ըրաւ:

2 Ալիին վերջն ինչպէս եղաւ:

3 Յոյնք երբ Օսմանցւոցմէ գլուխ քաշեցին:

հայ իշխաններն ալ Յոյները սպասամբուծեան յորդորեւ . և մտրտ ամուռն մէջ 1821ին յանկարծ Պեղորսոյնեսի շատ քաղաքներն Օսմանցւոցմէ գլուխ քաշեցին . կղզեցիներն ալ հարիւր վաթսուն նաւով նաւատորմիդ մը պատրաստեցին և սկսան Միջերկրական ծովուն մէջ ասպատակութիւն ընել , Տաճկի նաւերը բռնել ու մէջի մարդիկը սպաննել :

1 Աս բանիս վրայ շատ բարկացան Օսմանցիք . զատկի օրը Յունաց սրատրիարդը իբրև ասպատակներուն համախոհ՝ Կոստանդնուպօլսոյ մէջ կախեցին . թէսէտ անիկայ ամսով առաջ ասպատակաց դէմ նղովք խրկեւ էր . հետը կախեցին նաև Եփեսոսի մետրապօլիտը , ուրիշ երկու Եպիսկոպոսներ , շատ ալ երևելի մարդիկ . նոյն արիւն հեղութիւնները տերութեան ուրիշ քաղաքներն ալ անպակաս էին :

2 Մայիսի մէջ Օսմանցիք մտան Մոլտաւիա ու Վլահաց երկիրը և շատ տեղ ասպատակները ջարդեցին անոնց զօրավարաց անմխաբանութեանը պաաճառաւ , որոնց անուանիներն էին Տիմիթրի , Իփսիլանդի , Քոլքըթրոնի , Ոգիսեւս , Մալքոյ Պոճարիս , Կանդակուզէնոս , Մաւրոյ Միխակի ,

1 Օսմանցիք աս բանիս համար ինչ արիւններ թափեցին :

2 Յունաց գլխաւոր զօրավարներն որոնք էին , և ո՞ր տեղերը Օսմանցւոց հետ զարնուեցան :

Մաւրոբորտա՛ծոյ . ասոնք թէպէտ տեղ տեղ զօրացան , ինչպէս Հիդրա (Չամբըճա) , Նաւարին , Թերմոպոլէ ու Թրիփոլիցա , սահայն Կիպրոսի , Չմիււնիոյ և Թեսաղոնիկէի մէջ անհամար անմեղ մարդիկ ջարդուեցան և Յոյնք շատ փնաս քաշեցին :

1 Ապրիլի մէջ (1822) Օսմանցիք Քիոս (Սադրզ) կղզին առին , և առաջ որ հարիւր հազար բնակիչ կար մէջը քսան հազար միայն մնաց , որը սպաննուեցով , որը գերի տարուեցով : Խուրշիա փաշան քսան հազարով Սուլու գնաց , Տրամ Ալի փաշան երեսուն հազարով Մոռա , նաւատորմիզն ալ Սամոս (Սուսամ) , Եփեսոս և Մոռայի ծովեզերքը : Յունաց զօրավարները թէպէտ շատ անգամ կը յաղթուէին , բայց տեղ տեղ ալ յաղթութիւններ կ'ընէին . և խուրշիա փաշան Ողիսեւսէն յաղթուելուն համար իշխանութենէն ձգուեցաւ : Կրեաէի մէջ երկու կողմէն ալ անսպարտելի էր սպառերազմը . իսկ ծովու վրայ Յունաց բանը յաջող կ'երթար . Միլիս ու Քանարիս նաւապետնին Օսմանցւոց նաւատորմիզն հետ զարնուեցան , Գարա Մէհէմէտ փաշա ծովակալին նաւը սյրեցին ու մեկալնոնք ցրուեցին :

2 Հրաման հանեց թագաւորը որ սասնը-

1 Ետքը ի՞նչ սպառերազմներ ունեցան Օսմանցւոց հետ :

2 Թագաւորն ի՞նչ հրաման հանեց : — Յունաց օգնելու համար Եւրոպայէն եկած մարդկանց մէջ ո՞վ էր ամենէն անուանին :

Հինգ տարեկանէ ինչուան յիսուե տարեկան ամէն Օսմանցիք զէնք ասնուն , և նաւատորմից մը սրտարասանելով Խոսրով փաշային տուաւ ու 1823ին Յունաստանի վրայ խրկեց : Յունաց զօրավարները Քոլոքոթրոնի , Նիքիթաս և Մարքոյ Պոծարիս՝ քիչ զօրքով ծովէն ու ցամաքէն Օսմանցւոց բւարաւոր զօրացը դէմ կեցան : բայց վերջապէս բազմութենէն յաղթուելով Մխողունիկ բերդը ամրացան ու անկէց սկսան թշնամին նեղել : Եւրոսպոլէն ալ շատ երեւելի մարդիկ եկած իրենց սիրահոււաային , և թէ սասկով և թէ խորհրդով իրենց կ'օգնէին . ասոնց մէջն էր նաև Արա Պայրըն անուանի անգղիացի բանաստեղծը , որ երբոր տեսաւ որ Մխողունիկ բերդը Յունաց մասնութեամբ Օսմանցւոց ձեռքն ընկաւ , սրտին ցաւէն հիւանդացաւ մեռաւ (19 ապրիլի 1824) :

Իպրահիմ փաշան (որ Մէհեմէա Ալիին որդին էր) Օսմանցւոց օգնութիւն եկած ըլլալով , նաւարինի ու Արկադիոյ տիրեց , ուրիշ քանի մը քաղաքներ ալ առաւ Յունաց ձեռքէն . Յոյնք Անգղիացւոցմէ օգնութիւն խնդրեցին , բայց չգտան : Իպրահիմ փաշան Բէշիա փաշային ու Խոսրով ծովակալին հետ դնաց Մխողունիկ բերդը հինգ ամիս սրաշարեց (որ նորէն Յոյնք ձեռք ձգէր էին) ու սաստիկ սովի բռնելով առաւ (1826) , որով Յոյնք շատ ակարացան : Մխողուն

1. Իպրահիմ փաշան սով էր , ու ինչ յաղթութիւններ ըրաւ Յունաց վրայ :

կի ի առմանը վրայ մեծ ուրախութիւն եղաւ Կոստանիգնուպոլսոյ մէջ :

1. Երբոր սուլդան Մահմուտ Յունաց անդուտամբութիւնը քիչ մը նուաճեց՝ ուղեց իր զօրացը մէջ եւրոպական կրթութիւն խոթել, ու մեծամեծաց հաւանութեամբը Ենիչէրիներուն առաջարկեց . անոնք ոտք ելան, գնացին վէզիրին պալատը կողոպտեցին, մեծամեծաց ալ շատին գլուխները կ'ուզէին որ աս նորոգութեան սրաճառեղեր էին : Թագաւորը առանց վսիմալու մեծամեծներն ու օրէնագէտները ժողովի կանչեց . ու երբոր Ենիչէրիներուն ըրածը խնայուց անոնց, ամէնքը մէկ բերան կանչեցին . « Յաղթենք, կամ մեռնինք, սատրաստ ենք կեանքերնիս մեր թագաւորին վրայ գնելու » : Բոլոր ժողովականաց հետ սուլդան Մահմուտ ալ ոտք ելաւ որ երթայ անձամբ իր թշնամեացը հետ պատերազմի, բայց երբոր ազատեցին որ ինքը պալատը կենաց, գնաց իր իշխաններովը Մահմէտին դրօշակը դուրս հանեց ու վէզիրին առաւ որ հետերնին տանին : Մէկէն Պէյօղուի, Ղալաթայու, Իւսկիււտարի փողոցները մունեալի կանչուեցաւ որ ամէն Տաճիկ եղողը դայ մարդարէին (Մահմէտին) դրօշին տակը մտնէ . ամէն կողմէն բազմութիւն եկան գլուեցան, ու սուլդան Ահմէտ մղկթին մէջ դրօշը անկեցին : Ենիչէրիներն երբոր ան բազմութիւնը տեսան, խմացան որ չկարենան սլախ անոնց գէմ կենալ, գնացին Էթ մէյտանը՝ իրենց ձմերոցը

1. Ենիչէրիներուն կոտորածն ինչպէ՞ս եղաւ :

բաշուեցան : Բազմութիւնը գնաց ձմերոցն ու հրապարակը պաշարեց . Գարա Ճէհէննէմ թընդանօթաձիգ զօրաց զօրավարը ձմերոցին կրակ տալէն առաջ յորդորեց Ենիչէրլինները որ հնազանդին թաղաւորին ու օրինաց : Երբոր անոնք յանձն չառին , թնդանօթով զարկին ձմերոցին դուռը կործանեցին . Ժողովուրդն ու զօրքն ալ թուրը ձեռքերնին ներս վազեցին , շատ մարդ ջարդեցին , ձմերոցին չորս կողմէն կրակ տուին ու մէջի Ենիչէրլիներովը մեկտեղ այրեցին . փախչողներն ալ դէր որ ձեռք ընկան ստամանուեցան : Կոյն օրը երեսուն հազարէն աւելի Ենիչէրլի մեռան ու իրենց գլխկներովը Կոստանդնուսօլտոյ նեղուցը ծածկուեցաւ (1826) :

1 Ան միջոցին Յունաստանի մէջ նշանաւոր բան մը չեղաւ , բայց Խպրահիմ ու Բէշիա փաշաներն ընդհանրապէս միշտ յաղթող էին : Եւրոպայի իրեք գլխաւոր տէրութիւնները , այսինքն Գաղղիացիք , Անգղիացիք և Ռուսք սկսան դուռը յորդորել որ Յունաց հետ հաշտութիւն ընէ . երբոր անիկայ յանձն չառաւ , Լոնարայի մէջ որոշեցին որ սուլդան Մահմուտը աս բանիս ստիպեն : Չհաւանեցաւ թաղաւորը ու վաթսուն նաւով նաւատորմիդ մը Կաւարլին խրկեց . Անգղիացւոյ , Գաղղիացւոյ ու Ռուսաց նաւերն ալ հասան քսան

1 Երբոր սուլդան Մահմուտ յանձն չառաւ հաշտութիւնը , Եւրոպայի իրեք գլխաւոր տէրութիւններն ինչ ըրին :

հատի՝ չափ, ու հոն պատերազմելով՝ Օսմանցւոց նաւերէն քառասուն հազար այլեցին (1827) :
 Սակայն ճաւատորմին այրելու, դուձը կրթոր Կաստանդնուպօլիս հասաւ, ամէնքը մեծ ցաւի մեջ ընկան, ու թագաւորը այնչափ բարկացաւ որ մէկէն Ռուսաց վրայ պատերազմ հրատարակեց (Տղեկտեմբերի) : Ռուսաց զօրքը սկսաւ Օսմանցւոց երկիրներուն տիրելով առաջ քաշել : Եւրոպայի կողմը Կրէյ, Մենշչեքով ու Վորոնցով զօրավարները ինչուան Վառնա հասան : Տիպիչ զօրավարն ալ դնաց անաւ Սիլիստրի ու Շումլա բերդերն և Ադրիանուպօլիս քաղաքը : Իսկ Փասքեւիչ զօրավարը Հայաստանի մէջ տիրելով, Կարինն անաւ ու Տրանսկանի մօտեցաւ : Սուլթան Մահմուտ հաշտութիւն խնդրեց, և Ադրիանուպօլսոյ մէջ հաշտութեան պայմանները դրուելցան որ ասոնք էին . Մոլտաւիան ու Վլաչի և Սրբի երկիրներն ազատ ըլլան ու Ռուսի պաշտպանութեանը տակ՝ թեթև հարկ մը տալով Օսմանցւոց : Ասիոյ մէջ ալ Ախլապալէն ինչուան Ախալքեղէք Ռուսաց ձեռքը մնայ, Օսմանցիք ութսուն միլիոն դահեկան վճարեն, և Յոյնք ազատ ըլլան (14 սեպտեմբերի 1829) :

2 Յոյնք ասանկով Եւրոպայի տէրութեանց ձեռ-

1 Ռուսաց զօրքն ինչ երկիրներու տիրեցին : — Ադրիանուպօլսոյ հաշտութեան գլխաւոր պայմաններն որոնք էին :

2 Յոյնք ինչ կառավարութիւն իրենց հաստատեցին :

քոյն ազատեցան ու 1830ին հասարակապետութիւն հաստատեցին, որուն նախագահը եղաւ Քալոյ Տիւթրիա զորավարը. բայց երբոր անկիպ 1831ին սպաննուեցաւ, իրենց թագաւոր գրին Պաւերայի թագաւորին երկրորդ որդին Ութոնը որ ինչուան հիմա կը թագաւորէ (1852) : — Պօլսոյ յոյն սպարիարդին իշխանութենէն ալ ելլելով առանձին սիւնհոգոս մը հաստատեցին :

3 Յոյնք իրենց անկախ ազատութիւնը ստանալէն ետքն ալ չկրցան հանգստութիւն դանել մէջերնին եղած անմիաբանութեան սպառնաւորութեան ուզեցին (1843) եւրոպական տերութեանց միջնորդութեամբը հաստատուած միապետական կառավարութեան կերպը փոխել, և ուրիշ գլխաւոր ազգաց պէս Սահմանագիր (Քոնստիտիւսիոնէլ) իշխանութիւն ունենալ : Ութոն թագաւորն ալ վախնալով չկրցաւ չէ ըսել. ուստի մէկէնի մէկ տերութեան գլխաւոր սաշտօնեայքը փոխեց, և ժողովրդեան ուղած մարդիկը դրաւ թէսպէս և անով ալ գեռ չկրցաւ բոլորովն զսպել խռովարարները : Այն սպառնաւորաւ ալ է որ քաղաքակիրթութիւնը դեռ ստական է մէջերնին, ու արուեստներն ու գիտութիւնք ետ մնացած :

2 Եգիպտոսի կուսակալը Մէհէմմէտ Ալի փա-

3 — միջոցիւ ազատեցին չէ միջոց ըստ...

- 1 Յոյնք կրցան անով հանգստանալ.
- 2 Սուլթան Մահմուտ ինչու համար Մէհէմմէտ Ալիին հետ աւրուեցաւ : — Իպրահիմ փաշան ինչ յալութիւններ ըրաւ :

չա Ռուսաց հետ ըրած սլաաերադմին ծախքը սլաաճառ բերելով՝ մեկուկէս տարուան հարկը չուզէց տալ : Առջի բերան սուլդան Մահմուտ ձայն չհանեց : բայց երբոր առանց իր հրամանին անոր որդին Իպրահիմ փաշան գնաց Ա.բեայի կուսակալին վրայ , երեսուն հազար հոգւով , Գաղա ու Յոսպոյէ քաղաքներն առաւ ու Ա.բեա հասաւ , սուլդան Մահմուտ սաստիկ հրաման խրկեց Մէհէմմէա Ալին որ զօրքը ետ քաշէ , երբ որ Իպրահիմ փաշան Ա.բեայի սլաշարումը առաջ տարաւ՝ սուլդան Մահմուտ հայրն ալ որդին ալ ապստամբ անուանեց , ու 1832ին Հիւսէյին փաշան զօրքով վրանին խրկեց : Իպրահիմ փաշան վեց ամիս սլաշարելէն ետքը բերդը առաւ , Ապտուէլ լահ կուսակալը բռնեց ու սլաաուելով իր հօրը խըրկեց , Գամասկոս ալ գնաց , Հիւսէյին փաշային հետ զարնուեցաւ ու յաղթեց : Անկէց անցաւ մտաւ Բերիա (Հալէս) , հոն ալ սաստիկ ջարդ մը տալով Օսմանյւոց զօրացը՝ Անախոքն առաւ ու բուլոր Ասորոց երկրին տիրեց : Ետեւէն հասաւ Բէշիա փաշան Օսմանյւոց սպարապետը , սաստիկ զարնուեցաւ հետը , ու անձամբ թշնամեաց մեջ մանեւով շատ քաջութիւններ ըրաւ , բայց վերջապէս ինքն ալ գերի բռնուեցաւ : Իպրահիմ փաշան ինչուան Ատանա հասաւ , անկէց ալ Կուտիանան (Քեօթահեա) ու Այարնը առաւ և Զմիւռնիոյ տիրելու վրայ էր , բայց Մէհէմմէա Ալի ուզէց Գաղղիսացւոց ու Ռուսաց միջնորդութեամբը թագաւորին հետ հաշտութիւն ընել : Իպրահիմ փաշային բանակը խրկուեցաւ մեծանուն Բէշիսպէյ իշխանը (որ ետքը թագաւորին վէզիրն եղաւ) և

Եգիպտացւոց հետ հաշտութիւն ըրաւ, որով Մէհէմմէա Ալին անուանեցաւ կուսակալ Եգիպտոսի ու բոլոր Ասորւոց երկրին, Ատանան ալ թագաւորը Իսլահհիմին շնորհեց (1833) :

1 Անկէց ետքը սուլթան Մահմուտ սկսաւ տէրութիւնը բարեկարգել, զօրաց կրթութեան նորէն հոգ տարաւ ու շատ երիտասարդներ Փարիզ ու Վէննա խրկեց որ աղէկ եւ բոսական զինուորութիւն սորվին : Ինքը առաջինն եղաւ որ Եւրոպայի մէջ հաստատուն դեսպաններ դրաւ, և թէ շիա փաշան Փարիզ դեսպան խրկեց : Տէրութեանը երկիրներն անձամբ ելաւ պարտեցաւ . ձմեռը Ղալաթիայէն Ստամբուլ անցնելու ճամբան Ժողովըրդեանը զիւրացրնելու համար կամուրջ մը շինել տուաւ, Ժանտախտին ալ սոսկալի կոտորածներուն առջէն առնելու մտքով արգելարաններ դրաւ, որով հազարաւոր մարդկանց կենդանութիւնը պատճառ եղաւ, ու առ մեծ բարերարութեանը յիշատակն անջնջելի մնաց ու սիւսի մնաց բոլոր անահաւոր ախտին կոտորածները տեսնողներուն ու լսողներուն սրտին մէջ (1835) :

2 Մէհէմմէա Ալին կ'ուզէր որ Եգիպտոսի ու Ասորւոց կուսակալութիւնը իրեն որդւոց որդի Ժառանգութիւն տրուի : Երբոր սուլթան Մահմուտ յանձն չաւաւ և ուզեց որ անիկայ Ասորւոց

1 Անկէց ետքը տէրութեանը մէջ ինչ բարեկարգութիւններ ըրաւ սուլթան Մահմուտ :

2 Մէհէմմէա Ալին ինչո՞ւ համար ապստամբեցաւ :
— Պատերազմի մէջ որ կողմը յաղթեց :

երկիրը ետ աայ, Մէհէմմէտ Աւին դուռնա քաշեց ու
 ինքզինքը Արաբիոյ, Եգիպտոսի և Ասորոց երկրին
 ինքնիշխան տէր հրատարակեց : Երկու կողմէն ալ
 սկսան պառերազմի պատրաստութիւն տեսնել, և
 յունիսի 24ին 1839ին երկու բանակները ճակատեցան Միջագետաց Կէզիպ քաղաքին քով : Թա-
 դաւորական զօրաց սպարապետ էր Հաֆըզ փա-
 շան, և Եգիպտացոց՝ Խպրահիմ փաշան : Սաստիկ
 պատերազմէ մը ետքը Հաֆըզ փաշան չարաչար
 յաղթուեցաւ :

1 Աս սարտութեան դոյժը դեռ Կոստան-
 դնուսօղիս չհասած՝ մեռաւ սուլթան Մահմուտ ,
 ու բոլոր Ժողովուրդը վրան ցաւեցան ու լացին :
 Սուլթան Մահմուտ իր մարդասէր դժուրութեամբ
 բը, վեհանձնական մտածմունքներովը, մեծամեծ
 փոանքներու մէջ ցուցըցած զարմանալի արիու-
 թեամբը և ըրած կենցաղօգուտ ու աշխարհաշէն
 կարգադրութիւններովն՝ իրաւամբ Օսմանեան
 Թագաւորաց մէջ առջինը կրնայ սեպուիլ :

2 Իր մահուանը ցաւը քիչ մը մեղմացուց իր ար-
 ժանաժառանգ յաջորդն ու որդին տասնըութը տա-
 րեկան սուլթան Ապիւլ-Մէճիտ (1839), որ հօրը
 սկսած բարեկարգութիւնները շատ առաջ տա-
 րաւ, ու միանգամայն խաղաղասէր բնաւորու-
 թեամբը իր Ժողովուրդը երջանկացրնելու և դիտու-
 թեանց ու քաղաքականութեան մէջ զարգացրնե-

1 Սուլթան Մահմուտ երբ մեռաւ, ու ինչ բնա-
 ւորութեան տէր էր :

2 Ա՛յլ երեսն յաջորդեց, և ինչո՞վ ինքզինքը սիրելի
 ըրաւ Ժողովուրդեան :

լու ջանքը ամենուն սիրելի ու գովելի ըլլաւ (1852): Իր թագաւորութեան առաջին տարին մեծ գարագլուխ մը եղաւ Օսմանեան պետութեան հսկատակացը Կիւլճանէի օրէնագրութեամբ՝ որ թանկիճաթ կ'ըսուէր. որով զանազան ազատութիւններ արուեցան ժողովրդեան առանց անոնց հաւատքին ու դաւանութեանը նայելու:

Սուլթան Մահմուտին թագաւորութեան ժամանակը մեր ազգին անուանի անձանցը մէջ շատ հռչակաւոր գանուղներուն առաջինն է Մահմուտի Առաքել Տատ Ամիրան, իր սրամիտ ու մեքենահար հանճարովը՝ որով ինչուան Եւրոպացիները կը զարմացնէր, տերութեան գործարանները ճարտարագիւտ մեքենաներով զարգարեց, և վառօդապետութեան բարձր պաշտօնին արժանի եղաւ:

Իրմէ ետքը կուգայ Պէղճեան Յարութիւն Ամիրան: Աս իշխանին արթուն, սրամիտ, հնարագէտ, առատաձեռն, աներկիւղ, անշփոթ ու զօրաւոր բնաւորութենէն առաջ եկած վարքն ու պատմութիւնները ծանօթ են ազգայնոց՝ իբրև կարգէ դուրս հանճարի տէր անձի մը գործքնոյն յատկութեանցը համար շատ սիրելի եղած էր նաև սուլթան Մահմուտին, այնպէս որ վերջին հիւանդութեան ատեն իրեն այցելութեան երթալէն ետև՝ մահուանը վրայ ալ գրեթէ լացաւ այն քաջասիրտ թագաւորը:

Մեծ ու ցաւալի կորուստ մըն էր որ ըրին մեր

1 Սուլթան Մահմուտին վերջի տարիները գրանուող ազգայնոց մէջ որոնք եղան անուանի:

Օսմանեան տէրութեան մէջ եղած ազգայինք , երբոր 1847ին Տիւրքեան Յակոբ Չէլէսլին առողջութիւնը գանկելու համար ճամբորդութեան ելած ըլլալով՝ Իտալիոյ Վիչենցա քաղաքը վախճանեցաւ : Իր մեծօխոհ , վեհանձն , հեռատես , ուսումնական ու ամենայն կերպով բարեկիրթ բնաւորութիւնը և ուրիշ մեծամեծ կատարելութիւնները ծանօթ էին նաև թագաւորին ու բոլոր պալատականաց . ուստի սուլթան Ապաիւլ-Մէճիտին սերն ու խնամքը անկէց ետքը շատ աւելի ալ երեցաւ հանգուցելոյն եղբարցն ու որդւոցը և բոլոր ազգատոհմին վրայ , որով հետզհետէ զանազան պատուոյ աստիճաններով միտիթարեց ու վաւաւորեց զիրենք :

Արժանի է շատ գովեստներով յիշուելու նաև Եուսուֆեան Պօղոս Պէյը , որ Մէհէմմէտ Ալի փաշային զօրաւոր օգնականն եղաւ Եգիպտոսի կառավարութիւնը բարեկարգելու և ամէն տեսակ յառաջագիտութեան գործքերը ծաղկեցնելու : Աս մեծապատիւ անձը նշանաւոր էր իր խոհեմ , բարակամիտ ու անշահասէր բնաւորութեամբը . միանգամայն ազգասիրական հոգին ալ շատ առիթներով ցուցուց թէ իր հայրենակցայք , այսինքն Չմիւռնացոց , և թէ ուրիշ տեղեր գանուող հայոց : Իր պաշտօնն էր արտաքին գործոց տեսուչ և վաճառականութեան իշխան ըլլալնոյն փաշային ժամանակը :

ԳԼՈՒԽ ԺԶ .

Պատճառներն գլխաւոր անցից Եւրոպիոյ Լատինական
 ունեւորաներորդին Բազաւորութիւնն՝ ինչպէս Լատինական
 Փիլիսոփայութիւն Բազաւորութիւնը .

(1815-1830) :

Նափուէոնի քուէրէն ետքը Եւրոպայի պատմութիւնը ժամանակակից պատմութեան դրեթէ վերջին մասն ըլլալով, հարկ է որ անկէջ ինչուան մեր օրերն եղած գլխաւոր գիտութեաները համառօտելով նշանենք, թողլով որ ատենօք ուրիշները նոյն գիտութեանն անկողմնասէր հոգւով պարզեն ու ճշմարիտ պատմութիւնը յեանոց աւանդեն :

1815 . Նափուէոնի Սուրբ Հեղինէ կղզին երթալէն ետքը Գաղղիոյ տերութիւնը սկսաւ քննութիւններ ընել ան մարդկանց վրայ որ մարտի 20ին եղած գիտութեաներուն ուրիշներէն աւելի գործակից եղեր էին : Նէ սպարապետը Սեպուհներու Խորհրդարանին վճռովը՝ ի մահ դատաւարտուցաւ (գեկեամբերի 7) : Անկէջ ետքն ալ ուրիշ քանի մը զորավարներ ու գնդապետներ նոյն դատաւարութեան տակը ինկան : Նոյնպէս նաև Յովակիմ Միւրա՝ Նափուէի թագաւորութենէն քուէրէլով, զինուորական դատաստանով սպաննուեցաւ Խապիոյ ծովեզերքը :

1816 . Մարտի 13ին Լուգովիկոս ԺԸ դաշնագրութիւնն մը ըրաւ Չեխերացւոց հետ , որով

անոնք խոստացան տասուերկու հազար օգնական զօրք տալ Գաղղիացւոց :

Ան տարւոյն մէջ ալ քանի մը զօրավարներ 'ի մահ գատապարտուեցան Նափուէոնի կողմը բռնած ըլլալնուն համար . առնց մէջէն Նափուէթ անուանով մէկը որ Նափուէոնի ատեն թղթատան վերատեսուէն էր , բանտին մէջ կեցած ատենը իր կինը օտար հագուստով բանտը մտաւ ու վասխուց զինքը : Ան խռովարարներն որ Նուգովիկոս վեշտասաներորդին մահուանը կերպով մը սրտաճառ եղեր էին ու Նափուէոնի հարիւր օրուան կայսերութեան ատենը սղաշտօնի հասեր էին , մշանջենաւոր աքսորի գատապարտուեցան :

Մայիսի 4ին խռովութիւն մը ելաւ Տօֆինե գաւառին մէջ , ու Կրքնոպլի քով եղած լեռներուն բնակիչքը Կեօջէ իայա : կանչելով ուղեցին քաղաքին սիրել . բայց ան տեղի սահապան զօրքէն յաղթուեցան ու սրտաճուեցան :

Յունիսի 17ին Պերթի գուբար Նափուլի թագաւորին Կարովնա աղջիկը իրեն կին առաւ :

Սեպտեմբերի 5ին Երեսփոխանաց խորհրդարանը թագաւորին հրամանաւը ցրուեցաւ :

Նոյեմբերի 5ին Գերմանական Գաշնակցութիւնը հաստատուեցաւ :

1817 . Փետրուարի 5ին Երեսփոխանաց ընտրութեան վրայ նոր օրէնք գրուեցաւ , որով միջակ վիճակի մարդիկ ալ սկսան մեծ աղքեցութիւն ունենալ ան խորհրդարանին մէջ : Նոյն տարին Լիոն քաղաքը նորէն խռովութիւն մը ելլելով , շատ մարդիկ գլխատուեցան , ոմանք ալ աքսորուեցան :

1818 • Օտար զօրքերը վերջապէս Գաղղիայէն դուրս ելան, Գաղղիացիք գերուածնէ ազատածի պէս սկսան ուրախանալ, թէպէտ և իրենց խորհրդարաններուն մէջ այլ և այլ նիւթերու համար կռիւնները չէին պահսեր :

1819 • Կարողոս ԺԳ Շուեաի թագաւորը փեսայուարի Տին մեռնելով, Գաղղիացի զօրավարը Պէռնատթ' անոր տեղը թագաւոր նստաւ Կարողոս Յովհաննէս անունով :

1820 • Անգղիոյ թագաւորը Գէորգ Գ ծերացած մեռաւ յունուարի 29ին, և որդին տեղը անցաւ Գէորգ Գ անունով :

Փետրուարի 13ին Ղուվէլ անունով մէկը սաստիկ ատելութիւն ունենալով Պուրպոնեանց գէմ, կամ թէ ինչպէս ուրիշները կ'ըսեն՝ Նափուէոնեանց կուսակից ըլլալով, Պէրրիի դուքսը զարկաւ ու 'ի մահ լիբաւորեց, այնպէս որ բարեպաշտ դուքսը հազիւ ատեն ունեցաւ սուրբ խորհուրդներն ընդունելու, և զինքը սպաննողին թողութիւն տալով մեռաւ • բայց Սեպուհներուն խորհրդարանը Ղուվէլը 'ի մահ դատապարտեց ու հրապարակաւ գլխատել տուաւ : Անկէց ետքը ուրիշ դաւակցութիւններ ալ եղան, որոնց մէջ Շարպոնըրի կամ Քարպոնարի ըսուած ծածուկ ընկերութենէն շատ մարդիկ գանուեցան :

Սեպտեմբերի 29ին Պէրրիի դքսուհին մահը դաւակ մը ունեցաւ, որ ըսուեցաւ Հէնրիէո՝ Տէէօֆոնէ կամ Աստուածատուր՝ Դոֆո Պոլֆոյի • ասոր վրայ բոլոր թագաւորական ցեղը մեծ ուրախութիւն ունեցաւ ու մեծամեծ հանդէսներ ըրին :

Նոյն տարին ընարուածեանց վրայ եղած օրէնքը

շատ փոխուեցաւ ու գրոց.քննուածիւնը նորէն հաստատուեցաւ : Աս փոփոխուածեանց պատճառաւ ժողովրդեան մէջի տժգոհուածիւնները շատցան , Փարիզու մէջ ալ քանի մը խռովուածիւններ ելան , բայց շուտով նուաճուեցան :

1821 . Սուրբ Գովինիկոս կղզւոյն բնակիչքը Գաղղիեացւոցմէ գլուխ քաշեցին ու Հայիթի հասարակապետուածիւն անունով նոր տէրուածիւն մը ձևացան :

1822 . Սպանիոյ մէջ նոր խռովուածիւն մը ելաւ , անոր վրայ Եւրոպայի տէրուածիւններն անհանդիսա ըլլալով , Լուդովիկոս ԺԸ՝ Անկուլէմի դքսին առաջնորդուածեամբ հարիւր հազար հոգւով բանակ մը խրկեց հոն , որ գնաց Քատիքս քաղաքն ու Թլոքբատերոյ բերդը առաւ , Փերդինանտոս Թագաւորը նորէն իր աթոռը հաստատեց ու Գաղղիա դարձաւ :

1823 . Պիոս Է , քսանուիրեք տարի եկեղեցին կառավարեւէն ետքը վախճանեցաւ , և տեղը ընտրուեցաւ Աննիբալ տելլա Ճէնկա կարգինալը՝ որ ըսուեցաւ Լեւոն ԺԲ :

1824 . Սեպտեմբերի 16ին Լուդովիկոս ԺԸ , որ արդէն հիւանդ էր , Թիււրյըրիի սալաաին մէջ մեռաւ , ու տեղն անցաւ եղբայրը Արթուայի կոմսը՝ Կարոլոս Ժ անունով : Սեպտեմբերի 27ին մեծ հանդիսով Փարիզ մտաւ Կարոլոս , և ժողովուրդը ուրախուածեամբ ընդունեցաւ զինքը : Քանի մը որ ետքը (30 սեպտեմբեր) , Արխան դաշտին մէջ զօրաց հանդէս ըրաւ . ու ան միջոցին որ ժողովրդեան բազմուածեանէն Թագաւորին անցնելու ճամբան արդիւլուեցաւ , զինուորին մէկը ուղեց

ձեռքի նիզակախը ճամբայ բանալ : Ան որ տեսաւ
 կարողոս՝ ըսաւ . « Եղովըդեանս ու իմ մէջս նի-
 զակ չեմ ուզեր » : Աս խօսքին վրայ ժողովուրդը
 սկսաւ միարեւրան կանչել, կեցե՛ք աբաս, կեցե՛ք կա-
 րուս Ե :

Առջի բերան ժողովուրդը իր թագաւորութե-
 նէն գոհ կ'երեւնար . բայց երբոր սկսաւ հետզհե-
 տե Սահմանադրութեան տուած ազատութիւն-
 ներն ամփոփել, մանաւանդ երբոր ազագրու-
 թեան ազատութիւնն արգիլեց, որ ինքը տուեր
 էր, խռովութեան կողմը եզրղ ազատասէր մար-
 դիկ ժողովուրդը գրգռեցին տերութեան գեմ-
 որով տերութեան խորհրդական իշխանները քա-
 նի մը անգամ փոխուեցան : Երեսփոխանաց ժո-
 ղովն ալ 1827ին ցրուեցաւ . բայց նորէն ընտրու-
 ողներն աւելի ազատասէր մարդիկ ըլլալով խռ-
 վութիւնը պակսելու տեղ աւելցաւ . Վիլլէլ իշ-
 խանը հրաժարեցաւ, տեղը անցաւ Մարթինեպք
 ու ինքն ալ չկրցաւ ժողովուրդը գոհ ընել, այն-
 չափ որ կարողոս Ե նոր խռովութենէ մը վախնա-
 լով, 1829ին անոր տեղը Փոլինեպք իշխանը նոր
 ընտրուած խորհրդականներուն գլուխ դրաւ : Ե-
 որովհետեւ ան խորհրդականներն ամէնն ալ սաս-
 աիկ թագաւորական էին, յաջորդ տարին (1830)
 մարտի մէջ Երեսփոխանաց խորհրդարանը բողոք
 մը ըրաւ թագաւորին թէ ան իշխաններուն վրայ
 վրասնութիւն չունին : Թագաւորը ժողովրդեան
 բողոքելով հրամայեց որ խորհրդարանը ցրուի :
 Բայց ժողովուրդը հին Երեսփոխանները հաստա-
 տելէն զատ շատ մըն ալ նոր մարդիկ ընտրեց, որ
 ազատասիրութեան կողմանէ անոնցմէ վար չէին

մնար, և Գաղղիոյ ամէն կողմերը սպառաստուէ-
ցան որ տէրութեան առբք շտան :

Ան ատենները ճեղայիլի տային կամ կուսա-
կալը՝ Գաղղիոյ հիւսարատանն սպառակ մը զարկեր
էր, սս նախատինքը վերցնելու համար յուսնիսի
մէջ Պուրման իշխանը շատ մը զօրքով Ափրիկէ ան-
ցաւ ու քանի մը յաղթութիւններէ ետքը ճե-
ղայիլ քաղաքին տիրեց : Կարողոս Ժ և իր իշխան-
ները ժողովրդեան ուրախութիւնը իրենց օգտին
ծառայեցնել ուզելով, յուլիսի 26ին քանի մը
հրովարտական հանեցին, որով սպագբութեան
ազատութիւնը կը վերցնէին ու Սահմանագրու-
թեան շատ կտորներն առջինէն ալ աւելի կ'ամփո-
փէին :

Աս սրառճառաւ երկրորդ օրն ու յաջորդ երկու
օրերը (27, 28, և 29 յուլիսի 1830) ստեղծե-
լիս խռովութիւն մը ելաւ Փարիզու մէջ, և թէպէտ
Թագաւորական թիկնասպահներն ու զօրքը շատ
աշխատեցան խռովութիւնը նուաճելու, բայց ժո-
ղովուրդը ետեւէ ետեւ բոլոր գլխաւոր տեղերուն
տիրեց, ինչուան նաև Ղուլթին ու Թիւլլլլլլլի
պալատին, և առժամանակեայ կառավարութիւն
մը հաստատեց : Լաֆայէթ զօրավարը Գաղղիոյ
ազգային սահասպաններուն ընդհանուր սպարա-
պետ դրուեցաւ, ու քանի մը օրուան մէջ եռա-
գոյն դրօշակը բոլոր Գաղղիա անկուեցաւ : Թա-
գաւորն ու իր մեծ որդին հրաժարեցան Թագա-
ւորութենէն և իրենց տեղը Պորտոյի դուքսը ա-
ռաջարկեցին հենրիկոս Ե անուամբ, բայց Երեւմտ-
խանաց Խորհրդարանը անիկայ ալ մերժեց ու հան-
դիսով սրբագրեց Գաղղիոյ սահմանագրութիւնը :

Օգոստոսի 9ին Օսլէանի գուբըր երգուընցաւ որ հաւատարմութեամբ պահէ ան նոր սահմանագրութիւնը, և ինքը ըսուեցաւ Լոտովիտա-Փիլիպպոս (Լոտ-Փիլի) Լեոփասուր Գաղղիացոց :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Պարմա-Լեան գլխասուր անոյից Երոպիոյ՝ Լոտովիտա-Փիլիպպոսին Լեոփասուր Լեանին ինչուսն Գաղղիացոց նոր հասարակարկութեան հասարակութիւնը - (1830-1852) :

Յուշիսի յեղափոխութիւնը որ իրեք օրուան մէջ ըմբոստեցաւ, դրսի գաւառները առանց արգելքի մը ընդունելի եղաւ : Վարդուս Ժ, իր որդին ու թոռը և բոլոր ազգականները քանի մը հաւատարիմ բարեկամներով առաջ Սկովտիա գնացին, ու ետքը Աւստրիոյ երկրին մէջ Վորլցիա քաղաքը քաշուեցան :

Բայց ան փոփոխութեամբ ժողովուրդը սաստիկ համարձակած գիւրաւ չէր հնազանդեր կարգի կանոնի, ինչուան որ ազգային սահապաններն - որ աս երկու խօսքը իրենց նշան աւեր էին Ազգութիւնն և Բարեխաղաղութիւն - ժողովուրդը հանդարտեցուցին :

Երեսփոխանաց խորհրդարանը ամբաստաներ էր Լուդովիկոս ութնամեներորդին ան խորհրդականներն որ իրեն հրովարտակներուն ստորագրեր էին . Սեպուհներուն խորհրդարանն ալ գեկտեմբեր ամսոյն մէջ անոնց դատաստանը կարեց, ան

վճռով Փողինեաք իշխանը սքսորուեցաւ ու մէկալինսնք մշանջեհաւոր բանա դրուեցան :

Ան միջոցին սրահն ու Անդղիոյ տէրութիւնը Գաղղիոյ նոր կառավարութիւնը ճանչցան . ուրիշներն ալ հետզհետէ նոյն ճամբան բռնեցին բայց անվտաճութեամբ ու սրտութեամբ . վասն զի կը վախնային որ Գաղղիացւոց սկզբունքները իրենց երկիրներուն մէջ ալ չտարածուին : Իրացընէ սեպտեմբեր ամսոյն մէջ Պրուսէլ քաղաքը խռովութիւն մը ելաւ , որ ան ասեմը հողանտայի թագաւորութեան մայրաքաղաքն էր : Ռուզափառներն որ երկար ասեմն նորադանդից իշխանութեան տակ ընկճեր էին՝ Պելճիացի ազատասերներուն հետ միաբանած՝ իրէք որ սաստիկ սրտերազմ ընելէն ետքը , իրենց երկիրը Օրանժիցեղին տիրապետութենէն ազատեցին , որով Պելճիան ալ զատ թագաւորութիւն մը եղաւ ինքնագլուխ : Կոյեմբեր ամսուն մէջ ալ Ղեհացիք ոտք ելան Ռուսաց դէմ . բայց ետքը իրենց թշնամեաց բազմութենէն յաղթուելով նուաճուեցան՝ ինչպէս որ վերը ստամեցինք :

Անդղիոյ Գեորգ Գ թագաւորը մեռաւ ու տեղն անցաւ եղբայրը Գուլիէլմոս Գ :

1831. Փարիզու ժողովըդեան խեղճութիւնն օրէ օր աւելցաւ վաճառականութեան իյնալուն ստուճառաւ . խռովարարներն ալ անկէց առիթ առնելով , փետրուարի 13ին ու 14ին սպարուակ առին Պերրիէ դքսին հոգւոյն համար եղած հանդէսը , ու գունդ գունդ վաղեցին արքեպիսկոպոսարանին վրայ , շէնքը կործանեցին ու մէջի գրքերը , կահ կարասիքը ու ամէն տեսակ եկեղեցական զարդե-

րը Սէն գեարը նեակեցին : Ետքը նոյն աւազակա-
բարոյ մարդիկը քաղաքին մէջ ալ ցրուեցան ու
խաչէրը կործանել տուին :

Մարտի 13ին իշխանաց խորհրդարանին նա-
խագահն եղաւ Քաղիմիր Փէրիէ, որ մտքը գրաւ
խռովութիւնը սանձել և օրինաց ոյժը հաստատել :
Աս սլաւաճառաւ թէ խորհրդարաններուն և թէ
ժողովակներուն մէջ մեծամեծ շփոթութիւններ
ընկան . բայց տերութիւնը վերջապէս յաղթող
ելաւ, ու կամաց կամաց խաղաղութիւնն ու բա-
րեկարգութիւնը հաստատուեցաւ :

Պրուսելի աղգային ժողովը Պելճիայի թա-
գաւոր ընտրեց Գաղղիոյ թագաւորին երկրորդ
որդին Նէմուրի դուքսը . ու երբոր անկիայ յանձն
չառաւ, ժողովը թագաւոր ընտրեց Սաքս-Քո-
պուրկի Լէօփոլա իշխանը :

Երբոր Հոլանտացիք զօրքով Պելճիա վաղեցին,
Գաղղիացիք յետուն հաղար հոգի անոնց դէմ խըր-
կեցին, որով Հոլանտացիք Պելճիայէն դուրս ելան :

Լէհացոց յաղթուիլը ան ատենները սլաւա-
հելով Գաղղիոյ այլ և այլ տեղուանքը և մանաւանդ
Լիսնի մէջ խռովութիւններ ելան, բայց քիչ ա-
տենէն նուաճուեցան :

Ան միջոցին Սեպուհներուն իշխանութեան
ժառանգական ըլլալը վերցուեցաւ . օրէնք մըն ալ
ելաւ որ բոլոր Պուրպոնեանց ցեղը Գաղղիայէն
դուրս քշուի, Նափոլէոնի ցեղին արսորանացը
օրէնքն ալ հաստատուն մնայ :

Կարգինալ Մաւրոյ Քափելլարի սրագ ըն-
արուեցաւ Լեւոն երկոստասաներորդին տեղը, և
ըսուեցաւ Գրիգոր ԺԶ :

1832 . Աւստրիան խաղիոյ քանի մը դաւառներուն մէջ ելած խռովութիւնները դադրեցուցեր ու ան կողմերը շատ զօրացեր էր . Գաղղիացիք անոր ոյժը պահսեցնելու մտքով գնացին Անգոնա քաղաքին տիրեցին ու հոն զօրք դրին :

Նոյն տարին մարտ ամսոյն վերջերը քուերա կամ մաղձախա ըսուած հիւանդութիւնը, որ դրեթէ տարիէ մը ՚ի վեր Նւրոպա մտեր էր, յանկարծ Գաղղիա ալ մտաւ ու Փարիզու մէջ սկսաւ սոսկալի ջարդ ընել . աղքատներն ալ տգխտութեամբ կարծելով թէ հարուստները ղերենք կը թունաւորեն , շատ տեղ ոտք ելան ու շատ մարդ սպաննեցին . բայց շուտով հանգարտեցան : Նոյն հիւանդութենէն շատ երևելի մարդիկ ալ մեռան , որոնց մէջ ամենէն անուանիներն են Վիւվիէ բնասուր, Քաղվմիր Փերիէ իշխանն ու Նստարք զօրավարը :

Աս զօրավարին թաղման օրը հասարակապետականք խռովութիւն մը հանեցին , որով Փարիզու մէջ երկու օր շատ մարդ սպաննուեցաւ . բայց յունիսի Յին իրիկունը խռովարարներուն որը սպաննուեցաւ , որը ձեռք ընկաւ , և աերութիւնը յաղթեց :

Վանաէ գաւառին մէջ նոր խռովութիւն մը հանեցին Պուրպոնեանց կուսակիցները . բայց տերութիւնը շուտով ղերենք խոնարհեցուց , և Պերրիի դքսուհին մասնութեամբ ձեռք ընկաւ Նանթ քաղաքին մէջ :

Նուգովիկոս Փիլիպպոսի երկու որդիքը յերար ստարապետին հեռ գնացին Անվերսա քաղաքը պաշարեցին ու առնելէն ետքը Պելճիայի թա-

գաւորին տուին : Նոյն տարի Ղէովորա թագաւորը Պապղիոյ թագաւորին աղջիկը իրեն կին առաւ որ 1850ին մեռաւ :

Վեննայի քով Շէնպրուենի սպալատին մէջ մեռաւ Նափոլէոնի որդին Հաովնայ թագաւորը , որ Ռէյքքշթաաի դուքս կ'ըսուէր , ու հազիւ քսանըմէկ տարեկան կար :

1833 . Փարիզու Վանտոմ հրատարակին մէջ մեծ հանդիսով նորէն գրուեցաւ Նափոլէոն կայսեր արձանը :

Առ ատենա Տոն Միկէլ Փորթոկալի մէջ կը թագաւորէր : Տոն Փետրոյ Պրազիլէն Եւրոպա եկաւ որ իր աղջիկը Տոնա Մարիան թագաւորեցրնէ , Անգղիացւոց օգնութեամբը Տոն Միկէլին յաղթեց , ու աղջիկը Փորթոկալի թագուհի անուանեցաւ որ ինչուան հիւսայ ալ կը թագաւորէ (1852) :

Փերդինանտու Է Սպանիոյ թագաւորը մեռաւ , ու իրեն յաջորդ թողուց իր իրեք տարեկան Իզապելլա աղջիկը որ ինչուան հիւսայ կը թագաւորէ (1852) :

Ան միջոցներուն ընկերութիւն մը հաստատուած էր Պապղիոյ մէջ , Ընկեր-Թիւն Իրասանց Մարտոյ ըսուած , որ տերութիւնը մասնաւոր օրէնքով ջրուեց : Բայց քիչ ատենէն հասարակապետականք նոր խռովութիւն մը հանեցին Փարիզ , Ղիոն և ուրիշ քաղաքներ ու խիստ շատ արիւն թափուեցաւ , թէպէտ և տերութիւնը շուտով հանդարտեցուց : Ան միջոցին Երեսփոխանաց Խորհրդարանը ջրուեցաւ , ու նոր ընտրուած մարդիկը Քաղիմիր Փերիէին քաղաքականութեանը կողմն

էին, որ Կիլոյ ու Թիէր իշխաններն ալ առաջ տարին :

1835 . Աւստրիոյ Ֆրանչիսկոս Ա կայսրը վախճանեցաւ ու մարտի 2ին իրեն յաջորդեց որդին Փերդինանտոս Ա :

Յուլիսի 28ին երբոր Լուի-Ֆիլիպի Թագաւորը իր որդիքն ու զօրավարները հեան առած զինուորական հանգէս մը ընելու ելեր էր, յանկարծ խանութէ մը դժոխային մեքենայ մը ճայթեցաւ, ու Մորթիէր զօրավարն որ Թագաւորին քովն էր մեկէն սպաննեց : Ասիկայ երկրորդ անգամն էր որ կ'ուզէին Լուի-Ֆիլիպը սպաննել :

1836 . Յունիսի 25ին Ալիսոյ անուհով մեկը որ ծածուկ ընկերութեանց անգամ էր՝ ուզեց սպաննել Թագաւորը, բայց բռնուեցաւ ու 'ի մահ դատապարտուեցաւ :

Լուի-Նափոլէոն Պոնափարթ, որ Նափոլէոնի հերոնիմոս եղբորը որդին էր, յանկարծ խառվուածիւն մը հանեց Սթրասպուրկի մէջ . բայց իր գլխաւոր կուսակիցներովը մեկ անգ բռնուեցաւ : Նոյեմբերի 6ին Կարոլոս Ժ Թագաւորը մեռաւ :

Դեկտեմբեր ամսոյն մէջ Մէծնիէ անուհով աննշան մարդը Լուի-Ֆիլիպին վրայ հրացան սարսեց . բայց ինքն ալ ձեռք իյնալով 'ի մահ դատապարտուեցաւ . Թագաւորը կեանքը շնորհեց անոր :

1837 . Երբոր Լուի-Ֆիլիպին անգրանիկ որդին Օսէանի դուքսը Մէքլենպուրկ-Շվէրինի հեղինէ իշխանուհին կին առաւ, Լուի-Ֆիլիպ ան առթով քաղաքական յանցանաց համար բանտ

գրուածներուն ազատութիւնն առւաւ, որով ժողովրդեան մեծ մասին ալ սիրտը շահեցաւ :

Գուժեկմաս Դ Անգղիոյ թագաւորը մեռաւ ու յունիսի 20ին տեղը յաջորդեց իր եղբոր աղջիկը Վիկտորիա թագուհին, որ և դեռ կը թագաւորէ (1852) :

Նոյն տարին Գաղղիացիք Ալիըիկէի Կոստանդինաքաղաքն ալ առին : Ան արշաւանքին մէջ էր նաև Լուի-Ֆիլիպի սրգին Նէմուրի դուքսը :

1838 . Գաղղիոյ տէրութիւնը ստիպեց Զուլցերացիքն որ իրենց երկրէն Լուի-Նափուէոնը հեռացնեն :

Օգոստոսի 14ին Օռլէանի դքսութիւն մանչ զաւակ մը ունեցաւ, որ ըսուեցաւ Կոմս Փարիզ :

1839 . Մայիսի 12ին հասարակապետականք Պառպէս ու Պլանքի անունով գլխաւորներուն առաջնորդութեամբը ապստամբութիւն մը հանեցին Փարիզու մէջ, բայց տէրութիւնը զսպեց զանոնք :

1840 . Յորենի պահասութիւնը քանի մը խռովութեանց պատճառ եղաւ Գաղղիոյ մէջ :

Յուլիսի 15ին Լոնարայի մէջ Եւրոպայի գլխաւոր տէրութիւնները դաշնագրութիւն մը ըրին արևելեան խնդրոց վրայ ու Գաղղիան դուրս ձգեցին : Ասով Գաղղիացիք Անգղիացւոց հետ աւրուեցան ու քիչ մնաց որ պատերազմ պիտի բացուէր :

Գեղատեմբերի 15ին Լուի-Ֆիլիպին ժուանվիլ սրգին գնաց Սուրբ Հեղինէ կղզիէն Նափուէոնի սկորները մեծ հանգիսով Փարիզ բերաւ :

Նոյն տարին Կիլոյ իշխանապետ գրուեցաւ և

Թիէրին խորհրդովը որոշուեցաւ որ Փարիզ քաղաքին չորս գին պարտապ մը քաշուի :

Լուի-Նափոլէոն Պոնափարթ ուզէց Պուլոյն քաղաքին մէջ նոր խռովութիւն մը հանել . բայց դարձեալ չյաջողեցաւ , ու Նափոլէոնեանց կողմը անով աւելի տկարացաւ :

Տարմէօ անուհով մէկը ուզէց Լուի-Ֆիլիպը սպաննել , ու ինքը բռնուելով 'ի մահ դատապարտուեցաւ :

1842 . Յուլիսի 13ին Օուէանի դուքսը Փարիզու մօտ Նէօյլի աւանին քով կառքէն լինալով մեռաւ երեսունուերկու տարեկան : Աս բանիս վըայ ամէնքը ցաւեցան . խորհրդարանները որոշեցին որ Նէմուրի դուքսը խնամակալ ըսուի Փարիզու կոմսին՝ թէ որ Լուի-Ֆիլիպի կանուխ մեռնի :

1843 . Գաղղիացիք Մարգիղեան կղզիներուն և Օթայիթի կղզւոյն տիրեցին :

1844 . Ափրիկէի մէջ Գաղղիացիք Մարոքի տէրութեանը հետ պատերազմեցան , ու յաղթեցին աւոնց Իսլի դեախն քովը , և Պիւժոյ զօրավարը Դուսու Իւլիէ ըսուեցաւ : Ժուանովիլ իշխանն ալ նաևատարմիցով գնաց Թանճէր ու Մոկատոր քաղաքները զտրեաւ ու ստիպեց թշնամիները հաշտութիւն խնդրելու :

Գաղղիացիք Չինու երկիրը դեսպան խրկեցին . Չինու կայսրն ալ հրաման տուաւ որ իր երկրին մէջ բրիտանեական կրօնի գէմ հալածանք չըլլայ :

Կարոլոս ԺԳ (Պեռնատոթ) Շուեախ ու Նորվեկից թագաւորը մեռաւ , և տեղը նստաւ իր

որդին Ոսկար Ա, որ ինչուան հիմա ալ կը լծա-
գաւորէ (1852) :

1845. Ափրիկեցի գերիններուն վաճառքը դա-
դրեցընելու համար Գաղղիոյ և Անգլիոյ տէրու-
թիւնները նոր դաշնագրութիւն մը ըրին :

Ապաիւլ-Գաաըր Արաբացւոց էմիրը բոլոր
ճեղայիրի երկրին մէջ ապստամբութիւն մը հա-
նեց Գաղղիացւոց դէմ : Սեպտեմբերի 23ին չորս
հարիւր Գաղղիացիք յանկարծակի սաշարուե-
ցան, և քառակուսի շարուելով իրեք ժամ պատե-
րազմեցան Արաբացւոց հետ ու գրեթէ ամէնքն
ալ ջարդուեցան : Քանի մը անգամ ալ յաղթուե-
լէն ետքը, Գաղղիացիք զօրացան ու նորէն ճե-
ղայիրի տիրեցին :

1846. Գրիգոր ԺԶ պապը վախճանեցաւ ու
տեղը նստաւ Պիոս Թ քահանայապետը :

Լըքոնթ անունով մէկը ուզեց Լուի-Ֆիլիփը
սպաննել ու ինքը 'ի մահ գատապարտուեցաւ :
Նոյն փորձը երկու ամիս ետքը Հանրի անունով
մէկն ալ ըրաւ ու մշանջենաւոր բանտ դրուեցաւ :

Լուի-Ֆիլիփին չորրորդ որդին Մոնիփանիէի
գուբսը՝ Սպանիոյ Իզապէլ լծագուհւոյն քոյրը Է-
րեն կին առաւ : Նոյն տարին Պորտոյի դուքսն ալ
Մոսենայի դքսին աղջիկն առաւ :

1847. Ապաիւլ-Գաաըր ձեռք ընկաւ ու Գաղ-
ղիա բերուեցաւ :

1848. Փետրուարի 24ին Փարիզու մէջ խռո-
վութիւն ելաւ, Լուի-Ֆիլիփ լծագաւորութե-
նէն ընկաւ ու տեղը հասարակապետութիւն
հաստատուեցաւ :

Մայիսի 4ին աղգային Ժողովարանը բացուե-

ցաւ, ու 15ին ժողովուրդը գնաց զանիկայ կոխեց :

Յունիսի 23ին, 24ին, ու 25ին քաղաքական պատերազմ եղաւ Փարիզ, ու շատ արիւն թափուեցաւ, ինչուան որ տէրութիւնը յաղթելով խռովութիւնը վերջացաւ :

Նոյեմբերի 4ին Հասարակապետութեան սահմանադրութիւնը հրատարակուեցաւ և դեկտեմբերի 10ին Լուի-Նափոլէոն Հասարակապետութեան նախագահ ընտրուեցաւ :

Գաղղիա Հասարակապետութիւն հաստատուելուն պէս բոլոր Եւրոպա շարժեցաւ ու շատ ժողովուրդներ օտք ելան . Միլան, Վենետիկ առ ժամանակ մի ինքնագլուխ եղան Աւստրիոյ կայսերութենէն . Հռոմ խռովութիւն ելաւ, Ռոսսի սլաշածնեայն ասպտամբներէն սպաննուեցաւ, և պապը հարկադրեցաւ իր տէրութենէն դուրս կայէթա քաղաքը քաշուելու : Հռոմ հասարակապետութիւն եղաւ, ինչուան որ Ուալինոյ զօրավարը Գաղղիացւոյ զօրքովը Հռոմն առաւ 1849ին ու նորէն պապին դարձուց :

1849 . Աւստրիոյ Փերզինանտո կայսրը հրաժարեցաւ, ու տեղը նստաւ իր եղբորորդին Ֆրանչիսկոս Յովտեփ :

Նոյն միջոցին Մաճառաստանն ալ գլուխ քաշեց Աւստրիայէն . բայց Նիկողայոս կայսեր օգնութեամբը նորէն նուաճեցաւ :

1850 . Լուի-Ֆիլիպի թագաւորը օգոստոսի 26ին Լոնտրայի մօտ Քլարմընթ գեղը մեռաւ եօթանասունըվեց տարեկան :

1851 . Լուի-Նափոլէոն դեկտեմբերի 2ին ազգային օրէնսգիր ժողովը ցրուեց, գլխաւորները

բանա գրաւ, հասարակաց քուէարկուածիւնը (սիւֆրաժ իւնիվէրսէլ) նորէն հաստատեց, ու գէկանմբերի ՉԱին ազգին մեծ մասին հաւանութեամբը ինքզինքը տասը տարուան համար տէրութեան գլուխ ընտրել տուաւ :

1852 . Լուի-Նափոլէոն Գաղղիոյ Ժողովրդեան իրեն տուած իշխանութեանը համեմատ՝ յունուարի 14ին սահմանադրութիւն մը հրատարակեց, որուն գլխաւոր կարգաւորութիւնները մեծին Նափոլէոնի սահմանադրութեանէն առնուած է :

Այս տարուոյս մէջ Եւրոպա ուրիշ շատ փոփոխութիւններու ալ կը ստատուի Գաղղիոյ յեղափոխութեանը սպառնալու . բայց ընդհանրապէս միապետական կառավարութիւնները որ չորս տարի առաջ քիչ շատ խախտած կ'երկնային՝ հիմայ աւելի զօրացած են, և զինուորական ուժերնին աւելցընելով՝ ռամկապետական շարժմանցնէրուն գէժ գնելու ամեն կերպով պատրաստ են :



ՅԼԵԿ

Պատմութիւն Մաքէնագրութեան Գաղղիոյ՝ ԺԸ
Դարէն ինչոսան ԺԹ Դարուն սիիւբը .

- Գալղուծիւնք . — Վոլթէն . — Հանրագիտակ Բառարան . — Յովհաննէս-Յակոբոս Ռուսոյ . — Բանաստեղծուծիւն . — Կատակերգուծիւն . — Քնարերգակ , վարդապետական և հովնական բանաստեղծուծիւն . — Պերճախօտուծիւն . — Պատմուծի . — Բարոյական . — Քաղաքագիտուծիւն . — Վիպասանուծիւն . — Գիտուծիւնք . — Բնական պատմուծիւն . — Աշխարհագիրք և ուղևորք . — Գեղարուեստք . — Արձանագործուծիւն և մէքենագործուծիւն . — Երաժշտուծիւն 5

Պատմութիւն Մաքէնագրութեան ու Վաճառականութեան Երոյի ԺԸ Դարէն ինչոսան ԺԹ Դարուն սիիւբը .

- Անգղիա . — Բանաստեղծուծիւն . — Արձակ մատենագիրք . — Իմաստասիրուծիւն . — Գիտուծիւնք . — Աշխարհագիրք և ուղևորք . — Նկարչուծիւն . — Սպանիա . — Գիտուծիւնք և Գեղարուեստք . — Փորժոկալ . — Իտալիա . — Գիտուծիւնք . — Գեղարուեստք . — Երաժշտուծիւն . — Գերմանիա . — Պատմուծիւն . — Իմաստասիր

բուժիւն . — Գիտութիւնք . — Երաժշտութիւն . — Ռուսաստան . — Տանխմարքա և Շուէա . — Գիտութիւնք . — Հողանաա . — Գիտութիւնք և Գեղարուեստք . — ԺԸ դարուն մէջ Եւրոպայի վաճառականութեան վիճակը . Գաղղիա . — Անգլիա . — Հողանաա . — Իտալիա . — Գերմանիա և հիւսիսային տէրութիւնք . — Սպանիա . — Վորթոկալ 21

ԳԼՈՒԽ Ա .

Ազգային ընդհանուր ժողով վերսայի . — Փիլիսոփայութեան Յոսեփ Օուլէանի գուքք . — Լաֆայէթ . — Միրսայոյ և իրեն հետ եղած մարզիկը . — Ազգային ժողովին կազմուիլը . — Երգումն գնասահմանադր . — Թագաւորը ընդհանուր ժողով կը գումարէ . — Պայլի նախագահը . — Յուլիսի 14ին խռովութիւնք . — Քամիլ-Տէմուլէն . — Պասթիլի առումը . — Թագաւորին Փարիզ գառնալը . — Լուգովիկոս ժՁ նորէն վերսայլ կը տարուի . — Ազգային ժողովը Սահմանադիր կ'ըսուի . — Թագաւորին Փարիզ գառնալը . — Գաղթականութիւն . — Գաղղիոյ ութսունութիւնք գաւառ բաժնուիլը . — Սահմանադիր ժողովոյն ուրիշ վճիռները . — Յուլիսի 14ին գաշնակցութեան տունք . — Արիսեան գաշնին հանդէսը . — Թալլերան . — Միրսայոյի մահը 41

ԳԼՈՒԽ Բ .

Թագաւորին ու ընտանեացը Փարիզէն փախչիլն ու բռնուիլը . — Սոզ քաղաքապետը .

— Ազգային խողովոյն խրկած մարդիկը . —
 Պառնալ և Փէթիօն . — Թագաւորին Փա-
 րիզ բերուելը , — Հասարակապետութեան
 ձայնը . — Պրիստոյ , Տանթոն և Քամիլ-Տէ-
 մուլէն . — Պայլե ու ԼաՖայէթ . — Մէկալ
 տերութեանց Գաղղիոյ վրայ վաղէլու սպառ-
 նալքը . — Սահմանագիր խողովոյն տեսած
 պատրաստութիւնը . — Օրէնսդիր խողովը .
 — Աջակողմեանք և Չախակողմեանք . —
 Ժիրոնտէնք . — Ժաքոսպէններուն ու Քորաբ-
 լիէներու քրիւսը . — Օրէնսդիր խողովոյն
 վճիռները . — Դաշնակից թագաւորաց դէմ
 պատերազմ հրատարակուելը . — Ռոշամպոյ ,
 ԼաՖայէթ և Լիւքնէր զորավարները . —
 Ռոշամպոյին յաղթուելը . — խողովդեան
 թիւյլբրիի վրայ վաղելը . — Սանթէա . —
 Փէթիօն ու թագաւորը . — Մարսիլիացիք .
 — Թիւյլբրի սպառախն նորէն սպաշարուելը .
 — Թագաւորին ընտանեօքը հանդերձ օրի-
 նագիր խողովարանը վախճելը . — Չուիցե-
 րացի զորաց քաջութիւնն ու ջարդը . — Թա-
 գաւորին ընտանեօքը թամիլ աշտարակին
 մէջ բանտ դրուելը 55

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Օտար տերութեանց Գաղղիոյ դէմ միաբա-
 նիւր . — Փարիզու խողովդեան կատաղու-
 թիւնը . — Սեպտեմբերի Չին բանտերու
 կոտորածը . — Լամպալ իշխանուհւոյն սպա-
 նութիւնը . — Որդիական սիրոյ օրինակներ .
 — Օսէանի դուքսը Փիլիպպոս . — Օրինագիր
 խողովոյն՝ Ազգախումբ Ատեանը կը յաջոր-
 դէ . — Լեոնականաց գլխաւոր անդամնե-
 րը . — Ժիրոնտեանց գլխաւոր անդամները .

Թագաւորութիւնը կը վերցուի ու Հասարակապետութիւն կը հրատարակուի . — Վալմիի ու ժէմմաիի յաղթութիւնները . — Թագաւորը դատաստանի կը կանչուի . — Սանթէռ և Պառէր . — Թագաւորին մահուան վճիռը . — Էճուորթ Ֆիրման քահանան . — Թագաւորին իր ընտանեացը հետ վերջին տեսութիւնը . — Մահուան պատրաստութիւնը . — Գլխատման տեղը երթալը . — Սանթէռ . — Լուգովիկոս վեշտասաներորդին մահը 67

Գ Լ Ո Ւ Խ Դ .

Լուգովիկոսի մահուան ըրած ազգեցութիւնը . — Լուգովիկոս ժէ թագաւոր կը հրատարակուի . — Անգղիոյ , Հոլանտիոյ և Սպանիոյ դէմ պատերազմ հրատարակուիլը . — Ռոպէսիէր . — Արհաւիրք . — Մարա . — Շարլոթ Քորակ . — Մարային սպանութիւնը . — Շարլոթ 'ի մահ կը դատապարտուի . — Ժաքոսկէններուն թափած արիւնները . — Վանտէ , Պրեթայն , Թուլոն և Լիոն չէն ուղեր զօրք տալ . — Քաղաքական պատերազմ . — Շալվինոյ կառավարը . — Լըբիւր և Լա-Ռոշժաքլէն . — Վանտէացւոց զօրաց քաջութիւնը . — Թագուհւոյն Թամիլէն Քոնսիէրժըրի տարուիլը . — Դատաստանի կանչուիլը . — Դատապարտութիւնը . — Արիական մահը . — Մատամ Ռոլան . — Գլուխը կտրուիլը . — Ժիրոնտեանց դատապարտութիւնն ու մահը . — Փիլիպպոս Էկարլթէ . — Պայլին դլխատուիլը . — Փէթրոնին մահը . — Կրօնքի վերցուիլը . — Տոմարին փոխուիլը . — Բան

աստուածուհին . — Գաղղիոյ Հասարակա-
պետութեան թուականին հաստատուիլը .
— Տնկերուն վերցուիլը . — Ուսումնական
տեղեաց գոցուիլը . — Եղիսաբէթի մահը . 73

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Նախուէն թուընը կ'ազատէ . — Գաղղիոյ
գաւառներուն մէջ եղած խռովութիւնը .
— Լինն քաղաքին կործանումը . — Քու-
թոն և Քոլլոյ Տ'էրպուա . — Մէնիէ . —
Թալլիէն , Յովսէփ Լըսոն . — Քարիէ .
— Թագաւորականը նորէն ղէնը կ'առնուն .
— Խրենց գլխաւոր զորավարները . — Վէս-
թէրման . — Փարիզու մէջ արհաւիրաց կա-
ռավարութեան սաստիութիւնը . — Ան-
գրէաս Շէնիէ բանաստեղծը . — Ռոպէս-
փիէր կը ջանայ իր թշնամիները վերցնել . —
Թալլիէն . — Ազգախումբ Ատեանը Ռո-
պէսփիէրին գէմ կ'ելլէ . — Ռոպէսփիէրն
ու իր գործակիցները դատաւարանի մարդ-
կանց տեղը կը նստեցնեն . — Ռոպէս-
փիէր իր ընկերներովը կ'ազատի . —
Պառաս զորասպետ կը գրուի . — Ռոպէս-
փիէրի և իր գործակցացը մահը . — Ժո-
զով փրկութեան հասարակաց . — Գաղղիա-
ցոյ գուրը ըրած յաղթութիւնները . —
Մասսէնա , Փիշիրիւ ու Ժուրտան զորավար-
ները . — Փարիզու մէջ նորէն խռովութիւն
կ'ելլէ . — Պուասսի տ'Անկլաս . — Թագա-
ւորականաց հանած խռովութիւնը . — Մը-
նու , Պառաս ու Պոնափարթ . — Ազգա-
խումբ Ատենին հրաժարիլը . — Ըրած կար-
գաւորութիւնները 86

ԳԼՈՒԽ Զ .

Օրինագիր խորհրդարան . — Ծերակոյց .
 Հինգհարիւրոց ժողով . — Վանտէացւոց
 բողբոլին նուաճուիլը . — Սթոֆլէի ու
 Շարէթի մահը . — Տիւմուրիէ ու Լուի-
 Ֆլիւնի . — Քիպրոնի կտորածը . — Փիշ-
 կրիւնն կաշառուիլը . — Մորոյ և Ժուր-
 ասան զօրավարներուն յաղթութիւնները . —
 Պոնափարթ Իսալիոյ զօրացը ապարասեա
 կը դրուի . — Ըրած յաղթութիւնները .
 — Փիէմոնթի թագաւորը հաշտութիւն կը
 խնդրէ . — Պոնափարթ դէպ 'ի Լոմպար-
 տիա կը քալէ . — Աւստրիացւոց Պոլիէօ
 զօրավարը . — Պոնափարթ Միլան կը մտնէ .
 — Մանգուան կը սլաշարէ . — Աւստրիացւոց
 Վուրմներ զօրավարը . — Պոնափարթին յաղ-
 թութիւնները . — Ալվինցի զօրավարը Վուրմ
 սէրին օգնութեան կուգայ . — Պոնափարթ
 Արքովի կամրջէն կ'անցնի . — Մանգուա
 անձնատուր կ'ըլլայ . — Վէնեակոյ ա-
 ռուիլը . — Քամիոյ-Ֆորմիոյի դաշնագրու-
 թիւնը 100

ԳԼՈՒԽ Է .

Նոր ընտրութեամբ ելած շիտթութիւննե-
 րը . — Պառասին ձեռքովը Վարչութիւ-
 նը կը յաղթանակէ . — Հռոմի մէջ ելած
 խռովութիւնը . — Պերթիէ զօրավարը Հռոմ
 կը մտնէ . — Պոնափարթին Գաղղիա դառ-
 նալը . — Վարչութեան Իսալիոյ բանակին
 ընծայած դրօշակը . — Փարիզու մէջ Պոնա-

փարթին տրուած պատիւները . — Պոնափարթին Եգիպտոս երթալը . — Անգղիացոց Նեկոն ծովահալը . — Պոնափարթ Մալթայի ու Ալեքսանդրիոյ կը տիրէ . — Բրդանց պատերազմը . — Եգիպտոսի ճեմարանը . — Ապուքիրի պատերազմը . . . 111

ԳԼՈՒԽ Ը .

Անգղիացիք մէկալ տէրութիւնները Գաղղիացոց դէմ կը հանեն . — Սուլթորով ու Քրոյ զօրավարները . — Գաղղիացոց զօրավարները . — Գաղղիացիք Պոնափարթին գալուն կը փախաբին . — Պոնափարթին Օսմանցոց դէմ ըրած յաղթութիւնները . — Զօրաց տժգոհութիւնը . — Պոնափարթ Եգիպտոսէն ճամբայ կ'երէ . — Փարիզ հասնիլը . — Իշխանութեան ետեւ ըլլալը . — Փարիզու զօրաց սպարապետ կը դրուի . — Սահմանադրութեան վրայ երգում ընելու համար Սէն-Քլու կ'երթայ . — Զօրքը ապստամբութեան կը յորդորէ . — Հինգ-հարիւրոց ժողովարանին մէջ քաշած վտանգը . — Ժողովականք կը ջրուին ու Պոնափարթ ինքնիշխան կը մնայ . — Հիւսպատոսութեան հաստատուիլը . . . 119

ԳԼՈՒԽ Թ .

Նախորէոնին ըրած բարեկարգութիւնները . — Իտալիա արշաւելը . — Յաղթութիւնները . — Լիւնէվիլի ու Ամիէնի հաշտութիւնները . — Գաղղիոյ մէջ քրիստոնէական կրօնքին նորէն հաստատուիլը . — Սուրբ Դոմինիկոս կըղ

դւոյն ասպտամբուլթիւնը — Թուսէն — Լու-
վերթիւր . — Լէգէոն պատուոյ ըսուած
ասպետութիւնը . — Պոնափարթին դէմ
եղած դաւակցութիւնները . — Գժոխային
մեքենայ . — Անկիէնի դքսին սպանութիւ-
նը . — Կափուէոն թագաւոր ու կայսր կը
հրատարակուի 127

ԳԼՈՒԽ Ժ .

Կափուէոնին կայսր օծուիլը . — Դաշնա-
կցութիւն թագաւորաց Կափուէոնին դէմ .
— Կափուէոնին յաղթութիւնները . — Աւս-
թերլիցի պատերազմը . — Աւստրիոյ ու
Ռուսաց կայսերքը Կափուէոնէն հաշտու-
թիւն կը խնդրեն . — Կելսոն ծովակալին
յաղթութիւնը . — Ենայի պատերազմը . —
Պրուշի երկրին տիրապետելը . — Էյլաւե
պատերազմը . — Ֆրիտ-լանա քաղաքին պա-
տերազմը . — Թիլսիթի հաշտութիւնը . —
Յամպըային պաշարումն . — Ժիւնոյ Փոր-
թոկակ կը տիրէ . — Աղնուականութեան
հաստատուիլը . — Կափուէոն Սպանիոյ վրայ
կը թագաւորեցընէ իր Յովսէփ եղբայրը .
— Պապի երկրին մէկ մասը կ'առնէ . — Աւս-
տրիոյ արշիգքսին դէմ ըրած յաղթութիւն-
ները . — Հռովմայ տէրութիւնը Գաղղիոյ
հետ կը միացընէ . — Իր զօրավարներուն
ըրած յաղթութիւնները . — Վալիքամի պա-
տերազմը . — Հոլանտայի տիրապետութիւ-
նը 135

ԳԼՈՒԽ ԺԱ .

Հռովմայ թագաւորին ծնունդը . — Սպա-

նիոյ պատերազմը . — Ռուսաստանի արշա-
 ւանքը . — Տրեզուս քաղաքը եղած թա-
 դաւորաց ժողովը . — Աղէքսանդր կայսեր
 տեսած պատրաստութիւնը . — Սմոլէնայի
 առուակը . — Մոսքուայի հրդեհը . — Գաղ-
 ղիայեաց Ռուսաստանէն դառնալը . — Ճամ-
 բան քաջած խեղճութիւննին . — Պերեզի-
 նային անցքը . — Նախովէնն նորէն զօրք կը
 ժողվէ 146

ԳԼՈՒԽ ԺԲ .

Նախովէննին ու իր թշնամեացը պատե-
 րազմի պատրաստութիւնները . — Նախով-
 լէննի յաղթութիւնները . — Լիփսիայի պա-
 տերազմը . — Գաշնակցաց զօրանալը . —
 Գաշնակցաց Գաղղիոյ վրայ վազելը . — Վէլ-
 լինկթոն , Պլիւխեր ու Շվարցենպէրի զօրա-
 վարները . — Գաշնակցք կ'ուզէն հաշտու-
 թիւն ընել . — Փարիզու պաշարումը . —
 Գաշնակց զօրաց Փարիզ մասնելը . — Նախով-
 լէնն իշխանութենէն կը ձգուի . — Զօրքէն
 բաժնուիլը . — Լշուրս կղզին երթալը 157

ԳԼՈՒԽ ԺԳ .

Գաղղիոյ նաւաճուիլը . — Արթուայի կոմսը .
 — Լուդովիկոս ԺԸ Փարիզ կը մասնէ . —
 Տուած սահմանադրութիւնը . — Ժողովուր-
 դը կը սկսի իրմէ պաղիլ . — Նախովէնն Գաղ-
 ղիա կը մասնէ . — Նէ սպարապետը Նախով-
 լէննին կողմը կ'անցնի . — Լուդովիկոս ԺԸ
 Փարիզէն կը վախճի . — Նախովէննի հարիւր
 օրուան կայսերութիւնը . — Իրեն գէմ է

դած դաշնակցութիւնը . — Նափողէոնի տե-
սած պատրաստութիւնը . — Ֆլէօրիւսի յաղ-
թութիւնը . — Վաթէրըյի պատերազմը .
— Նափողէոն իշխանութենէն կը հրաժարի .
— Գաշնակցաց զօրքը Փարիզ կը մտնէ . — Լու-
դովիկոս ԺԼ Փարիզ կը դառնայ . — Նափո-
լէոնի Սուրբ Հեղինէ կղզին սքսորուին ու
մահը 168

ԳԼՈՒԽ ԺԴ .

Պօղոս Ա . — Սուվորով զօրավարը . — Պօղոս
կայսեր ըրած բարեկարգութիւնները . —
Մահը . — Աղէքսանդր կայսրը . — Փարիզ
մտնելը . Փէթրոպօլի դառնալը . — Ճամ-
բորգութիւնը . — Մահը . — Նիկողայոս Ա .
— Պարսից դէմ պատերազմը . — Փապէէւիչի
Օսմանցւոց դէմ պատերազմը . — Տիպիչ ու
Փապէէւիչ զօրավարներուն ըրած յաղթու-
թիւնները . — Լէհացւոց ասպատակութիւնն
ու նուաճումը 183

ԳԼՈՒԽ ԺԵ .

Սուլդան Մահմուտին թաղաւորած ժա-
մանակը . — Պայրադտար Մուսթաֆա փա-
շա . — Իր մահը . — Ենիչերիներուն խո-
նարհիլը . — Հալէթ ու Իսխէլ . — Մէհէմ-
մէա Ալի . — Մէմլուքներուն կոտորածը .
— Վահապլիներուն յաղթուելը . — Մէհէմ-
մէա Ալիին ըրած բարեկարգութիւնները .
— Սուլդան Մահմուտին Ռուսաց հեռ պա-
տերազմն ու հաշտութիւնը . — Տէփէտէլէն-
լի Ալի փաշա . — Տիւղէանք . — Հալէթին

ու Իսխէլի մահը . — Յունաց սպարապետ-
 թեան սկզբնաւորութիւնը . — Յունաց մե-
 ծամեծներուն սպանութիւնը . — Ալի փա-
 շային մահը . — Օսմանցեոց Յունաց հեռ
 պատերազմները . — Լորա Պայրըն . — Ի-
 սպրահիմ փաշային քաջութիւնները . — Ե-
 նիշէրիններուն վերցուիլը . — Նաւարինի պա-
 տերազմը . — Ռուսաց դէմ պատերազմը .
 — Ադրիանուպօլսոյ հաշտութիւնը . — Յու-
 նաց ազատութիւնը . — Մէհէմմէա Ալիին
 դէմ պատերազմը . — Հաշտութիւնը . —
 Սուլթան Մահմուտին ըրած բարեկարգու-
 թիւնները . — Նէզիսի պատերազմը . —
 Սուլթան Մահմուտին մահը . — Սուլթան
 Ապաիւլ-Մէճիա . — Մահմետի Առաքել
 Տաա Ամիրայ . — Պէզճեան Յարութիւն Ա-
 միրայ . — Տիւզեան Յակօբ Չէլէսի . —
 Պօղոս Պէյ Եռսուֆեան 194

ԳԼՈՒԽ ԺԶ .

Պատմութիւն գլխաւոր անցից Եւրոպիոյ՝
 Լուդովիկոս ութնասներորդին թագաւո-
 րութենէն՝ ինչուան Լուդովիկոս Փիլիպպո-
 սին թագաւորութիւնը (1815-1830) 210

ԳԼՈՒԽ ԺԷ .

Պատմութիւն գլխաւոր անցից Եւրոպիոյ՝
 Լուդովիկոս Փիլիպպոսին թագաւորութե-
 նէն ինչուան Գաղղիացեոց նոր հասարակա-
 պետութեան հաստատուիլը (1830-1852) 216







8149

